



ISSN 1829-2992

Ա Կ Ո Ւ Ն Ք

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԶՅՈՒՂ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 2(5)



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 2(5)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2012

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտխորհուրդը

Գլխավոր խմբագիր՝

պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝

Գրիշա Ալեքսանի Ղարիբյան – տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Հարություն Ալեքսանի Սարգսյանյան – տնտեսագիտ. թեկնածու, պրոֆեսոր
Հենրիկ Մուշեղի Աբրահամյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ռաֆիկ Ասքանազի Նահապետյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սամվել Արշավիրի Առաքելյան – պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Հայկ Մկրտիչի Դերձյան – իրավագիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հենգել Գերասիմի Մանուչարյան – քաղաքագիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սամվել Պարզևի Մուրադյան – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սեդա Քերոբի Գասպարյան – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սեյրան Արտուշայի Զաքարյան – փիլիս. գիտութ. դոկտոր, պրոֆեսոր

Մելսիկ Պարզևի Մկրտումյան – հոգեբանութ. դոկտոր, պրոֆեսոր

Ակունք. Գիտական հոդվածների ժողովածու / Խմբ. խորհուրդ՝
Գ.Ա. Ղարիբյան և ուրիշ.; Գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան. – Եր.:
ԵՊՀ հրատ., 2012 թ. – 128 էջ:

ՀՀ ԲՈՀ-ի 13.03.2012թ. որոշմամբ «Ակունք» ժողովածուն բավարարում է ԲՈՀ-ի
պահանջներին և ճանաչվում է ընդունելի ատենախոսությունների հիմնական
արդյունքների և դրույթների հրատարակման համար:

© ԵՊՀ հրատարակչություն, 2012 թ.

© Հեղ. խումբ, 2012 թ.

ԲԱԹՈՒՄԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՐՅԸ ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

ԱՇՈՏ ՆԵՐՄԻՍՅԱՆ, ԶԱՎԱՀԻՐ ԹՈՐՈՍՅԱՆ

Հայտնի է, որ Տրապիզոնի բանակցությունների կրախը, ռուսական տեղատվության պայմաններում տանում էր Անդրկովկասյան պետության պառակտմանը և հայկական պետության աստիճանական առարկայացմանը, որը տեղի ունեցավ փուլ առ փուլ և առաջին իրավական հիմնավորումն ստացավ Բաթումի կոնֆերանսին հաջորդած պայմանագրում:

Սեյմի պատվիրակության՝ Տրապիզոնից վերադառնալուց հետո Թիֆլիսում արդեն պարզվում է, որ թուրքերը գրավել են Բաթումը, ընդ որում՝ առանց կռվի:

Փաստորեն Կարսը զոհաբերելով, այս քաղաքը պահել փորձող վրացիները կորցրեցին նաև այն, որն ամենայն հավանականությամբ տեղի չէր ունենա, եթե հայ և վրաց քաղաքական ուժերը անկեղծորեն համագործակցեին:

Ճիշտ է նկատել Ալ. Խատիսեանը՝ «Վրացիներու համար պատերազմը կը նշանակէր կռուիլ Պաթումի պաշտպանության համար: Երբ Պաթումը կորսուեցաւ, Վրացիներու համար պատերազմը կորսընցուց իր իմաստը»¹:

Որ իսկապես Տրապիզոնի խորհրդածողովից հետո վրաց քաղաքական գործիչների մեծամասնությունն սկսում է հայության նկատմամբ քաղաքական կեղծավորություն դրսևորել՝ գործելով նրա թիկունքից, երևում է թեկուզ և Ս. Վրացյանի այն վկայությունից, որ «Չխենկելին, իր ներկայացուցչի հանգամանքով թողեց Տրապիզոնում վրաց պատուիրակութեան կազմի անդամ՝ գերմանասէր և թրքասէր Վեչեպելիին»²:

Սա նշանակում է, որ նա արդեն հաշտված լինելով նաև Բաթումի կորստի հետ, ցանկանում է վրացիներին ապահովել թուրքական արշավանքից:

Այդ հաստատում է Ալ. Խատիսյանը՝ գրելով հետևյալը. «Երբ վերադարձանք Թիֆլիս, այնտեղի տրամադրութիւնը գտանք շատ աւելի ինկած, քան թողած էինք: Վրաց իշխող կուսակցութեան մէջ ծայր էին տուած լուրջ տարակարծութիւններ պատերազմը շարունակելու մասին: Անոնք կը զգային, որ իրենց ժողովուրդը չ'ուզէր կռուիլ Պաթումի անկումէն յետոյ: Միւս կողմէ, գտած էին միջոց մը ինքզինքին ապահովելու համար Թուրքիայէն: Եվ այդ միջոցը համաձայնութիւն էր Գերմանիոյ հետ»³:

Ճշմարիտ է ասված, որ Բաթումի անկումով մարեց վրացիների եռանդը⁴:

Գեգեչկորիի կառավարությունը հրաժարական է տալիս և վարչապետ է դառնում Չխենկելին: Ապրիլի 9-ին հայտարարվում է Անդրկովկասյան Ժողովրդական Դաշնակցային Հանրապետության հռչակման մասին⁵:

¹ Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պէյրուք, 1968 էջ 53:

² Ս. Վրացեան, Կենաքի ուղիներով, դեպքեր, դեմքեր, ապրումներ, Դ հատոր, Պէյրուք, 1965, էջ 104:

³ Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 53:

⁴ Ռ. Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.1 1918 - 1919, Երևան, 2005 էջ 26:

Չխենկելին, մինչև Մեյմի կողմից իր պաշտոնում հաստատվելը, ինքնագր-
լուիս կատարում է մի քանի դատապարտելի արարքներ: Ապրիլի 10-ից մինչև 13-
ը, իր «միահեծան իշխանութեան» օրերին նա գաղտնի բանակցությունների մեջ է
մտնում Վեհիբ փաշայի հետ և Նազարբեկովին հրահանգում է թուրքերին զիջել
Կարսը, իսկ վերջինս, որն ինքնական արարքներ կատարելու ընդունակությու-
նից զերծ էր, անտրտունջ կատարում է այդ խիստ դատապարտելի հրահանգը:
Այս ամենից զատ, նա կազմում է նոր դահլիճ, որի մեջ հրավիրում է մտնել, ար-
դեն Կարսի անկումից հետո, Ալ. Խատիսյանին (ելևմտական նախարար), Հովհ.
Քաջազունուն (խնամատարության նախարար) և Ավետիք Սահակյանին (պա-
րենավորման նախարար): Վերջիններս ընդունում են առաջարկությունը, բայց,
երբ ապրիլ 12-ի երեկոյան տեղի ունեցած նիստում տեղեկանում են Կարսի անկ-
ման մասին, հրաժարական են տալիս, ավելի ուշ հետ վերցնելով այն: Նրանք
սխալ են թույլ տալիս՝ չնդունելով վրաց մենշևիկների առաջարկը՝ վերցնելու իշ-
խանությունն իրենց օգնությամբ Չխենկելուց և վարչապետ առաջադրել Հովհ.
Քաջազունունը⁶:

Չխենկելու կառավարությունը կազմում է մի նոր պատվիրակություն՝
թուրքերի հետ բանակցությունները շարունակելու նպատակով:

Նախագահն ինքն էր: Հայերի կողմից պատվիրակության մեջ էին՝ Ալ. Խա-
տիսեանը, Հովհ. Քաջազունին, Ս. Բունիաթյանը, Թերզիպաշյանը և Ս. Վրացյա-
նը:

Թուրքական պատվիրակության կազմում էին՝ Խալիլ փաշան (նախագահ)
և Վեհիբ փաշան: Նրանց կողմից բանակցություններին մասնակցում էր Գերմա-
նիայի ներկայացուցիչ գորավար Ֆոն Լոսովը:

Անդրկովկասի պատվիրակությունն, այսպիսով մեկնում էր իր խորին հա-
մոզմամբ թուրքական երկու պահանջների կատարման՝ անկախության հռչակ-
ման և Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կետերի ընդունման պատրաստակա-
մությամբ և այստեղից էլ՝ համոզված, որ այլևս կստորագրվի հաշտության և խա-
ղաղության պայմանագիրը: Եվ այս համոզումն ավելի շատ իշխում էր վրաց
պատվիրակների հոգիներում:

Սակայն, խորամանկ թուրքերը Տրապիզոնում պարտադրածին հասնելով,
այս անգամ էլ առաջ քաշեցին նոր պահանջներ:

Մայիսի 11-ին տեղի ունեցած առաջին նիստում Խալիլը հայտարարում է,
որ արդեն եղած զիջումով չեն բավարարվում: Նա հետևյալն է ասում.

«Տրապիզոնի բանակցութիւններէն յետոյ տեղի են ունեցած բախումներ եւ
արինահեղութիւն Թուրքիոյ եւ Անդրկովկասի զօրքերուն միջեւ: Ուստի, մեր յայ-
տարարութիւնաց բնոյթը եւ հիմքը արդէն փոխուած են, հետեւաբար ես չեմ կրնար
թոյլ տալ, որ մեր ներկայ բանակցութեանց իբրեւ միակ հիմք ծառայէ Պրեսթ-Լի-
թովսքի դաշնագիրը»⁷:

Եվ նա Չխենկելին է հանձնում նոր պայմանագրի նախագծով ծրարը: Իսկ
այդ նախագիծը նախատեսում էր Թուրքիայի կազմում թողնելու ոչ միայն

⁵ Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 105, *Аркомед*, նշվ. աշխ., էջ 66, *Վահան Մինախյո-
րյան*, Բայթումի խորհրդաժողովը, «Հայրենիք» ամսագիր, թիւ 14, մարտ, 1936, էջ 93-94:

⁶ Տե՛ս *Սշոտ Ներսիսյան*, Ավետիք Սահակեան (Հայր Աբրահամ), Երևան, 2006, էջ 200-204:

⁷ Ալ. Խատիսեան, նշվ. աշխ., էջ 68, Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 145-146, նույնի,
Կեանքի ուղիներով, Դ հատոր, էջ 114-115 և այլն:

Արևմտյան Հայաստանը, Կարսը, Արդահանի և Բաթումի շրջանները, այլև՝ դարձյալ հօգուտ Թուրքիայի Թիֆլիսի նահանգից Ախալցխայի և Ախալքալաքի գավառների մի մասը, Երևանի նահանգի արևմտյան մասը, ներառյալ Արաքս գետի հովիտը և Կարսը Զուլֆային միացնող երկրագծի հատվածը:

Այս ամենից գատ, Անդրկովկասյան պետությունը պետք է ենթարկվեր Օսմանյան կայսրությանը⁸:

Ճիշտ է նկատել Ս. Վրացեանը, որ սա ձևով հաշտության բանակցությունների առաջարկ էր, բայց էությամբ վերջնագիր, թեև առանց ժամանակի⁹:

Պատմագրության մեջ Բաթումում տեղի ունեցած գործընթացներին անդրադաձնեցում այն տպավորությունն է ստեղծվում, որ հայ պատվիրակները որևէ նախաձեռնության չէին գնում և փաստորեն ձեռքերը ծալած սպասում էին իրադարձությունների ընթացքին: Սակայն, ամենևին էլ այդպես չէ:

Հայոց ազգային խորհուրդը դեռևս մինչև Բաթումի կոնֆերանսը, 1918թ. ապրիլին Մոսկվա է ուղարկում Հ. Զավրիսին, որը պետք է բանակցությունների մեջ մտներ Մոսկվայի գերմանական դեսպանության հետ՝ Գերմանիայի օգնությունը խնդրելու նպատակով: Այս բանակցությունների արդյունքում հայերին առաջակցվում է Բեռլին ուղարկել մի պատվիրակություն, որի մեջ մտնում են Հ. Օհանջանյանը և մենշևիկ Ա. Զուրաբյանը: Վերջիններս նախ, մայիսի 30-ին, հասնում են Բաթում, որպես Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչներ, գերմանական կառավարության հովանավորությունը Ֆոն Լոսովից խնդրելու առաքելությամբ: Այդ մասին նրանք հետևյալն են գրում. «Մենք եղանք Լոսովի մոտ, նրա օգնությունը խնդրեցինք հայերի պաշտպանության գործում: Նա խոստացավ այդ մասին հեռագրել կայսեր Վիլհելմին և խոստացավ խնդիր հարուցել զինվորներ ստանալու համար և ասաց, որ եթե հայերը որոշեն պատվիրակություն ուղարկել Գերմանիա, ապա՝ ինքը նրան կվերցնի իր հետ: **Առանձին հույսեր նա չտվեց: Մենք 23-ի զիշերը ուղարկեցինք գրավոր դիմում՝ խնդրելով օկուպացնել Կովկասի հայկական շրջանները**»¹⁰: (Ընդգծումը մերն է -Ա. Ն., Զ. Թ.):

Թե ինչու Ֆոն Լոսովը առանձին հույսեր չի ներշնչում, քիչ հետո: Մինչև այդ, շեշտենք, որ այս պատվիրակությունն Ազգային խորհուրդը Բաթում էր ուղարկել այն բանից հետո, երբ Ս. Վրացյանն այնտեղից հետ էր գործուղվել Թիֆլիս, որպեսզի զեկուցի տիրող կացության մասին:

«Ծովում խեղդոտողը, - գրում է նա, - ասում են՝ օձին է փաթաթում: Պատվիրակութիւնը պիտի անցնէր Բաթում եւ այնտեղից, գերմանական պատուիրակութեան աջակցութեամբ, անցնէր Բեռլին»¹¹:

Բացի այս պատվիրակներից, գերմանական աջակցությանն էին ձգտում հասնել նաև Ալ. Խատիսյանը և Հովհ. Քաջագունին, սակայն, դարձյալ ապարդյուն: Ալ. Խատիսյանի հուշերից պարզ է դառնում, որ Ֆոն Լոսովը կողմնակից չի եղել թուրքական նոր պահանջներին, որոնցով խախտվում էին Բրեստ-Լիտովս-

⁸ Документы и материалы внешней политики Закавказья и Грузии, Тифлис, 1919, с. 272-279, **Ս. Վրացեան**, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 146, **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 69, **Հ. Լազեան**, Հայաստան եւ Հայ դատը ըստ դաշնագրերու Գահիրէ, 1942, էջ 98, Հայ ժողովրդի պատմություն, ՀԱԱՀ ԳԱ հրատ., հ, VII, էջ 41:

⁹ **Ս. Վրացեան**, Կենաքի ուղիներով, Դ հատոր, էջ 115:

¹⁰ Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 112:

¹¹ **Ս. Վրացեան**, Կենաքի ուղիներով, Դ հատոր, էջ 116-117:

կի դաշնագրի կետերը: Երբ նրանք ներկայացնում են Ֆոն Լոսովին, որը Թուրքիայի դաշնակիցների միակ ներկայացուցիչն էր Բաթումում և հայտնում իրենց բողոքը, վերջինս հասկացնում է, որ համամիտ է իրենց հետ, «սակայն, պարտաւոր է վերապահ ըլլալ»¹²:

Այնուամենայնիվ, նա մի հեռագիր է ուղարկում Կ. Պոլիսում Գերմանիայի դեսպան կոմս Պերնստորֆին՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ամէն սահման անցնող թրքական պահանջները՝ անջատելու զուտ հայկական գավառները, ինչպէս են Ախալքալակը, Ալեքսանդրապոլը եւ Երեւանի նահանգի մասերը, կը խախտեն Պրեսթ-Լիթովսկի դաշնագիրը աղաղակող կերպով և նկատի ունին ոչնչացնել հայերը Անդրկովկասի մէջ: Այսօր երեկոյեան Թուրքերը վերջնագիր ներկայացուցին թոյլ տալու, որ իրենց զորքերը անցնին Ալեքսանդրապոլի վրայով Ջուլֆա եւ այդ մասին ոչինչ հաղորդեցին ինձ: Ես բողոքեցի այդպիսի ընթացքի դէմ»¹³:

Բավական հետաքրքիր է լինում դեսպանի առաջարկն իր կառավարությանը՝ (այս հեռագրից հետո) որպէս հիմք հաշտության.

«- Թուրքիա պէտք է ընդունի Պրեսթ-Լիթովսկի պայմանագիրը, եւ ք) Դիրացնելու համար Թուրքերուն նահանջը դէպի Պրեսթ-Լիթովսկի դաշնագիրը՝ կատարել փոխանակութիւն, այսինքն՝ առաջարկել Թուրքերուն վերցնել Ախալքալակ գաւառի թրքական մասը եւ հայկական մասը (Կադգուան)»¹⁴:

Գերմանական դեսպանն այնուհետև ավելացնում է, որ Խալիլը և Վեհիբը համաձայն են այս փոխանակման հետ, բայց Էնվերը դեմ է և պահանջում է անմիջապէս վերնագիր տալ, որն ըստ դեսպանի՝ «առաջ պիտի բերէ նոր պատերազմ Կովկասի հետ եւ անհրաժեշտ կը գտնէ յայտարարել վարչապետ Թալէաթ փաշային, **թէ թրքական այդպիսի քաղաքականութիւն մը Կովկասի մէջ չի կրնար արժանանալ Թուրքիոյ զինակիցներու պաշտպանութեան, այլ՝ ընդհակառակն, պիտի մեծապէս վնասէ Թուրքիոյ շահերուն, հանդիպելով զինակիցներու բուռն դիմադրութեան**»¹⁵: (Ընդգծումը մերն է -Ա. Ն., Ջ. Թ.)

Ինչպէս համոզվում ենք, այստեղ դիվանագիտական այն հնարն էր կիրառվում Թուրքիայի հանդէպ, թէ նա հեռուն գնալով Բրեստ-Լիտովսկի դաշնագրի պայմաններից, կարող է զրկվել իր դաշնակիցներից: Անշուշտ, Գերմանիայի նման վերաբերմունքի համար աշխատել էին Բեռլին անցած Հ. Օհանջանյանն ու Ա. Ջոհրաբյանը, բայց Գերմանիան ոչ թէ մտահոգված էր հայերի ճակատագրով այլ՝ Թուրքիայի ծավալմամբ և Ռուսաստանի հետ դաշնագրի խախտմամբ: Բացի այդ, նա գաղտնի բանակցությունների մէջ էր Ռուսաստանի հետ՝ Կովկասի ապագայի վերաբերյալ, ըստ որի «Բաքվի շրջանը կմտնէր Մոսկվայի ազդեցության ոլորտ՝ միաժամանակ Գերմանիայի համար ապահովելով առատ հումք, հատկապէս ծայր աստիճանի անհրաժեշտ նավթ: Քանի որ թուրքական հարձակումը Անդրկովկասում սրում էր հարաբերությունները Մոսկվայի ու Բեռլինի միջև և սպառնում էր Գերմանիայի ծրագրին այս ռազմավարական խաչմերուկում, կայգերական կառավարությունը նախագգուշացնում էր Էնվերին, որպէսզի հարգի Բրեստ-Լիտովսկի նախատեսած սահմանները, ավելացնելով, որ ինքն այլևս չի

¹² *Ալ. Խատիսեան*, նշվ. աշխ., էջ 69:

¹³ Նույն տեղում, էջ 69-70:

¹⁴ Նույն տեղում, էջ 70:

¹⁵ *Ռիչարդ Գ. Հովհաննիսյան*, Հայաստանի Հանրապետություն, Առաջին տարին, Հ. 1, մ1918 - 1919, 30:

հանդուրժի թուրքերի վայրագությունները բնիկ քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ»¹⁶:

Գերմանիայի նման դիրքորոշման սույն պատճառները հաստատում է նաև Ալ. Խատիսյանը, գրելով, որ «Թուրքերը իրենց ընթացքով կը խախտեին ռազմական ընդհանուր ծրագիրը, որուն համաձայն թրքական ուժերը պիտի գործէին հարաւի ուղղութեամբ ընդդէմ անգլիական շարժման դէպի Պաղտատ, մինչդեռ անոնք կ'երթային դէպի հիւսիս» Պաքու եւ Հիւսիսային Կովկաս իրենց սեփական համաթրքական նպատակներու իրագործման համար»¹⁷:

Ահա այս ամենով էր պայմանավորված Ֆոն Լոսովի հայերի շահերի պաշտպանության ձգտումը:

Բայց էնվերը նույնիսկ արհամարհում է գերմանական բանակի ընդհանուր հրամանատար Հինդենբուրգի իրեն ուղղված հետևյալ հեռագիրը.

«Գերման գերագոյն հրամանատարութեան անունով կը խնդրեմ Ձերդ Գերագանցութենէն հրամայել, որպէսզի բոլոր թրքական զօրքերը դուրս քաշուին Կովկասի սահմաններէն, բացի Կարսէն, Արտահանէն եւ Պաթումէն»¹⁸:

Ըստ Խատիսյանի՝ այս հեռագիրն ուղարկվել է հունիսի 9-ին, որը նշանակում է, որ մինչև այդ (և դրանից հետո էլ) անտեսվել են գերմանական իշխանության բողոքները: Ավելին մայիսի 15-ին թուրքերը գրավում են Ալեքսանդրապոլը և այնուհետև շարժվում են երկու ուղղությամբ՝ դէպի հարավ՝ Երևան-Ջուլֆա երկաթգծով և արևելք Ղարաքիլիսա - Թիֆլիս - Բաքու գծով:

Իսկ ինչու գերմանացիներն, ի վերջո, պայմանագիր կնքեցին վրացիների հետ: Կարծում ենք, որ պատճառը հետևյալն էր՝ գեր թիֆլիսը պաշտպանելով՝ նրանք գերծ կպահեին ամբողջ Կովկասի նվաճումը թուրքերից: Հայերի պարագայում դա անհնար էր, որովհետև եթե գերմանացիները թուրքերին ստիպեին չանցնելու Ջուլֆա-Պարսկաստան երկաթգծով, դա կնշանակեր ռազմական ընդհարում, որը նրանց ձեռնտու չէր: Ուստի նրանք պահելով Թիֆլիսը՝ չկարողացան արգելք հանդիսանալ Թուրքիայի առաջընթացին դէպի հյուսիս՝ Ղարաքիլիսա-Եվլախ ճանապարհով, որն անհնարին դարձավ մայիսյան հերոսամարտերի շնորհիվ:

Ահա թե ինչով էր պայմանավորված Ֆոն Լոսովի խուսանավորական դիրքը Բաթումում: Նա այնտեղ էր գտնվում հենց թուրքական առաջխաղացումը կասեցնելու առաքելութամբ, որի անհնարինության մեջ համոզվելուց հետո 1918թ. մայիսի 25-ի գիշերը հեռացավ դէպի Փոթի¹⁹:

Դեռևս Ալեքսանդրապոլի գրավումից առաջ, մայիսի 13-ին հանդիպում է տեղի ունենում Խալիլ և Վեհիբ փաշաների ու հայ պատվիրակների միջև: Թուրքերը պնդում են Ալեքսանդրապոլ – Ջուլֆա երկաթգծի տրամադրման վրա, այն պատճառաբանությամբ, թե զորքերը պետք է փոխադրեն Իրան, կասեցնելու անգլիացիների հարձակումը Հարավային Կովկաս և օգնելու իրենց 6-րդ բանակին, որը կռվում էր նրանց դեմ Միջագետքում:

Հայ պատվիրակների օրագրությունից տեղեկանում ենք հետևյալը. «Թուրքերին անհրաժեշտ է փոխադրել իրենց զորքերը և որքան կարելի է շուտ գրավել

¹⁶ *Ալ. Խատիսյան*, նշվ. աշխ., էջ 71:

¹⁷ Նույն տեղում

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Документы и материалы, с. 307, նաև՝ *Ս. Վրացյան*, Հայաստանի Հանրապետություն, էջ 146:

Թավրիզը, իսկ դրա համար անհրաժեշտ է, որպեսզի մենք հնարավորություն տանք նրանց օգտագործել մեր երկաթուղին»²⁰:

Նույն փաստաթղթում կարդում ենք, որ Վեհիբ փաշան հայտարարում է, որ հայերի դիմադրությունից չի վախենում և ցանկացած պահին կարող է անցնել իր ուղած ճանապարհով:

«Մենք հեռացանք գիշերվա ժամը 2 անց կեսին այն կարծիքով, - կարդում ենք մեկ այլ փաստաթղթում, - որ մենք կարող ենք զորքերի փոխադրման թույլտրվություն տալ միայն այն պայմանով, որ նրանք ետ վերցնեն իրենց տերիտորիալ պահանջները»²¹:

Ալ. Խատիսյանն իր հուշերում հաստատում է, որ իրենք համաձայնվել են «գերմանական պաշտպանությամբ թույլ տալ, որ թուրքական զորքերը անցնին հայկական հողով»²²: Եվ այդ մասին հեռագրում են Թիֆլիս:

Սակայն, Անդրկովկասյան կառավարությունը մայիսի 15-ի հեռագրով հրահանգում է բանակցելու թուրքերու հետ Ալեքսանդրապոլ – Ջուլֆա երկաթգծի վերաբերմամբ, իսկ մինչև համաձայնության կայանալը «կը հրամայէր զոր. Նազարպէկեանին «պահել Ալեքսանդրապոլը եւ երկաթուղագիծը զինու զորութեամբ»²³:

Նույն օրն իսկ թուրքերը պնդում ենք, որ Բրեստ-Լիտովսկը չի կարող հիմք հանդիսանալ հաշտության համար և պահանջում են իրենց պայմանների կատարում: Այդ օրը, ինչպես նշեցինք, գրավվում է Ալեքսանդրապոլը:

Մայիսի 17-ին և 18-ին հեռագրային բուռն փոխանակություններ են տեղի ունենում Թիֆլիսի և Բաթումի միջև:

Մեյմի ՅՅԴ խմբակցությունն իր պատվիրակությունից երեք բան է խնդրում.

1. Հասնել նրան, որ գերմանացիները պաշտպանեն Ալեքսանդրապոլ – Ջուլֆա երկաթգիծը:

2. Հայկական զորքերը մնան երկաթգծի երկու կողմերի իրենց դիրքերում:

3. Այս երաշխիքները ստանալուն պես հաշտության պատվիրակությունն հանդես գա ժողովրդին ուղղված կոչով՝ մնալու հանդարտ²⁴:

Սակայն, թուրքերը հայտնում են հետևյալը. «Ինչի՞ են պետք ձեզ գերմանացիները: Մենք ինքներս կրնանք ձեզ հետ համաձայնության գալ: Թող բնակչությունը մնայ իր տեղը»²⁵:

Տեսնելով, որ որևէ երաշխիք չեն ստանում՝ հայ պատվիրակները կոչով հանդես չեն գալիս:

Այսպիսով, բանակցությունները մտնում էին փակուղի հետևյալ պատճառներով.

Առաջին. Գերմանացիներն ի վիճակի չէին կասեցնելու թուրքական ծրագրերը:

Երկրորդ. Մեյմում չկար միակամություն՝ թուրքերի դեմ համատեղ դուրս գալու խնդրում:

²⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 10-11:

²¹ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 11:

²² **Ալ. Խատիսյան**, նշվ. աշխ., էջ 72:

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում, էջ 73:

²⁵ Նույն տեղում:

Երրորդ. Վրացիները ավելի շատ գերադասում էին սեփական ժողովրդի ապահովությունը, որի երաշխիքներն ստացան գերմանացիներից, քան հայերին միանալը՝ հանուն Կովկասյան պետության կայացման:

Չորրորդ. Թաթարները ցանկանում էին Անդրկովկասում թուրքերի տիրապետության:

Այս չորրորդում համոզվելու համար, դիմենք փաստերի: Այսպես, Ս. Վրացյանը հետևյալն է գրում. «Հայ ներկայացուցիչները Բաթումում փորձեցին համաձայնության գալ ադրբեջանցիների հետ, բայց հանդիպեցին խիստ անզիջող վերաբերումի, ադրբեջանցիները պահանջում էին ոչ միայն ամբողջ Ղարաբաղը, Զանգեզուրն ու Շարուր-Նախիջևանը, այլ եւ Երևանի ու Էջմիածնի գաւառների մեծ մասը՝ Երևան քաղաքով հանդերձ: «Հայաստանի մայրաքաղաք կարող է լինել Էջմիածինը», ասում էր շնականօրեն Ուսուլաբեգովը Խան-Նոյսկու և Ռասուլ Զադեի հաւանութեամբ: Եւ սրանք համարում էին դեռ չափաւորներ: Անդին գործում էր դր. Սուլթանովը Գանձակի ու Բագուի Ազգ. Խորհուրդների խան ու բեգ անդամների հետ, որոնցից 30 հոգիանոց մի պատուիրակութիւն եկել էր Բաթում եւ համոզում էր թուրքերին օր առաջ շարժվել դեպի Անդրկովկասի խորքերը՝ ազատելու համար Բագուի մահմեդականներին՝ բոլշեւիկների եւ հայերի ձեռքից:

Ազրբեջանցի թուրքերը անդրկ. պատուիրակութեան մեջ անվերապահ կերպով պաշտպանում էին թիւքերին եւ իրենց քայլերը յարմարեցնում վերջիններիս ծրագիրներին»²⁶:

Այս ընդարձակ մեջբերումից վերջնականապես համոզվում ենք, որ թաթարների Անդրկովկասյան դաշնության մեջ միավորելը ձևական բնույթ էր կրում և նրանք անհամբերությամբ էին սպասում այն օրվան, երբ թուրքերը կգրավեն Անդրկովկասը: Այս ուղղությամբ մտածելն արդեն ավելորդ էր դառնում:

Ինչ վերաբերվում է վրացիներին, ապա՝ այս առումով Բաթումի կոնֆերանսի օրերին նրանց բռնած դիրքը և գաղտնի դաշինքը գերմանացիների հետ համարվել է թիկունքից հարված հայերին: Սակայն, եթե գերծ մնանք զգացմունքայնությունից, պետք է պնդենք, որ այդ դաշինքին նրանց մղեցին գերմանացիները, որոնք Ֆոն Լոսովի միջոցով ապարդյուն փորձելով ազդել թուրքերի վրա Հայաստանի վրա չհարձակվելու առումով, վճռեցին «գոնե Վրաստանը ընդգրկել Բեռլինի ազդեցության ոլորտը»²⁷:

Անկարող լինելով զսպել թուրքերին Հայաստանի հարցով, նրանք այն զոհաբերեցին՝ պահելով Վրաստանը: Վրաստանի դիրքորոշման հետ կապված հարկ ենք համարում շեշտել, որ հայերի հետ մեկ անկախ պետության մաս կազմելու հանգամանքի առկայությունը պետք է նրան ստիպեր համատեղ դուրս գալու ընդդեմ թուրքերի, բայց վրացիները չէին ուզում կռվել:

Այնուամենայնիվ, նրանք առաջնորդվեցին սառը դատողությամբ՝ Վրաստանը ապահովելով թուրքական արշավանքից: Այն ժամանակ, երբ հայոց ներկայացուցիչները բանակցում էին գոր. Ֆոն Լոսովի հետ, նրա հետ գաղտնի բանակցում էին և վրացիները, որի արդյունքում Գերմանիան իր հովանավորության տակ էր առնում Վրաստանին՝ ստանալով տնտեսական շահագործման իրավունք²⁸: Ահա թե ինչու Բաթումից հեռացավ Ֆոն Լոսովը, որի հետ արդեն համա-

²⁶ Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 146:

²⁷ Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 31:

²⁸ Նույն տեղում:

ձայնեցված էր Վրաստանի անկախության հայտարարման որոշումը: Փոթիում նա սպասում էր վրաց պատվիրակությանը՝ ստորագրելու համար վրաց-գերմանական համաձայնագիրը:

Վրաց ավելի ահավոր դավադրությունն հայերի նկատմամբ այն էր, որ նրանք Բաթումում ոչ պաշտոնական բանակցությունների մեջ մտան թաթարների հետ այն հիմնավորումով, որ եթե դաշնության երեք ժողովուրդներից մեկը, այսինքն՝ հայ ժողովուրդը դատապարտված է թուրքական ագրեսիայի գոհը լինելու, գոնե մյուս երկուսը կարողանան ստեղծել բարեկամական հարաբերություններ²⁹:

Այսպիսով, ստացվում էր, որ ավարտվում էր հայերի դերը Անդրկովկասյան քաղաքականության մեջ: Ինչպես արտահայտվում էր Ժորդանիան՝ «Վրացիները չէին ուզում խեղդվել հայերի հետ միասին»³⁰:

Ահա այս հանգամանքներում մայիսի 26-ին Վրաստանն իրեն հռչակեց անկախ, որի մասին տեղյակ էր Ֆոն Լոսովը: Սա նպաստեց, որ ազերիները նույնպես հռչակեն իրենց անկախությունը: Ի. Օերեթելին մայիսի 25-ին Սեյմի մահմեդական ղեկավարներին հայտնեց անկախության հռչակելու որոշման մասին, որից հետո նրանք նույնպես նախապատրաստեցին նման գործողություն³¹:

Հայ պատվիրակները նույնպես, ինչպես համոզվեցինք, բանակցում էին գերմանացիների հետ, բայց դրանց չէին գնում վրացիներին և նույնիսկ թաթարներին ցավ պատճառելու կամ զոհաբերելու գնով, որն իհարկե, ցանկության դեպքում էլ անհնար էր: Նրանց տարբերությունը մյուսներից կայանում էր նրանում, որ անկեղծորեն նվիրված էին Անդրկովկասյան պետության կայացման գործին: Չի կարելի պնդել, որ նրանց գործողությունները այլընտրանքային և առավել արդյունավետ ճանապարհ կարող էին ունենալ այն դժնդակ օրերին: Ինչ քայլեր որ նրանք ձեռնարկեցին, թեկուզ օրհասական, ճիշտ էին և օրինաչափ: Այլ հարց է, որ նրանք դիվանագիտական դաշտում միանգամայնորեն մենակ էին:

Երբ Բաթումում և Թիֆլիսում տեղի էին ունենում այս գործընթացները, բարեբախտաբար հիմնականում Արամ Մանուկյանի կազմակերպչական մեծ տաղանդի շնորհիվ մայիսյան հաղթանակների արդյունքում ձախողվեց թուրքերի պլանների մի մասը: Այս հանգամանքը պակաս նշանակություն չունեցավ Թուրքիայի կողմից Հայաստանի անկախության ճանաչման հանգամանքի վրա:

Մինչև այդ, ավելացնենք, որ 1918թ. մայիսի 26-ին Օերեթելին հայտարարեց Անդրկովկասյան Դաշնային Հանրապետության լուծարման անհրաժեշտության մասին և նույն օրվա երեկոյան վրացական Ազգային խորհուրդը Վրաստանը հռչակեց անկախ հանրապետություն³²:

Բավական հետաքրքիր էր ձևակերպված Սեյմի բանաձևը՝ լուծարման մասին. «Նկատի ունենալով, որ պատերազմի և հաշտության հարցերում արմատական տարաձայնություններ դրսևորվեցին այն ժողովուրդների միջև, որոնք կազմել էին Անդրկովկասյան անկախ հանրապետությունը, և այդ պատճառով անհրանարին էր դարձել Անդրկովկասի անունից խոսող մեկ հեղինակավոր իշխանութ-

²⁹ *Аркомед*, նշվ. աշխ., էջ 74-76:

³⁰ *Մ. Վրացեան*, Կենսաբի ուղիներով, Դ հատոր, էջ 117:

³¹ *Д. Енукидзе*, Крах империалистической интервенции в в Закавказье, Тбилиси, 1954, с. 48-49:

³² *Аркомед*, նշվ. աշխ., էջ 77, Документы и материалы, с. 330, *Մ. Վրացեան*, Հայաստանի Հանրապետություն, էջ 151, *Ալ. խաթիսեան*, նշվ. աշխ., էջ 81-82, *Գ. Լազեան*, նշվ. աշխ., էջ 99-102 և այլն:

յան հանդես գալը, Մեյմը արձանագրում է Անդրկովկասի տրոհման փաստը և վար է դնում իր լիազորությունները»³³:

Այս որոշումը, որը հեղինակել էին վրացիները, նշանակում էր դաշնության խզում կեղծ դրդապատճառներով, քանզի տարաձայնություններ նրանց և հայերի միջև մինչև այդ օրը չկային, իսկ թաթարներն այդ մասին, համենայն դեպս, չէին բարձրաձայնում:

Հաջորդ օրը, մայիսի 27-ին մահմեդական Ազգային խորհուրդը Թիֆլիսում որոշեց հռչակել Ադրբեջանի անկախությունը: Ադրբեջանի հանրապետությունը պետք է ներառեր հարավային և արևելյան Անդրկովկասը՝ Գյանջան ունենալով մայրաքաղաք, քանզի Բաքուն գտնվում էր հայկական և բոլշևիկյան համատեղ իշխանության ներքո³⁴: Անկախության ակտը պաշտոնապես հռչակվում է հաջորդ օրը:

Մինչև հայ պատվիրակների հետագա գործողություններին անդրադառնալը, կուզենայինք նշել, որ սփյուռքահայ պատմաբան Ջ. Մսերյանը այնքան էլ ճիշտ չէ, երբ գրում է, թե «Անդկովկասեան Մեյմը թրքական ճնշումներու առջեւ լուծուեցավ»³⁵:

Թուրքերը նման խնդիր չէին դնում, այլ պարզապես նոր պայմաններ էին թելադրում՝ շեղվելով Բրեստ-Լիտովսկի դաշնագրից, որի դեպքում անհրաժեշտ էր գեթ հայ-վրացական համատեղ պայքար նրանց դեմ, որից խուսափելով Դաշնությունը կազմաքանդեցին վրացիները:

Այդ պարզ երևում է նաև հետևյալից: Այսպես, մայիսի 25-ի գիշերը Բաթում հասած Ժորդանիան (նա եկել էր, որ Չխենկելիին տեղյակ պահեր անկախության որոշման մասին) Ալ. Խատիսյանին հաղորդում է, որ թուրքերը շարունակում են իրենց առաջխաղացումը, իսկ հայերը՝ պատերազմը և իրենց այլ ելք չի մնում, քան անկախության հռչակումը:

Երբ Ալ. Խատիսյանի զարմացած բացականչում է՝ «չէ՞ որ մենք եւ դուք միասին պատերազմի մէջ ենք, ընդհանուր պատերազմի մէջ ընդհանուր թշնամիին դէմ: Ինչպէ՞ս կրնաք լքել մեզ, երբ մենք դեռ արիւն կը թափենք: Մի թե ազնիվ բան է այս», Ժորդանիան հետևյալն է պատասխանում.

«- Ազնիւ բան է այն, ինչ որ օգտակար է ժողովուրդներու»:

«Մենք չենք կրնար խեղդուիլ ձեզի հետ միասին, - շարունակում է այնուհետև նա, երբ Ալ. Խատիսյանը հարցնում է՝ «իսկ մե՞նք», - «Մեր ժողովուրդը կ'ուզէ փրկել այն ինչ որ կրնայ: Դուք ալ պարտաւոր էք համաձայնութեան մը լեզու մը գտնել Թուրքերուն հետ: Ուրիշ ելք չունինք»³⁶:

Ահա թե իրականում ով էր Դաշնության կազմաքանդողը: Ի վերջո, դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ այդ կազմաքանդումով երեք ժողովուրդներն էլ տուժեցին, կորցնելով իրենց անկախությունը 1920-21թթ.-ին, իսկ Անդրկովկասյան համադաշնության գաղափարը եթե գործեր, ապա՝ առավել հեշտ կլիներ դիմակայելու բոլշևիկյան աշխարհակալական ձգտումներին: Բացի այդ,

³³ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 222:

³⁴ *Hovannisian Richard G.*, Armenia on the Road to Independence, 1918, Berkley and Los Angeles, 1967, p. 305.

³⁵ *Ջաեն Սուրբեն*, Երեք դաշնագիրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի դաշնագիրերը, 1920-1921թթ.), Պեյրուք, 1979, էջ 23:

³⁶ *Ալ. Խատիսյան*, նշվ. աշխ., էջ 81-82:

ժամանակը ցույց տվեց որ ցնորական գաղափար էր պանթուրքիզմը, որով տարվեցին Կովկասի թաթարները:

Այժմ վերլուծենք այն իրադարձությունները, որոնք տեղի ունեցավ Անդրկովկասյան Դաշնության կազմալուծումից հետո:

Ն. Ժորդանիայի հետ հանդիպումից հետո Ալ. Խատիսյանն ու Հովհ. Քաջազունին մտածում են, որ այլ ելք չի մնում, քան հայտարարել Հայաստանի անկախությունը ևս: Բանակցությունների շարունակությունը դառնում էր անտեղի, քանզի չկար հստակ դիրքորոշում: Նույն գիշերն իսկ թուրքերը ներկայացնում են վերջնագիր՝ պահանջելով ընդունել Բաթումի կոնֆերանսի 1-ին նիստում ներկայացված պահանջները: Սա և վրացիների Բաթումից մեկնումը առիթ են հանդիսանում, որպեսզի հայ պատվիրակները նույնպես վերադառնան Թիֆլիս, ուր հասնում են մայիսի 27-ի առավոտյան: Նրանք անմիջապես այցելում են Ազգային Խորհրդի շենքը, ուր զեկուցում են Բաթումի խորհրդածողովի մասին: Կացությունը լրջացել էր արդեն, քանզի վրացիների դավադիր որոշումից հետո անհրաժեշտ էին դրանից բխող լուրջ քայլեր, որոնք, համենայն դեպս, ոչ բոլորն էին ուզում ուղղել դեպի անկախության հռչակումը: Հայոց Ազգային Խորհուրդը հանձնարարում է իր անդամներին ցրվել և մինչև հաջորդ առավոտվա ժամը 10-ը բերել իրենց կուսակցական կամ ոչ կուսակցական որոշումները խնդրի կապակցությամբ:

Պայմանավորված օրը Ազգային Խորհուրդը հավաքվում է և նրա գրեթե բոլոր անդամները կողմ են արտահայտվում Հայաստանի անկախության հռչակման:

Մինչև այդ, Մեյմի լուծարման օրը, այդ խնդրի շուրջը տարաձայնություններ կային Խորհրդի անդամների միջև: Արտաշես Բաբայանը գրում է, որ. «Ազգային Խորհրդի դաշնակցական անդամները բաժանուած էին երկու կողմերի - անկախութեան կողմնակից էր Ս. Վրացեանը, հակառակ էին Ա. Ահարոնեանը, Ռ. Տէր Մինասեանը եւ Ա. Բաբալեանը: Վերջին խմբին միացան սոցիալիստ-յեղափոխականները, չեզոքները՝ Ստ. Մամիկոնեան եւ Մ. Բեկզադեան եւ եթէ չեմ սխալւում ժողովրդականներից մեկը: Եւ այդպիսով Խորհրդի մեծամասնութիւնը բանաձեւ հանեց անկախութեան դէմ»³⁷:

Բայց, շուտով բոլորը համոզվեցին, որ դա ճիշտ ելք չի, մանավանդ Բաթումից վերադարձած Ալ. Խատիսեանի և Հովհ. Քաջազունու զեկուցումից հետո: Մայիսի 28-ին կազմվում է անկախության բանաձևը, իսկ հայտարարությունը լինում է մայիսի 30-ին: Այն ուներ հետևյալ բովանդակությունը.

«Յայտարարութիւն

Անդրկովկասի քաղաքական ամբողջութեան լուծումով եւ Վրաստանի եւ Ազրպեյջանի անկախութեան հռչակումով ստեղծուած նոր դրութեան հանդէպ Հայոց Ազգային Խորհուրդը իրեն յայտարարում է հայկական գաւառներու գերագոյն և միակ իշխանութիւն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մօտիկ օրերը կազմել Հայոց Ազգային Կառավարութիւն՝ Ազգային Խորհուրդը ժամանակաւորապէս ստանձնում է կառավարման բոլոր ֆունկցիաները՝ հայկական գաւառների քաղաքական եւ վարչական դեկը վարելու համար:

³⁷ Էջեր Հայաստանի անկախութեան պատմութենէն, գրեց՝ **Ա. Բաբալեան**, «Հայրենիք» ամսագիր, էիւ 8, Յունիս, 1923, էջ 43:

1918թ. Մայիս 30, Թիֆլիս»³⁸:

Թե հայտարարությունն ինչու էր այս ձևով, լավ է բացատրել Ռուբենը՝ «նախ, դրանով կ'անկարկուէր այն բոլոր հայաբնակ գաւառներին, որ ընկած էին Ադրբեջանի եւ Վրաստանի մէջը, քանի որ հիւսիսից չկար դեռէս որոշման սահման. երկրորդ՝ նա չէր ուզեր Հայաստան անունը գործածելով, ընդառաջել Թուրքիոյ այն ձգտումին, որ Հայկական Հարցի կեդրոնը Տաճկաց Հայաստանից փոխադրուի Անդրկովկասեան Հայաստանի մէջը»³⁹:

Դեռևս հայտարարությունից առաջ, բանաձևի ընդունման օրը, մայիսի 28-ին, Ազգային Խորհուրդը Բաթում է ուղարկում պատվիրակութիւն Ալ. Խատիսյանից, Հովհ. Քաջազունուց և Մ. Պապաջանյանից կազմված՝ տալով նրան բացարձակ լիազորություններ բանակցելու և հաշտություն կնքելու հանուն անկախ Հայաստանի⁴⁰:

Ալ. Խատիսյանը հետևյալն է գրում. «Այսպիսով, 1918 Մայիսի 28ին, ցերեկուայ ժամը 12ին, հոջակուեցաւ Հայաստանի անկախութիւնը: Կառավարութեան կազմութիւնը յետաձգուեցաւ մինչեւ հաշտութեան պատուիրակութեան Պաթում ելթալն ու վերադառնալը, որովհետեւ Քաջազունիի և իմ մասնակցութիւնը կառավարութեան մէջ կը նկատուէր, իսկ մենք պէտք է նորէն երթայինք Պաթում: **Թուրքերու վերջնագրին պայմանաժամը կը լրանար հետեւեալ օրը մայիսի 29ին, երեկոյեան ժամը 8ին: Հետեւաբար պէտք էր շտապել**»⁴¹: (Ընդգծումը մերն է - Ա. Ն., Զ. Թ.)

Մեր ընդգծած նախադասությունից այն տպավորություն եւ ստանում, որ Ալ. Խատիսյանը և մյուսները տեղյակ չէին, որ այդ օրերին թուրքերը պարտություն էին կրել, ուստի և նրանց վերջնագիրը ոչ մի նշանակություն այլևս չունէր:

Յավոք, հայերը Բաշ-Ապարանում և Սարդարապատում պարտության մատնելով թուրքերին՝ չդիմեցին հակահարձակման, որի դեպքում վերջիններս կնահանջեին, իսկ պատվիրակությունը կարող էր վիճարկել Խալիլի և Վեհիբի պահանջները Բաթումում:

Մինչև Բաթումի պայմանագրին անցնելը կարևոր ենք համարում այն հարցի պատասխանի որոնումը, թե հնարավոր էր արդյոք շարունակել հակազդուրը և հետ վերցնել ոչ միայն Ալեքսանդրապոլը, այլև՝ Կարսը: Փաստերից կարելի է հետևեցնել, որ հնարավոր էր: Այսպես, Մ. Վրացեանը հետևյալն է գրում. «Մայիսի 28-ին ամբողջ ճակատի վրա, թիւրքերը նահանջում էին անկարգ: Մեր սպայակոյտի այդ օրւայ հաղորդագրութիւնը ասում է այդ մասին. «Թիւրքերը երեք օրւայ կռիւներից յետոյ, ջարդուած են եւ նահանջում են հապճեպով: Նրանց զօրամասերը բաժանուած են երեք խմբերի: Առաջինը՝ Ալազեռոյ կայարանից նահանջում է դէպի Անի կայարանը, երկրորդը՝ Դըրմըզլու եւ երրորդը՝ Աղջա-Կալա: Մեր զօրամասերը քայլ առ քայլ հետապնդում են նրանց: Ոգեւորութիւնը աներեւակայելի է»:

Եվ իրօք, ոգեւորութիւնը շատ մեծ էր: Զօր. Միլիկեան այլեւս մտածում էր աւելի լայն գործողութիւնների մասին - շարժել դէպի Ալեքսանդրապոլ: Իր

³⁸ Հայաստանի Հանրապետութեան Բոստոնի Կեդրոնական Արխիվ, թղթածրար 1/1, գործ 6:

³⁹ **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. է (7), էջ 136:

⁴⁰ Մ. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, էջ 153, **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 85, **Զ. Մսերջեան**, նշվ. աշխ., էջ 23, **Ռ. Գ. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 37:

⁴¹ **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 85:

մտքում նա օրորում էր որիշ ծրագիր, որ միայն մտերիմներին էր յայտնում. մի կողմ թողնել Ալեքսանդրապոլը եւ յարձակւել Կարսի վրա: Եւ համոզւած էր, որ կը գրաւէ Կարսը, իսկ Կարսի գրաւումով անխուսափելիօրէն կը գրաււէր եւ Ալեքսանդրապոլը, թիկունքից կտրւած թիրաքերը չէին մնայ Շիրակում»⁴²:

Սիլիկյանը հանդես է գալիս կոչով՝ շարժվել դեպի Ալեքսանդրապոլ և նախապատրաստվում է գործողությունների, երբ Նազարբեկովից հրահանգ է ստանում՝ կնքելու զինադադար, քանզի Բաթումում ստորագրվել է հաշտության պայմանագիր: Իսկ Նազարբեկովը երբեք չէր գնում ինքնուրույն քայլերի և հնազանդորեն կատարում էր իրեն տրված հրահանգները վերևից:

Բաթումի պայմանագիրը կասեցնում է հայերի առաջխաղացումը, որը կարծում ենք, հաղթանակով էր պսակվելու և ամեննին էլ համոզիչ չեն Ս. Վրացյանի, Ռ. Հանգիստյանի և այլոց այն պատճառաբանությունները, թե հայկական կովոդ ուժերը փոքր էին և զինապահեստները դատարկ⁴³:

Միթե՞ հաղթանակի գրավականը միայն քանակի մեջ է: Անշուշտ, ոչ:

Սակայն, հակահարձակումը տեղի չունեցավ և պայմանագիրն էլ ստորագրվեց:

Այսպիսով, կարելի է հետևյալ հայեցակարգային մոտեցումը ներկայացնել. **եթե Բաթումում հայ պատվիրակները տեղյակ լինեին հայկական հաղթանակներից, կարող էին մերժել թուրքական վերջնագիրը և Բրեստ-Լիտովսկի կետերը շրջանցող պահանջները, իսկ եթե հայկական կովոդ ուժերը տեղյակ լինեին Բաթումի դաշնագրից, ամենայն հավանականությամբ կպարտադրեին այլ սահմաններ:** Բաթումի համաձայնագիրը սառը ջուր լցրեց հայոց ոգևորության վրա և հետ պահեց միշտ անվճռական Նազարբեկովին:

Այս ամենից չպետք է հետևեցնել, որ Բաթումի պայմանագիրը և դրան նախորդած արդեն հայ-թուրքական բանակցություններն ավելորդ էին: Նման հարցադրումը սխալ կլինի: Խնդիրը վերաբերվում է երկու կողմերի պահանջների փոփոխության հնարավորությանը:

Այժմ ներկայացնենք Բաթումի հայ-թուրքական բանակցությունների ընթացքը և փորձենք ճշտել այն սահմանները, որոնք ունեցավ Հայաստանը դրանց հետևած դաշնագրով:

Հայաստանի պատվիրակությունը Բաթում է հասնում մայիսի 29-ին, ցերեկվա ժամը 12-ին: Այն անմիջապես նամակ է ուղարկում թուրքական պատվիրակության, որն այն ստանում է երեկոյան ժամը 19-ին, վերջնագրի լրացման ժամկետից մեկ ժամ առաջ:

Վրացիները չեն շտապում ներկայանալ, թեև վերջնագիրը վերաբերվում էր նաև նրանց, հույսները դնելով գերմանացիների վրա: Նրանք Խալիլի հետ հարաբերությունների մեջ են մտնում միայն մայիսի 31-ին, որը շատ վատ տպավորություն է թողնում թուրքերի վրա:

Բանակցություններն սկսվում են մայիսի 30-ին, ցերեկվա ժամը 12-ին, ֆրանսերեն լեզվով:

Հենց առաջին նիստին էլ Վեհիբ փաշան գծում է Հայաստանի սահմանները քարտեզի վրա:

⁴² Մ. Վրացեան, Հայաստանի Հանրապետություն, էջ 142:

⁴³ Նույն տեղում, էջ 144, Ռ. Գ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 37:

Ընդհանրապես թե՛ ժամանակակիցների հուշագրական բնույթի գործերում և թե՛ պատմագիտական գրեթե բոլոր աշխատություններում Բաթումի պայմանագրով Հայաստանի սահմանները ներկայացվում էին 9-ից մինչև 12 հազ. քառ. կմ: Այսպես, Ալ. Խատիսյանը գրում է. որ իրենց տրված «անկիւնը հազիւ 9.000 քառ. քիլոմէթր կը պարունակէր» և թուրքերի ձեռքն էր անցնում «ամբողջ Կարսի շրջանը. Ախալքալակի գաւառը, Ալեքսանդրապոլ քաղաքը, Համամլու-Երեւան խճուղին, Սուրմալուի գաւառը, Երեւանի նահանգի կեսը եւ Ղարաքիլիսա-Ուլուխանլու ամբողջ երկաթուղին»⁴⁴:

Եվ միայն իրենց պահանջներին տեղի տալով, «յանուն սկսուած լաւ յարաբերութիւններու, թուրքերը համաձայնվում են զիջել Համամլու-Երեւան խճուղին եւ որ սահմանն անցնի Արագած լեռան գագաթով և ելնի մինչև Վաղարշապատ, որով հայերը շահում էին 1000 քառ. կմ տարածություն, որով փաստորեն Հայաստանն ունենում էր 10.000 քառ. կմ տարածք»⁴⁵:

Սակայն, կարծում ենք որ ճիշտ չի լինի պնդել, որ իսկապես Հայաստանը Բաթումի պայմանագրով նախատեսված տարածքն էր զբաղեցնում, որովհետև դրանով գծվում էր միայն Թուրքիայի հետ սահմանները, իսկ Վրաստանի և Ադրբեջանի հետ սահմաններն անորոշ էին: Ուրեմն, Հայաստանի սահմանները, որոնք գծվում էին 14 կետեր ունեցող դաշնագրի 2-րդ հոդվածով տեսականորեն էր ընդգրկում 10.000 քառ. կմ տարածքը: **Ինչպես կարելի է մի հարևանի հետ սահմանների իրավական ամրագրմամբ որոշել մեկ պետության տարածքը, երբ մյուս երկու հարևանների հետ ոչ մի նման իրավական ամրագրում չկար:**

Մայիսի 28-ի Ազգային խորհրդի բանաձևով, ինչպես տեսանք, այս մարմինն իրեն համարում էր հայկական գավառների միակ իշխանություն, իսկ դրանցից շատերը վրացիներն ու թաթարներն համարում էին իրենցը: Նույն Ալ. Խատիսյանը հետևյալն է գրում. «Վրացիները մեզմե կը պահանջեն խոշոր հայկական հողամաս մը մինչեւ Երեւան»⁴⁶:

Ուրեմն եզրակացությունը մեկն է՝ **Բաթումի պայմանագրով նախորոշված սահմանները նոր անկախ Հայաստանի փաստացի սահմանները չէին և մատնանշված 10 հազ. քառ. կմ տարածքը, որը հաշվվում է այդ դաշնագրով սահմաններ էին սոսկ թղթի վրա:** Հայաստանը հռչակվել էր անկախ և նրա անկախությունը Բաթումում թուրքերը ճանաչեցին միանգամայնորեն անորոշ տարածքների վրա, անկախ նրանից, հայ-թուրքական սահմանագիծը մատնանշվեց այդ պայմանագրով:

Եթե դրանով թուրքերը Հայաստանին էին թողնում նոր Բայազետի գավառը և Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Երևանի և Շարուր-Դարալագյազի գավառների արևելյան կեսը⁴⁷, այդպես էլ տեսականորեն, ինչպես որ տեսականորեն հայկական գավառների միակ իշխանություն էր Ազգային խորհուրդը, որովհետև պայմանագրում այս տարածքների մասին կետ չկար:

Ընդհանրացնենք. 1918թ. հունիսի 4-ին քննված Բաթումի պայմանագրով, որը որակավորվել է որպես խայտառակ դաշնագիր (հատկապես խորհրդահայ պատմագրության կողմից) կատարվում էր մի գնահատելի քայլ, որն էր հայ-թուր-

⁴⁴ *Ալ. Խատիսյան*, նշվ. աշխ., էջ 87:

⁴⁵ Նույն տեղում, էջ 87:

⁴⁶ Նույն տեղում, էջ 86:

⁴⁷ *Ռիչարդ Գ. Հովհաննիսյան*, նշվ. աշխ., էջ 37:

քական պատերազմի շարունակության կասեցումը, իսկ նրա 2-րդ կետի սահմաններով Հայաստանն երբեք գոյություն չի ունեցել: Սա է պատմական ճշմարտությունը:

Հոդված 2-րդով տրվում էր այն սահմանագիծը, որը բաժանում էր Օսմանյան կայսրությունը Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի հանրապետություններից⁴⁸, իսկ այս երեքի սահմանագծերն անորոշ էին: Ուրեմն վիճարկելի է 10 հազ. քառ. կմ-ով Հայաստանի ձևավորումը Բաթումի դաշնագրով *de facto*:

Բայց քանի որ մեր նպատակն է ներկայացնել ՀՀ սահմաններն ըստ պայմանագրերի, ապա՝ կարևոր ենք համարում մեջբերել դրանց նախատեսումը ըստ Բաթումի պայմանագրի, որի 2-րդ հոդվածում հետևյալն ենք կարդում. «Ներքոհիշյալ ուղղությունն ունեցող սահմանագիծը բաժանում է Օսմանյան կայսրությունը Վրաստանի Հանրապետությունից, Հայաստանի Հանրապետությունից և Ադրբեջանի Հանրապետությունից:

Սահմանն սկսվում է այն կետում, որտեղ Ճորոխ գետը թափվում է Սև ծով, և մինչև Շազնաբադ սարը միաձուլվում է հին սահմանի հետ՝ մինչև 1877թ. պատերազմը, անցնելով լեռնագագաթների գծով՝ այն հասնում է Խալխամ և Մեպխակար սարերը (1856 թվականի սահմանով), ապա՝ թեքվում է դեպի հարավ, անցնում է Փիրսաղաղ սարի գագաթով, Աբասթումանից երկու կիլոմետր հարավ և, թեքվելով դեպի հյուսիս-արևելք, հասնում է Կարխուլ-դաղի գագաթը, այստեղից սկզբում հինգ կիլոմետր ձգվելով դեպի հյուսիս-արևելք և ապա դեպի հարավ-արևելք, այն հասնում է Գուրկել վայրը, անցնում է Քուռ գետի վրայով՝ Ածխուրիից երկու կիլոմետր հարավ և, անցնելով Ղայաբաշի, Օրթաթափա, Ղարաղայա սարերի գագաթների գծով, հասնում է Տաբից-կուրի լիճը՝ Մոլիտի վանքից անմիջականորեն հարավ: Սահմանն այդ լիճը կտրում է այնպես, որ Օսմանյան տերիտորիայում է մնում լճի մի մասը, որը գտնվում է հարավում՝ ուղիղ գծով, որ Մոլիտի վանքի հարավից անմիջականորեն գնում է մինչև լճի հյուսիսային վերջավորությունից մեկուկես կիլոմետր հարավ-արևելք՝ հակադիր ափին գտնվող կետը և հասնում է Թավկոտելի սարը: Այնուհետև այն իջնում է դեպի հարավ, անցնում է Շավանդաղ, Կարագուզու, Մամսար սարերի գագաթներով և, թեքվելով դեպի արևելք, անցնում է Դավագիրան լեռնաշղթայի գագաթներով, ապա ուղղվում է դեպի հարավ, անցնելով Աչրիքար, Բաշգիրան, Նուր-ռահման սարերի գագաթներով: Նուր-ռահման սարից հետո այն շարունակում է գնալ հարավային ուղղությամբ և շարունակ անցնելով լեռնագագաթների գծով, հանդիպում է Ալեքսանդրապոլ-Թիֆլիս երկաթգծին՝ Աղբալաղ բնակավայրից հինգ կիլոմետր արևմուտք, այստեղ այն անցնում է լեռնագագաթներով մինչև Խանվալի վայրը, որտեղից համարյա ուղիղ գծով այն հասնում է Ալագյազ լեռան առավել բարձր գագաթը և, շարունակելով գնալ ուղիղ գծով, հասնում է Էջմիածին-Սարդարապատ խճուղին՝ Էջմիածնից յոթ կիլոմետր տարածության վրա և շարունակում է գնալ Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղուն զուգահեռ ուղղությամբ, մնալով նրանից մոտ վեց կիլոմետր, իսկ Բաշգիրան վայրից դեպի հարավ-արևմուտք տասնվեց կիլոմետր հեռավորության վրա, այն հասնում է այդ վայրից դեպի երկաթուղին տանող ճանապարհը, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում է Աղաղի-Չանախչի բնակավայրերի վրայով հասնում է Էլփին-չալ գետը, որով գնում է

⁴⁸ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 532, նաև՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 56:

մինչև Արփա բնակավայրը, այս վերջին հովիտը, հասնում է Ռեանլա-չայ գառի-թափը, շարունակվում է այդ գետի հովտով Ագա բնակավայրի հարավային կողմից հասնելով Ալիջան բնակավայրը, որ գտնվում է նախկին ռուս-պարսկական սահմանագծի վրա»⁴⁹:

Հարց է առաջանում սա Հայաստանի սահմանները գծող հողված էր, թե՞ Թուրքիայի և Անդրկովկասի: Հարկավ, վերջին երկուսի և այդ մասին նշվում է հողվածի սկզբում: Դրանով փաստորեն Թուրքիան ընդլայնում էր իր սահմանները դեպի Անդրկովկաս 1914թ. իրավիճակի և Բրեստ-Լիտովսկի պայմանագրի խախտումով:

Փաստորեն թուրքերին էին մնում ամբողջ Կարսի շրջանը, Ախալքալակի գավառը, Ալեքսանդրապոլ քաղաքը, Սուրմալուի գավառը, Երևանի գավառի կեսը և Ղարաքիլիսա-Ուլուխանլու ամբողջ երկաթուղին:

Բայց արդյոք սա նշանակում է, որ Հայաստանի սահմանները կազմում էին 10.000 քառ. կմ:

Դարձյալ ոչ և ընդհանրապես սխալ կլինի որոշել այդ սահմանների չափը, որովհետև Ղարաբաղը այդ ժամանակ de facto անկախ միավոր էր⁵⁰, Զանգեզուրում ամրացել էր Անդրանիկը, Նախիջևանը ոչ հայկական էր, ոչ թուրքական, ոչ թաթարական և այլն:

Ալ. Խատիսեանը հետևյալն է գրում. «Երբ անդրկովկասեն հանրապետությունները հաշտություն կնքեցին Թուրքիոյ հետ, անմիջապես հերթական դարձաւ սահմաններու խնդիրը նորակազմ հանրապետություններու միջեւ, հրապարակեկան Լոռիի, Ղազախի, Զանգեզուրի, Սեւանայ լճի, Ղարաբաղի, Նախիջեւանի եւ այլ ցաւոտ սահմանային խնդիրներ»⁵¹:

Սա նշանակում է, որ այս տարածքները եթե հայկական պետության մաս միջազգային իրավունքի նորմերով չէին կազմում, ապա՝ մաս չէին նաև մյուս երկու հանրապետություններին: Իսկ Ազգային խորհրդի մայիսի 28-ի բանաձևով, դրանք մաս էին կազմում հայկական իշխանության:

Այսպիսով, de facto 10.000 քառ. կմ տարածքով Հայաստան գոյություն չի ունեցել, այլ՝ **Թուրքիայի կողմից անկախ ճանաչված Հայաստան՝ միայն նրա հետ ճշտված սահմաններով:**

Ավելացնենք նաև, որ եթե պայմանագրից հետո թուրքական զորքերը Ղարաքիլիսայի վրայով անցնում են Դիլիջան և Ղազախ, որտեղից էլ Բաքու, ապա դա ամեննին չի նշանակում, որ նրանք ռազմակայել էին այդ տարածքները:

Ամփոփելուց առաջ կարևոր ենք համարում ևս մեկ հարցի պատասխանի որոնումը, այն է՝ ի՞նչ շահեցին վրացիները կազմալուծելով Անդրկովկասյան Դաշնությունը և ապավինելով գերմանացիներին:

Բաթումում թուրքերի հետ պայմանագրերն առաջինը կնքում են հայերը: Վրացիները դանդաղում են ստորագրել, քանի որ հույս ունեին թուրքերին զիջումներ պարտադրել:

Սակայն, թուրքերը, ի վերջո, պարտադրում են նրանց՝ ստորագրելու պայմանագիր՝ ոչ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի հիմքով: Այն պարզ երևում է պայմանագրի տեքստից, որի երկրորդ կետը գրեթե հայ-թուրքական դաշնագրի նույն կետի կրկնությունն է:

⁴⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23. թ. 96-98:

⁵⁰ Տե՛ս **Եղիշե Բշխանեան**, Լեռնային Ղարաբաղ, 1917-20, Երևան, 1999:

⁵¹ **Ալ. Խատիսեան**, նշվ. աշխ., էջ 92:

Թուրքերը փաստորեն վրացիներին զիջում են միայն Աբասթումանը⁵²:

Իսկ եթե նրանք հայերի նկատմամբ չդիմեին այսպես կոչված «թիկունքային դիվանագիտության» և թուրքերի դեմ հանդես գալին հայերի հետ միասնական ճակատով, հնարավոր է, որ նրանց կպարտադրվեին առնվազն 1914թ. սահմանները :

Ամփոփելով նշենք, որ այսպիսով.

Առաջին. Բաթումի խորհրդաժողովում թուրքերը հասան նրան, որ Անդրկովկասին պարտադրեցին սահմաններ, որոնք չէին նախատեսված Բրեստ-Լիտովսկի դաշնագրով:

Երկրորդ. գերմանացիների օգնության հույսով Թուրքիայից զիջումներ կորզելու ձգտումը ստիպեց վրացիներին՝ կազմաքանդելու Անդրկովկասյան պետությունը, չնայած, որ Փոթիի պայմանագիրն էլ դաշինք չդարձավ գերմանացիների օգնությամբ թուրքերին իրենց պահանջները պարտադրելու առումով:

Երրորդ. Բաթումի պայմանագրով գծվեցին Անդրկովկասի երեք հանրապետությունների և Թուրքիայի միջև եղած տարածքները, իսկ այդ երեք հանրապետությունների միջև սահմանները մնացին անորոշ, որը նշանակում է ճիշտ չի լինի Հայաստանի տարածքը սահմանափակել 10 հազ. քառ. կմ-ով:

Բաթումի պայմանագրով ավարտվեց հայ-թուրքական պատերազմը, բայց դրա փոխարեն սկսվեցին սահմանային վեճերը վրացիների և թաթարների հետ:

Ашот Нерсисян, Джаваир Торосян – Конференция в Батуми. Вопрос границ Армянской Республики в Батумском договоре. – После распада Федеральной Республики Закавказья, который произошел на конференции в Батуми границы Армянской Республики были не точны. По батумскому договору были расчерчены территории между тремя республиками Закавказья и Турцией, а границы между этими тремя республиками остались нерешенными, что означало было бы неверным ограничить территорию Армении 10-ью тыс. кв. километрами. По батумскому договору закончилась армяно-турецкая война, но вместо этого начались пограничные раздоры с грузинами и татарами.

Ashot Nersisyan, Javahir Torosyan – Summary of the conferense of Batoumi and the question of Armenia's border in the Batoumi contract. – After the collapse of the Caucasus's Federal Republic, which took plase in Batoumi's conference, the borders of the RA were not correct. According to the Batoumi contract, the territories were divided among the three republics of the Caucasus and Turkey. And the borders among the three republics remained in question. It would the wrond to limit the territory of Armenia to 10.000 squire hilometerrrs. According to the Batoumi contract, the war between Armenia and Turkey ended. But instead, new fights began between the Georgians and the Tatars.

⁵² Գ. Լազեան, նշվ. աշխ., էջ 107-108:

**ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՇԽՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԻ ԸՆԹԱՑՔԸ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ
1916 Թ. ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ 1917 Թ. ՄԿՋԲՆԵՐԻՆ**

ԱՎԵՏԻՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1916 թ. նոյեմբերյան գաղթից հետո թուրքական զորքերն օգտվելով առիթից, հաստատվում են Վանից 4-5 ժամ հեռավորության վրա գտնվող Ոստան քաղաքում և մոտակա Աթանանց գյուղի շրջակայքում:

Հայ զինված երիտասարդների կողմից իրականացված հետախուզական տվյալներից պարզվում է, որ թուրքերը ոչ միայն մտադրություն չունեին հեռանալու Ոստանից, այլև սպասում էին օժանդակ նոր զնդերի համալրմանը՝ Վանի վրա նորից արշավելու նպատակով: Այդ օրերին տեղեկություններ ստացվեցին նաև այն մասին, որ թուրքական առաջապահ ուժեր են հայտնվել նաև Վերին Հայոց Ձորի Կղզի գյուղում: Իսկ դա նշանակում էր, որ թուրքերի ձեռքն էին անցել նաև Ջուլամերիկ-Նորդուզ և Աղբակ-Խոշաբ ճանապարհները⁵³:

Թշնամուն վնասագերծելու և Ոստանից նրան դուրս քշելու գործում մեծ դեր խաղացին ռուսական զորքերը, որոնք բավականին խնամքով նախապատրաստեցին և հաջողությամբ իրականացրեցին իրենց վրա դրված առաջադրանքը: Այդ հարցում իրենց օժանդակությունը ցուցաբերեցին նաև Վասպուրականի զինված հայ երիտասարդները:

1916 թ. դեկտեմբերի 10-ին շատախցի Ազատն իր 11 ընկերներով կազակների մի հարյուրակ առաջնորդեց Շատախից դեպի Հայոց Ձոր՝ Գեորանդաշտի Խան գյուղը, որպեսզի պաշտպանեն ռուսական բանակի ձախ կողմը քրդական հարձակումներից:

1916 թ. դեկտեմբերի 11-ին իրենց 27 զինյալներով դեպի Ոստան շարժվեցին և ռուսական բանակին միացան նաև Տիգրանը, ոզմեցի Սիմոնը և կարճկանցի Սաքոն⁵⁴:

Ռուսական բանակի գնդապետին ընկերակցում էր նաև Դանիել վարդապետը, որը ռուսներին կարևոր ցուցումներ տվեց Ոստանի թուրքական դիրքերի և ճանապարհների մասին:

1916 թ. դեկտեմբերի 12-ին ռուսները սկսում են իրենց հարձակումը և միանգամից ծովից ու ցամաքից, ռմբակոծելով թուրքերի դիրքերը, ստիպում են, որպեսզի նրանք Աթանանցից նահանջեն Ոստան, իսկ այնտեղից էլ Գավաշ՝ մինչև Վրկունիս գյուղի բլուրները⁵⁵:

Հաստատվելով Ոստանում, ռուսական առաջապահ մի խումբ՝ հայ զինված երիտասարդների ուղեկցությամբ նույն օրն առաջացավ մինչև Պատականց գյուղը, ուր շուտով ժամանեց նաև Դանիել վարդապետը:

⁵³ «Հորիզոն», Թիֆլիս, 1916 թ. դեկտեմբերի 7, թիվ 273:

⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵ «Վան-Տոսպ», Թիֆլիս, 1917 թ. հունվարի 1, թիվ 6, նաև «Հորիզոն», 1916 թ. դեկտեմբերի 7, թիվ 273:

Ռուսական բանակի ռազմական ձեռքբերումները և Ռատանի գրավումը կարևոր նշանակություն ունեցան վասպուրականցիների համար: Դրանք էլ ավելի ապահովեցին վասպուրականցիներին «նոր նահանջներու մղձաւանջէն»⁵⁶ և «նոր նահանջի մը ուրականը կը հեռանայ Վանէն»⁵⁷:

1916 թ. նոյեմբերյան գաղթից հետո առաջընթաց գրանցվեց նաև տնտեսական բնագավառում, որի արդյունքում Վանում նորից սկսվեց վերաշինական և գյուղատնտեսական աշխատանքների եռուզեռ: Կրկին բացվեցին խանութները, ճաշարանները, հացի փոերը և սրճարանները: Նահանջից 20 օր անց, արդեն գործում էին հացի 4 փոեր, 7 սրճարաններ և 25 խանութներ⁵⁸:

«1916-ի աշունը,- ինչպես նշում է Կ.Սասունին,- դարձաւ մեզի համար տեղաւորման եւ ցանքսի շրջան մը, որ 1917-ի տարեշրջանին աւելի բարգաւաճ վիճակի մը հասաւ: Երկրի ամբողջ հայութիւնը հետզհետէ ինքնաբաւ կը դառնար»⁵⁹:

1916 թ. նոյեմբերյան գաղթից հետո Վանի բնակչության մեծագույն մասը կազմում էին շատախցիները, որոնք վերջին նահանջից հետո թողնելով Հայոց Ձորը տեղավորվել էին քաղաքում, իսկ մի մասն էլ բնակություն էր հաստատել Թիմարի շրջանում: Քիչ չէին նաև նորդուզցիները, խիզանցիները և ասորիները: Դրան հակառակ, քաղաքում խիստ աննշան թիվ էին կազմում քաղաքաբնակները: Շատերը ցանկանում էին մեկնել Կովկաս, սակայն քաղաքապետարանը ձգձգում էր անձնագրերի գրանցումը: Նահանգապետ գեներալ-մայոր Բուրկովսկու հրամանով արգելված էր ժողովրդին անցագիր տալը՝ Կովկաս տեղավորվելու համար⁶⁰: Խստորեն արգելված էր նաև Վանից հարավ՝ որևէ գյուղում բնակվելը:

Քաղաքի մեջ բնակվող ժողովուրդն ապրում էր տնտեսական չափազանց ծանր պայմաններում: Կենսամթերքների բացարձակ թանկությունը, ապրուստի միջոցների ծայրահեղ պղծությունը, թալանն ու գողությունը գրեթե անտանելի էին դարձրել բնակչության գոյավիճակը:

Զգացնել էին տալիս որոշ կենսամթերքների՝ պանրի, նավթի, շաքարի պակասը և դրանց դժվար հայթայթումը: Յորենի չափն արժեր 20 ռ., հացը՝ 5 կոպ, իսկ քարյուղ (1 ֆ.-ը՝ 1 ռ. 20 կոպ.), շաքար (1 ֆ.-ը՝ 2 զ ռ.), կաշի, թուղթ և լամպ բոլորովին չէր ճարվում⁶¹:

Արգելված էր ինչպես ցանկացած ապրանքի շահադիտական նպատակներով փոխադրությունը Կովկաս, այնպես էլ զինվորների կողմից շաքարի կամ որևէ այլ սննդամթերքի ապօրինի վաճառքը ազգաբնակչությանը:

Գյուղացիները արտոնություն չէին ստանում նույնիսկ իրենց գյուղերից ցրեն, հարդ և խոտ բերելու համար:

⁵⁶ Գ. Սասունի, Տաճկահայաստանը Ռուսական տիրապետութեան տակ (1914-1918), Տաճկահայոց գաղթաշարժը եւ անոնց դերը Հայաստանի հանրապետութեան կազմութեան մէջ, Բոստոն, 1927, էջ 125:

⁵⁷ «Հորիզոն», 1916 թ. դեկտեմբերի 7, թիվ 273:

⁵⁸ Նույն տեղում, 1916 թ. դեկտեմբերի 20, թիվ 283:

⁵⁹ Գ. Սասունի, Տաճկահայաստանը Ռուսական տիրապետութեան տակ (1914-1918), Տաճկահայոց գաղթաշարժը եւ անոնց դերը Հայաստանի հանրապետութեան կազմութեան մէջ, Բոստոն, 1927, էջ 125-126:

⁶⁰ «Արև», Բաքու, 1917 թ. հունվարի 6, թիվ 4, նաև՝ «Վան-Տոպ», 1917 թ. հունվարի 1, թիվ 6:

⁶¹ «Գաղափար», Թիֆլիս, 1917 թ. հունվարի 13, թիվ 117-4, նաև «Արև», Բաքու, 1917 թ. հունվարի 25, թիվ 17:

Ժողովրդի համար դժվարին այդ պահին խիստ գնահատելի օգնություն է ցույց տալիս Քաղաքների միությունը, որն ամեն օր իր սննդատու կայաններում կերակրում էր 3500-4000 մարդու: Բացի այդ, Քաղաքների միության լիազոր Կոստի Համբարձումյանի կարգադրությամբ այդ սննդատու կայաններում սնվում էին նաև ԿՀԲԸ դպրոցի աշակերտները: Կլոր դարում բացվել էր նաև թեյարան՝ զինվորականների համար⁶²: Ընդհանուր առմամբ, օրական սպառվում էր 60-80 փուլ ծախս:

Չնայած Վանը գտնվում էր տնտեսական ճգնաժամի մեջ, պարսիկ առևտրականները շարունակում էին իրենց գործունեությունը՝ զրկելով Վանը տնտեսության հիմքերից⁶³:

Քաղաքների միության աշխատանքները Վանում կորդինացնում էր միության ներկայացուցիչ Ս. Գորոդեցկին, որի Կովկաս տեղափոխվելուց հետո, նրան փոխարինեց Գրիգորյանը:

Արդյունավետ էին աշխատում նաև Բարեգործական ընկերության պահեստը և սպառողական խանութը: 1917 թ. հունվարին ընկերությունը ստացավ 360 փուլ շաքարավազ⁶⁴, որի արդյունքում սկզբում վերացավ շաքարի, իսկ ավելի ուշ հացի և քարյուղի նեղությունը:

Նախատեսվում էր «Բարեգործականի» և «Քաղաքաների միության» մեծ պահեստ հիմնել նաև Բերկրիի Գործոթ և Պստիկ գյուղերում՝ հավանական նահանջի ժամանակ բնակչությանը սննդով ապահովելու հեռանկարով:

Շատ անկանոն էր նպաստի բաշխման գործը: Չնայած գեներալ-մայոր Թամանյանը այդ նպատակով հատկացրել էր 110000 ռ. գումար⁶⁵, սակայն այն գտնվում էր նահանգապետի տրամադրության տակ և բաց էր թողնվում աստիճանաբար⁶⁶:

Ընդհանուր առմամբ, չորրորդ նահանջից հետո նպաստաբաշխ հանձնախումբը զինվորական իշխանության անմիջական հսկողության ներքո 8000 ռ. բաժանեց գաղթականներին⁶⁷:

1917 թ. հունվարի 17-ին Վանի նահանգապետ գեներալ-մայոր Բուրկովսկուն ուղղված հեռագրում նշվում էր, որ անհրաժեշտ է ուղարկել 1916 թ. սեպտեմբեր ամսվա նախահաշիվները և հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների նպաստները բաժանել 50%-ի չափով: Ըստ նպաստաբաշխ մարմնի ներկայացրած ցուցակների Վանի շրջանի մեջ գաղթականների ամբողջ թիվը կազմում է՝ 81310 հոգի, որոնցից 3059-ը՝ համաձայն նպաստաբաշխման կանոնի, չէին ստացել նպաստ: Իսկ ազգաբնակչության կարիքավոր մասը, որն իրավունք ուներ ստանալ 10049 ռ. նպաստ, բաղկացած էր 5555 երկսեռ հասակավորներից: Գաղթականների ընդհանուր թվից 807-ը՝ ասորի էին, իսկ 191-ը՝ թուրք⁶⁸:

Ընդհանրապես, 1916-1917 թթ. մեղմ ձմեռը և տարափոխիկ հիվանդությունների բացակայությունը, բավականին տանելի վիճակ էին ստեղծել Վանի

⁶² «Արև», 1917 թ. հունվարի 24, թիվ 16, նաև «Հորիզոն», 1916թ. դեկտեմբերի 20, թիվ 283:

⁶³ «Գաղափար», 1917 թ. հունվարի 13, թիվ 117-4:

⁶⁴ «Արև», 1917 թ. հունվարի 24, թիվ 16:

⁶⁵ «Հորիզոն», 1916 թ. դեկտեմբերի 20, թիվ 283:

⁶⁶ «Արև», 1917 թ. հունվարի 6, թիվ 4:

⁶⁷ «Հորիզոն», 1916 թ. դեկտեմբերի 20, թիվ 283:

⁶⁸ «Գաղափար», 1917 թ. փետրվարի 8, թիվ 127-14:

բնակչության համար: Վանում, Ճանիկում և Այուրում գործում էր ամբուլատորիա, որն ապահովում էր բնակչության բժշկական կարիքները⁶⁹:

Միակ նեղությունը, որ գոյություն ուներ՝ անասնակերի բացակայությունն էր, որի պատճառով փախստական գյուղացիները հարկադրված էին իրենց անասունները կես գնով վաճառել⁷⁰: Ջուր էին նաև անասունների պահպանության համար դրամ ստանալու ակնկալիքները⁷¹:

Բացի այդ, Վանում տարածված էր ընտանի կենդանիների պաճարախտը (чума), որի տարածման առաջն առնելու համար ոստիկանությունը հաշվառման է ենթարկում բոլոր կենդանիները⁷²:

Մեծ էր նաև պահանջարկը հագուստ ստանալու համար, քանի որ այն «սկյոր ազգաբնակչության համար օրհնութիւն մը պիտի ըլլար»⁷³:

Նահանգում շարունակվում էր զինվորների կողմից լքյալ տների քանդումը՝ հակառակ նահանգապետ Բուրկովսկու խիստ հրամաններին: Վանի քաղաքապետ Ա. Թերզիբաշյանը ժողովրդին ուղղված իր հայտարարության մեջ նշում էր, որ նահանգապետի հրամանի համաձայն, ամեն անգամ, երբ յուրաքանչյուր անհատ կնկատեր որևէ տան քանդում, պետք է անհապաղ տեղեկացներ քաղաքապետարան, իսկ քաղաքապետարանն էլ իր հերթին՝ շրջանի կառավարչատուն:

Այդ խնդրի լուծմանն էր ուղղված քաղաքապետի 1917 թ. հունվարի 10-ի մասնավոր տեղեկագրությունը, որտեղ նշվում էին հրդեհից և քանդումից զերծ մնացած, անտեր և լքյալ տների պահպանության հինգ առաջարկներ՝ շեշտելով այդ տեսակ տների ավելի ու ավելի աճող կարիքը զինվորականների և պաշտոնյաների բնակչության համար: Մասնավոր հանձնաժողովը պիտի ցուցակագրեր անվթար մնացած տները և դրանց պատասխանատվությունը մասնավոր ստորագրությամբ պիտի դրվեր տան մեջ բնակվող գաղթականների, իսկ չբնակեցման դեպքերում՝ նույն շրջանի ոստիկանական շրջանապատի վրա:

Դեռևս 1916 թ. հոկտեմբերին Վանի քաղաքապետարանը կառավարության հետ պայմանավորվել էր հոգալ զինվորականության փայտի կարիքները: Այդ նպատակով քաղաքապետարանը սկսեց թուրքերի լքյալ և չորացած ծառերի կտրումը⁷⁴:

Կանոնավոր կերպով շարունակվում էին գործել «Բարեգործականի» 5 դպրոցները Վանում, Այուրում, Լեսկում, Խժիշկում և Էրերինում: Վանի դպրոցն ուներ 150 աշակերտ և 4 ուսուցիչ, Լեսկինը՝ 90 աշակերտ և 2 ուսուցիչ, իսկ Այուրինը՝ 200 աշակերտ և 4 ուսուցիչ: Նահանջից հետո Բերդակ գյուղի դպրոցը փոխադրվեց Լեսկ⁷⁵: Կրթական գործով Վանի նահանգի տեսուչ էր նշանակվել Դանիել վարդապետը:

Նահանջից հետո Քաղաքների միության խնամքին հանձնված 60 որբերը տեղափոխվեցին Կովկաս⁷⁶:

⁶⁹ «Արև», 1917 թ. հունվարի 25, թիվ 17:

⁷⁰ Վան-Տոսպ, 1917 թ. հունվարի 22, թիվ 9:

⁷¹ «Հորիզոն», 1916թ. դեկտեմբերի 20, թիվ 283:

⁷² «Գաղափար», 1917 թ. հունվարի 13, թիվ 117-4:

⁷³ «Հորիզոն», 1916 թ. դեկտեմբերի 20, թիվ 283:

⁷⁴ «Արև», 1917 թ. հունվարի 6, թիվ 4:

⁷⁵ «Արև», 1917 թ. հունվարի 25, թիվ 17:

⁷⁶ «Հորիզոն», 1916 թ. դեկտեմբերի 20, թիվ 283:

Չէին դադարում քրդական հարձակումները Արձակի սահմաններում՝ Առանիկ և Ագարեն գյուղերի մոտակայքում: Ապահովության համար Սևան և Զարանգ գյուղերի բնակիչները տեղափոխվել էին Խարակոնիս: Իսկ Խոջաբի քրդերը խուսափելով իրենց դավաճանական դիրքորոշումից, խուսափում էին երթևեկել Վանում⁷⁷:

Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում քրդերի մոտ գերության մեջ գտնվող հայերի փրկության գործին: Քաղաքապետ Ա. Թերզիբաշյանի կողմից միջոցներ են ձեռնարկվում Զիլանի ձորի Կուլիխան և Խուրշիտ բեկերի մոտ դեռևս 1915 թ. մեծ նահանջի ժամանակ մնացած հայերի փրկության ուղղությամբ⁷⁸:

Անցանկալի էր վիճակը նաև գավառներում.

Թիմարի շրջանը ներկայացնում էր համեմատաբար ամենախիտ բնակչությունը: Շրջանի 30 գյուղերի մեծ մասը բնակեցված էին իրենց նախկին բնակիչներով: Վասպուրականի ամենամեծ գյուղը՝ Այուրն ուներ ավելի քան 1000 բնակիչ, որից 10-12 տունը շատախցիներ էին:

Շրջանում գործում էին ԿՀԲԸ և Քաղաքների միության մասնաճյուղերը, որոնցից առաջինն ուներ սպառողական խանութ, իսկ երկրորդը՝ Այուրի մեջ դպրոց՝ 185 աշակերտով⁷⁹:

Հայոց Ձոր – Բնակչությունը խիստ աննպաստ կացության մեջ էր՝ մարդկանց և անասունների ուտեստի բացակայության պատճառով: Ա. Սահակյանին ուղղված Դանիել վարդապետի հեռագրից պարզվում է, որ անհրաժեշտ էր 15000 ռ. գումար՝ խոտ և հարդ ձեռքբերելու համար⁸⁰: Չնայած, որ Ոստանը վերագրված էր ռուսական զորքերի կողմից և Հայոց Ձորի շրջանը բավականաչափ ապահովված էր թշնամու նոր խուժումներից, այդուհանդերձ իշխանության կողմից արգելված էր նույն շրջանի 2800 հոգու վերադարձը իրենց տները: Քաղաքապետ Ա. Թերզիբաշյանը քանիցս դիմել էր զինվորական իշխանություններին՝ Հայոց Ձորի ազգաբնակչությանը իրենց տեղերը վերահաստատվելու թույլտվության համար: Սակայն թույլատվել էր միայն Արտամետ, Օվստան, Սևակրակ, Բերդակ, Կենդանանց և Կուտապաշ գյուղերի գլխավորներին գնալ և ունեցվածքը փոխադրել⁸¹:

Շուտով առանձին արտոնաթուղթ է տրվում Հայոց ձորի բնակչությանը՝ գյուղերից խոտ, հարդ, ցորեն բերելու համար: Բայց այդ կարգադրությունը շատ քիչ չափով է գոհացնում գյուղացիությանը, որովհետև անասունները պահպանելու համար, անհրաժեշտ էր, որ տղամարդիկ իրավունք ստանան բնակվելու Հայոց Ձորի գյուղերում: Բայց այդ ուղղությամբ որոշակի առաջընթաց չկար:

Ալջավազ – Հողը բարեբեր էր ցորենի մշակության համար, սակայն 1917 թ. սկզբներին գավառը հիմնականում ամայի էր: 1500-ի մոտ քրդեր հաստատվել էին Սիփանի փեշերին: Ռուսական զինվորական իշխանությունները, նույնիսկ այն ժամանակ, երբ ռուսական զորքերը գրավել էին Բիթլիսը և սպառնում էին Սդերդին, թույլ չտվեցին, որ հայերը իրենց սեփական հողերի վրա հաստատվեն⁸²:

⁷⁷ «Հորիզոն», 1916 թ. դեկտեմբերի 7, թիվ 273:

⁷⁸ «Գաղափար», 1917 թ. փետրվարի 8, թիվ 127-14:

⁷⁹ «Վան-Տոսպ», 1917 թ. հունվարի 29, թիվ 10:

⁸⁰ «Հորիզոն», 1916 թ. դեկտեմբերի 7, թիվ 273:

⁸¹ «Գաղափար», 1917 թ. հունվարի 13, թիվ 117-4, նաև «Հորիզոն», 1916 թ. դեկտեմբերի 7, թիվ 273:.

⁸² «Արև», Բաքու, 1917 թ. փետրվարի 18, թիվ 35:

Արձեշք ևս հիմնականում անմարդաբնակ էր: Բնիկ քրդերը քաշվել էին գավառի հյուսիսում՝ Շաղկանց լեռներում գտնվող Զիլանի ձորը, ուր նրանց թիվը (Բայազետի և Դիադինի քրդերի հետ միասին) կազմում էր 7-8000:

Մինչև 1916 թ. հուլիս-օգոստոսյան նահանջը նրանք համարվում էին ապստամբ, իսկ դրանից հետո, քանի դեռ թուրքերը հեռու էին, նրանք իրենց հպատակությունն էին հայտնել և ապրում էին «խաղաղ»:

Արամի նահանգապետությունից հետո Արձեշի շրջանում տիրում էր անիշխանություն:

Բերկրի – Ճանապարհի մոտակայքում գտնվող բոլոր գյուղերը քարուքանդ էին եղել: 1916 թ. հուլիսից սկսած Բերկրիում հաստատվել էին զինվորական էտապներ և Զեմսկի միության ու Քաղաքների միության բժշկական և սննդատու կայաններ:

1916 թ. ամռանը մոտ 200 հայ տղամարդիկ վերադարձան և փորձեցին Բերկրիի հովիտի գյուղերը վերականգնագնել, բայց վրա հասավ հերթական նահանջը:

1917 թ. սկզբներին բնակելի էին միայն Գործոթ, Գյուզակ, Անձավ և Շվաքար գյուղերը, որոնց բնակչության թիվը կազմում էր ընդամենը 151 հոգի⁸³:

1917 թ. սկզբներին գավառի մեծ մասում բնակվում էին քրդեր, որոնց ղեկավարներից հայտնի էր Բեդրի բեյը: Նրանց մոտ պահվում էին հայ գերիներ:

Սարայ – Հայերը թվով 1000 հոգի, հաստատված էին Ախտոիկ, Հասան, Թամրան, Սաթմանց, Կավլիկ և այլ գյուղերում: Սարայի մեջ բնակություն էին հաստատել 150 վանեցի արհեստավորներ և առևտրականներ:

Ամբողջ գավառում հիմնականում գտնվում էին Թակուրցի և Մակուրցի աշիրեթների բաժանված քրդերը, իսկ գավառի արևմտյան մասում բնակվում էին եզդիներ, որոնց գլխավորն էր Զհանգիր աղան: Բուն Սարայ ավանը աստրաբնակ էր:

Խոյ – Սարայ-Վան գծի վրա կային զինվորական հանգրվաններ և Կարմիր խաչի սննդատու կայաններ⁸⁴:

Аветис Арутюнян – Обеспечение безопасности и процесс перестроечной работы в Ван-Васпуракане в конце 1916 г. и в начале 1917 г. – Военные достижения русской армии в ноябре-декабре 1916 г. и захват Востана имели важное значение для васпураканцев в вопросе обеспечения безопасности. Также зарегистрировался прогресс в социальной и экономической сфере, в результате в Ване снова утвердился ажиотаж перестроичных и сельскохозяйственных работ.

Avetis Harutyunian – Security and the process of tuning work in Van-Vaspurakan in late 1916 year and in early 1917 year. – The successes of Russian army in 1916 in November-December and the occupation of Vostan had an important meaning for the people of Vaspurakan in providing security.

Simultaneously, there was made a progress in social-economic field and as a result of which again began repairing and agricultural works in Van.

⁸³ «Արև», Բաքու, 1917 թ. փետրվարի 18, թիվ 35:

⁸⁴ «Արև», Բաքու, 1917 թ. փետրվարի 18, թիվ 35:

ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՆԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՆ

ԷԴՈՒԱՐԴ ՊՈՂՈՍՅԱՆ

Անկախ պետականության հաստատման նպատակով Հայաստանում իրականացված պետաիրավական վերափոխումների շարքում, անշուշտ, իր ուրույն տեղն ունի պետական ինքնիշխանության կարևորագույն բաղկացուցիչներից մեկի՝ սահմանադրության ընդունումը: Հայաստանի անկախության հռչակագրին համապատասխան ՀՀ սահմանադրության մշակման համար Հանրապետության խորհրդարանը 1990թ. նոյեմբերի 5-ի որոշմամբ ձևավորեց 19 հոգուց բաղկացած հանձնաժողով ՀՀ ԳԽ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ⁸⁵: Ըստ էության հենց այդ շրջանից էլ սկսվեցին հասարակության կյանքի բոլոր ոլորտներում շրջադարձային վերափոխումներ իրականացնող նորանկախ Հայաստանի Հանրապետության հիմնական օրենքի ձևավորման աշխատանքները: Արդեն սկսած 1991 թվականից սահմանադրական հանձնաժողովը իր, ինչպես նաև հաճախ էլ ՀՀ ԳԽ և նախարարների խորհրդի նախագահությունների հետ գումարված համատեղ նիստերում ակտիվորեն քննարկում էր սահմանադրության նախագծի հետ կապված բազմաբնույթ հարցեր⁸⁶:

Հանուն արդարության հարկ է նշել, որ սահմանադրության նախագծի քննարկումների գործընթացը հանգամանալի վերլուծության մթնոլորտում էր ընթանում: Ավելորդ շտապողականությունը աստիճանաբար իր տեղը զիջում էր համեմատաբար խոհուն ու կշռադատված, հիմնական օրենքի հետ կապված խնդիրները հաջորդաբար լուծելու գործելաոճին: Այսպես սահմանադրական հանձնաժողովի արդեն 1992թ. հոկտեմբերի 23-ի նիստի ընթացքում նշվեց, որ դեռևս չափազանց վաղ է սահմանադրության ծավալուն քննարկումներ կազմակերպելը և որոշում կայացվեց, սահմանադրության նախագծի վրա աշխատելուն զուգահեռաբար, սահմանադրական հանձնաժողովում ավելի հաճախակի անդրադառնալ նախագծի նկատմամբ սկզբունքային մոտեցումներին, կողմնորոշվել սահմանադրության նախագծի հետագա քննարկման կարգի ու ժամկետների հարցում և այլն: Այնուհետև նիստում շահագրգիռ քննարկումներ ծավալվեցին փաստաթղթի կառուցվածքի, դրա քաղաքական հիմքի, շարադրված մոտեցումների հետապնդած նպատակների շուրջը և այլն⁸⁷: ՀՀ սահմանադրության մշակման աշխատանքները ավելի ինտենսիվ դարձան հատկապես 1993 թվականից: Սահմանադրական հանձնաժողովի 1993թ. մարտի 2-ին կայացած նիստում աշխույժ քննարկումներ էին ծավալվել հանրապետության հիմնական օրենքի ընդունման եղանակի շուրջը: Գործող օրենսդրությամբ սահմանադրության ընդուն-

⁸⁵ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, № 21(977), 15 նոյեմբերի 1990թ., էջ 6-7:

⁸⁶ Հայաստանի Հանրապետություն, 15 հունիսի 1991թ.:

⁸⁷ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 20 (1024), 31 հոկտեմբերի 1992թ., էջ 26-27:

ման մենաշնորհը պատկանում էր ՀՀ ԳԽ-ին, որը սակայն կտրականորեն հրաժարվել էր իր այդ իրավասությունից: Հանձնաժողովի անդամները հանգեցին այն հետևությանը, որ սահմանադրության ընդունման ամենահավանական եղանակը հանրապետությունում կարող էր լինել միայն համաժողովրդական հանրաքվեն: Նույն նիստում քննարկվեց վաղուց հասունացած ևս մեկ սկզբունքային նշանակության հարց, որը վերաբերում էր պետականության տիպին, այսինքն՝ ինչպիսին պետք է լինեին Հայաստանը՝ նախագահական, թե խորհրդարանական հանրապետություն: Այս հարցում գերիշխող միտումը ՀՀ իշխանությունների կողմից պաշտպանության արժանացած այն տեսակետն էր, ըստ որի այնպիսի անկայուն պայմաններում, երբ կուսակցությունները հանրապետությունում վերջնականորեն դեռևս չէին ձևավորվել և խորհրդարանական համակարգը կարող էր մշտական անկայունության հիմք դառնալ, որն էլ կարող էր վտանգել ինքնիշխան պետականության գոյությունը ընդհանրապես, միայն նախագահական համակարգը կարող էր ամուր պետականության հիմք հանդիսանալ⁸⁸:

Նորանկախ Հայաստանի ինքնիշխանությունն ամրագրող ամենագլխավոր պետաիրավական փաստաթղթի՝ սահմանադրության մշակման գլխավոր պետական մարմնի նիստերում բաժին առ բաժին քննարկվում էր երկրի թերևս ամենագլխավոր պետաիրավական փաստաթուղթը: Այսպես 1993թ. մարտի 27-ի նիստի քննարկման հիմնական նյութն էր խորհրդարան-նախագահ-կառավարություն հարաբերությունների սկզբունքների հարցը⁸⁹, իսկ նույն թվականի մայիսի 3-ի, 6-ը և 8-ի հերթական նիստերը ամբողջովին նվիրված էին սահմանադրության դատական իշխանությանը վերաբերող բաժնին, դատարաններին, դատախազությանը և այլն⁹⁰: Նույն թվականի մայիսի 18-ի և 27-ի նիստերում արդեն քննարկվում էին հիմնական օրենքի նախագծում կառավարությանը և տեղական ինքնակառավարմանը վերաբերող հոդվածները⁹¹ և այլն:

1993թ. հունիսի կեսերին արդեն ՀՀ գլխավոր օրենքը մշակող հանձնաժողովը ավարտել էր սահմանադրության նախագծի բաժին առ բաժին քննարկումները և անցել աշխատանքային խմբի ներկայացրած լրացուցիչ առաջարկությունների ուսումնասիրությանը⁹²: ՀՀ ԳԽ Սահմանադրական հանձնաժողովի 1993թ. հունիսի 24-ի նիստում հիմնական օրենքի լրամշակված տարբերակը ձայների մեծամասնությամբ արժանացավ հավանության⁹³: Հետագայում էլ հենց այդ տարբերակը որոշակի փոփոխություններով դարձավ ՀՀ Սահմանադրությունը: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի կողմից մշակվող սահմանադրության նախագծին զուգահեռ, քննարկվող ժամանակահատվածում մշակվում և ՀՀ ԳԽ նախագահության 1993թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծը համաժողովրդական քննարկման դնելու կարգի և ժամկետների մասին» որոշման պահանջին համապատասխան հանրապետության պաշտոնական մամուլում («Հայաստանի

⁸⁸ Նույն տեղում, № 5 (1033), 15 մարտի 1993թ., էջ 19-20:

⁸⁹ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 6 (1034), 31 մարտի 1993թ., էջ 30:

⁹⁰ Նույն տեղում, № 9 (1037), 15 մայիսի 1993թ., էջ 22-23:

⁹¹ Նույն տեղում, էջ 26-27:

⁹² Նույն տեղում, № 12 (1040), 30 հունիսի 1993թ., էջ 41:

⁹³ Նույն տեղում, էջ 42:

Հանրապետություն» և «Ռեսպուբլիկա Արմենիա» պաշտոնաթերթերում) պարբերաբար հրապարակվում էին հանրապետության սահմանադրության նաև այլընտրանքային նախագծերը⁹⁴։ Ինչպես խորհրդարանում, այնպես էլ հասարակական լայն շրջաններում հատկապես ակտիվորեն էին շրջանառվում ՀՀ ԳԽ պատգամավոր Մ. Գաբրիելյանի⁹⁵, Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության վարչության հավանությանը արժանացած ԳԽ-ում ՀՌԱԿ պատգամավորական խմբի ղեկավար Վ. Խաչատրյանի կողմից ղեկավարվող խմբի⁹⁶, քաղաքական 6 կազմակերպությունների՝ ՀԱԺԿ, ՀԴԿ, ՀՅԴ, ՀՌԱԿ և ՍԻՄ համատեղ մշակված սահմանադրության նախագծերը⁹⁷ և այլն։ Քաղաքական շրջանակներում բուռն քննարկումների առարկա էր հատկապես վերջին նախագիծը, որում որոշակիորեն ամրագրված էին Հայաստանի տարածքային պահանջատիրությունը, հայ դատին պետականորեն հետամուտ լինելու անհրաժեշտությունը⁹⁸ և այլն։ Բնականաբար հասարակության դատին էին ներկայացվում նաև խորհրդարանի սահմանադրական հանձնաժողովի մշակված և նրա կողմից հավանության արժանացած նախագծի տարբերակը⁹⁹, որի քննարկումները, իշխանությունների հովանավորությամբ, խորհրդային ժամանակների նման, անց էին կացվում նաև աշխատավորական կոլեկտիվներում։ Այսպես 1993թ. սեպտեմբերի 23-ին այդ շրջանում հանրապետությունում գործող եզակի ձեռնարկություններից մեկում՝ Երեվանի կոմպրետորների գործարանում անց էր կացվել սահմանադրական հանձնաժողովի մշակված նախագծի քննարկումը¹⁰⁰։ Հոկտեմբերին այդ նախագծի քննարկումներ եղան Սյունիք-Զանգեզուր գոտու միկրոշրջաններում¹⁰¹ և այլն։

ՀՀ սահմանադրության հավանության արժանացած տարբերակի վերաբերյալ առաջարկություններ եղան նաև փաստաթղթի նախագծի միջազգային փորձաքննության ընթացքում, որին ամենաակտիվ կերպով ներգրավվեցին, իրավունքի բնագավառի արտերկրի շատ անվանի մասնագետներ, գիտական հաստատություններ¹⁰²։ Գործընթացին հատկապես ակտիվ և շահագրգիռ մասնակցություն էին ցուցաբերել ԱՄՆ-ի Ֆրանսիայի, Ռուսաստանի ու շատ այլ երկրների, ինչպես նաև համապատասխան միջազգային կառույցների փորձագետներ¹⁰³։

Այսպես, միայն Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի պետության և իրավունքի ինստիտուտի կողմից ՀՀ սահմանադրության նախագրծի 40-ից ավելի հոդվածների վերաբերյալ արվել էին էական բնույթի դիտողություններ ու առաջարկություններ¹⁰⁴ և այլն։ 1994թ. ապրիլի 20-ին սահմանադրական հանձնաժողովը ավարտեց սահմանադրության նախագծի հիմք ընդունված

⁹⁴ Հայաստանի Հանրապետություն, 18 օգոստոսի 1993թ., Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 13 (1041), 15 հուլիսի 1993թ., էջ 20։

⁹⁵ Հայաստանի Հանրապետություն, 18 օգոստոսի, 25 սեպտեմբերի 1993թ.։

⁹⁶ Նույն տեղում, 19 օգոստոսի 1993թ.։

⁹⁷ Նույն տեղում, 16 սեպտեմբերի 1993թ.։

⁹⁸ Նույն տեղում, 9 հոկտեմբերի, 2 նոյեմբերի 1993թ.։

⁹⁹ Նույն տեղում, 23 ապրիլի 1994թ.։

¹⁰⁰ Նույն տեղում, 24 սեպտեմբերի 1993թ.։

¹⁰¹ Նույն տեղում, 26 հոկտեմբերի 1993թ.։

¹⁰² Նույն տեղում, 5,6,7,9,12 ապրիլի 1994թ.։

¹⁰³ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 6 (1034), 31 մարտի 1993թ., էջ 30։

¹⁰⁴ Հայաստանի Հանրապետություն, 9 ապրիլի 1994թ.։

տարբերակի ժողովրդական քննարկումների և միջազգային փորձաքննության ընթացքում աշխատանքային խմբի մշակած առաջարկությունների հիման վրա կատարված Սահմանադրության նախագծի լրամշակման աշխատանքները¹⁰⁵:

Գնալով ավելի էր որոշակիանում ՀՀ Սահմանադրությունը համաժողովրդական հանրաքվեի ճանապարհով ընդունելու գաղափարը: Դա իշխանությունների կողմից ներկայացվում էր նաև որպես ազգային համաձայնության ամրապնդման միջոց¹⁰⁶:

Ընդդիմության ճնշման տակ գերագույն խորհրդի ընդունած որոշմամբ Սահմանադրական հանձնաժողովը հունիս ամսին համալրվեց խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի, ինչպես նաև օրենսդրական նախաձեռնությունների հեղինակների մեկական ներկայացուցիչներով¹⁰⁷: Դա պայմանավորված էր նրանով, որ իրենց ավարտին մոտեցող սահմանադրության մշակման աշխատանքների այդ փուլում քննարկվել էին ներկայացված բոլոր 5 նախագծերը¹⁰⁸:

1994թ. հուլիսի 23-ին Սահմանադրական հանձնաժողովի հերթական նիստում քվեարկությամբ նախապատվությունը տրվեց հենց սահմանադրական հանձնաժողովի հեղինակային կազմի մշակած Սահմանադրության նախագծին, որի շուրջն էլ Գերագույն խորհրդի ընդլայնված կազմով սահմանադրական հանձնաժողովը հետագայում շարունակեց իր աշխատանքները¹⁰⁹: Ընդունված նախագծի բովանդակային քննարկումների ընթացքում կատարվեցին մեծ քանակությամբ նոր լրամշակումներ, հստակեցվեցին նախկինում ընդունված բազմաթիվ ձևակերպումներ և այլն, որոնց արդյունքում կարևորագույն պետական փաստաթուղթը և գործնական և դեկլարատիվ առումներով գնալով ավելի էր հագեցնում ինքնիշխան ժողովրդի հիմնարար պետաիրավական փաստաթղթի հատկանիշներով:

Այսպես նույն 1994թ. հուլիսի 28-ի նիստում հանձնաժողովի անդամները անդրադառնալով ՀՀ պետության հիմնադրություններին միահամուռ որոշեցին Հայաստանի սահմանադրության առաջին հոդվածը ձևակերպել հետևյալ բովանդակությամբ՝ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»¹¹⁰ և այլն: Ի վերջո բազում քննարկումների արդյունքում կատարված ծավալուն աշխատանքի արդյունքում ավարտուն տեսքի բերված սահմանադրության նախագիծը մասնագետների միահամուռ կարծիքով իր մեջ պարունակում էր որակապես նոր լուծումներ ու գաղափարներ: Մասնավորապես նոր լուծում էր, ըստ նախագծի՝ Հայաստանի Հանրապետությունում կառավարման այսպես կոչված «խառը» ձև սահմանելը, երբ հանրապետությունում իշխանավարությունը իրականացվում է կիսանախագահական և կիսապառլամենտական սկզբունքներով¹¹¹ և այլն: Եվ վերջապես 1995թ. ապրիլի

¹⁰⁵ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 8(1060), 30 ապրիլի 1994թ., էջ 28:

¹⁰⁶ Հայաստանի Հանրապետություն, 26 ապրիլի 1994թ.:

¹⁰⁷ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 12(1064), 30 հունիսի 1994թ., էջ 32:

¹⁰⁸ Հայաստանի Հանրապետություն, 26 հուլիսի 1994թ.:

¹⁰⁹ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 14(1066), 31 հուլիսի 1994թ., էջ 31:

¹¹⁰ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 14(1066), 31 հուլիսի 1994թ., էջ 32:

¹¹¹ Հայաստանի Հանրապետություն, 5 ապրիլի 1994թ.:

13-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովը վերջնականապես ավարտելով փաստաթղթի լրամշակումը, քվեարկությամբ որոշեց ընդունել սահմանադրության նախագիծը և այն ներկայացնել Գերագույն խորհուրդ¹¹²: Այսպիսով սկսած 1991 թվականից մինչև 1995թ. ապրիլի սկիզբը սահմանադրական հանձնաժողովը իր գումարած միջինը 4 ժամ տևած 101 նիստերի ընթացքում ձևավորեց նորանկախ Հայաստանի ինքնիշխան հանրապետության պետական իրավունքի ամենագլխավոր փաստաթուղթը¹¹³: Այդ գործում ամենալուրջ դերակատարություն էր ունեցել նաև սահմանադրական հանձնաժողովի կազմում գործած իրավաբանական ենթահանձնաժողովը, որը բաղկացած էր ինչպես գիտնական իրավագետներից, այնպես էլ օրենսդրական աշխատանքին քաջատեղյակ իրավաբաններից¹¹⁴:

Եվ ահա 1995թ. մայիսի 12-ին ՀՀ Գերագույն խորհուրդը ձայների գերակշիռ մեծամասնությամբ ընդունեց սահմանադրական հանձնաժողովի ներկայացրած ՀՀ Սահմանադրության նախագծին հավանություն տալու մասին պատմական որոշումը: Այդ որոշմամբ նաև սահմանվեց ՀՀ Սահմանադրության ընդունման նպատակով 1995թ. հուլիսի 5-ին անցկացնել հանրաքվե քվեարկության դնելով հետևյալ հարցը «Համաձայն ենք ընդունել ՀՀ Գերագույն խորհրդի հավանությանն արժանացած ՀՀ Սահմանադրությունը»¹¹⁵:

Իշխանությունների կողմից որոշակի քայլեր էին ձեռնարկվում Սահմանադրության ընդունման գործընթացին թափանցիկություն հաղորդելու նպատակով: Պաշտոնական լրատվամիջոցներով լուսաբանվում էին փաստաթղթի ընդունման ընթացքի հիմնական փուլերը, տրվում իրավական փաստաթղթի ինչպես սկզբունքային, տեսական դրույթների, այնպես էլ նրանում ներառված հոդվածների բովանդակային վերլուծությունները: Այդ առումով թերևս հաջողված միջոցառումներից էր ՀՀ սահմանադրության բովանդակության լուսաբանմանը նվիրված «75 հարց ու պատասխան ՀՀ Սահմանադրության վերաբերյալ» վերտառությամբ Հայաստանի «Հանրապետություն» պաշտոնական օրաթերթում 1995թ. հունիսին պարբերաբար հրապարակված հոդվածաշարը, որի հեղինակն էր սահմանադրական հանձնաժողովի անդամ, իրավագիտության դոկտոր Վ. Նազարյանը¹¹⁶: Ինչպես և սահմանված էր ՀՀ ԳԽ ընդունած որոշմամբ, 1995թ. հուլիսի 5-ին հանրապետության խորհրդարանի ընտրություններին զուգահեռաբար իրականացվեց նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրության ընդունման հանրաքվեն¹¹⁷: 1995թ. հուլիսի 7-ին ՀՀ ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների ԿՀՀ-ի հրապարակած ՀՀ Սահմանադրության համաժողովրդական հանրաքվեի արդյունքներին վերաբերող փաստաթղթում արձանագրվեց, որ սահմանադրության օգտին քվեարկել էր հանրապետության ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների 37,8 տոկոսը և հանրաքվեի մասնակիցների 68 տոկոսը, որն էլ նշանակում էր, որ հայ ժողովրդի կյանքում կատարվել էր պատ-

¹¹² Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 7(1083), 15 ապրիլի 1995թ., էջ 42:

¹¹³ Հայաստանի Հանրապետություն, 22 մարտի 1995թ.:

¹¹⁴ Նույն տեղում, 4 մայիսի 1995թ.:

¹¹⁵ Հայաստանի Հանրապետություն, 13 մայիսի 1995թ.:

¹¹⁶ Նույն տեղում, 25, 26, 27, 28, 29, 30 հունիսի 1995թ.:

¹¹⁷ Նույն տեղում, 6 հուլիսի 1995թ.:

մական մեծագույն իրադարձություն՝ ընդունվել էր նորանկախ Հայաստանի ինքնիշխանության առհավատյան՝ ՀՀ Սահմանադրությունը¹¹⁸։ Փաստորեն երկրի հիմնական օրենքը ուժի մեջ էր մտել կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման պաշտոնական հրապարակման օրվանից՝ հուլիսի 11-ից քանզի հենց նոր ընդունված հիմնական օրենքով սահմանված էր, որ այն ուժի մեջ էր մտնում հանրաքվեի արդյունքների պաշտոնապես հրապարակման պահից¹¹⁹։

Эдуард Погосян – *Принятие конституции РА, как составляющее звено процесса становления государственной независимости.* – В статье показан процесс принятия главного общественнополитического документа РА. Освещена роль основного государственноправового документа страны в деле становления государственной независимости.

Eduard Poghossian – *The adoption of the constitution of the republic of Armenia as an important field during the process of establishment of an independent state.* – In the article is mentioned the process of the adoption of the Constitution in the newly independent Armenia. In the article is mentioned also the role of this important document during the process of establishment of independence of Armenia.

¹¹⁸ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, Հ. 13-14(1089-1090), 20 հուլիսի 1995թ., էջ 3։

¹¹⁹ Հայաստանի Հանրապետություն, 13 հուլիսի 1995թ.։

АРМЯНСКИЙ РАДИКАЛИЗМ В ВИДАХ П.А. СТОЛЫПИНА 1906 - НАЧ. 1908 ГГ.

ВАЛЕРИ ТУНЯН

В армянской историографии фактически отсутствует отношение премьер-министра России П.А. Столыпина начала XX в. к армянскому радикализму. При этом нет понимания причин трансформации борьбы властных структур против “Эчмиадзинского заговора”, связанный с борьбой против секуляризации, в политический процесс над партией “Дашнакцутюн”¹²⁰. Обойдены акции премьер-министра России против сторонников радикального пересмотра общественных отношений в армянской среде, что является предметом внимания статьи.

Стремительному взлету Петра Аркадьевича Столыпина на высшем уровне политического руководства Российской империи содействовали необходимость подавления первой русской революции (1905 -1907) и наличие репутации волевого деятеля. 6 апреля 1906 г. состоялось его назначение министром внутренних дел, а 8 июля председателем Совета министров. За день до назначения Столыпина премьер-министром царь Николай II утвердил наличие однопалатного парламента в Финляндии и распустил Первую Государственную думу. Лейтмотивом деятельности Столыпина стал постулат о защите великодержавности от разных радикалов¹²¹.

В поле зрения премьер-министра постепенно стала входить тематика армянского радикализма. 8 августа 1906 г. наместник Кавказа граф. И.И. Воронцов-Дашков направил телеграмму председателю Совета министров Столыпину относительно письма католикоса всех армян Мкртича II Хримяна, поступившим 5 августа, о том, что специальными кондаками он разрешил созыв в Эчмиадзине выборного депутатского собрания армян России. Рассмотрению и решению подлежали вопросы церковного имущества, церковно-приходской системы образования и полномочий епархиальных собраний по выборному началу. С учетом специфики региона, граф Воронцов-Дашков считал возможным допустить проведение съезда: “По современному состоянию края, краткости срока, полагаю съезду не препятствовать, уведомив католикоса о необходимости ограничить занятия съезда перечисленными вопросами”¹²². Обращение главы региона, имевшего обширные полномочия от царя Николая II, диктовалось рамками предполагаемого съезда: “Так как распоряжение католикоса касается также армянских духовных учреждений, находящихся вне Кавказа, то считаю необходимым сообщить на усмотрение Вашего Высочествопревосходительства, прося меня о последующем уведомить”¹²³.

¹²⁰ В.Г. Тунян Последний период патриаршества Хримяна 1904 – 1907 гг. Ереван, 2003, с. 33.

¹²¹ П.Н. Зырянов, П.А. Столыпин. – В кн.: Россия на рубеже веков: исторические портреты. М., 1991, с. 56-58.

¹²² Российский государственный исторический архив (РГИА), ф. 821, оп. 7, д. 294, л.5, 5 об.

¹²³ Там же, л. 5 об.

К этому времени наместник Кавказа задействовал подведомственные структуры управления о характере планируемого собрания - Ереванского губернатора Г. С. Яцкевича, прокурора Эчмиадзинского Синода Л. Френкеля и Эчмиадзинского уездного начальника Л. Леммермана. По мнению прокурора Френкеля 4/5, прибывающих делегатов в Эчмиадзин принадлежали к левому крылу партии "Дашнакцутюн". ("Союз Армянских революционеров"). Прогнозировалось, что совещания делегатов будут иметь "антиправительственный характер" и осуществит саботаж правительственных постановлений об армянской церкви. Глава Эчмиадзинского уезда сообщил, что делегаты Эчмиадзинского съезда являются представителями радикальных взглядов в армянском обществе¹²⁴.

Телеграмма наместника Кавказа была отправлена Столыпину в 17 часов 10 минут 8 августа 1906 г., а получена адресатом 9 августа в 8 часов "пополучночи"¹²⁵. Как глава министерства внутренних дел Столыпин запросил мнение руководства департамента духовных дел иностранных исповеданий. Между тем 12 августа на Столыпина было совершено покушение, которое стало новым стимулом борьбы против радикализма¹²⁶.

Отсутствие указания Столыпина обусловило решение Воронцов-Дашков занять выжидательную позицию. Он предпочел временно не вмешиваться, чтобы не дать "лишнего повода" армянским радикалам для антиправительственной агитации среди масс "на почве стеснения высшей духовной власти армян"¹²⁷. 12 августа Ереванский губернатор запросил предоставление информации прокурора Синода о ходе предстоящего съезда и содержании рассматриваемых вопросов. Соответствующее предписание направлено главе Эчмиадзинского уезда¹²⁸. Оправившись от шока покушения и с учетом мнения руководства департамента иностранных исповеданий, Столыпин 15 августа 1906 г. санкционировал эчмиадзинский съезд. Решение далось скрепя сердце, учитывая непосредственную подчиненность главы Кавказа царю: "К разрешению предполагаемого в Эчмиадзине на изложенных Вами основаниях съезда ввиду выраженного Вами согласия препятствий не встречаю. Нахожу, однако, в принципе подобные съезды нежелательными в настоящее время"¹²⁹.

Вечером 20 августа 1906 г. съезд конституировался в высший распорядительный орган армянского народа в России: "Съезд находит, что он как законоправно избранное народное представительство" имеет право рассматривать и решать все вопросы, связанные с общественным развитием армян. Более того съезд обязывался высказать свое мнение "по жгучим вопросам всей России" и "истекающему кровью Кавказу"¹³⁰.

О происходящем наместник Кавказа 22 августа телеграфировал Столыпину: "Прокурор Эчмиадзинского Синода телеграфирует: Эчмиадзинский съезд поста-

¹²⁴ **В.Г. Тунян** Последний период патриаршества Хримяна ..., с. 125 - 130.

¹²⁵ РГИА, ф. 821, оп. 7, д. 294, л. 5.

¹²⁶ **П.Н. Зырянов, П.А. Столыпин**..., с. 56.

¹²⁷ Национальный архив Армении (НАА), ф. 95, оп. 1, д. 4, л. 11, 15.

¹²⁸ РГИА, ф. 821, оп. 7, д. 294, л. 8 а.

¹²⁹ Там же, л. 8 а.

¹³⁰ **В.Г. Тунян** Последний период патриаршества Хримяна..., с. 24

новил: считать себя учредительным, отделение церкви от государства в связи с русским освободительным движением, обсуждение вопросов, касающихся всей России”. Выход Эчмиадзинского съезда за рамки дозволенных границ побудил наместника Кавказа поднять вопрос его разгона: “Ввиду этого я предложил эриванскому генерал-губернатору, если сведения эти достоверны, съезд закрыть, главного руководителя съезда, секретаря патриарха архимандрита Тачата, не получившего, по имеющимся сведениям, разрешения на въезд в Россию, выслать, если он иностранный подданный, немедленно из пределов России и привлечь агитаторов к ответственности”¹³¹.

Помета на телеграмме Столыпина от 23 августа отразила сарказм ситуации, когда под боком властей в Эчмиадзине происходил съезд социализации: “Вот дали им съехаться и вместо того, чтобы дать добрый совет, упиваются общими либеральными фразами”¹³².

Во имя социализации армянского общества съезд 24-25 августа принял ряд резолюций: 1. организовать воскресные и передвижные школы; для введения бесплатного обучения использовать церковные капиталы и про-грессивный налог с населения, с преподаванием в качестве государственного языка русского, а грузинского либо “татарского” в зависимости от этнического состава проживания армянского населения; основу программы обучения училищ должен был составить “реальный метод”, где из низших школ выводился предмет закона Божия, а в средних считался не обязательным; 2. церковные-монастырские имения считать социализированной национальной собственностью, обязав земледельческие общины пользоваться земельными участками, поручить управление лесами и земледельческими общинами участковым выборным учреждениям; доходы от монастырей у церквях направлять на обеспечение культурных и других национальных учреждений 3. выделять из государственного бюджета средств на культурные нужды армянского народа пропорционально численности в Российской державе; 4. все управление школами и “другими национальными проблемами” передать в ведение Учредительного собрания русскоподданных армян, подлежащий выбору по четырехступенчатой системе со стороны местных общин, связанных между собой федеративными узами; 5. сохранение за церковью и духовенством лишь культовых вопросов. Для детальной разработки этих положений были созданы комиссии – школьная, административно-избирательная и хозяйственно-земельная.

28 августа 1906 г. наместник Кавказа Воронцов-Дашков предписал ереванскому губернатору разогнать “съезд дашнаков”, ставший контролировать волю великовозрастного католикоса всех армян. 29 августа Ереванский губернатор отдал распоряжение уездному Леммерману закрыть съезд как “вышедший из программных вопросов, для обсуждения коих они были созваны”, что и состоялось на следующий день¹³³. Ереванский генерал-губернатор посредством прокурора Синода сообщил католикосу Хримяну о нежелательности проведения подобных собраний в Эчмиадзине и просьбу не допускать дальнейших собраний и проживания делега-

¹³¹ РГИА, ф. 821, оп. 7, д. 294, л. 8 а. л. 10.

¹³² Там же, л. 11.

¹³³ **В.Г. Тунян** Последний период патриаршества Хримяна..., с.230 - 247

тов в монастыре¹³⁴. О принятых мерах полицией наместник Кавказа поставил главу правительства 6 сентября, а 8 сентября направил сообщение царю.

Итоги деятельности эчмиадзинского съезда Столыпин изложил во всеподданнейшем докладе монарху 8 сентября 1906 г. Представлялась санкция наместника Кавказа на его проведения в силу специфики края. Съезд сочтен Столыпиным манифестацией левых сил, которые подчинили себе руководство армянской церкви: “Как выяснилось из полученных ныне министерством сведений, созыв делегатского собрания в Эчмиадзине давно готовился преимущественно под давлением группы социал-революционеров, совершенно овладевших дряхлым и болезненным Патриархом, с целью обсуждения не столько дел армянской церкви, сколько вопросов русской революции и оглашения Выборгского воззвания”¹³⁵. Последнее представляло собой обращение группы первой Государственной Думы к гражданам России (10. 7. 1906 г.) с призывом не платить налоги и нести службу в армии до восстановления её полномочий. Сообщалось об указании наместника католикосу закрыть съезд.

Начат сбор сведений об установках и деятельности армянских революционных партий. 10 сентября 1906 г. особый отдел по полицейской части канцелярии наместника Кавказа направил соответствующую информацию внутриведомственному ведомству. Давалась характеристика установки социал-демократической партии “Гнчак”: “Основным пунктом первоначальной программы революционной организации “Гнчак” было воплощение задачи приобрести независимость и политическую свободу для турецких армян, а затем продолжить дело добывания свободы армян, освободить их от деспотического ига русских и персов и образовать одну союзную народную республику, которая откроет для всех армян дорогу к цели в далеком будущем. К идеалистическому всеобщему образованию, к социальному миру, к чему стремится все человечество”¹³⁶.

Аналогичной сочтена деятельность дашнаков: “В свою очередь целью армянского революционного “Союза Дашнакцутюн” была поставлена почти однородная, отличаясь лишь по деталям, националистическим и социалистическим задачам, добиться политических и экономических устройства армянскому народу, как в Турции, так и в России, на основаниях изложенных в программе “Союза”. Согласно “Плану деятельности на Кавказе” (брошюра, изданная в 1906 г.) в которой и содержится частично означенное общее направление: Армянский революционный союз должен заботиться против эксплуатации, капиталистов и самодержавного строя. Союз принимает на себя пропаганду среди христианского населения и среди всех слоев народа, ведет борьбу против землевладельцев и ростовщиков, он должен организовать под свои знамена беззащитных и многочисленных крестьян и стараться, по возможности, поднять экономическое и духовное состояние масс и стремиться к принципу, направленному на путь восстановления будущей великой общинной социалистической организации”¹³⁷.

13 сентября 1906 г. Столыпин сообщил наместнику Кавказа реакцию царя на всеподданнейший доклад по съезду социализации, которая содержала критику по-

¹³⁴ РГИА, ф. 821, оп. 7, д. 294, л.35 об- 36 об.

¹³⁵ Там же, л. 3.

¹³⁶ Там же, оп. 130, д. 84, л.13.

¹³⁷ Там же, л. 13, 13 об.

пустительной позиции главы армянской церкви: "Разъяснить патриарху-католикосу через наместника Его Величества на Кавказе совершенную неправильность его действий"¹³⁸.

Негативную реакцию властей самодержавия России графа Воронцова-Дашкова довел до сведения католикосу Хримяну 28 сентября 1906 г., списывающей бессилие властей на престарелого католикоса: "Дашнакский съезд постановил считать себя учредительным собранием, отделить церковь от государства в связи с русским освободительным движением после того допустил обсуждение вопросов, касающихся всей России, вследствие сего и сделано распоряжение о закрытии съезда и через министра внутренних дел, который имевшиеся сведения доводил до сведения е.и.в. Государь император 8 сентября высочайше соизволил разъяснить Его Святейшеству совершенную неправильность его действий. О коей высочайшей воле для доставления распоряжений сообщено наместнику в отзыве министра внутренних дел Столыпиным от 13 сентября с. г. N4803"¹³⁹.

Положение дел в руководстве Эчмиадзина стало предметом внимания Столыпина. 24 декабря 1906 г. он сообщил наместнику Кавказа о получении представления католикоса Хримяна о кадровой ротации. В члены Эчмиадзинского Синода представлялись первыми кандидатами ректор духовной академии архимандрит Месроп Тер-Мовсисян, председатель типографского комитета Эчмиадзина архимандрит Мхитар Тер-Мкртчян и настоятель Сурб-Хачского монастыря Нового Нахичевана архимандрит Егише Мурадян. Соответственно вторыми кандидатами значились архимандриты - викарный Нухинского духовного правления Егише Агаронян, член типографского комитета Исаак Тер-Микаелян и викарный г. Гори Хорен Мурадбекян.

Столыпин находил, что первые три кандидата - Месроп, Мхитар Егише, а из вторых Исаак являлись представителями левого духовенства в рядах партии "Дашнакцутюн". Мнение основывалось на информации канцелярии наместника Кавказа. Эти же лица представлялись причастными к делу секретаря католикоса архимандрита Н. Тагянца, который, с санкции Вагаршапатского комитета партии "Дашнак-цутюн", составил подложное письмо от 26 октября на имя министра внутренних дел о назначениях в состав Эчмиадзинского Синода. Использовалось "болезненное состояние" католикоса Хримяна, который подмахнул подписью обращение к главе внутривластного ведомства. После доклада о происшедшем архиепископа Сукиаса Парзянца, письмо было возвращено католикосом с Ереванской почты. В итоге, архиепископ Парзянец 29 октября 1906 г. в Эчмиадзине был подвергнут обструкции со стороны представителей "левых партий".

Столыпин выражал удивление, что представление о членстве в Синоде, возвращенное католикосом теперь вновь было направлено к нему через канцелярию наместника Кавказа. Графу Воронцову-Дашкову предлагалось разобраться в происшедшем¹⁴⁰. Тем более, что соответствующую информацию ему предоставлял прокурор Эчмиадзинского Синода Френкель¹⁴¹.

¹³⁸ Там же, л. 35 об.

¹³⁹ НАА, ф. 95, оп. 1, д. 4, л. 1717.

¹⁴⁰ РГИА, ф. 1276. оп. 19. д. 70, л. 40 - 42

¹⁴¹ **В.Г. Тунян** Последний период ..., с. 262, 263

Одновременно председатель Совета министров обращал внимание на “тревожное” состояние высшего управления армянской церкви, глава которой не давал отпора видам радикалов: “Вместе с тем я не могу не обратить внимания на сообщенные министерству канцелярии Вашего Сиятельства, на основании донесений прокурора Эчмиадзинского Синода, тревожные сведения о современном состоянии управления Армяно-Григорианскою церковью на Кавказе. Находящийся во главе этого управления патриарх-католикос Мкртич подпал, очевидно, под влияние окружающих его лиц из числа приверженцев армянских революционных партий, совершенно овладевших делами Эчмиадзинского патриархата и личностью самого патриарха, и не в силах противодействовать осуществлению составляемых ими всякого рода революционных проектов в пределах управления означенною церковью”¹⁴².

“Беспомощность положения” католикоса Хримяна представлялась вызывающей тревогу. Даже указание монарха на неправильность действий Айрапета по допущению съезда социализации в Эчмиадзине, согласно представлению наместника Кавказа от 14 октября 1906 г., получило позитивную интерпретации левых сил, “в смысле принципиального одобрения правительством его действий”. Направление дел в высшем духовном управлении армянской церкви признавалось “вредным” для политики самодержавия.

Точка зрения Столыпина мотивировалась кондаками католикоса: “1) об упомянутом армянском церковном делегатском съезде в Эчмиадзине, имевшем противоправительственный характер; 2) об образовании нового поселения из армян иностранных подданных и 3) об уменьшении вносимой монастырскими крестьянами земельной платы “багра”, а равно на поддержку, оказываемую самим Патриархом аграрным волнениям среди монастырских крестьян”. Приводились и другие примеры: “Сюда же следует отнести и распоряжение Патриарха о восстановлении в должности настоятеля армяно-григорианской церкви города Феодосии священника Нерсеса Эртевциана, уволенного от оной, с заключением в монастырь по требованию временного генерал-губернатора г. Феодосии, Эчмиадзинским Армяно-Григорианским Синодом за противозаконную деятельность, вызвавшую возмущение среди армянского населения города и распространившуюся на войска местного гарнизона. Далее вредное влияние приверженцев армянских революционных партий на патриарха проявляется в деле учебно-воспитательном: на должность ректора Тифлисской семинарии назначен Сиракан Тигранян без соблюдения закона 18-го октября 1903 года, а на должность ректора Эчмиадзинской Академии – архимандрит Месроп, оба крайние социал-демократы, проводящие притом в состав учительского персонала людей своей партии”¹⁴³.

В результате Эчмиадзинская академия превратилась в рассадник мятежных настроений и антиправительственной деятельности. Столыпин указывал: “Благонамеренная часть преподавателей не может ничего сделать, так как при малейшей попытке противодействия протестанты подвергаются оскорблениям со стороны распушенной молодежи, подстрекаемой частью своих же учителей. Несколько

¹⁴² РГИА. Ф. 1276. оп. 19, д. 70, л. 42.

¹⁴³ Там же, л. 42 об.

времени тому назад часть учеников духовной академии решила упразднить все положенные по уставу молитвы и запрещает молиться своим товарищам. Не лучше дело обстоит и в остальных армяно-григорианских епархиях”¹⁴⁴. Без санкции правительства, Астраханская консистория открыла подготовительные классы для поступления в запланированную семинарию. Между тем, правительство не утвердило “Устав” духовной семинарии, представленный католиком Хримяном. Консистория открыла женское армянское училище также без санкции властей, ссылаясь на указ 1 августа 1905 г. о возвращении церковного достояния и школ Эчмиадзину. Сходным представлялось положение в Нахичевано-Бессарабской епархии. В г. Нахичевани-на-Дону Педагогический совет распустил на время три старших класса духовной семинарии за радикальные настроения.

Обобщающее заключение послания Столыпина гласило об утере бразды правления главой армянской церкви: “Изложенные обстоятельства, с очевидностью свидетельствуя о полном несоответствии в настоящее время личности Патриарха-Католика Мкртича занимаемому им высокому положению главы армяно-григорианской церкви и о неспособности его вести управление делами последней в духе законности, вместе с тем указывают, по моему мнению, на необходимость принятия мер к упорядочению управления духовными делами сей церкви”.

В деликатной форме наместнику Кавказа предлагалось задуматься о новом преемнике Хримяну: “Я, конечно, сознаю, что принятие каких-либо исключительных мероприятий по отношению к католику представлялось бы в настоящее время крайне нежелательным, но, с другой стороны, не считаю себя вправе допускать дальнейшее существование такого положения вещей, которое, свидетельствуя об отсутствии надлежащей твердости у правительства, могло бы, наконец, привести к таким последствиям, которые оказались бы уже совершенно неотвратимыми”¹⁴⁵.

Предлагалось осуществить почетное и деликатное удаление “Айрика” от руководства Эчмиадзинским престолом с возложением его обязанностей на Синод: “Я полагаю, однако, что первым долгом надлежало бы патриарху-католику всех армян Мкртичу, ввиду его болезненного состояния и старости, предложить уйти по собственному желанию на покой, разрешив ему проживать в Эчмиадзинском монастыре и обеспечив его соответствующей пенсией, но с полным устранением от заведования делами. Самое управление делами армяно-григорианской церкви надлежало бы возложить до смерти католика на Эчмиадзинский Синод, а тем временем выработать и внести на законодательное утверждение новое законоположение об армяно-григорианской церкви, составленное применительно к положению об управлении другими церквями, и без присвоения ей той исключительной самостоятельности, которою она пользуется в настоящее время в ущерб государственным интересам”¹⁴⁶.

От наместника Кавказа запрашивались перемены в составе Эчмиадзинского Синода за два прошедших года. Столыпин учитывал донесение прокурора Френкеля от 30 ноября 1906 г. канцелярии наместника Кавказа о том, что единственным

¹⁴⁴ Там же, л. 43.

¹⁴⁵ Там же, л. 43, 43 об.

¹⁴⁶ Там же, л. 43 об.

“проправительственным” органом в духовном управлении Эчмиадзина остается лишь Синод, которое, из-за влияние властей на его состав, оставался “на страже закона”. Представлялась сизая мечта партии “Дашнакцутюн” подчинить Синод своему влиянию.

При этом в распоряжении Столыпина имелись обращения об удалении Хримяна с Эчмиадзинского престола. Так, некто А. Шахмурадов 25 марта, за месяц до вступления Столыпина в должность министра внутренних дел, предлагал главе внутривосточного ведомства лишить Хримяна сана католикоса. Аналогичные прошения представлялись со времени главноначальствующего гражданской частью Кавказа Г. С. Голицына и министра внутренних дел Святополка-Мирского. В роли покровителя Хримяна представлялся наместник Кавказа граф Воронцов-Дашков. При этом анонимщик выступал от имени армян Тифлиса, Баку и Еревана¹⁴⁷.

Столыпин учитывал невозможность законодательно удалить католикоса и возложить его обязанности на кого-либо. По каноническому праву избранный католикос оставался пожизненно главой армянской церкви. В анналах министерства иностранных дел имелась записка “О порядке управления делами Армянской церкви при вакантности Эчмиадзинского престола” 1895 г., где об этом отмечалось: “В 914 статье “Положения” изложено” “Патриарх ни в каком случае не может передать ни Синоду, какому-либо месту и лицу, права и преимущества, присвоенные сану его”¹⁴⁸. Точно также председательствующий в Синоде, во время вакантности Эчмиадзинского престола, не имел прав и полномочий главы армянской церкви¹⁴⁹. Практически Столыпин проецировал ассиметричное русское законодательство, исходя из потребностей политики текущего момента.

Ответное письмо отразило двойную реакцию графа Воронцова-Дашкова. Он отверг предложение об удалении католикоса Мкртича Хримяна на “покой” предоставление управления армянской церкви Эчмиадзинскому Синоду, хотя, в то же время, признал обоснованность претензий Столыпина относительно репутации претендентов на членство в составе Синода¹⁵⁰.

11 января 1907 г. глава канцелярии наместника Кавказа запросил сведения у прокурора Френкеля о трех кандидатах на членство в Эчмиадзинском Синоде. В ответе от 22 января Френкель подтвердил принадлежность указанных кандидатов к партии “Дашнакцутюн”, а Синод характеризовался последним оплотом власти. При этом ректор духовной академии архимандрит Месроп Тер-Мовсисян представлялся одним из вождей “дашнакского движения”. Левее его находился Мхитар Тер-Мкртчян. Архимандрит Егише Мурадян был проникнут партийным духом – “чистый социал-демократ”, который отказался от членства в Синоде во имя партийной деятельности. Архимандрит Исаак Тер-Микаелян, рассматриваемый представителем кадетов (конституционно-демократической партии) занимался агитационной деятельностью в академии и среди масс. Архимандрит Хорен Мурадян на съезде социализации в Эчмиадзине представлял партию “Дашнакцутюн”. Архимандрит Егише Мурадян трактовался неприметной личностью, стоящий на национальной позиции.

¹⁴⁷ В.Г. Туляев Последний период ..., с. 183, 184, 262, 263.

¹⁴⁸ РГИА, ф. 821, оп. 149, д. 1, л. 304.

¹⁴⁹ Там же, л. 304 - 307.

¹⁵⁰ Там же, ф. 1276, оп. 19, д. 274, л. 44 - 46.

Между тем власти отставали от развития событий в Эчмиадзине. 11 января 1907 г. католикос Хримян направил Эчмиадзинскому Синоду “Приходской Устав”. Предоставлялось самоуправление приходскому собранию, в деятельности которого могли участвовать мужчины и женщины с 21-летнего возраста. Реализовывалось выборное право. Приходские собрания выбирали и отстраняли от деятельности всех священнослужителей, подвергали ревизии и через доверенное лицо могли привлечь к ответственности. Рукоположенные священнослужители обязывались служить в приходе. 26 января 1907 г. Эчмиадзинский Синод постановил ввести в действие “Приходской Устав” с 1 февраля.

Этим самым усиливался народный и национальной церкви, которая по выборному праву оставила за собой державную русскую православную церковь. В то же время этим был ответ Хримяна департаменту иностранных исповеданий министерства внутренних дел, который в конце 1906 г. издал новую церковную хартию - “Об управлении духовных дел христиан Армяно-Григорианской церкви”. Новый регламентационный акт базировался на “Положении” 1836 г. об управлении армяно-григорианской церкви в Российской державе, но имел существенные различия. Он отменял кондак католикоса Хримяна 1906 г. о выборном праве и вводил высочайшие указы 1883, 1885 и 1905 гг. о полномочиях главноначальствующих региона и наместника Кавказа, определяющих отношения этих институтов с армянской церковью. Так высочайшим повелением от 18 октября 1903 г. “О порядке назначения должностных лиц Армяно-Григорианского духовного ведомства” вменялось при назначении епархиальных викариев испрашивать согласие главноначальствующего гражданской частью на Кавказе, а при назначении членов консистории, ректора и преподавателей духовной академии и семинарий, настоятелей монастырей, а приходских священников - согласие местного губернатора либо определенного должностного лица. В то же время сохранялся предшествующий порядок избрания католикоса и утверждения царем.

Если акт “Об управлении духовных дел христиан Армяно-Григорианской церкви” был нацелен на сохранении статус-кво в отношениях самодержавной власти с Эчмиадином, то “Приходской Устав” католикоса Хримяна отражал учет духа времени и соответствовал требованиям развития общественной жизни. Отнюдь не случайно, прокурор Френкель 26 января 1907 г. внес протест Эчмиадзинском Синоду из 23 замечаний на кондак католикоса Хримяна от 11 января о “Приходском уставе”. Главным являлись два момента: во-первых, католикос вышел за пределы компетенции своей власти, поскольку мог единолично решать лишь духовные вопросы, а во вторых - приходское собрание выводилось за пределы контроля со стороны наместника Кавказа, министерства внутренних дел и державной власти.

31 января 1907 г. Френкель направил наместнику Кавказа положительное постановление Синода по “Приходскому Уставу”, разработка которого велась представителями Эчмиадзинского братства с 1900 г. Появление “Устава” связано с активизацией деятельности армянских политических сил (демократы и революционеры). Взаимодействие социалистов с церковью представлялось тактикой единого фронта борьбы против пресса самодержавной власти в национальной жизни. Отсюда делался вывод, что новый приходской устав “построен на началах со-

циалистического отпадения церкви от государства". От наместника Кавказа ожидалось указание относительно последствий, связанных с применением "Приходского Устава". Разработан комплекс мер внушений католикоосу по изданию кондака по отмене "Приходского Устава", что оказалось нереализованным¹⁵¹.

Не дожидаясь ответа Воронцова-Дашкова прокурор Френкель 9 февраля 1907 г. направил памятную записку министру внутренних дел Столыпину об Армянском вопросе. Первая треть XIX в. представлялась временем пробуждения национального сознания, когда Россия вела войны с Турцией и Персии и содействовал освобождению часто армянского народа от мусульманского ига. Сам Армянский вопрос возник из проблемы дележа великими державами османского наследства: "К сожалению, когда возникла высказанная императором Николаем I мысль о разделе больного человека (1842 г.), армяне получили сразу большое значение"¹⁵².

Однако католикоусы Матеос I, Геворг IV, Макар и Хримян в деле усиления влияния России в Османской Турции действовали "весьма осторожно", что не оправдало "возложенную на них надежду". В последнем случае это обстоятельство связывалось с революционными армянскими сообществами по защите западноармянского населения от насилий султанского режима. Представлено наличие связи между деятельностью революционных сообществ в Турции и России. Подпиткой деятельности армянских партий на Кавказе стали западноармянские беженцы.

Представлены выводы. Прежде всего утверждалось наличие разрыва интересов между радикальной частью и массой армянского народа: "Армянский народ в массе, совершенно неревolutionен и ограничивается минимальными и экономическими требованиями"¹⁵³. Говорилось о значении партийного диктата: "Армянский народ и армянское общественное мнение терроризованы гибельным путем смелых и дерзких революционеров, захвативших в свои руки престол Эчмиадзинского патриарха и представительство в Думе". Выход усматривался в ужесточении мер воздействия на главу армянской церкви: "Уступчивость и ласкательство в отношении к патриарху приносит политический вред, так как каждому армянину известно, кто действует за спиной слабоумного 90-летнего старца и выразителем чьих требований он является"¹⁵⁴.

В свою очередь наместник Кавказа не хотел обострять ситуацию, считая что влияние партии "Дашнакцутюн" в региона и Эчмиадзине находится на спаде.¹⁵⁵ В ходе личной встречи Хримяна и Воронцова-Дашкова 30 апреля 1907 г. позиция главы армянской церкви относительно "Приходского Устава" оказалась неизменной¹⁵⁶.

С учетом ухудшения состояния здоровья католикоуса, граф Воронцов-Дашков предложил 17 мая 1907 г. Столыпину изменить порядок выборов главы армянской церкви на Эчмиадзинском соборе. Глава Кавказа находил желательным

¹⁵¹ **В.Г. Тунян** Последний период ..., с. 265 - 279

¹⁵² РГИА, ф. 821, оп. 150, д. 280, л. 96.

¹⁵³ Там же, л. 101 об.

¹⁵⁴ Там же, л. 103, 104.

¹⁵⁵ Борьба с революционным движением на Кавказ в эпоху столыпинщины. - Красный Архив.1929, т. 3 (34), с.206 - 211.

¹⁵⁶ **В.Г. Тунян** Последний период ..., с. 292, 293

изменить “Правила для руководства при избрании Верховного патриарха-католика всего Гайканского народа” 1843 г.¹⁵⁷ таким образом, чтобы голосование за двух старших кандидатов осуществлялось не открытым голосованием, а тайной баллотировкой. В первоначальном варианте правителя Кавказа ген.-ад. А. И. Нейдгарта она предусматривалась, но была снята, чтобы обеспечить победу иерарху Нерсесу Аштаракеци¹⁵⁸. Такой порядок сохранялся до начала XX века, обеспечивая победу западноармянских иерархов в избирательных собраниях. Проявление торжества партийного подхода явилось избрание Хримяна в 1893 г., с чем было вынужденно считаться самодержавие. По мнению Воронцова-Дашкова, в новых условиях тайная баллотировка стала бы преградой для проведения радикальных кандидатов на Эчмиадзинский престол. Она увеличила бы возможности правительственной власти для закулисных маневров.

На это Столыпин 2 июля 1907 г. сообщил главе Кавказе о своем принципиальном согласии в этом вопросе, хотя имелось “некоторое сомнение” в его эффективности. Его реализация требовала изменения и других статей имперского законодательства об управлении армянской церкви, Так статья 1121 ч. I тома XI Свод. Законов разрешала депутатам армянских епархии, при отсутствии возможности участвовать лично в деятельности Эчмиадзинского собрания предоставлять письменно свое мнение о кандидатах, что представлялось несовместимым с процедурой тайной баллотировки. Приходилось также учитывать резонанс от реализации предложения наместника Кавказа: “Между тем поднятие в настоящее время вопроса о частичном изменении законоположений, касающихся Эчмиадзинского верховного патриарха-католика, едва ли было бы соответственным, ибо, возбуждив, несомненно, некоторое брожение среди армянского населения, оно далеко не оправдывалось бы той пользой, которую от него можно было бы ожидать”¹⁵⁹.

Взамен этого председатель Совета министров считал необходимым пойти на упразднение льготного статуса армянской церкви в державе и определения католика всех армян лишь как духовного начальника российских армян. Столыпин указывал: “Я держусь в этом отношении иного взгляда и полагаю, что упомянутые выше законоположения подлежат коренному пересмотру в целях уравнивания армяно-григорианской церкви, в отношении управления, с другими инославными церквями, и устранения той ее исключительной самостоятельности, которою она пользуется в настоящее время в ущерб государственным интересам”.

С учетом позиции Воронцова-Дашкова, изложенным в письме от 29 января 1907 г. о невозможности активных действий при жизни Хримяна, Столыпин счел возможным повременить с вопросом отставки: “Я согласен отложить его до более благоприятного времени или же до кончины Патриарха, когда в период вакантности патриаршего престола можно было бы пересмотреть и законы, определяющие положение этого духовного лица. Само собой разумеется, что тогда будут приняты во внимание и подвергнуты обсуждению и соображения Вашего Сиятельства об изменении законоположений, касающихся открытой баллотировки”¹⁶⁰.

¹⁵⁷ РГИА, ф. 821, оп.140, д. 16, л. 1-5.

¹⁵⁸ **В.Г. Туян** Эчмиадзинский престол XIX - нач. XX вв. Ереван, 2001, с.33

¹⁵⁹ РГИА. ф. 281. оп. 7. д. 214. л. 29.

¹⁶⁰ Там же, л. 30.

Расчет на естественное удаление Хримяна от Эчмиадзинского престола оправдался, который скончался 29 октября 1907 г.

Очередные выборы католикоса должны были состояться спустя год. Вакантность Эчмиадзинского престола сразу попытался использовать Столыпин, который 16 декабря поставил перед наместник проблемы отмены льготного статуса Эчмиадзинского престола среди иноверческих исповеданий Российской державы. Предлагалось упразднить вселенский статус католикоса всех армян, превратив его в духовного главы лишь российских армян. Этому должен был содействовать измененный порядок выборов главы армянской церкви. Намечалась отмена атрибутов, способствующих возвышению его статуса: назначение высочайшей грамотой титула общеармянского духовного предводителя, наличия при нем почетной стражи и награждение священнослужителей наперсными крестами.

Аналогичное отношение направлено министру иностранных дел, который мог решить своим заключением спор между Столыпиным и Воронцовым-Дашковым по делу армянского радикализма.

30 января 1908 г. наместник Кавказа сообщил Столыпину, что его предложения не отличаются оригинальностью: “Ваше Высокопревосходительство изволите ставить мнение бывшего главноначальствующего гражданской частью на Кавказе ген.-ад. кн. Голицына о том, что наши стремления должны сводиться к низведению Эчмиадзинского католикоса на степень обыкновенного духовного начальника с ограничением района его ведомства пределами нашего государства”.

Граф Воронцов-Дашков выступил категорически против подхода председателя Совета министров. Предложено учесть спад революционных настроений среди армян: “Я считаю своею обязанностью остановиться на нем, чтобы самым категорическим образом протестовать против него, с точки зрения Главного начальника Кавказского края. Армянское население последнего и армянское духовенство в частности только что начало приходить в успокоение после отмены мер, принятых по почину генерал-адъютанта князя Голицына и революционизировавшие армянские массы до крайней степени возбуждения. Только что начали улегаться вызванные этими бесцельными мерами повышенные национальные и религиозные чувства армян и их духовенства”. Проецировались мирные отношения властей с армянским населением; а не превращать их в противников русской государственности”¹⁶¹.

Провозглашение Эчмиадзинского католикоса лишь духовным начальником российских армян означало для правительства встать на путь сложной борьбы с последствиями. Воронцов-Дашков указывал: “Можно предвидеть два пути этой борьбы. Или избранное на Эчмиадзинскую епархию лицо подчинится этому требованию Правительства, и тогда, где-либо, вероятнее всего в Турции, появится и будет признан всеми армянским миром Верховным католикосом народа Гайканского, которому, чтобы не потерять своего престижа, придется подчиниться и Эчмиадзинскому патриарху, или последний будет игнорировать закон и останется сам главою всех армян”¹⁶². Во втором случае принятый закон остался бы “мертво-

¹⁶¹ Там же, ф. 1022, оп. 1, д. 60, л. 95 об.

¹⁶² Там же, л. 95 об, 96.

рожденным” и правительству России пришлось бы смотреть “сквозь пальцы” на разные его нарушения.

Наместник Кавказа предлагал ограничиться существующим церковным законодательством и не попираť коренных интересов русской политики: “Вообще говоря, я считаю законодательство наше об армяно-григорианской церкви, создавшее Эчмиадзинского патриарха-католикоса всего народа Гайканского, проникнутым такою государственною мудростью в целях ограждения русских интересов в Закавказье и на Ближнем Востоке при посредстве армян, что все недостигнутые им результаты я склонен объяснять теми мерами, которые принимались впоследствии для стеснения армянского духовенства в предоставленных ему старым законом правах и которые являлись для русского правительства только палками в колесах, не давая никогда ожидаемых от них успехов”¹⁶³.

Аналогично отвергались другие меры Столыпина. Отвергался тезис о несостоятельности вклада западноармянских иерархов русскому делу на Эчмиадзинском престоле. Снималось также обвинение в адрес католикоса Хримяна по противодействию державным интересам.

24 марта 1908 г. свое заключение представил министр иностранных дел А. П. Извольский. Все три компонента программы Столыпина как отмена вселенского значения, порядка выборов католикоса и пересмотр статей “Положения” признавались несостоятельными с точки зрения интересов внешней политики России. В целом же выражена солидарность с позицией Воронцова-Дашкова¹⁶⁴.

По сути руководство Кавказа и глава министерства иностранных дел отстаивали гибкую державную политику самодержавия, учитывая стратегические интересы России, то Столыпин защищал прямолинейный подход, исходя из сиюминутных интересов борьбы против армянского радикализма. Председатель Совета последовательно стремился воплощать проводимую установку. 2 апреля 1908 г. он направил письмо графу И.И. Воронцову-Дашкову о том, что после принятия “Положения” 1836 г. требование законодательства о наличии “Правил” для осуществления богословского обучения в четырех армянских семинариях реализовано было лишь в Нахичевано-Бессарабской семинарии¹⁶⁵.

Столыпин 11 апреля 1908 г. направил послание Воронцову-Дашкову послание о сохранении в Закавказье чрезвычайной террористической деятельности в 1907 г. Показательным примером сочтена деятельность дашнаков в Елисаветпольской губернии: “В Елисаветпольской губернии заслуживает быть отмеченной деятельность тайного сообщества Дашнакцутюн, которое подчинило себе большую часть армянского населения. Успеху Дашнакцутюна содействовало, однако, и то обстоятельство, что в январе и феврале 1907 г. правое крыло партии в Елисаветполе приняло на себя полицейские функции, захватывая злоумышленников и охраняя вместо законной полиции мирное население от грабежей и разбоев. Это явление имело место также и в других городах. В результате в апреле 1907 г. в г. Елисаветполе комитет Дашнакцутюна фактически владел судебной и административной властью над армянами и, собрав, под предлогом борьбы с татарами, значительные

¹⁶³ Там же, л. 96. 96 об.

¹⁶⁴ Там же, л. 108 - 109.

¹⁶⁵ Там же, ф. 821, оп. 7. д. 178. л. 24.

денежные средства, скупал оружие, оборудовал свои мастерские и лаборатории для приготовления бомб, завел свои тюрьмы и применял лишение свободы и денежные взыскания к тем, кто, минуя “комитет”, обращался к содействию полиции и суда “.

Принятые властями меры по парализованию деятельности партии “Дашнакцутюн” сочтены малоэффективными, которые лишь усилили её авторитет: “Для прекращения этого деспотизма Дашнакцутюна и для восстановления законного порядка летом 1907 г. были предприняты аресты наиболее активных деятелей сообщества. Однако ликвидация оказалась безуспешной, так как дело это было передано в неумелые руки и. д. губернатора, надворного советника (Г. С.) Ковалева, который, приняв на себя это серьезное поручение, не обнаружил самой элементарной осмотрительности и предварительно оповестил циркулярно о готовящихся следственных действиях всех уездных начальников, зная о ненадежности наличного состава уездной полиции. В результате планы и. д. губернатора стали известны членам Дашнакцутюна, которые и получили возможность скрыть следы своей преступной деятельности, а произведенные обыски у 120 менее серьезных дашнакцаканов дали основание для привлечения только 21 лица. Имеются при этом указания, что безуспешности обысков отчасти содействовал и сам и. д. губернатора, неосновательно освободив от обыска 12 намеченных жандармским надзором видных деятелей Дашнакцутюна. Результатом этих неудачных действий было несомненное усиление Дашнакцутюна”¹⁶⁶.

Столыпин обратил внимание наместника Кавказа на свое сентябрьское отношение 1907 г., где обращал его внимание на усиление “революционной преступности” в крае. Наместник имел чрезвычайные полномочия, регион находился на военном положении, а меры подавления, не давали эффекта. Столыпин подчеркнуто отмечал деятельность авангарда армянского радикализма: “В этом отношении особенное значение имеет упрочившаяся деятельность армянского революционного союза Дашнакцутюн. Имеющиеся в Министерстве внутренних дел сведения с несомненностью свидетельствуют о том, что означенная организация функционирует в крае открыто, будучи признаваема даже властями, некоторые представители коей входят с Дашнакцутюном в сношения по отдельным вопросам. Вышеприведенные случаи свидетельствуют о том, что члены этого сообщества заменяют собою иногда полицию, помогая законной администрации в поддержании внешнего порядка и безопасности, а поступившие в последнее время из некоторых губерний и центральных учреждений сведения указывают, что та же организация заявляет свои предложения в вопросе наших отношений к Турции. Подобное положение создалось исключительно вследствие ошибочного понимания действительного значения “Союза”, который, оставаясь вне надлежащего воздействия и преследования, охватил ныне почти все армянское население и располагает организованною военною силою”¹⁶⁷.

Вывод Столыпина гласил, что Воронцов-Дашков “проспал” опасность, грозящую отечеству: “В настоящее время правительство имеет перед собою угрожающую по силе и тактике преступную организацию, окрепшую на глазах местной

¹⁶⁶ Борьба с революционным движением на Кавказе..., с.192.

¹⁶⁷ Там же, с. 200, 201.

власти, относившейся в течение нескольких лет безучастно к этому опасному явлению”¹⁶⁸.

В тоже время оправдался прогноз наместника Кавказа относительно партии “Дашнакцутюн”. Венский съезд 4 мая 1907 г. окончательно оформил раскол партии на старую фракцию, сторонников сохранения борьбы за права армян Турецкой Армении, и новую фракцию - социалистического направления, стремящейся к ниспровержению царизма. Последняя выступали за создание Закавказской демократической республики в составе свободной федеративной России. В июне-июле 1907 г. началась открытая междоусобица, завершившаяся победой “Нового Дашнакцутюна”¹⁶⁹.

Таким образом, отношение премьер-министр России П. А. Столыпин в 1906 - нач. 1908 гг. к армянскому радикализму в Закавказье прошло определенную эволюцию: от предоставления желательности борьбы наместнику Кавказа до необходимости совместных действий. Как руководство армянского духовенства, так и представители партии “Дашнакцутюн” рассматривались подрывными элементами державного правопорядка, против которых необходимо было принимать репрессивные меры. Кончина католика Хримяна привела к разработке стеснительных мер против руководства армянской церкви. Аналогичный подход Столыпин планировал против партии “Дашнакцутюн”.

Վալերի Թունյան – Հայկական արմատականությունը Պ.Ա. Ստոլիպինի տեսակետով 1906թ.-1908թ. սկզբներին: – Հոդվածում բացահայտվում է հայկական արմատականության էությունը, ցույց է տրվում, թե քաղաքական առումով այն ինչ էր իրենից ներկայացնում: Այնտեղ ճշտվում է Պ.Ա. Ստոլիպինի վերաբերմունքն այդ ռադիկալիզմի նկատմամբ, որը բնականաբար բացասական էր:

Valeri Tounyan – Armenian radiculizm according to P. A. Stolipin 1906 - the beginning of 1908. – In the article the essence the Armenian radikulizm is revealed ivhat is it according to politics. Here P. Stolipin’s attitude towards the radiiculizm is corrected which is naturally nerative.

¹⁶⁸ Там же, с. 201.

¹⁶⁹ **В.Г. Тунян** Легенды и были: охранка и Армения XIX - нач. XX вв. Ереван, 2008, с. 60 -70.

ՎԱՂ ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅՈՑ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏԱՂԸ ԸՍՏ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ
«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿԻ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

V դարից մեզ է հասել մի պատմական հիշատակարան, որը կրում է «Փավստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց»¹⁷⁰ կամ ավելի հին անունով՝ «Բուզանդարան պատմութիւնք» վերնագիրը: Այն բացառիկ տեղ և արժեք ունի հայ պատմագրության մեջ: Ճշմարտապատում և եզակի սկզբնաղբյուր է ոչ միայն Հայաստանի, այլև Մերձավոր Արևելքի երկրների, մասնավորապես Մասանյան Իրանի և Բյուզանդական կայսրության պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար:

Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը», հարուստ է ազգագրական մեծարժեք նյութերով: Դրանք բազմաթիվ ու տարաբնույթ են և ընդգրկում են հայ ազգագրության գրեթե բոլոր ոլորտների՝ տնտեսական կենցաղի, նյութական մշակույթի, ընտանեկան-հասարակական կենցաղի, հոգևոր մշակույթի շատ կողմեր:

Վաղ միջնադարյան հայության տնտեսական զբաղմունքներից գործում արտացոլվել են դաշտամշակության, այգեգործության, անտառատնկման, մրգերի մշակման, անասնապահության, որսորդության, տարազի, շենքերի, վրանների և ռազմական գործի վերաբերող հաղորդումներ: Առանձնապես ուշագրավ են հայ ժողովրդի սոցիալական կազմի, ընտանեկան կենցաղի, արյունամերձ ընտանիքների խմբերի, նրանց իրավահարաբերությունների, հուղարկավորության ծեսերի, հայոց ազգակցական համակարգի, համայնքային, դրացիական հարաբերությունների, տոնածիսական համալիրների, հմայությունների, հավատալիքների, բնության տարրերի ու երևույթների, երկնային լուսատուների և կենդանիների պաշտամունքի և այլնի վերաբերող հավաստի ու արժեքավոր տեղեկությունները:

Ամուսնություն, ընտանիք: Բուզանդը բավականին շատ տեղեկություններ է հաղորդում ընտանեկան կենցաղի մասին: Արշակավանի կառուցման մասին խոսելիս նշել է, թե Արշակ թագավորը մի շարք հանցագործների թվում անմեղ է ճանաչել նաև նրանց, ովքեր առևանգել են այլոց կանանց: Բուզանդից մեզ հայտնի է, որ Արշակ II-ը Արշակավան քաղաքի շինարարության կապակցությամբ տվեց մի հրաման, որը պատասխանատվությունից ազատելու երաշխիք էր տալիս իրենց կանանց կամ ամուսիններին լքած անձանց: Այդ հրամանից օգտվելով՝ «Շատ կանայք իրենց մարդկանց թողնում էին ու այնտեղ ընկնում. շատ տղա-

¹⁷⁰ Տե՛ս *Փավստոսի Բուզանդացոյ*, Պատմութիւն Հայոց, ի Վենետիկ, 1832: Ուսանողությունը և գիտական հանրությունը առավել մատչելի ներկայացնելու համար օգտվել ենք հեղինակի աշխարհաբար թարգմանությունից (տե՛ս Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխայանցի, Երևան, 1989):

մարդիկ իրենց կանանց թողնում էին և ուրիշների կանանց առնելով այնտեղ էին ընկնում» (IV դպր. գլ. ԺԲ, էջ 169): Պատմագիրը դառնությամբ գրում է. «Իրավունքը մեռավ. եթե նա գոյություն ունենար, բայց կորած լիներ՝ կփնտրեինք, մի տեղ կգտնեինք նրան»: Արշակ II-ի սկսած գործը շարունակեց նրա որդի Պապը: Սրանց օրոք հայոց եկեղեցու հայրապետն էր Ներսես Պարթևը: Բուզանդը նշում է, որ վերջինիս հայրապետության օրերում «նրա ահից ոչ ոք չէր համարձակվում Հայոց աշխարհում մեկի կինը խլել և թողնել իր կին ամուսինը, որ առել էր քողով և հարսանիքի պսակով ու օրհնությամբ, և ուրիշ կին առնել չէր համարձակվում (դպր. V, գլ. ԼԱ, էջ 349): Դա նշանակում է, որ արդեն IV դարում ամուսնություններն իրականացվում էին հարսանեկան արարողակարգով և եկեղեցական պսակի օրհնությամբ: «Իսկ նրա մահից հետո ամեն մարդ թագավորից (Պապից) հրաման ստացավ համարձակորեն թողնել իրենց ամուսին կանանց. «կար մարդ, որ տասը կին էր փոխում և առհասարակ բոլորն անօրենության մեջ ընկան» [նույն տեղում, էջ 351]:

Ազգի ներսում արգելված է եղել մերձավորների ամուսնությունը, նաև ամուսնությունը եղբոր այրու հետ, թեպետ այդ սովորության աննշան մնացուկներ գոյատևել են մինչև XIX դարի վերջերը: Այդ երևույթը ազգագրական գիտության մեջ կոչվել է **լևիրատ** (տեգրամուսնություն): Լևիրատի դեպքեր հաստատագրվել են դեռևս վաղ միջնադարում: Դրանցից մեկը Գնելի այրու՝ Փառանձեմի հետ Արշակ թագավորի ամուսնությունն էր (IV դպր., գլ. ԺԵ, էջ 183-195): Այս գլխում հիշատակվում է նաև, լևիրատային ամուսնություններից բացի, երկկնության գոյության մասին. «Արշակը իրեն կին առավ սպանված Գնելի կնոջը՝ Փառանձեմին: Եվ որքան Արշակը սիրում էր կնոջը, այնքան էլ սա ատում էր Արշակ թագավորին, ասելով, թե՝ թավամազ մարմին ունի, թուխ գույն ունի»: Վերջը, երբ կնոջ սիրտը Արշակին չկպավ՝ սա մարդ ուղարկեց Հունաց երկիր և այնտեղից՝ կայսերական տոհմից, խնդրեց բերել տվեց իրեն կին Ոլումայի անունով» (Դպր. IV, գլ. ԺԵ, էջ 193):

Փ. Բուզանդը զգվանքով է անդրադառնում պարսից արքային և նրա երկրում գործող անառակաբարո արարքներին. «Պարսից Շապուհ թագավորը կամեցավ նախատինք հասցնել [Արշակունյաց] ազգին, Հայոց աշխարհին և թագավորությանը: Հրամայեց կանչել էր բոլոր գործերը, իր մեծամեծները և ստորին պաշտոնյաները և իր տիրած աշխարհի բոլոր մարդկանց, և այս բազմության մեջ բերել Հայաստանի տիկնոջը՝ Փառանձեմին: Եվ հրամայեց հրապարակում շինել ինչ-որ մեքենայություն, որի վրա ձգել տվեց տիկնոջը և արձակել նրա վրա՝ անասնական պիղծ խառնակության համար (Դպր., IV, գլ. ԾԵ, էջ 269):

Նա ցավով է արձանագրում, թե ինչպես պարսից Շապուհ Երկարակյաց արքան Վահան Մամիկոնյանի և Մերուժան Արծրունու ուղեկցությամբ կրկին եկավ Հայաստան, որի հետևանքով «հազարներով ու բյուրերով սպանեցին. թիվ ու հաշիվ չկար սպանվածների: Իսկ փախած նախարարների և ազատների կանանց հրամայում էր բերել Զարեհավան քաղաքի ձիարշավի հրապարակը: Եվ հրամայում էր այն ազնվական կանանց մերկացնել ու հրապարակի երկու կողմում նստեցնել, իսկ ինքը՝ Շապուհը, ձի հեծած, արշավելով անցնում էր կանանց միջով, և որոնք որ աչքին դուր էին գալիս՝ մեկ-մեկ տանում էր իր մոտ. պիղծ խառնակության, որովհետև նրա խորանը զարկած էր հրապարակի մոտ, այնտեղ էր մտնում անօրեն գործը կատարելու» (Բուզանդ, դպր., IV, գլ. ԾԸ, էջ 273):

Հեթանոս հայերին, ըստ երևույթին, բնորոշ է եղել մերձամուսնության սովորույթը, սակայն քրիստոնեական եկեղեցին դատապարտել է այդ երևույթը և կանխարգելու կարգեր սահմանել: V դարի հայ պատմագիրներից Փավստոս Բուզանդը առաջինն է, որ հենվելով՝ կանոնական դրույթների վրա՝ գրում է, որ Ներսես Մեծը «նաև խրատում էր, որ ամուսնության մեջ օրինավոր լինին, որ ամուսնացածներն իրար չխաբեն, իրար դեմ դավ չսարքեն, հեռու մնան ազգակցական մերձավոր խառնակ ամուսնություններից, մանավանդ հարսների հետ մերձավոր ամուսնությունից և այլն, կանոնակարգում էր, որ մեռած անասուն չուտեն, ասականի ժամանակ կնոջ չմերձենան, որովհետև դրանք պիղծ են տիրոջ առաջ» (IV դպր., գլ. Դ, էջ 121): Արյունակցական մերձավոր ամուսնությունը որակվում էր «խառնակցություն», «անարժան և չար վարք», «պիղծ ամուսնություն» և այլն:

Պատմիչը հաղորդում է, որ Պապ Արշակունին խանգարեց և ոչնչացրեց այն բոլոր կարգերը, որ կաթողիկոս Ներսեսն էր սահմանել եկեղեցում: Նա գրում է. «Պապը հրաման տվեց աշխարհին՝ ավերել որբանոցներն ու այրիների ապաստարանները, որ շինել էր Ներսեսը զանազան գավառներում. ավերել կուսանոցները զանազան գավառներում ու ավաններում, որ նույն Ներսեսն էր շինել ու պարիսպներով ամրացրել՝ առևանգումից զգույշ պահպանության համար» (V դպր., գլ. ԼԱ, էջ 349): Փաստորեն առևանգմամբ ամուսնությունը վաղ միջնադարում այնքան տարածված է եղել, որ կաթողիկոսը հարկադրված է եղել կուսանոցները պարիսպներով պատել՝ առևանգումից կույսերին պաշտպանելու համար: Սերնդաճը կանխող այս միջոցին նա խիստ դեմ էր, քանզի երկրին պետք էին աշխատող ձեռքեր, բնակչության աճ, երկրի տնտեսական աշխուժացում: Պատմիչը շարունակում է. «Պապ թագավորը հրամայում էր այս կուսանոցները ավերել, իսկ հավատավոր կույսերին հրամայում էր մատնել պիղծ խառնակության», այսինքն կույսերին հրամայում էր ամուսնանալ, անցնել իրական կյանքի, ապահովել որդեճությունը և սերնդի վերարտադրությունը երկրում (V դպր., գլ. ԼԱ, էջ 349): Ժամանակից շուտ ծնված, չապրող, արատավոր երեխաների ծնունդը համարվում էր կնոջ «անմաքուր» վիճակում սեռական կապի հետևանք:

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո անողորմ պայքարի արդյունքում արգելվել էին հեթանոսական շրջանի այնպիսի նորմեր, ինչպիսիք էին հարճությունը, բազմակնությունը, բազմայրությունը, մերձավոր ազգականների և բարեկամների, խորթ մոր կամ հոր կնոջ, քրոջ, հորաքրոջ, մորաքրոջ, եղբոր և քրոջ դստեր, երկու քույրերի, տեգոր՝ այրիացած հարսի հետ ամուսնանալը, ազատ ամուսնալուծության իրավունքը և այլն: Մի խոսքով, ըստ Բուզանդի՝ պսակը պետք է լիներ օրինավոր, այսինքն արգելվում էր ազգականների հետ ամուսնանալը (IV դպր. գլ. Դ, էջ 119): Իսկ ով մի անգամ ամուսնացել էր, այլևս չպիտի համարձակվեր թողնել կնոջը և ուրիշի հետ կարգվել, այլապես դա կդիտվեր անբարոյականություն (դպր. V, գլ. ԻԹ, էջ 345): Ուստի պատմիչը Պապ թագավորի օրոք վարք ու բարքի անկում էր համարում այն, որ մի քանի կին փոխողներ էին լինում: Ինչ խոսք, որ այդ դարերում ևս լինում էին բռնի ամուսնություններ և նույնիսկ՝ պալատում. այսպես, Տիրանը ստիպեց Հուսիկին ամուսնանալ իր աղջկա հետ: Այդ ժամանակ Հուսիկն անչափահաս էր բոլորովին (դպր. III, գլ. Ե, էջ 21): Նկատենք, որ վաղ միջնադարում 10-11 տարեկան հասակում ամուսնացնելը այնքան էլ մեծ զանցանք չի համարվել, առավել ևս, երբ այդ բանին մղում էր թրոնին տիրանալու կամ իշխանական տան ծուխը վառ պահելու միտումը: Բուզան-

դի տեղեկության համաձայն՝ Լուսավորչի որդի Վրթանեսն ուներ երկու որդի՝ Գրիգորիս և Հուսիկ: Առաջինը չամուսնացավ և նահատակվեց: Հուսիկին սնուցանում էր արքայորդի Տիրանը: Սա իր դստերը, ինչպես ասվեց, կնության տվեց մանկահասակ Հուսիկին: Բուզանդն ասում է, որ Հուսիկը «մանկահասակ լինելով՝ թագավորից բռնադատվեց ամուսնանալու»: Հետագայում, ըստ Բուզանդի, «ծերունու հանձար ստանալով... ընտրեց իր համար զսպված կյանք, և տասներկու տարեկան հասակից ապրում էր առաքինի վարքով» (նույն տեղում, էջ 21): Տեղեկանում ենք նաև, որ Ս. Ներսես կաթողիկոսն ընդունել էր պսակի վերաբերյալ նոր կանոններ. նրա օրոք ոչ ոք չէր համարձակվում բաժանվել իր կնոջից և ուրիշի հետ պսակվել, որին նա առել էր հարսանիքի պսակի օրհնությամբ:

Բուզանդը օրինական էր համարում հեթանոսական բարքերից ձեռքազատված պսակադրության կանոնադրական այնպիսի չափանիշներ, ինչպիսիք էին միակնությունը, ամուսնական չափահասությունը, ամուսնացողների փոխադարձ համաձայնությունը, արյունակցական և խնամիական չհասությունը, նույնադավանությունը:

Մանկան դաստիարակություն: Որոշ ակնարկներ կան նաև մանկան «դաշեկության», «սնուցանողների» մասին: Բուզանդը իր գրքի IV դպր., գլ. Բ-ում գրում է. «Այն ժամանակ Արշակ թագավորը դուրս էր գալիս փնտրելու քաջ Մամիկոնյանների տոհմը, մանավանդ որ նրանք իր դայակներն ու սնուցանողներն էին եղել»: Դայակ բառը պահլավերեն է *dZyak*, որ բառացի նշանակում է ծծմայր, ստնտու, ներկայումս՝ միայն մանկաբարձ կին: Բայց հին գրականության մեջ գործ է ածվել նաև տղամարդ դաստիարակ՝ խնամակալ նշանակությամբ: Հին ժամանակ սովորություն կար, որ թագավորը իր որդիներին հանձնում էր որևէ իշխանի դաստիարակության. իշխանը թագավորազն սանին սնուցանում էր իր տանը իր զավակների հետ, և եթե ինքը ունենում էր ծծկեր երեխա՝ թագավորազն և իշխանազն երեխաները միևնույն կնոջ կաթով էին մեծանում և այս կերպ դառնում կաթնեղբայրներ: Մեծանալիս թագավորազնը եթե թագավոր էր դառնում, իր մոտ էր բերում կաթնեղբորը իբրև խորհրդական, մտերիմ ընկեր: Պատմագրությունից հայտնի է նաև, որ «Հայոց նախարարներից ոմանք նրա (օրինակ՝ Հագկերտ Բ-ի) եղբայրներին սնուցել էին իրենց մայրենի կաթով: Դա նշանակում էր, որ պարսից թագավորները հայոց նախարարներին էին հանձնում իրենց որդիների դաստիարակությունն ու խնամակալությունը: Թագավորների օրինակով ավագ իշխաններն էլ իրենց որդիներին հանձնում էին կրտսեր իշխանների կամ սեպուհների դաստիարակությանը¹⁷¹: Փավստոս Բուզանդը մեկ այլ առիթով նշում է, թե ինչպես Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները կոտորածից ազատել են Արծրունյաց տոհմից մանուկ Շավասային և վերցրել իրենց խնամակալության ներքո, մեծացրել ու ամուսնացրել իրենց տոհմից մեկի հետ: Պատմիչը դառնությամբ է նշում, թե ինչպես Մամիկոնյան տոհմի սնած ու մեծացրած Արծրունյաց ժառանգորդի որդին՝ Մերուժանը, բազում չարագործություններ է կատարում Մամիկոնյանների հանդեպ: «Մամիկոնյան ցեղի նահապետ Վարդանը՝ Հայոց մեծ ստրատելատը (սպարապետ) Վասակի ավագ եղբայրը եղել է Արշակ արքայի դայակն ու սնուցանողը (IV դպր. գլ. ԺԱ, էջ 165):

Փ. Բուզանդից տեղեկանում ենք, որ հայոց ընտանեկան դաստիարակությո-

¹⁷¹ Տե՛ս Փ. Բուզանդ, Հայոց պատմություն, ծանոթ. 70, էջ 428:

յան մեջ կարևոր է եղել սերը, հույսը, հավատը, սրբությունը, քաղցրությունը, հեգությունը, անոխակալությունը, աղքատներին հոգ տանելը, դարմանելն (բժշկել) այլոց (դպր. IV, գլ. Դ, էջ 119): Ներսես կաթողիկոսը բոլորին խրատում էր, հորդորում՝ լինել բարեգործ, նախանձախնդիր, դատապարտում էր նենգությունը ագահությունը, ուրիշին նախանձելը, ցանկանալու կրքերը, գրկողությունը, արվամոլությունը, իզանալը, բանբասանքը, մոլի հարբեցողությունը, որկրամոլությունը, հափշտակությունը, պոռնկությունը, թշնամուց վրեժխնդրությունը, ստախտությունը, թշնամությունը, անողորմածությունը, սուտ երդումը, արյունահեղ սպանությունը, պիղծ անասնամոլությունը, հարության հույս չունենալը, անհուսաթյամբ մեռելներին սգալը» և այլն (Բուզանդ, դպր. IV, գլ. Դ, էջ 121):

Փ. Բուզանդի տեղեկացմամբ հեթանոսական այն սովորությունները, որ Աստղիկի պաշտամունքի հետ էին կապված, դեռ չէին անհայտացել ժողովրդի միջից: Պատմիչը հայտնում է, որ մանուկ Հուսիկ կաթողիկոսը քահանայական իշխանության խոսքով հանդիմանում ու խիստ պատուհասում էր նրանց (ազնվականների, արքայի) անօրենության, պոռնկության, արվամոլության, արյունահեղության, գրկողության, հափշտակության, աղքատատեցության և նման ուրիշ շատ մեղքերի համար... (Դպր. III գլ. ԺԲ, էջ 53): Նա դառնությամբ գրում է, թե «Մանուկները իրենց տհաս մտքերով՝ իրենց ժամանակը մաշում էին պարսավելի կրթություններով, հին հեթանոսական սովորություններով, խուժաղուժ բարբարոսական միտք ունենալով: Նրանք սիրում էին իրենց առասպելների երգերը, վիպասանությունները, նրանցով կրթվում էին, նրանց հավատում էին, նրանց մեջ հարատևում» (Դպր. III, գլ. ԺԳ, էջ 55): Ապա ավելացնում է, թե հեթանոսական բարքերին բնորոշ է եղել «Ատելություն ու նախանձ իրար դեմ, չարակամություն, թշնամություն, ռիսակալություն, իրար խածատել, ընկերոջը և եղբորը նենգել, սիրելիները սիրելիներին, մերձավորները մերձավորներին, ընտանիքներն ընտանիքներին, ազգականներն ազգականներին, խնամիները խնամիներին դավեր էին սարքում: Այնտեղ մարդիկ ծարավ էին մեկը մյուսի արյունը խմելու, ճիգ էին թափում իրար վնասելու, անուղղա վարքի և անխելքության պատճառով: Աստվածների հին պաշտամունքները կատարում էին գիշերները՝ նման պոռնկական գործի, ոմանք հենց իրենց վրա կատարում էին նույն պոռնկական ցանկությունը...» (Դպր. III, գլ. ԺԳ, էջ 55, 57):

Պատմիչի տեղեկություններից իմանում ենք նաև, որ Պապ թագավորը հայ ընտանիքները կանոնավորելու, պետության տնտեսական հիմքերը կայացնելու համար պորտաբույծ տարրերին աշխատանքի ուղղորդելու նպատակով հիվանդանոցների, անկյալանոցների, բարեգործական այլ հաստատությունների վերակացուներին վոնդեց պաշտոններից և հրամայում էր ավերել, ոչնչացնել հիմնարկությունները: Պահանջում էր նրանցից վճարել պտղի՝ եկեղեցական տուրք և տասնորդ¹⁷² (V դպր., գլ. ԼԱ, էջ 349):

Մահ և հուղարկավորություն: Հեթանոսական սովորություններից էր մեռելատներում կանանց ողբն ու կոծը: Հին սովորության համաձայն կանայք կոծում

¹⁷² Գյուլացիները իրենց բերքից պարտավոր էին տուրք վճարել վանքերին՝ բերքահավաքի ժամանակ, որ կոչվում էր **պտուղ** կամ **պտղի** և **տասնորդ**՝ պարտադիր տուրք էր, որ ցյուլացիները պետք է վճարեին պետությանը կամ հողատերերին: Պտղի տալիս էին թե՛ հողագործական և թե՛ անասնապահական արդյունքներից, սովորույթ, որ պահպանվել է հայ իրականության մեջ մինչև XX դարի սկզբները:

էին ննջեցալին, երգում և պարում հուսահատ հոռետեսությամբ: Պատմիչը սքանչելի տողեր է նվիրել կոծի նկարագրությանը, մի բան, որ ցույց է տալիս, թե նա ինքն էլ թերևս ականատես է եղել նմանօրինակ տեսարանների, և դա զարմանալի չէ, քանի որ նման սովորությունը դեռ մինչև XX դարի սկզբները գոյություն ունէր Հայաստանի տարբեր գավառներում:

Դպրություն III, գլ. ԺԱ-ում նկարագրվում են Վաչե Մամիկոնյան զորավարի, Խոսրով Մեծ արքայի, Վրթանես եպիսկոպոսապետի հուղարկավորման հետ կապված սովորությունները. «Այս պատերազմում (խոսքը պարսկա-հայկական պատերազմի մասին է) ընկավ նաև Վաչեն՝ Հայոց մեծ սպարապետը, և ամբողջ աշխարհը մեծ սգի մեջ ընկավ, որովհետև տերը շատ անգամ նրա ձեռքով փրկություն էր շնորհել հայերին: Ապա Վրթանես եպիսկոպոսապետը ժողովում մխիթարում էր բոլորին, իրեն՝ Խոսրով թագավորին, և բոլոր զորքը, որոնք սրտակեզ ողբով ու արտասուքով, թախծալից հոգսերով, մեծ լաց ու կոծով կաշառված սգում էին՝ գնացածների կարիքները մնացածների համարելով» [էջ 45]:

Ներսես Մեծի խրատներում, ըստ Բուզանդի հաղորդման, ասվում էր. «... միշտ պետք է նկատի ունենալ հարության հույսը, չկարծել թե մարդու մահն անդառնալի է, նորից կենդանանալու հույս չկա, ուստի և պետք չէ մեռածի վրա անհուսությամբ լաց ու կոծ անել, անչափ ու անկարգ սուգ անել, այլ հույսով նկատի ունենալ տիրոջ (երկրորդ) գալուստը և հարությամբ նորոգվելը, ուրեմն սպասել տիրոջ գալստյանը, երբ ամեն մարդ հավիտենական հատուցում կստանա ըստ իր գործերի (դպր., IV, գլ. Դ, էջ 121):

Դրանից հետո մեռավ աշխարհաշեն Խոսրովը՝ Մեծ Հայքի թագավորը: «Ամբողջ Մեծ Հայքի աշխարհներից ու գավառներից հավաքվեցին սուգ արեցին, լացին ու տարան իր նախնիների մոտ՝ Անի, Դարանաղիի Եկեղյաց գավառը: Նրանից հետո մեռավ նաև Վրթանեսը՝ Մեծ քահանայապետը: Ամբողջ Հայոց աշխարհը հավաքվեց և մեծ արարողությամբ, սաղմոսներով ու հոգևոր երգերով, կանթեղներով, մոմերով անուշահոտ խնկով՝ արքունական կառքերով փոխադրեցին սուրբ Վրթանեսին, մեծ վշտով՝ որ որք մնացին իրենց բնիկ տիրոջից և հոգևոր վարդապետից, և լացով ու կոծով, տրտմությամբ հուղարկավորեցին Դարանաղյաց գավառի Թորդան գյուղը ու Գրիգոր մեծ հայրապետի մոտ նրա մարմինը ամփոփեցին և նրա կենդանի մշտակատար հիշատակը կատարելով՝ ետ դարձան» [III դպր., գլ. ԺԱ, էջ 47]:

Բուզանդը հիշատակում է, որ ննջեցալներին, լինի հայրապետ, եպիսկոպոս, իշխան կամ թագավոր, թաղում էին իրենց կալվածքում, նախնիների մոտ: «Մրանց համար (խոսքը մեծ քահանայապետ Գրիգորի և նրա կրտսեր որդի Արիստակեսի մասին է. - Ռ.Ն.) հանգստարաններ և արժանավոր շիրիմներ պատրաստեցին՝ Մեծ Գրիգորի համար Դարանաղյաց գավառում, Թորդան կոչված գյուղում, իսկ նրա որդուն սուրբ Արիստակեսին նրա խոստովանական մահից հետո, Ծովաց գավառից տարան Եկեղյաց գավառը և թաղեցին Թիլ ավանում, իր հոր Գրիգորի կալվածում» (Դպր. III, գլ. Բ., էջ 15): Այդ նույն կարգով, պատմիչի հաղորդման համաձայն, «Ներսես Մեծ կաթողիկոսի դին տարան իր գյուղը՝ Թիլ ավանը: Սրբին հուղարկավորեցին սաղմոսներով, օրհնություններով, վառված կանթեղներով, հանդիսավոր պաշտամունքով և շատ հիշատակներով» (Դպր. V., գլ. ԻԴ, էջ 335): Նույնպես և Հուսիկ հայրապետին Տիրան արքայի կողմից բրածեծ անելուց հետո «Բերեցին արքունի Բնաբեղ բերդից՝ Մեծ Ծովք աշխարհից, և

հասցրին Թորդան գյուղ Դարանաղյաց գավառում, որտեղ քիչ օրերից հետո վախճանվեց ու թաղվեց Գրիգորի և հայրերի մոտ» (Դպր. III, գլ. ԺԲ., էջ 53): Կանայք կոծում էին ննջեցյալին, երգում և պարում էին այնպես, ինչպես հատուկ էր կռապաշտներին: Այդ սովորությունը խիստ տարածված և խոր արմատներ էր ձգել ժողովրդի մեջ: Ներսես Մեծը հատուկ ուշադրություն է դարձրել դրա վրա՝ քարոզելով, որ դա մեղք է, հակառակ է քրիստոնեության ոգուն, քանի որ, ըստ նոր կրոնի, մահը նախադրուհի էր հանդերձյալ կյանքի:

Ինչպես հայտնի է, հեթանոսության ամենանախնական ժամանաաշրջաններում ննջեցյալներին ամփոփում էին ընտանեկան-ազգակցական դամբարաններում, որովհետև կարծում էին, թե նախնիները հետզհետե փոխվում են ոգիների պահապան գորությունների: Դրանց հովանավորության տակ էին մտնում գերդաստանի բոլոր կենդանի անդամները. նրանց համար պարբերաբար կատարվում էին ծեսեր և զոհաբերություններ: Այստեղից էր գերդաստանական դամբարանների ծագումը սեփական կալվածքում, ազգականներից ոչ հեռու:

Պատմիչը Արշակ Երկրորդի (350-368) ժամանակ հայ-պարսկական պատերազմներին անդրադառնալիս, ազգագրական առումով ուշագրավ մի դրվագ էլ է նկարագրում: Թշնամին, բացի այն, որ Տիգրանակերտ մեծ քաղաքը ավերում ու այնտեղից քառասուն հազար ընտանիք գերի էր քշում՝ փոխելով Աղձնիք նահանգի ժողովրդագրական պատկերը, նաև Դարանաղյաց գավառի Անի բերդում բաց էր անում Հայոց նախկին թագավորների, քաջ Արշակունիների գերեզմանները և թագավորի ոսկորները գերի էր տանում: Չկարողացան բանալ միայն Սանատրուկ թագավորի շիրիմը՝ հսկայակառույց, պինդ ու ճարտար շինվածքի պատճառով» (Դպր. IV, գլ. ԻԴ, էջ 221-225): Նա «այս սովորույթը բացատրում է պարսից հեթանոսական կրոնով. «Նրա համար ենք մենք Հայոց թագավորների ոսկորները մեր աշխարհը տանում, որ այս աշխարհի թագավորների փառքը, բախտն ու քաջությունը թագավորների ոսկորների հետ մեր աշխարհը փոխադրվեն»:

Հեթանոսական նմանատիպ սովորույթի շատ մնացուկներ պահպանվում են առ այսօր: Շատ սրբազան զգացմունքներ և հավատալիքներ էին կապված նախնիների շիրիմների հետ, ուստի և աշխատում էին շարունակ հարձակումների ենթակա մեր աշխարհում գերեզմաններն ամփոփել այնպիսի վայրերում, որ ապահով լինեին, անառիկ, որպեսզի թշնամին չկարողանա կողոպտել այդ դամբարանները, չկարողանա հափշտակել նրանց պարունակած արժեքավոր առարկաները, նաև նախնիների ոսկորները: Կար այն հավատը, որ սիրելիների նշխարներից զրկվելով՝ մարդիկ կզրկվեին նախորդներից ժառանգած քաջությունից և բախտից, հատկություններ, որ խլված ոսկորների հետ կանցնեին թշնամուն: Այդպես էին գոնե մտածում պարսիկները, որոնք մագդեական էին: Նրանք կողոպտեցին Դարանաղյաց գավառի Անի բերդը, որտեղ ամփոփված էին Արշակունի թագավորների շիրիմները և գերեցին արքաների ոսկորները: Այս սովորույթը հայերի կենցաղում ևս պահպանվում է: Գաղթելիս նրանք հանում էին թագավորների, իսկ մեր օրերում նշանավոր մարդկանց կամ հարազատների նշխարները և տեղափոխում: Բուզանդը հաղորդում է, որ երբ Վասակ Մամիկոնյանը ստանում է Հայոց արքաների դամբարանները կողոպտելու լուրը, հարձակվում է թշնամու (պարսիկների) վրա, ազատագրում է գերված նշխարները և թաղում Աղձք կոչված գյուղում, որը գտնվում է Արագածի անառիկ խորշերում: Այսպես

են վարվել նաև հայ հեթանոս թագավորները, որոհետև պատմիչը հիշատակում է, որ պարսիկները չկարողացան բանալ Սանատրուկ արքայի վիթխարի և ամուր շիրիմը (Դպր. IV, գլ. ԻԴ, էջ 225):

Այս շարքի հեթանոսական հավատալիքներից էր նաև ննջեցյալների, հատկապես հերոսների, քաջերի վերակենդանացումը արալեզների կողմից: Երբ Մուշեղ սպարապետի մարմինը բերեցին տուն, տնեցիները նրա մահվանը չհավատացին, թեպետ և տեսնում էին գլուխը մարմնից զատված: Նրանք ասում էին. «Սա անթիվ անգամ կոծվների մեջ էր մտել, ոչ մի վերք չէր ստացել, ոչ մի նետ նրան չէր կպել, և ոչ մի ուրիշ զենքով նա չէր խոցվել»: Ոմանք էլ հույս ունեին, թե նա կկենդանանա: Այս հավատով Մուշեղ սպարապետի մարմնից կտրված գլուխը «կցեցին իրանին և հանեցին մի աշտարակի երդիկը դրին՝ ասելով. «որովհետև քաջ մարդ էր՝ արալեզները կիջնեն ու սրան կկենդանացնեն»¹⁷³: Պահապան դրին և սպասում էին նրա հարությանը, մինչև որ մարմինը սկսեց նեխել: Ապա աշտարակից վար իջեցրին, լացով ու կոծով թաղեցին՝ ինչպես կարգն էր (V դպր. գլ. ԼԶ, էջ 363): Այստեղ նկատելի է, որ զոհված հերոսը համադրվել է մեռնող և հարություն առնող Արա Գեղեցիկի հետ, որին լիզելով՝ պիտի կենդանացնեին շնակերպ արալեզները: Հատկանշական է, որ Վահագնի բնիկ հայկական նախորդը, կարծում են, որ եղել է Արա Գեղեցիկը¹⁷⁴:

Բուզանդի երկում հանդիպում ենք նաև հասարակական սգի տեսարանի: Արշակ թագավորը հրամայում է, որ «Բանակում եղող բոլոր մարդիկ, մեծ և փոքր, առհասարակ, առանց բացառության, գնան կոծ անեն և ողբան սպանված Արշակունի մեծ սեպուռի Գնեղին, ոչ ոք չհամարձակվի ետ մնալ: Ինքն էլ թագավորը կոծի տեղը գնալով՝ նստել ողբում էր իր եղբորորդուն, որին ինքը սպանեց: Գնացել, նստել էր դիակի մոտ, ինքը լալիս էր և հրամայում էր լաց ու կոծը սաստկացնել սպանվածի համար: Իսկ սպանվածի կինը՝ Փառանձեմը, զգեստները պատառոտած, վարսերը արձակած, կուրծքը բաց կոծում էր սգատեղում, բարձր ճշում էր, աղիողորմ ողբով ու արտասուքով, բոլորին լացացնում էր», «մազերը փետում էր, ճշում էր կոծելիս» (Դպր. IV, գլ. ԺԵ, էջ 191):

Հեթանոսական սովորույթի համաձայն մեռելի վրա սուգ կատարելու համար հրավիրում էին հատուկ լալկան կանանց: Սրանցից մեկը ողբի մայր էր դառնում, սկսում էր մեռելի գովեստն անել՝ երբ մի տունը (քառատող) վերջացնում էր՝ ձայնարկուները (լալկան կանայք) այդ քառատողը կրկնում էին, ողբի աղաղակներ բարձրացնում: Հետո ողբի մայրը ասում էր գովեստի հաջորդ տունը և ձայնարկուները կրկնում էին, և այսպես շարունակ: Լսելով, որ Գնեղի սպանության մեջ խառն է եղել Տիրիթի սիրո հարցը, Արշակը կրկնակի վշտահարությամբ էր սգում: Պատմիչը գրում է, թե այս ողբի պահին Փառանձեմը «ողբի մայր դարձավ, ձայնարկուները սկսեցին ողբաձայն խաղի նման երգել Տիրիթի սիրահարությունը, (կնոջ վրա) աչք տնկելը, քությունը, մահվան հնարք գտնելը, սպա-

¹⁷³ Կար այն հավատալիքը՝ թե արալեզները երևակայական երկնաբնակ կենդանիներ են եղել շան կերպարանքով՝ որոնք պատերազմի դաշտում ընկած քաջ մարդկանց վերքերը լիզելով՝ կենդանացրել են նրանց: Այս տեղեկությունը ցույց է տալիս, որ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց ավելի քան 70 տարի անց նախաքրիստոնեական հավատալիքները կենսունակ էին ոչ միայն սովորական ժողովրդի մեջ, այլև Մամիկոնյանների նման ազնվական նշանավոր տոհմում:

¹⁷⁴ Տե՛ս **Արմեն Պետրոսյան**, Ֆիդայու կերպարը հայ բանահյուսության մեջ: «Հայ ժողովրդական մշակույթ», XV. Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Երևան, 2010, էջ 447-453:

նությունը: Սպանվածի վրա կոծ անելով՝ աղիոդորմ ձայնով երգում էին այս բաները...» [նույն տեղում]: Հայոց հնագույն սովորության համաձայն կանայք կոծում էին ննջեցյալին, երգում ու պարում էին, ինչպես որ հատուկ էր հեթանոսներին:

Հուղարկավորության ընթացքում կատարվում էին քրիստոնեության հետ առնչություն չունեցող ծեսեր: Բուզանդը հավաստում է, թե «Ներսեսի մահից հետո երբ մեռելները ողբում էին՝ փողերով, փանդիոներով ու վիներով, կոծի պարեր էին բռնում, մորուքները կտրած, երեսները պատառոտած, կին և տղամարդ դեմ առ դեմ ճիվաղական պարեր խաղալով, ծափ զարնելով հուղարկավորում էին մեռելները» (Դպր. V, գլ. LԱ, էջ 351):

Հետաքրքրական է խնջույքի պահին Պապ Արշակունու սպանության դրվագի նկարագրությունը (Դպր. V, գլ. LԲ), ուր և հանդիպում ենք ժամանակի թատերական ներկայացման՝ երաժշտությամբ ուղեկցվող. «Երբ սկսեցին խմել՝ ուրախության առաջին բաժակը մատուցեցին Պապ թագավորին և իսկույն հնչեցին թմբուկներն ու սրինգները, քնարներն ու փողերը իրենց ներդաշնակ ձայներով: Վահանավոր զորքին հրաման տվին, և մինչ Պապ թագավորը ուրախության գինին բռնած էր մատներով և նայում էր գուսանների խմբին, մինչ ձախ ձեռքի արմունկին հենած՝ մատներում բռնած ուներ ոսկե թասը, իսկ աջ ձեռքը դրել էր նրանի կոթին (սրի դաստապանին), որ կապած ուներ աջ ազդրին, մինչ բաժակը բերանն էր տարել, որ խմե, իսկ աչքերով հառած նայում էր գուսանների զանազան խմբերին՝ Հունաց զորքերին աչքի ակնարկով նշան էր արվում...» (Դպր. V, գլ. LԲ, էջ 355): Նույնքան թատերային է նրա անկման պատկերը. «Հունաց զորքերին աչքի ակնարկով նշան է արվում. և երկու սակրավոր զինվորներ, որ հետևից կանգնած էին սպասավորության ոսկեպորտ վահաններով, հանկարծորեն միասին սակրերը բարձրացնելով զարկում են Պապ թագավորին, մեկը ուղիղ վիզն էր կտրում, մյուս սակրավորը զարկում էր աջ ձեռքի թաթին, որ դրված էր **նրանի** (կարճ սուսեր – Ռ.Ն.) կոթի վրա, կտրում և դեն է ձգում: Պապ թագավորը տեղն ու տեղը ընկնում էր բերանքսիվար, թասով գինին, պարանոցից հոսող արյունը և նրա մարմինը միասին ընկնում էին սեղանի վրա: Պապ թագավորն անմիջապես մեռնում էր» (Դպր. V, գլ. LԲ, էջ 355):

Համայնք, արքունական պաշտոններ: Ազգակցական համակարգ: Փալստոս Բուզանդը ակնարկներ ունի նաև ազգակցական համակարգի վերաբերյալ: Նա ազգակցությունը հիշատակում է **ազգ ու տակ, տոհմ** եզրույթներով: Հայոց մարզպետն ասելով Տարոնի հոգևորականությանը՝ զայրացած էր, որ Աշտիշատի գեղեցկությունը նրանք են վայելում: Այդ պատճառով լուստանք է թափում Տրդդատ թագավորի և ողջ ու մեռած Արշակունի «ազգի և տակի և տոհմի» վրա, աշխարհաբար թարգմանությամբ՝ «ցեղի և արմատի» վրա (IV դպր., գլ. ԺԴ, 180-181):

Պատմագրության մեջ կան թեև սուղ, բայց ցայտուն տեղեկություններ ազատոհմին հատուկ ինքնապաշտպանության և վրիժառության պարտականության մասին: Ընդ որում վրիժառության հիմքում, ինչպես, օրինակ, Բուզանդի երկում, ընկած են եղել ոչ միայն բարոյական, այլև քաղաքական հարաբերությունները: Նա գրում է, թե Մանավազյան և Որդունի նախարարական տների միջև քաղաքական նկատառումներով արյունահեղ կռիվներ են եղել: Միմյանց մեծապես վնասելուց բացի, նրանք ավերել են նաև հայոց արքունական տունը: Այդ պատճառով էլ Վաչե զորավարի միջոցով թագավորը (Խոսրով արքան) «երկու կողմն էլ ջարդում, ոչնչացնում է, երկու տոհմից ոչ մի արու կենդանի չի թողնում

(Դպր. III, գլ. Դ., էջ 18-19): Այստեղ պատմիչը գործածում է «ազգ», «տոհմ» տերմինները:

Հյուրընկալման սովորույթ: Տիրան արքայի (338-350) օրոք տեղի ունեցած հայ-պարսկական պատերազմները նկարագրելիս պատմիչն անդրադառնում է Հայոց արքայի կողմից պարսից մեծամեծներից մեկի հարկադրական հյուրընկալության փաստին, որը միջպետական հարաբերությունների մի ուշագրավ դրվագ է: Դպր. III, գլ. Ի-ում կարդում ենք. «Դեռ նա (Շապուհ-Վարազ անունով պաշտոնյան, որը երեք հազարանոց զորագնդով գալիս էր Հայաստան՝ հաշտություն կնքելու - Ռ.Ն.) չեկած՝ թագավորը իր սենյակի սպասավորների հետ խորհուրդ էր անում: Նա ասում էր. «Մեզ մոտ եկող հյուրին հարկավոր է զվարճացնել և ուրախացնել որսերով, կերուխումով ու ամեն տեսակ վայելչություններով: Բայց պետք չէ, որ նա այստեղ մեր երկրում առատ որսի տեղեր տեսնի, որովհետև Պարսից ազգը չարասիրտ, նախանձոտ, չարաբարո, նենգ մարդիկ են. այլ պետք է գտնել որսով ոչ հարուստ տեղեր, որով նրան զվարճացնենք, բայց առատ որս չանենք, որսի մեծ կոտորածներ չանենք ցույցի համար, միայն ձևի համար անենք՝ պարսիկների դառնության և չարության պատճառով: Ընտրենք Ապահունյաց երկրում՝ Մեծ Մասիսի ստորոտում որսի տեղ, Աղիորսք կոչված քաղաքում» (Դպր. III, գլ. Ի, էջ 81-83):

Նա ունի բացառիկ ուշագրավ վկայություն համայնքային հասարակական հյուրընկալման մասին. «Ներսեսի քահանապետության ժամանակ Հայաստանի բոլոր գավառներում, շենքերում և գյուղերում առհասարակ քահանայապետի հրամանով շինված էին օտարանոցներ ու հիվանդանոցներ, և Հայոց աշխարհի բոլոր մարդիկ ողորմածությամբ սնունդ էին մատակարարում, հիշելով աղքատների, նեղված-տառապածներին, օտարներին, հարստահարվածներին, օտար երկրում և օտարի տան ապրողներին, անցորդ հյուրերին: Նրանց վրա Սուրբ Ներսեսը վերակացուներ էր նշանակել և ուտեստ որոշումը զանազան տեղերից: Իսկ նրա մահից հետո Պապ թագավորն այս ամենն ավերեց, եկեղեցու պատիվն անարգեց, Ներսես հայրապետի սահմանած շատ կարգերն ու բարեկարգությունները տապալեց ու մոռացության մատնեց: Նրա այս աշխարհից գնալուց հետո շատ մարդիկ դարձան նախկին կռապաշտությամբ. Հայաստանի շատ տեղերում կուռքեր կանգնեցրին Պապ թագավորի թույլտվությամբ, որովհետև չկար մեկը, որ հանդիմաներ, չկար մեկը, որից քաշվեին, այլ ամեն մարդ համարձակ գործում էր՝ ինչ որ կամենում էր, շատ պատկերներ էին կանգնեցրել և նրանց երկրպագում էին» (Դպր. V, գլ. LԱ, էջ 351-353): Այս հաղորդման մեջ նկատելի է եւս մեկ փաստ՝ IV դարում հեթանոսական պաշտամունքը՝ կռապաշտությունը, դեռ ամբողջովին իր տեղը չէր զիջել քրիստոնեությանը, վերջինս դեռ համատարած չէր:

Փ. Բուզանդը բերում է նաև արքունական մի քանի պաշտոնների անուններ, որոնք անվանական և ազգագրական հետաքրքրություն են ներկայացնում: Նախ պատմիչը բավականին հստակ ներկայացնում է արքունական գործակալությունները, որոնք «ինը հարյուր բարձ էին կազմում, որոնք թագավորական սեղանի ուրախության մասնակից էին լինում, բացի ոտնկա սպասավորության պաշտոնյաներից: Դրանք ենթակա աստիճանի գործակալներ էին, որոնք թագավորի ներկայությամբ բարձերի վրա բազմում էին, պատիվները գլխներին, չհաշվելով մեծամեծ նահապետներին ու տանուտերներին [IV դպր. գլ. Բ, էջ 107]: Թագավորի մոտ ժողովի գումարման ժամանակ ներկայանում էին նախարարական

տների մեծամեծ նախարարները, գնդերի և դրոշակների տերերը, բոլոր սատրապները՝ աշխարհապահ, երկրապահ բղեշխները, գավառների կառավարիչները, նախարարներն ու ազնվականները, պետերը, իշխանները, զորավարներն ու սահմանապահները [Դպր. IV, գլ. Բ, էջ 109]:

Հազարապետը երկրի տնտեսության և հարկերի գլխավոր տեսուչն էր, ուստի և նրա իշխանությունը տարածվում էր շինականության՝ գլխավոր հարկատու դասակարգի վրա: Բուզանդը նրա պաշտոնը կոչում է **աշխարհատես խնամակալություն** և այս խնամակալության համար նրան որակում է «շինականաշեն» մակդիրով (դպր. IV, գլ. Բ): Փավստոսի ասելով՝ այս պաշտոնը ևս ժառանգական էր և պատկանում էր Գնունյաց տոհմին: Պարսկաստանի մեծ հազարապետների պաշտոնը և իրավասությունը տարբեր էին և ավելի ընդարձակ, քան Հայաստանում¹⁷⁵: Արշակ թագավորը (350-368) (Դպր. IV, գլ. Բ, էջ 107) առաջին գործակալ-հազարապետ նշանակեց «շինականներին շենացնող Գնունյաց ցեղը, որպեսզի իբրև բոլոր երկրի հազարապետներ՝ հոգատարությամբ խնամեն աշխարհաշեն՝ աշխարհը կերակրող գյուղացիությանը»:

Պատմիչը ապա շարունակում է. «Նույնպես և սպարապետության՝ զորավարության գործում ճակատ առ ճակատ նիզակներով կռիվ մղելու համար, նշանակեց փառավոր ու ազնվագգի, աղավնակիր դրոշակներով, արծվի՝ Վարուժանի նշաններով, աներկյուղ ու քաջասիրտ նախամարտիկ, քաջանուն, բարենշան, բարեհամբավ ու բարեգործ, պատերազմական գործերում հաջողակ Մամիկոնյանների ցեղից... և տվեց նրանց զորավարության իշխանություն Մեծ Հայքի բոլոր գործերի վրա» [Դպր. IV գլ. Բ, էջ 107]:

Ջինդկապետ բառը ունի պահլավերեն ծագում, բայց պարսկական գրականության մեջ չի հիշատակված: Ծագման ու ճիշտ նշանակության մասին զանազան ենթադրություններ կան. ոմանք առաջացնում են պարսկերեն *zanta* = փիղ բառից (ուրեմն զինդկապետ նշանակում է փղապետ), ոմանք զենդերեն *zantiaiti* բառից, պահլավերեն *zand – ist*՝ խմբակցության պետ: Ըստ Հ. Աճառյանի՝ բառի փավստոսյան գործածությունից երևում է, որ **զինդկապետը** պարսից մեջ մի անծանոթ զինվորական բարձր աստիճան էր¹⁷⁶:

Անդերձապետը պահլավերեն բառ է՝ *anterziat*, որի հիմնական նշանակությունն է խորհրդական, *andarz* բառից, որ նշանակում է խորհուրդ: Այսպես էր կոչվում հին պարսկական բարձրաստիճան պաշտոնյան, որը նաև խորհրդականի պաշտոն էր վարում թագավորի մոտ: Գոյություն ունեին **դերանդերձապետներ**՝ արքունի դռան **պալատական խորհրդականներ**: Բուզանդը հիշատակում է, որ Սագստան անդերձապետին պարսից Շապուհ թագավորը նշանակում է պարսից զորքի զորագլուխ (Դպր. IV, գլ. ԽԵ, էջ 243): Հիշատակված է նաև **մովան**՝ մոգաց անդերձապետը, նշանակվում է մոգպետի խորհրդական: Հր. Աճառյանը անդերձապետը նույնացնում է հանդերձապետի հետ, որը ըմբռնվել է նաև հազարապետ արքունի տան, վերակացու: Հանդերձապետություն՝ հազարապետություն:

Անդերձապետը նահանգապետից հետո նահանգի ամենամեծ պաշտոնյան էր: Այս բառը հայերենում գործածված է հանդերձապետ ձևով՝ *anderz*-ը շփոթե-

¹⁷⁵ St' u **Н. Адошц**, Армения в эпоху Юстиниана, Ер., էջ 445-446:

¹⁷⁶ St' u **Փ. Բուզանդ**, Հայոց պատմություն, ծանոթ. 135, էջ 435: **Հ. Աճառյան**, Հայոց արմատական բանարան, հ. II, Երևան, 1973, էջ 96:

լով հանդերձի հետ, ուստի և սխալմամբ հասկացվում է իբրև արքունի հանդերձատան վերակացու¹⁷⁷:

Շապստան (տակառապետ) պահլավերեն բառը բառացի նշանակում է ննջասենյակ կամ կանանոց, իսկ **տակառապետ** պահլավերեն բառը նշանակում է գինու կարաս, որից տակառապետ՝ (գինու) մատակարար, մատովակ: Ըստ այսմ **շապստան** տակառապետ այն պաշտոնյան էր, որ արքունական կանանոցի մատովակն էր, գինու մատակարարը¹⁷⁸:

Համբարակապետ կամ **ամբարակապետ** բառացի նշանակում է մթերանոցների վերատեսուչ¹⁷⁹:

Դասապետք շինականացը տեքստում աշխարհաբար թարգմանվել է գյուղերի համփաներ: Դասապետները թերևս հազարապետին ենթարկվող ստորին պաշտոնյաներ էին, որոնց հանձնվում էին գյուղերի հողի, ջրի, արտադրարարների վերաբերյալ գործերը:

Փուշոխյան (դպր. V, գլ. Է, էջ 319), նշանակում էր թիկնապահ:

Բուզանդը (դպր. IV, գլ. ԾԶ, էջ 269) հիշատակում է, որ Փառանձեմ թագուհուն անարգելուց և երկրի բնակչությանը գերեվարելուց հետո Հայոց աշխարհում մնացին ոստիկանները և վերակացուները՝ երկրի ժողովրդին հպատակեցնելու համար: Ոստիկան (պահլավերեն ostikan) նշանակում է հավատարիմ, վստահելի: Հայերենում ոստիկան էին կոչվում թագավորին հավատարիմ և վստահելի մարդիկ, որոնցից թագավորը նշանակում էր վերակացու, կուսակալ որևէ գավառի կամ աշխարհի վրա: Այդպես էին կոչվում նաև արաբների կողմից Հայաստանի վրա նշանակված կուսակալները¹⁸⁰, որոնք պարսկական տիրապետության շրջանում կոչվում էին մարզպան:

Բերդապահները (Դպր. V, գլ. Ա., էջ 289) հավատարիմ մարդիկ էին, որոնց էր վստահվում նաև արքունիքի գանձերի պահպանությունը: Ահա մի նկարագրություն. «Պապ թագավորը եկավ մտավ Հայոց աշխարհը և թագավորեց նրա վրա. նա առավ բոլոր այն ամուր բերդերը, որ գրավել էին պարսիկները, տիրացավ և «Դարոնք բերդին Կոզի երկրում, որտեղ պահվում էին Արշակունիների գանձերը, որովհետև բերդապահները հավատարիմ մարդիկ էին»:

Շատ դիպուկ ու հստակ են ներկայացված Արշակ թագավորի մոտ ժողովի հրավիրված «Նախարարական ցեղերի ու տոհմերի մեծամեծ նախարարները, գնդերի և դրոշակների տերերը, բոլոր սատրապները (հավանաբար բղեշխները), նախարարներն ու ազնվականները, պետերը, իշխանները, զորավարներն ու սահմանապահները (Դպր. IV, գլ. Բ, էջ 109): Խոնարհ աստիճանի գործակալները, որոնք թագավորի ներկայացմամբ բարձերի (գահերի) վրա բազմում էին, պատիվները զլինեիրն՝ չհաշված մեծամեծ նահապետներին ու տանուտերերին, ինը հարյուր բարձ էին կազմում, որոնք թագավորական սեղանի ուրախության մասնակից էին լինում, բացի ոտնկա սպասավորության պաշտոնյաներից»:

Ընդարձակ նկարագրություն ունի զորատեսակների և զինվածության մասին «Արշակ թագավորը հրաման տվեց իր Վասակ սպարապետին՝ գունդ գումարել, զորք պատրաստել: Վասակը շատ շուտով կատարում է թագավորի հրամա-

¹⁷⁷ Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 188-189:

¹⁷⁸ Տե՛ս նույնը, էջ 495:

¹⁷⁹ Նույն տեղում, հ. I, էջ 148-149:

¹⁸⁰ Նույն տեղում, հ. III, էջ 570-571:

նը, կազմակերպում է չորս հարյուր հազար մարդուց [իհարկե, անհավանական թիվ է - Ռ.Ն.] բաղկացած լավ սպառազինված զորք՝ ընտիր ռազմիկ մարդկանցից, արիասիրտ կռվողներ, որոնք զինված էին նիզակներով, սրերով, աղեղներով, վաղրերով, սակրերով, անսխալ խփող և ուժեղ նետաձիգներ, ախոյանների առաջ տեղի չտվող կռվողներ, ամբողջ հեծելազորքը պահպանակներով, զրահավորված սաղավարտներով պաշտպանված, իրենց դրոշներով, նշաններով և բազմաձայն պատերազմական փողերով» [Դպր. IV, գլ. Ի, էջ 205]: Մեկ այլ առիթով խոսելով զինատեսակների մասին, գրում է. «արքունական զինվորները զինված էին սրերով, նիզակներով, սվիններով, վաղրերով, սակրերով, պահպանակներով՝ զրահներով և ասպարակիր հետևակ զորքով» (Դպր. IV, գլ. ԺԵ, էջ 187, դպր. IV, գլ. ԺԱ, էջ 165): Մեկ այլ տեղ էլ գրում է, թե հայոց բանակը Պապ արքայի օրոք 90000 էր՝ «90 հազար ընտիր մարտիկ էին, լավ զինված, նիզակները ձեռքերին, վահաններով, չհաշված ասպարակիրներին» [Դպր. V, գլ. Ե, էջ 307, 371]:

Ընդ որում պատմիչը արքայական կարգերի, թագավորի իշխանության ամրապնդման ջերմ ու համոզիչ կողմնակից էր: Մեծ համակրանքով է խոսում այն սխրանքների մասին, որ անմիջականորեն ուղղված էին հանուն արքայի. «Քաջ Արշակի [արքայի] համար», «Արշակ թագավորին մատաղ եղիր» և բազմաթիվ այլ արտահայտություններ [դպր. V, գլ. Ե, էջ 309 և այլն]:

Рафик Нагапетян – Семейный и общественный быт армян в раннем средневековье согласно “Истории Армении” Павстоса Бузанда. – В статье исследуются ценные этнографические сведения историка V века Павстоса Бузанда, касающиеся семьи, брака, воспитания детей, похорон, общественных отношений, гостеприимства, дворцовых должностей, родов войск и аммуниции армян.

Rafik Nahapetyan – Early middle ages armenian family and social life according to the work of Pafstos Buzand. – Valuable ethnographic information about Armenian family, marriage, child education, death and burial, community relations, hospitality, royal positions, kind of military and armament is studied in the article of fifth-century historian Pafstos Buzand.

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ԿԻՒԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԻՇՐԱՐԽՒՄՅՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կիլիկիայի հայկական թագավորության ավատատիրական հիերարխիայի ամենացածր աստիճանում գտնվում էին ազատ գյուղացիները, որոնք մանր սեփականատերեր էին: Բնականաբար նրանք գյուղական համայնքի անդամներ էին, որն ուներ իր գործերը տնօրինող համայնքային ժողովը: Ժողովն իր հերթին ուներ իր ղեկավարը, որը կոչվում էր «գլուխ» կամ «գլխաւորն»: Հողի բաժանումը կատարվում էր հավասար, «ըստ երդերի»: Սահմաններ են դրվել նաև առանձին համայնքների միջև: Սմբատ Գունդատարը գրում է. «Չէ պատեհ մենակ զհողերն սինաւոժ բաժանել, ինչոյր զայ ամէն մարդ ու լցվի»¹⁸¹:

Հետաքրքիր է, որ թե Մ. Գոշի և թե Սմբատ Գունդատարի Դատաստանագրքերում իրարից գրեթե չեն տարբերվում համայնքի համար սահմանված օրենքները:

Գոշը իր «Յաղագս դատաստանեաց սահմանաց», իսկ Սմբատն իր «Վասն սինաւոժ» կանոնում գրում է, որ սահմանը պետք է որոշել հատուկ «արձանոք» կամ «նշանաւ»¹⁸²:

Հետաքրքիր է, որ երկու մեծ օրենսգիրքները նորաստեղծ համայնքները հռչակել են ապահարկ¹⁸³, այսինքն՝ նրանց անդամները հարկեր չեն վճարել: Այստեղից կարելի է հետևյալ եզրակացությանը հանգել՝ **Կիլիկիայի հայկական թագավորությունում եղել են գյուղական համայնքներ, որոնք չեն մտել ոչ արքունական, ոչ եկեղեցապատկան, ոչ ավատատիրական կալվածքների մեջ:**

Նրանց անդամներն սկզբնական շրջանում ընդհանրապես հարկեր չեն վճարել: Նման գյուղական համայնքի անդամները, այսպիսով, նույնպես «հայրենատեր» էին, քանի որ պահպանում էին իրենց հողատարածքների նկատմամբ սեփականատիրական իրավունքը, որը ժառանգական էր:

Բայց լիարժեքորեն կարելի է պնդել, որ իրենց կալվածքները որպես «հայրենիք» են տնօրինել նաև այն համայնքների բնակիչները, որոնք եղել են հարկատու և բնականաբար տնօրինել ժառանգական սեփականության իրավունքով¹⁸⁴:

Մ. Բոռնազյանը, որ ցայսօր միակն է, որ ունի աշխատություն Կիլիկիայի թագավորության սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին և հեղինակն է ՀԽՍՀ ԳԱ հրատարակած Հայ ժողովրդի պատմության III հատորի այդ նույն հարաբերությունները ներկայացնող բաժնի, տեսակետներ է զարգացնում գյուղացիության՝ որպես Կիլիկիայի տնտեսության հիմնական արտադրողական

¹⁸¹ Դատաստանագիրք, էջ 211:

¹⁸² Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 441, Սմբատ, Սպարապետ, Դատաստանագիրք, էջ 170-171:

¹⁸³ Պրոֆ. Մ. Ե. Հակոբյան, Գյուղական համայնքը Հայաստանում վաղ և զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1985, թիվ 1, էջ 212:

¹⁸⁴ Տե՛ս Դատաստանագիրք, էջ 129 և էջ 288:

ուժերի վերաբերյալ, որոնք ունեն բազում վիճելի կողմեր: Նա հետևյալն է գրում. «Սկզբնաղբյուրները ցույց են տալիս, որ Կիլիկիայի գյուղացիությունը բաժանված էր հետևյալ խավերի.

1. Մանր հողատեր սեփականատեր ազատ գյուղացիներ կամ գյուղական համայնքի անդամ ոչ կախյալ գյուղացիներ: Սրանք իրենց սոցիալ-տնտեսական դրությամբ տարբերվում էին գյուղացիության մյուս խավերից՝ դեռևս պահպանում էին հողաբաժինների նկատմամբ իրենց ունեցած սեփականատիրական իրավունքը, որը ժառանգական էր: Ազատ կամ համայնական գյուղացիները հարկեր և տուրքեր էին վճարում միայն արքունիքին:

2. Դարպասային (թագավորական դոմենի), այսինքն արքունի կամ պետական գյուղացիներ, որոնք իրավական տեսակետից անձնապես ազատ էին, համեմատած կախյալ և ճորտ գյուղացիների հետ: Դարպասային գյուղացիներն ամրացված չէին հողին և կարող էին ազատորեն տեղափոխվել մի կալվածքից մյուսը: Եթե կալվածքը օտարվում էր արքունիքի կողմից, նրանք պարտավոր էին հնգելի, այսինքն՝ բերքի մեկ հինգերորդի կեսը վճարել արքունիքին, իսկ մյուս կեսը՝ նոր տիրոջը: Անշուշտ, սրանով չէին սահմանափակվում նրանց պարտավորությունները: Նրանք վճարում էին նաև նույն տուրքերը և կատարում նույն պարտավորությունները, ինչ կախյալ գյուղացիները:

3. Գյուղացիության երրորդ խավին էին պատկանում կախյալ գյուղացիները, որոնք աղբյուրներում անվանվում են «հարկատու», «հարկատու շինական» և «հնազանդ»: Սրանք հարկատու էին իրենց իշխաններին՝ ֆեոդալներին, ունեին նաև իրենց «հայրենիք» հողակտորը, որից նրանց գրկելու իրավունք չուներին իշխանները: Հետևաբար, սրանք ևս չէին ամրացված հողին և անձնապես ազատ էին, բայց գտնվում էին ֆեոդալական ընդհանուր կախման մեջ և հարկատու էին իրենց իշխանին ու պետությանը: Հարկի չափը սահմանում էր թագավորը, հավաքում էին գավառների իշխանները:

4. Ամենաճնշված և իրավագուրկ խավը կազմում էին ճորտ գյուղացիները՝ պառիկոսները: Դեռևս XII դարում կախյալ գյուղացիների մի մասը սկսել էր ճորտացվել, գրկվել ազատ տեղաշարժման իրավունքից և հարկադրաբար աշխատել ֆեոդալի համար»¹⁸⁵:

Այստեղ Ս. Բոռնազյանը մի փոքր վերանայել է իր մեր հիշատակած աշխատության մեջ գյուղացիությանն ըստ շերտերի բաժանումները, որոնք ավելի մոտ են ճշմարտությանը: Դրանք են «ա) Մանր հողատեր-սեփականատեր ազատ գյուղացիներ:

բ) Կախյալ գյուղացիներ, որոնք հայտնի են հարկատու, տառապեալք, կարոտեալք և հնազանդ տերմիններով: Արքունի կամ դարպասային գյուղացիներ, արքունի մշակներ:

գ) Հողին ամրացված ճորտ գյուղացիներ, պարիկոսներ, ճորտեր»¹⁸⁶:

Սրանով հանդերձ՝ հակասություններն այս տարաբաժաններում ակնհայտ են: Նախ և առաջ սկսենք նրանից, որ առհասարակ, երբ խոսք է գնում գյուղացի հասկացողության մասին, ապա՝ դրա տակ պետք է միայն ու միայն հաս-

¹⁸⁵ Հայ ժողովրդի պատմություն, ՀԽՍՀ ԳԱ հրատ, հ. III, էջ 718-719:

¹⁸⁶ Ս.Վ. Բոռնազյան, Սոցիալ - տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայկական պետությունում, Երևան, 1973, էջ 230:

կանալ մանր հողային (և ոչ միայն հողային, նա նաև որպես սեփականություն ունենիր իր տնակն ու շարժական գույքը) սեփականատիրոջը:

Եթե գյուղացին ունի հարկային պարտականություն պետության (արքայի) կամ էլ կալվածատիրոջ նկատմամբ, դա ամենևին չի նշանակում, որ նա կարող է չդիտվել որպես «հայրենատեր» գյուղացի: Այսինքն՝ հարկային կախյալությունը ուղիղ համեմատական չէր հայրենագրկմանը:

Իսկ եթե գյուղացին հայրենագրկվում էր, նշանակում է՝ պետք է կամ դառնար պայմանականորեն հողատեր՝ այն ստանալով թագավորից կամ ավատատիրոջից կամ էլ՝ դառնար մշակ, որն ինքնին արդեն ոչ թե գյուղացի է, այլ՝ ծառա:

Ուրեմն, ակադեմիական հատորի 2-րդ և 3-րդ բաժանումներն արհեստական են: Դրանք «հայրենատեր» գյուղացիներ էին՝ հարկային կախվածությամբ: Իսկ, ի վերջո, ո՞վ էր պարիկոսը: Ինչպես Ս. Բոռնազյանն է նշում՝ իբրև թե աղբյուրների վրա հենվելով, «հողին ամրացված ճորտ գյուղացին»: Այսինքն՝ արքունական կամ իշխանական կալվածքին ամրացված գյուղացին, որն իր հողի սեփականատերը չէ:

Ս. Բոռնազյանը գրում է. «Դարպասային գյուղացիները ամրացված չէին հողին և կարող էին ազատորեն տեղափոխվել մի կալվածքից մյուսը» (տե՛ս մեջբերման 2-րդ կետը), բայց հաջորդ նախադասությամբ այս դարձվածքի հետ ստեղծում է հակասական վիճակ, գրելով՝ «Եթե կալվածքը օտարվում էր արքունիքի կողմից» և այլն (տե՛ս մեջբերման շարունակությունը):

Ուրեմն, ստացվում է, որ թե՛ արքունական և թե՛ իշխանական գյուղացիներն էլ հայրենատերեր էին և հարկատու: Այստեղից էլ՝ ինչո՞ւ էին համեմատաբար ազատ, ինչպես նշում է, դարպասային գյուղացիները իր բաժանած 3-րդ խավի գյուղացիներից: Ընդհակառակն, ըստ նրա՝ 2-րդ կատեգորիայի գյուղացիների կախյալությունն ավելի շատ էր, մանավանդ կալվածի օտարումից հետո, քանզի հարկ էին տալիս երկու տիրոջ:

Վերջնական եզրակացությունն հետևյալն է: Կիլիկիայի հայկական թագավորությունում եղել են.

Առաջին. ընդհանրապես ազատ գյուղացիներ, որոնք եղել են նորաստեղծ համայնքների անդամներ, և որոնք հետո, ըստ երևույթին տնտեսությունն ամրապնդելով, նոր միայն վճարել են պետական հարկաբ: Նրանք հայրենատեր գյուղացիներ էին:

Երկրորդ. Տնտեսապես կախյալ գյուղացիներ, որոնք լինելով հայրենատեր, հարկ են մուծել հայրենատեր իշխանին և արքունիքին: Հայրենատեր իշխանի կալվածքում գտնվող գյուղացին անմիջապես հարկ չի մուծել թագավորին, քանզի գործում էր «իմ վասալի վասալը իմ վասալը չէ» ակզբունքը:

Երրորդ. Ոչ հայրենատեր գյուղացիներ, որոնք ոչ թե հողին էին ամրացված, այլ նրանց տրված էր հող՝ ժամանակավոր օգտագործման կամ պայմանական իրավունքով: Պատահական չէ, որ ինչպես պայմանական հողատերերը՝ ձիավորները, սրանք էլ կոչվում են լիճ¹⁸⁷:

Այս ամենի հետ մեկտեղ, պետք է շեշտել, որ քանի որ թագավորին էր պատկանում հողի գերագույն սեփականատիրոջ իրավունքը, ապա՝ **նա կարող էր գյուղեր օտարել, բայց ոչ գյուղացիներին հայրենագրկել:**

¹⁸⁷ Դատաստանագիրք, էջ 11, էջ 15 և էջ 82:

Կուզենայինք նաև մեկ հարցի պատասխանը ևս որոնել. պարիկոսը համայնքի անդամ է եղել, թե՞ ոչ:

Ս.Ե. Հակոբյանը իր հոդվածում, որը վերաբերվում է գյուղական համայնքին վաղ և զարգացած ֆեոդալական մի շրջանում, հետևյալ ընդհանրացումն է կատարել. **«Համայնքում ընդգրկված գյուղացիները հայտնի էին «հին հայրենի տերք» կամ «հայրենատերք» անունով:** Սրանք իրենց սոցիալ-տնտեսական դրությամբ և իրավունքներով տարբերվում էին հայ շինականության այլ խավերից: **Համայնքում եղած գյուղացիները հանդիսանում էին իրենց հողաբաժինների ժառանգական սեփականատերք:** Հայ ֆեոդալական իշխանությունները, ֆեոդալականացված վանքերն ու եկեղեցիները, աշխարհիկ ֆեոդալները դեռևս իրենց իշխանությամբ չէին տարածվել նրանց անձի վրա: Հայոց թագավորները, մեծամեծ և գահակալ իշխանները ոչ թե «բռնությամբ», «զըրկոդութեամբ», այլ «ընդ գնոյ» միայն կարող էին գնել նրանց հողամասերը»¹⁸⁸: (Ընդգծումները մերն են - Գ.Ա.)

Ս. Հակոբյանը չի սխալվում՝ **համայնքի գյուղացիները հայրենատերք էին և հանդիսանում էին իրենց հողաբաժինների ժառանգական սեփականատերք:**

Սակայն, «պարիկոս» կոչված խավը հիշատակվում է որպես ոչ հայրենատեր: Եթե համայնքի բնակիչները բոլորը հայրենատերք էին, ապա՝ ստացվում է, որ պարիկոսը դուրս է եղել այդ համայնքից: Եվ եթե չկար և չի էլ հիշատակվում գյուղացիների կեցության մեկ այլ ձև, բացի համայնքից, այդ դեպքում ո՞ր հանրությանն էր մաս կազմում պարիկոսը. միանշանակորեն՝ ոչ գյուղական համայնքի: Ուրեմն, ստացվում է, որ պարիկոսը գյուղացի չէր, այլ՝ կալվածատիրոջ մշակը: Տրամաբանությունն այլ ճանապարհով չի կարող տանել:

Այս հարցադրմանը կարող է հակադրվել միայն նա, ով փաստեր կբերի այն մասին, որ պարիկոս, լիճ կամ ճորտ գյուղացիները կազմել են առանձին համայնք: Բայց նման փաստերի մասին խոսելն ավելորդ է:

Այն, որ պարիկոսները ճորտ գյուղացիներ չեն եղել, այլ՝ թերևս պայմանական հողամշակներ, հողատիրոջ կալվածքի վրա, ի տարբերություն ձիավորների, որոնք պայմանական կալվածատերք էին՝ զինվորական ծառայության տրված, երևում է Գուռնդատարի Դատաստանագրքի հետևյալ հոդվածից.

«Եւ իշխանք դատէ իշխանաց իշխան՝ իշխանաւքն եւ իրենց տեսովն, նոյնպէս եւ զազարքն՝ որ են ի մերս ձիաւորքն և լիճ ճորտերն նա իրենցովն զիրենք դատեն իշխանաց իշխանքն. զթագաւորն ճորտերն՝ թագաւորին հրամանաւքն»¹⁸⁹:

Այսինքն, թիավորները և լիճ-ճորտերը (lige – հպատակ բառից) լրիվ կախյալ են եղել իշխանաց-իշխաններից, ձիավորը զինվորական պարտականությունների առումով, իսկ ճորտերը (պարիկոսները)՝ թերևս հողամշակության: Թեպետ դատաստանագրքում չի հիշատակվում նրանց հող մշակելու մասին, պարզապես դա ենթադրելի է:

Ահավասիկ. «Յառաջ պարտ եւ արքան է դիտել եթէ ինչ կապակցութիւն կայ ընդ պարոնն եւ ընդ լիճ ճորտն. եւ արժան է գիտել որ մեծ հաւատարմութիւն կա և կապակցութիւն, հայնց որ այլ մեծ չկարծ լինել: Վասնզի կապվել է ճորտն լճութեամբ ընդ իր պարոնն՝ ընդդէմ ամէն ազգ մարդոյ, որ մեռնել կարէ եւ ապրել յաւիտեան»¹⁹⁰:

¹⁸⁸ «Պատմա-բանասիրական հանդես», 1965, թիվ 1, էջ 218:

¹⁸⁹ Դատաստանագիրք, էջ 82:

¹⁹⁰ Assises d'Antioche, Venis, 1876, էջ 8-9:

Այսպիսով, ճորտ հասկացողությունը Կիլիկիայի հայկական թագավորությունում համարժեք չի եղել գյուղացի հասկացողությանը և եթե Գունդստաբլը նրան համարում է կախյալ, ապա՝ դրանից ամենևին ենթադրելի չէ, որ նա լիճ ճորտ ասելով հասկանում է կախյալ գյուղացու, ինչպես գտնում է Ս. Բոռնազյանը¹⁹¹: Վերջինս այս ենթադրության հիմք համարում է Գունդստաբլի հետևյալ հոդվածը. «Եւ թէ լինի որ տեղոյն կամ տանն կամ իրացն տերն ասէ ընդ մարդ, թն ձգէ կրավ կոտրէ կամ ապա զինա բանն՝ զինչ ու լինի եւ ճորտն այն է՝ նա չպարտի ճորտն իրք, պարոնին է մեղանքն՝ որ զվզեին վճարէ»¹⁹²:

Այնպես, որ ոչնչով չի հիմնավորվում այն տեսակետը, թե Կիլիկիայում եղել են ճորտ գյուղացիներ կամ պարիկոսներ, տերմիններ, որոնք ցայսօր շրջանառվում են գրքերում և հայոց պատմության դասագրքերում:

Ընդհանուր առմամբ պետք է շեշտել, որ.

Առաջին. Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական համակարգը զլխավորապես հիմնված էր մասնավոր սեփականատիրական իրավունքի վրա, որի առումով գերիշխողը հողային սեփականությունն էր:

Երկրորդ. Հողային սեփականատիրական իրավունքով առաջնահերթությունը տրված էր արքունական սեփականությանը:

Երրորդ. Արքունիքը կամ թագավորը թեպետ օրենքով համարվում էր հողի գերագույն սեփականատեր, բայց իրականում հայրենատեր-բերդատերերի նկատմամբ նրա իրավունքները բացարձակ չէին: Նրա հողային սեփականության իրավունքը բացարձակ էր միայն արքունի տիրույթներում:

Չորրորդ. Արտադրողական հիմնական ուժը համարվում էր գյուղացիությունը, որն ապրում էր համայնքներով և յուրաքանչյուր գյուղացի համարվում էր հայրենատեր՝ ժառանգական սեփականության իրավունքով:

Այժմ փորձենք վերլուծել այն արտադրատնտեսական հարաբերությունները, որոնք գոյություն ունեին գյուղատնտեսական հիմնական արտադրողի՝ գյուղացու և արքունիքի կամ պետության, ինչպես նաև իշխանների ու եկեղեցու միջև:

Արտադրական բնագավառում մարդկանց տնտեսական կապերի հիմքը սեփականատիրական հարաբերություններն էին: Այս եզրակացության հիմքեր տալիս է Սմբատ Գունդստաբլն իր Դատաստանագրքում: Նա չի քննարկում այն հարցը, թե ինչպես է առաջացել սեփականատիրական հարաբերությունների վրա խարսխված տնտեսական կարգը: Պարզապես այդ կարգն համարելով բնական, հավերժական և անփոփոխ, օրենքներով փորձում է հաստատուն դարձնել այն: Ըստ Գունդստաբլի, օրինական է այն սեփականատիրությունը, «որ մարդ իր թրով շահի»: Այսինքն՝ բոնությամբ կամ զոռով ստեղծված սեփականությունը: Նա սեփականատիրությունն օրինական է համարում նաև այն դեպքում, «երբ ձեռք է բերվում աշխատանքային ծախսումների շնորհիվ»¹⁹³:

Սա նշանակում է, որ եթե իշխանը ծախս է անում և իր կալվածքներում տարաբնույթ կառույցներ է անում, ապա՝ դրանք նույնպես դառնում են նրա ժառանգական սեփականությունը, որովհետև նա «վասն այնոր կու շինէ որ իր ու իր յետմնացացն մնացական մնա...»¹⁹⁴:

¹⁹¹ Ս.Վ. Բոռնազյան, նշվ. աշխ., էջ 243:

¹⁹² Նույն տեղում, էջ 243-244, նաև՝ Դատաստանագիրք, էջ 118-119:

¹⁹³ Ն.Ռ. Թովմասյան, Սոցիալ-տնտեսական գաղափարները Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 2, 1966, էջ 212:

¹⁹⁴ Դատաստանագիրք, էջ 14:

Հետաքրքիր է նրա հետևյալ ձևակերպումը. «նույնպես եւ իշխանքն պարտին զիրեանց հարկատվացն եւ հնազանդացն պահել՝ որ ամեն մէկն զիր շինածն եւ զկորթացրած հայրենիքին ունենայ»¹⁹⁵:

Իսկ ո՞վ էր նրա հարկատուն: Բնականաբար գյուղացին, որը արտադրողական հիմնական ուժն էր և որի «հայրենիքի», այինքն՝ ժառանգական կալվածքի իշխանը ձգտում էր անսասան պահել:

Գյուղացու տնտեսական պարտավորությունների կատարման մեջ էր թե՛ հողատիրոջ և թե՛ պետության հզորության գաղտնիքը: Ուստի և, գյուղացու սեփականատիրական իրավունքը անսասան էր:

Իսկ ինչպիսի՞ տնտեսական պարտավորություններ էր իրականացնում գյուղացին: Այդ հարցի պատասխանը տալիս են Գունդստարբի «Դատաստանագրքի» հոդվածները: Այնտեղ դրսևորված են հավելյալ արդյունքի գանձման երեք ձևեր՝ աշխատանքային, բնամթերային և դրամական ռենտաները: Սակայն, աշխատանքային ռենտան աստիճանաբար վերանում է և մնում են մյուս երկուսները: Այսպես, Դատաստանագրքում կարդում ենք. «Եւ ի շաբաթն աւր մի պարունին բանի, եւ այլ աւելի ոչ բնաւ»¹⁹⁶:

Այստեղ, հարկավ խոսքը վերաբերվում է տնտեսապես կախյալ գյուղացիներին:

Աշխատանքային ռենտայի համեմատությամբ գերակշռող նշանակություն է տրվում բնամթերայինին, բայց մթերքով տրված հարկերի չափն էլ կարծես շատ չէ: Ահա դրա մասին մեկ վկայություն. «Եւ ածուք ու այսպիսիք ի պարունին եւ այլ խոտչեք չտայ: Ոչխարն՝ եփ գառն կամ ուլ բերե տարեկան՝ ի տանէն մէկն մէկն առնու պարունն»¹⁹⁷:

Այս փաստը նշանակում է, որ արդեն 12-րդ դարի կեսերին Կիլիկիայի հայկական թագավորությունը թնակոխում է ավատատիրական հարաբերությունների զարգացման այն շրջանը, որ բնամթերային գանձումներն էլ համարվում էին երկրորդական: Ուրեմն, ռենտաներից գերիշխողը դառնում էր դրամականը, որը ենթադրում էր եկամտահարկի պարտադիր վճարում: **Ռենտայի հիմնական տեսակը եկամտահարկն էր:** Դատաստանագրքով նախատեսվում էր որպես եկամտահարկ վճարել բոլոր եկամուտների 1/5-ը. «Եւ է ըրորդ հարկուն սահմանն այս, որ՝ զինչ Աստուած տայ հարկատուին, ի ինգէն մէկն է»¹⁹⁸:

Թեև խորհրդահայ պատմագրության կողմից Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական կարգին անդրադարձնելում այնպիսի տպավորություն առաջացնելու ձգտումը կա, որ գյուղացին անխնայորեն շահագործվում էր, բայց իրականում այդպես չէր: **Որպես տնտեսության զարգացման հիմնական ուժ՝ գյուղացիությունը իր համար սահմանված օրենքերի չափով պաշտպանված էր:**

Սմբատ Գունդստարբի Դատաստանագրքում նույնիսկ հոդված կա այն մասին, որով վաշխառուի՝ գյուղացու պարտքի դիմաց գրավադրված ունեցվածքի առումով սահմանափակումներ է մտցնում: Ահա այդ հոդվածը. «Ապա իդուրս կարես գրաւկնել զինքն զինչ ցեղ ուզեր, բայց գոյութեան եւ ապրնաց է պատճառք»:

¹⁹⁵ Նույն տեղում:

¹⁹⁶ Նույն տեղում, էջ 13:

¹⁹⁷ Նույն տեղում:

¹⁹⁸ Նույն տեղում:

նոյնպէս ոչ ձի եւ ոչ սիլահ, զի կովոյ եւ ծառութեան ի պէտք՝ ի պարոնութեանն ի կարիքն»¹⁹⁹:

Ինչպէս համոզվում ենք, արգելվում էր վաշխատուական պարտքի դիմաց բռնագրավել շարժական գույքը, հանձինս եզների և ձիերի, քանզի դրանք արտադրության զարգացման հիմնական միջոցներն էին:

Այսպիսով, պետությունը հիմնական նպատակներից մեկն էր համարում արտադրության միջոցների օգտագործման կանոնակարգումը, որը կարգելէր գյուղացիական տնտեսության քայքայումը: Նույնիսկ հանուն արտադրության նորմալ պրոցեսի Գունդստաբլը հանդուրժում էր «նաև սեփականության սահմանների խախտում»²⁰⁰:

Ուսանելի են և արդիական հնչեղություն ունեն ջրօգտագործման կարգավորման օրենքները: Դատաստանագրքով վերացվում են ջրօգտագործման բոլոր արգելքները: Այնտեղ կարդում ենք. «Եվ ջուր հանել ի գետոց ջրելոց կամ ջաղցրնոյ՝ չկարէ ոք արգելով կամ ասել թէ սինաւոս իմն է՝ մի հանել ջուր»²⁰¹:

Ինչպէս տեսնում ենք՝ ջուրը կարող էին բերել նաև խախտելով համայնքի սահմանը, որովհետև ջուրը ոչ ոքի չի պատկանում «քանց այնոր որ տարաւ ջուրն՝ հայրենիք իւր սեփական»²⁰²:

Այսինքն՝ ով ջուրը իր հայրենի կալվածքը տարավ՝ դառնում է նրա սեփականը:

Կարծում ենք, որ այս փաստերը բավական են՝ համոզելու համար, որ պետությունն ամեն ինչ անում էր իր հիմնական հարկատու գյուղացիության աշխատանքի համար ապահով պայմաններ ստեղծելու համար:

Այսպիսով, **Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական կարգի կայացման և կայունության հիմնական գրավականներից մեկը գյուղացու հետ այնպիսի արտադրատնտեսական հարաբերությունների մշակումն ու կիրառումն է եղել, որպեսզի ամեն կերպ խրախուսվի նրա աշխատանքը, որի արդյունավետությունն ուղիղ համեմատական էր պետության քաղաքական կայունությանն ու հզորությանը:**

Григор Аракелян – Место крестьянства армянского царства Киликия в феодальной иерархии. – В статье сделана попытка уточнить, что такое место занимало крестьянство в феодальной иерархии армянского царства Киликия. Здесь одновременно показаны расслоения крестьянства, обстоятельства свободы и экономической зависимости отдельных слоев, отношение государства к крестьянству.

Grigor Arakelyan – Armenian peasantry in the feudal hierarkhia of Armenian Kingdom of Kilikia. – This article tries to define more precisely what place the peasantry occupus in the peasantry occupus in the feudal hierarkhia of the Armenian Kingdom of Kilikia. Also discussed are the stratification of the peasantry and the freedom of the separate stratas, circumstances of economic dependence and the attitude of the state towards the peasantry.

¹⁹⁹ Նույն տեղում, էջ 16:

²⁰⁰ «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 2, 1966, էջ 213:

²⁰¹ Դատաստանագիրք, էջ 16:

²⁰² Նույն տեղում:

ԱՐԴԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ

Արդի հումանիզմը որպես փիլիսոփայական աշխարհայացք ձգտում է օրինական ժառանգորդը և արժանավոր շարունակողն ու զարգացնողը դառնալ այն դասական ժառանգության, այն ամեն լավագույնի ու արժեքավորի, ինչ ստեղծել է մարդասիրությամբ ու լավատեսությամբ տոգորված տեսական-փիլիսոփայական միտքն իր բազմադարյա պատմության ընթացքում:

Մեր ժամանակներում հումանիզմը հանդես է գալիս նաև որպես ինքնուրույն գաղափարական շարժում: Որպես այդպիսին՝ նա առաջացել ու կազմակերպորեն ձևավորվել է 20-րդ դարում և մեր օրերում շարունակում է ինտենսիվորեն զարգանալ: Ներկայումս հումանիստներին միավորող կազմակերպություններ գոյություն ունեն աշխարհի ավելի քան 40 երկրներում: Դրանք միավորված են Միջազգային հումանիստական և էթիկական միության կազմում, որն իր շարքերում ընդգրկում է շուրջ 5 միլիոն անդամների: Արդի հումանիստական շարժումն առաջնորդվում է ծրագրային փաստաթղթերով՝ դեկլարացիաներով, մանիֆեստներով ու խարտիաներով, որոնցից առավել կարևորներն են “Հումանիստական մանիֆեստ - I” (1933), “Հումանիստական մանիֆեստ - II” (1973), “Աշխարհիկ հումանիզմի դեկլարացիա” (1980) և “Հումանիստական մանիֆեստ 2000: Նոր պլանետար հումանիզմի կոչ” փաստաթղթերը:

Հանդես գալով որպես ամբողջական երևույթ և օժտված լինելով պատմական զարգացման իրեն ներհատուկ տրամաբանությամբ՝ արդի հումանիզմն անցել է զարգացման հետևյալ երեք փուլերը՝ 1. արդի հումանիզմի սկզբնավորումը (19-րդ դարի կեսեր - 20-րդ դարի 30-ական թվականների սկիզբ), 2. կազմակերպված հումանիստական շարժման ձևավորումն ու զարգացումը (20-րդ դարի 30-ական թվականներից - 80-ական թվականների սկիզբ), 3. աշխարհիկ (սեկուլյար) հումանիզմի՝ որպես ինքնուրույն գաղափարական շարժման առանձնացումը, կրոնական հումանիզմից նրա վերջնական սահմանազատումը (20-րդ դարի 80-ական թվականներից հետո ընկած ժամանակաշրջան):

Մինչև 19-րդ դարի կեսերը արևմտյան փիլիսոփայության և մշակույթի մեջ “հումանիզմ” հասկացությունը, որպես կանոն, նույնացվում էր կամ Վերածնության դարաշրջանի հումանիզմի, կամ առանձին մշակութային հոսանքների հետ:

Առաջին անգամ “հումանիզմը” կյանքի նկատմամբ որոշակի հայացքի, անձնական փիլիսոփայության նշանակությամբ շրջանառության մեջ է դրել դանիացի փիլիսոփա Գաբրիել Սիբբերնը (1824-1903)՝ հայտնի մտածող Ֆրեդերիկ Բրիստիան Սիբբերնի որդին: 1858 թվականին Կոպենհագենում դանիերեն լեզվով լույս ընծայված “Հումանիզմի մասին” (“Om humanisme”) գրքում Սիբբերնը քննադատության է ենթարկում հայտնության և սուպրանատուրալիզմի կոնցեպցիաները:

1891-ին բրիտանական հայտնի ազատախոհ Ջոն Մակկիննոն Ռոբերտսոնը (1856-1933) «Ժամանակակից հումանիստները» («Modern humanists») գրքում «հումանիզմ» բառն օգտագործում է այն մտածողներին բնութագրելու համար, ովքեր պաշտպանում են կյանքի նկատմամբ աշխարհիկ հայացքի իրավունքը:

Նոր նշանակությամբ «հումանիզմ» հասկացության տարածման գործում որոշակի դեր է խաղացել բրիտանական պրագմատիստ փիլիսոփա Ֆերդինանդ Կաննինգ Սկոտտ Շիլլերը (1864-1937): 20-րդ դարի սկզբներին նա այդ բառն օգտագործել է իր գրքերի վերնագրերում, այն է՝ «Հումանիզմ. Փիլիսոփայական էսսեներ» («Humanism: Philosophical essays», 1903) և «Հումանիզմի հետազոտություններ» («Studies in Humanism», 1907): Ու թեև այս աշխատություններում Շիլլերն ավելի շատ գրել է պրագմատիզմի, քան թե հումանիզմի մասին, այնուամենայնիվ, անգլեախոս աշխարհում նա եղել է առաջին մտածողը, ով «հումանիզմ» հասկացությունն օգտագործել է իր սեփական փիլիսոփայական հայացքներն արտահայտելու համար:

«Հումանիզմ» տերմինը նոր նշանակությամբ օգտագործելու Շիլլերի գաղափարն ԱՄՆ-ում պաշտպանություն գտավ փիլիսոփա Ջոն Դյուիի մոտ (1859-1952): Դյուին գտնում էր, որ ճիշտ տեսակետներ ձևավորելիս մենք պետք է ելնենք մարդկային բնության ամբողջականության գաղափարից (համակրանքներ, հետաքրքրություններ, ցանկություններ և այլն), այլ ոչ թե միայն ինտելեկտից, տրամաբանությունից կամ բանականությունից: Մակայն Դյուիի աշխատությունների բարդությունը հնարավոր չդարձրեց «հումանիզմ» հասկացությանը տալու լայն հնչեղություն իր ժամանակի փիլիսոփայական գրականության մեջ:

1910-ականների կեսերին հումանիզմի նոր ըմբռնումը գրավեց ամերիկյան ունիտար եկեղեցու ներկայացուցիչների ուշադրությունը: Որոշ ունիտարիստ քահանաներ հակված էին կրոնական հումանիզմի դրոշի ներքո աշխատանք ծավալել կրոնական ինստիտուտների դեմոկրատացման ուղղությամբ:

1917-ին Կուրտիս Ռիզեն (1887-1956) դիմելով իր համայնքին հայտարարեց՝ «Թեոկրատական հայացքն աշխարհի նկատմամբ ավտոկրատական է: Հումանիստական հայացքը դեմոկրատական է... Հումանիստական կամ դեմոկրատական հայացքն աշխարհի նկատմամբ այն է, որ աշխարհը՝ մարդու աշխարհն է, և հենց մարդուց է մեծապես կախված, թե նա ինչի կարող է նմանվել... Կրոնի բնագավառում հեղափոխությունը, որը կայանում է թեոկրատիայից հումանիզմին, ավտոկրատիայից դեմոկրատիային անցման մեջ, հասունանում էր տևական ժամանակվա ընթացքում... Դեմոկրատական կրոնը «այսկողմայնության» ձև է ընդունում... Դեմոկրատական կրոնի համաձայն մարդու գլխավոր նպատակն այն է, որպեսզի աջակցի մարդկային բարօրությանը այստեղ և հիմա»²⁰³: Հետագայում Ռիզեն դարձավ ԱՄՆ-ում կրոնական հումանիզմի նշանավոր ներկայացուցիչ, որը 1949-1950 թվականներին գլխավորեց Ամերիկյան հումանիստական ասոցիացիան:

Հումանիզմի ունիտարիստական տարբերակը գոյություն ունի նաև այսօր: 1961-ին Ամերիկյան ունիտարիստական ասոցիացիան և Ամերիկայի ունիվերսալիստական եկեղեցին միացան և ստեղծեցին Ունիտարիստական ունիվերսալիստական ասոցիացիա:

²⁰³ *F. Hiorth*, Introduction to humanism, Pune, 1996, s. 7.

Այստեղ պետք է նկատել, որ արդի ունիտարիստները ոչ միշտ են պաշտպանում հումանիզմի կրոնական տարբերակը, նրանց շարքերում կան նաև ագնոստիկական, աթեիստական կամ նույնիսկ աշխարհիկ հումանիստներ:

1920-ականներին Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում սկսում են ավելի ու ավելի հանդես գալ “սովորական” մարդիկ, ովքեր իրենց հումանիստ էին անվանում: Դրանք ագնոստիկներ էին, ազատախոհներ, ռացիոնալիստներ և աթեիստներ, ովքեր գտնում էին, որ “հումանիստ” բառն ավելի հարմար է իրենց հայացքների էությունն արտահայտելու համար:

Խոսելով հումանիստական շարժման առաջացման մասին, չի կարելի շրջանցել կազմակերպությունների այնպիսի խումբ, ինչպիսիք են “Էթիկական ընկերությունները”: Նրանց գլխավոր նպատակն էր բարոյական իդեալները անջատել կրոնական դոկտրինաներից, մետաֆիզիկական սիստեմներից և էթիկական տեսություններից այն հաշվով, որպեսզի նրանց տրվի անկախ ուժ անձնական կյանքում և հասարակական հարաբերություններում:

Էթիկական շարժումը մշակում էր պետական դպրոցներում բարոյական դաստիարակության ծրագրեր, օգնություն էր ցուցաբերում կանանց շարժման զարգացմանը, ուշադրության առարկա էր դարձնում գոյություն ունեցող ռասայական, գաղութային ու միջազգային պրոբլեմները:

Աշխարհում առաջին Էթիկական մշակույթի ընկերությունը ստեղծվել է Ֆելիքս Ադլերի կողմից 1876-ին, Նյու-Յորքում: Այն բանից հետո, երբ այդ ընկերության սոցիալական աշխատանքը ճանաչում գտավ հայրենի քաղաքում, նրա օրինակով սկսեցին համանման կազմակերպություններ ստեղծել ինչպես ԱՄՆ-ի ուրիշ քաղաքներում, այնպես էլ Եվրոպայում:

1896-ին անգլիական էթիկական ընկերություններն ստեղծեցին Միություն, որը 1928-ից կոչվեց Էթիկական միություն (The Ethical Union):

Այդ նույն 1896-ին Ցյուրիխում ստեղծվեց առաջին անդրազգային հումանիստական կազմակերպությունը՝ Միջազգային էթիկական միությունը:

1929-ին ԱՄՆ-ում կազմակերպվում են առաջին անկախ հումանիստական ընկերությունները՝ “Նյու-Յորքի առաջին հումանիստական ընկերությունը” (հիմնադիր՝ Չարլզ Ֆրենսիս Պոտտեր) և “Հոլիվուդի հումանիստական ընկերությունը” (հիմնադիր՝ Թեոդոր Կուրտիս Աբել):

Նյու-Յորքի հումանիստական ընկերության հիմնադիր Չ.Ֆ.Պոտտերը (1885-1962) մեծ նշանակություն էր տալիս հումանիստական շարժման և նրա կազմակերպական ձևերի զարգացմանը: Նա գտնում էր, որ հումանիզմը ոչ միայն հավատն է մարդկային ցեղի աստիճանական ու կայուն ինքնակատարելագործման հնարավորության նկատմամբ՝ առանց գերբնական ուժերի օգնության, այլ նաև այդ հավատի խելամիտ իրագործումը հումանիստական խմբերի ու խմբակցությունների միջոցով:

1930-ին Հարոլդ Բուշմանը և Էդվին Հ.Ուիլսոնը (Edwin H. Wilson) Չիկագոյում, որն այդ ժամանակ դարձել էր ամերիկյան հումանիզմի կենտրոն, հիմնադրեցին “Նոր հումանիստ” (“The new humanist”) հանդեսը: Հանդեսը, որը լույս էր ընծայվում 2 ամսվա պարբերականությամբ, նպաստեց հումանիզմի զաղափարների տարածմանը և հող նախապատրաստեց “Հումանիստական մանիֆեստ-1” (“Humanist Manifesto I”) փաստաթղթի նախապատրաստման համար, որը հրապարակ եկավ 1933-ին:

“Հումանիստական մանիֆեստ-1”-ը հանդիսացավ կրոնական հումանիզմի ծրագրային փաստաթուղթ: Նրա նպատակը կրոնի յուրահատուկ ռեֆորմացիան էր, այնպիսի նոր, ոչ ավանդական հումանիստական կրոնի ստեղծումը, որը կողմնորոշված լիներ բացառապես դեպի աշխարհիկ արժեքները: Մանիֆեստի հեղինակներն ընդգծում էին այն միտքը, որ իրականության արդի ըմբռնումը, գիտության նվաճումները, ինչպես նաև մարդկանց՝ եղբայրացման ձգտումը պահանջում են կրոնի միջոցների ու նպատակների նկատմամբ նոր մոտեցումներ: “Արդի դարաշրջանը,- ասվում է Մանիֆեստում,- հսկայական կասկածներ է ծնել ավանդական կրոնների մեջ, և ոչ պակաս ակնհայտ է այն փաստը, որ ցանկացած կրոն, որը հավակնություն ունի դառնալու արդիականության միավորիչ ու շարժիչ ուժ, պետք է պատասխանի ներկա կարիքներին: Նման կրոնի ստեղծումը արդիականության գլխավոր անհրաժեշտությունն է”²⁰⁴:

Մանիֆեստի 15 թեզիսներում շարադրված են կրոնական հումանիզմի կարևորագույն դրույթները: Նրա հեղինակները հաստատում էին Տիեզերքի անստեղծելիության գաղափարը, ընդունում բնական ու սոցիալական իրականության էվոլյուցիայի փաստը, ինչպես նաև կրոնի ու մշակույթի սոցիալական արմատների մասին վարկածը: Մերժվում էր հոգու և մարմնի ավանդական դուալիզմը և դրա փոխարեն առաջադրվում կյանքի վերաբերյալ օրգանական տեսակետը: Նրանք գտնում էին, որ նոր կրոնը իր հույսերն ու ծրագրերը պետք է կառուցի գիտական ոգու և գիտական մեթոդաբանության լույսի ներքո: Քննադատվում էր հարստացման տենչը, հաստատ համոզմունք հայտնվում, որ գոյություն ունեցող ուտիլիտար, միայն շահույթի նպատակ հետապնդող հասարակությունն արդեն բացահայտել է իր սնանկությունը: Այդ պատճառով առաջարկվում էր արդարացի կառավարման համար ստեղծել սոցիալապես կողմնորոշված կոլեկտիվ տնտեսական կարգ:

“Հումանիստական մանիֆեստ-1”-ը անսովոր ու իր ժամանակի համար արմատական փաստաթուղթ էր, որն ազդեցիկ հումանիստական շարժման սկիզբ դրեց ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ մի շարք այլ երկրներում:

Այդ շարժումը հետագայում տարբեր անուններ կրեց՝ **կրոնական հումանիզմ, նատուրալիստական հումանիզմ, գիտական հումանիզմ, էթիկական հումանիզմ** և այլն:

1935-ին ԱՄՆ-ում ստեղծվեց Հումանիստական մամուլի ասոցիացիա (Humanist Press Association, HPA), որը քիչ անց վերակազմակերպվեց որպես Ամերիկյան հումանիստական ասոցիացիա (American Humanist Association, AHA): 1941-ից սկսած այդ ասոցիացիան ԱՄՆ-ում դարձավ հիմնական հումանիստական կազմակերպությունը, որը գործում է մինչև օրս: Ասոցիացիայի՝ 1942-ին ստեղծված “Հումանիստ” (“The humanist”) հանդեսը շարունակեց “Նոր հումանիստ” (մինչև 1937) և “Հումանիստական բյուլետեն” (“Humanist bulletin”, 1938-1942) հանդեսների ավանդույթները:

Հումանիստական շարժման ծագումն ու զարգացումը հանդիսացավ աշխարհականացման ընդհանուր պրոցեսի անխուսափելի արդյունք և լայն տարածում գտավ նաև մյուս երկրներում:

²⁰⁴ Современный гуманизм: Документы и исследования. М., 2000, стр. 67-68. (Здравый смысл: Журнал скептиков, оптимистов и гуманистов, спец. выпуск).

Հումանիստական շարժման դրոշակակիրը Եվրոպայում դարձավ Հոլանդիան, որտեղ 1945-ին ստեղծվեց “Հումանիտաս” (Humanitas) կազմակերպությունը, որի նպատակը սոցիալական աշխատանքի իրականացումն էր այն մարդկանց շրջանում, ովքեր եկեղեցուն չեն պատկանում: Ավելի ուշ ձևավորվեց Հումանիստական միությունը (Humanistisch Verbond): Հետաքրքրական է, որ մեր օրերում Հոլանդիան հանդիսանում է արևմուտքի ամենաաշխարհականացված երկիրը: Ոչ վաղ անցյալի տվյալներով՝ հոլանդացիների շուրջ կեսը աթեիստներ և սկեպտիկներ են, իսկ չափահաս բնակչության 25%-ը իրեն հումանիստ է համարում²⁰⁵: Հոլանդական հումանիստական շարժման առանձնահատկություններից մեկը նրա բարդ կազմակերպական կառուցվածքն է: Հոլանդական հումանիստական լիգան, ուր ընդգրկված են երկրի հումանիստական շարժման կազմակերպությունները, իր կենտրոնական օրգանի միջոցով ուղղություն է տալիս իր բազմաթիվ բաժանմունքներին, որոնք, միաժամանակ, օգտվում են դրոշակի ինքնուրույնությունից: Բաժանմունքների պրոֆեսիոնալ ղեկավարները զբաղվում են կազմակերպության մեջ նոր ընդունվածների ուսուցման հարցերով: Կազմակերպության անդամները լայն ու ակտիվ աշխատանքն են տանում բնակչության տարբեր խավերի, հատկապես տարեց մարդկանց շրջանում: Լիգայի մասնագետ խորհրդատուների պատրաստմամբ է զբաղվում Հումանիստական համալսարանը Ուտրեխտում, որն իր տեսակի մեջ միակն է աշխարհում:

Գերմանիայում ոչ կրոնական համայնքների շարժումն սկսել է լայնորեն տարածվել 20-րդ դարի 20-ականներին: Հենվելով դեռևս 1859-ին ստեղծված Գերմանիայի արտակեղեցական համայնքների միության, 1881-ին ձևավորված Ազատախոհների գերմանական միության և 1906-ին կյանքի կոչված Գերմանական մոնիստական միության ավանդույթների վրա՝ գերմանական արտակեղեցական միավորումների անդամներն ակտիվ աշխատանք էին տանում բնակչության շրջանում, ստեղծում “աշխարհիկ դպրոցներ”, որտեղ կրոն չէր դասավանդվում: Դրանք մեծ դեր խաղացին Գերմանիայում բնակչության ոչ կրոնական դաստիարակության, աշխարհիկ աշխարհայացքի ձևավորման գործում:

Հումանիստական շարժումը որպես օբյեկտիվ պրոցես ու ժամանակի թելադրանք 20-րդ դարի առաջին կեսերին սկսեց տարածվել նաև մյուս աշխարհամասերում, մասնավորապես Ասիայում:

1910-ականներին նեպալցի Զայ Պրիտհվի Սինգհը (1877-1940) Հնդկաստանում գրեց եռահատոր մի աշխատություն՝ “Հումանիզմի փիլիսոփայություն” (“Philosophy of humanism”), որտեղ զարգացնում էր մարդկանց եղբայրության և խաղաղ գոյակցության գաղափարները: 1927-ին նա Բանգալորում (Հարավային Հնդկաստան) կազմակերպեց Հումանիստական ակումբ, որտեղ հրատարակում էր հումանիզմի վերաբերյալ գրքեր, և դարձավ “Հումանիստական հանդեսի” (“Humanist magazine”) հրատարակման նախաձեռնող:

Այդ ավանդույթն այնուհետև շարունակեց հնդկական մեկ ուրիշ հումանիստ՝ Մանավենդրա Նատհ Ռոյը (1887-1954), ով 1946-ի դեկտեմբերին Բոմբեյում տեղի ունեցած Ռադիկալ դեմոկրատական կուսակցության չորրորդ կոնֆերանսում ձևակերպեց ռադիկալ հումանիզմի 22 թեզիսները: Դրանով սկիզբ դրվեց Ռադիկալ հումանիստական շարժմանը (Radical Humanist Movement), որը 1969-ի

²⁰⁵ St' u Здравый смысл: Журнал скептиков, оптимистов и гуманистов, М., 1997, N 3, стр. 76:

նոյեմբերի 2-ին փոխակերպվեց Հնդկական ռադիկալ հումանիստական ասոցիացիայի (Indian Radical Humanist Association, IRHA):

1950-ական թվականների սկզբներին նոր էջ բացվեց միջազգային հումանիստական շարժման պատմության մեջ: 1952 թվականին Ամստերդամում 7 ազգային էթիկական և հումանիստական կազմակերպություններ (Հոլանդական հումանիստական լիգա, Բելգիական հումանիստական լիգա, Ավստրիական էթիկական ընկերություն, Բրիտանական էթիկական միություն, Ամերիկյան էթիկական միություն, Ամերիկյան հումանիստական ասոցիացիա և Հնդկական ռադիկալ հումանիստական շարժում) հիմնադրեցին մի նոր կազմակերպություն՝ Միջազգային հումանիստական և էթիկական միություն (International Humanist and Ethical Union, IHEU): Միությունն իր շարքերում ունի շուրջ հինգ միլիոն անդամներ աշխարհի քառասուն երկրների ինստուն կազմակերպություններում: Միությունն աջակցում է ոչ թեիստական մորալի զարգացմանը և ունի ՄԱԿ-ին, ՅՈՒՆԵՍԿՕ-ին և ՅՈՒՆԻՍԵՖ-ին առընթեր գործող կազմակերպության կարգավիճակ: Միությունը որպես հումանիստների ազգային ու տարածաշրջանային խմբերի ֆեդերացիա կոորդինացնում է նրանց գործունեությունը, օգնում տեղերում աշխատանքների կազմակերպմանը, նպաստում է նոր հումանիստական կազմակերպությունների զարգացմանը, հումանիստների շահերը ներկայացնում ՄԱԿ-ում (Նյու-Յորք, Ժնև, Վիեննա), ՅՈՒՆԵՍԿՕ-ում (Փարիզ), ՅՈՒՆԻՍԵՖ-ում (Նյու-Յորք) և Եվրոպայի Խորհրդում (Ստրասբուրգ): Միությունը հանդես է գալիս որպես տեղեկատվության կետրոն և միջազգային ֆորում, որտեղ հումանիստական կազմակերպություններն ու առանձին անհատներ կարող են կարծիքներ և գործնական մշակումներ փոխանակել ազգային ակտիվության բարձրացման հարցերի շուրջ: Մինչև 1996-ը Միջազգային հումանիստական և էթիկական միության շտաբ-բնակարանը գտնվում էր Հոլանդիայում (քաղ. Ուտրեխտ), իսկ 1996-ից տեղափոխվել է Լոնդոն: Միության տպագիր օրգանը՝ «Միջազգային հումանիստական նորություններ» («International humanist news») հանդեսն է²⁰⁶:

1970-ականների վերջերին Միության որոշ անդամներ, հաշվի առնելով հարցի կարևորությունը, հանդես եկան «արտաքին օգտագործման համար» «հումանիզմ» տերմինի համառոտ աշխատանքային բնորոշման մշակման առաջարկությամբ: Այդ առաջարկության հեղինակների մտահղացմամբ՝ հումանիզմի հասկացության նման բնորոշման առկայությունը թույլ կտար նոր անդամներ ընդունելիս սահմանել որոշակի չափանիշներ: Միության վարչությունը 1991-ի հունիսի 11-13-ը Պրահայում կայացած իր նիստում, սուր բանավեճերից հետո, հաստատեց հումանիզմի հետևյալ «մինիմալ» սահմանումը. «Հումանիզմը դեմոկրատական, ոչ թեիստական և բարոյական կենսադիրքորոշում է (life stance), որը հաստատում է մարդկային էակների իրավունքն ու պարտքը՝ անձամբ որոշելու սեփական կյանքի իմաստն ու կերպը: Որպես հետևանք, այդ դիրքորոշումը ժխտում է իրականության հարցում սուպրանատուրալիստական հայացքները»:

1998-ին Հայդելբերգում (Գերմանիա) տեղի ունեցած նիստում ընդունվեց Միության նոր կազմակերպական կառուցվածք: Խորհուրդը՝ բաղկացած Միության անդամ կազմակերպությունների ներկայացուցիչներից, անվանափոխվեց

²⁰⁶ Հանդեսի արխիվը էլեկտրոնային տեսքով 1993-ից մատչելի է Միության կայքում հետևյալ հասցեով՝ www.iheu.org (IHN)index.htm:

Գլխավոր ասամբլեայի, իսկ գործադիր կոմիտեն սկսեց կոչվել Տնօրենների խորհուրդ:

1973-ին, “Հումանիստական մանիֆեստ - I”-ի հրապարակումից քառասուն տարի անց, ընդունվեց նոր ծրագրային փաստաթուղթ՝ “Հումանիստական մանիֆեստ -II”-ը (“Humanist Manifesto II”), որն աննախադեպ էջ բացեց համաշխարհային հումանիստական շարժման նորագույն պատմության մեջ:

Григор Асатрян – *Всемирное гуманистическое движение сегодня: Период формирования.* – В статье подчеркивается мысль о том, что современный гуманизм, будучи философским мировоззрением, в наши дни является также самостоятельным идеологическим движением. Обозначив три фазы развития современного гуманизма: а) зарождение (середина 19-го – начало 30-ых годов 20-го века), б) формирование и развитие организованного гуманистического движения (с 30-ых по 80-ые годы 20-го века), в) выделение секулярного гуманизма в самостоятельное идеологическое движение и отделение от религиозного гуманизма (период после 80-ых годов 20-го века), автор анализирует вопросы создания и развития гуманистических и этических организаций в США, в ряде европейских и азиатских стран, а также идеологические и организационные вопросы всемирного гуманистического движения от зарождения до 1973-го года, когда был принят большой и основополагающий документ – “Гуманистический манифест II”.

Grigor Asatryan – *World humanist movement today: period of formation.* – The article underscores that modern humanism, being a philosophical worldview, in our times also presents itself as an independent ideological movement.

Having specified three phases of development of modern humanism: a) origination (mid-XIX through early 30s of the XX century); b) formation and development of organized humanist movement (the XX century’s 30s until early 80s); c) separation of secular humanism as an independent ideological movement and secession from religious humanism (the period after the 80s of the XX century), the author analyzes the issues of establishment and development of humanist and ethic organizations in the USA, a number of European and Asian countries, as well as the issues of ideological and organizational formation of the world humanist movement from origination up until 1973 – the year when the big and fundamental document – “Humanist Manifesto II” – was adopted.

ԱՅՍՊԵՍ ԱՍԱԾ «ՄՐԲԱԶԱՆ ՊՈՌՆԿՈՒԹՅԱՆ» ՄԱՍԻՆ

ՄԵՐԳԵՑ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Խորհրդային բանակում հայերի եւ այլազգիների (հատկապես սլավոնների) ծեծկոտուքների մեծ մասը պայմանավորված են եղել վերջիններս՝ հայերին տված սլավոնական, մոր հետ կապված հայտնի, ըստ իրենց՝ անմեղ, անդեմ ասված հայհոյանքով: Շատ բան ասող փաստ այն մասին, որ հայի համար մայրը սրբություն է, բացարձակություն, ում վրա չի կարելի եւ ոչ մի ստվեր, բիծ գցել (հայ մայրը ինքն էլ է հաստատում իր այդպիսին լինելը): Իսկ հինավուրց իմաստությունն ասում է. “Ասա ո՛վ է Աստվածդ, ասեմ ո՛վ ես դու”: Հայի մեջ մոր, որպես բացարձակության, սրբության ու անբիծության պաշտամունքը գալիս է նրա դիցարանի երկրորդ գլխավոր (Արա Արարչից հետո) Ջորությունից՝ Աստվածամայր Անահիտից, հայի Մեծամորից, նրան ի սկզբանե լույս աշխարհ բերողից, նրանում մայրականը պահող-պահպանողից, եւ ընդհանրապես՝ ամենայնը ծնող-պահպանող, տիեզերական կյանքը նորոգող-հավերժող զորությունից: Իսկ Մեծամոր՝ տիեզերական ծնող գերագույն զորության պաշտամունքը հայի մեջ այնքան է խորը, որ նա անգամ խորհրդային աստվածամերժական ժամանակներում է դա բացեիքաց արտահայտել. ինչպես հայտնի է, այդ ժամանակներում կառուցված “Մայր Հայաստան” կոթողը հենց խորհրդանշում է Աստվածամորը: Անհատական պաշտամունքը հայի մեջ հեթանոս՝ ազգահավատ ժամանակներում բա որքա՛ն է խորն է եղել:

“Ծնունդի խորհուրդն է Անահիտը՝ Ան (ծնում)-Ահ (հզոր) ծնող Ջորություն՝ Աստվածամայր:

Արարչագործությունը՝ դա արարումի եւ ծնունդի միասնությունն է: Եվ արարումը ծնունդ է հաստատում իր նորոգումը... Թե ծնունդ չլինի, էլ ի՛նչ արարում... Մայր Անահիտը՝ ծնունդի խորհուրդ, պտղաբերումի մի ամբողջ աշխարհ”, - կարդում ենք հայոց ժամանակակից հավատո հանգանակ գրքում՝ Ուխտագրքում: Նաեւ, որ “Աստվածամայր Անահիտը մերժում է ընտանիքից դուրս ամեն մի ծնունդ. ընտանիքից դուրս ամեն մի ծնունդ՝ մի որբ անտոհմիկ, ընտանիքից դուրս ամեն մայրացում՝ չարիքի ծնունդ: Մայրը մայրացումն է լոկ ընտանիքի մեջ տոհմածինն է մայրը: Եվ Անահիտը միայն տոհմածին մորն է պաշտպանում”. “Դատապարտելի է այն Տոհմը, որն իր անառողջ կամ պղծված աղջկան հարսնության է տալիս ուրիշ Տոհմի”, -սա էլ ասում է հայոց մեջ Անահիտի դրած եւ Միհր աստծով հաստատված Արտի օրենքը: Հայի ու հայկականի հանդեպ անհանդուրժողական “հայ” եկեղեցական պատմագրությունն անգամ չի զլանում ասելու, որ Անահիտը հայի համար “ոսկեծղի” (այսինքն՝ բացարձակ, կատարյալ), “անբիծ”, ամեն մի աստվածային ու մարդկային “զգաստությանց պահապան”, “հայոց աշխարհի կենտոցիչ աստվածուհի է”. եւ հայ մայրն էլ, հայ կինն էլ իր սիրելի Աստվածամոր, իր ցեղատեսակը ծնող Ջորության պատկերով է, նա իր մեջ նրան է տեսնում, նրանում՝ իրեն:

Եվ, այս ամենով հանդերձ, զայրացուցիչ է, որ որոշ “հայ” մտավորականներ, պետական, քաղաքական այրեր, լրագողներ համարում են, որ հեթանոս Հա-

յաստանում հայոց Անահիտ աստվածամորը նվիրված մեհյաններում, իբր թե, ընդունված է եղել, այսպես ասած “սրբազան պոռնկությունը”, - սրանով նրանք վիրավորում են թե Աստվածամորը, եւ թե հայ կնոջը, մորը, քրոջը...

Անշուշտ, նախապատճառը իրենց՝ Հային, ներկա դեպքում՝ հայ կնոջը չճանաչել-չգգալը, հայ կյանքի առանցքային խորհուրդներից ընտանիքի ու ընտանեկան սեռային սիրո խորհուրդներին անտեղյակ (անհաղորդ) լինելն է։ Բայց քանի որ դա անձնական խնդիր է, դրան անդրադառնալը մի կողմ թողնենք։ Սակայն նրանց ասածը պատմական ինչ-որ “փաստ”-ով “հիմնավորում” ունի։ Որի քննությանն էլ ստորեւ կանդրադառնամ։ Քանզի այդպիսի “փաստ”-երի վերստին շրջանառության մեջ դնելն արդեն շա՛տ վտանգավոր է դառնում...

Խոսքն առաջին դարի հույն աշխարհագրագետ (պատմիչ) Ստրաբոնի “Աշխարհագրության” մեջ տեղ գտած մի “փաստի” մասին է։ Բերենք այդ “փաստ”-ը (որքան էլ որ այն տհաճ ու մտացածին է)։ “Արդ, պարսից բոլոր սրբավայրերը պաշտում են նաեւ մարերը եւ հայերը. բայց Անահիտի սրբավայրերը հայերը (պաշտում են) առանձնահատուկ. տարբեր վայրերում, եւ հատկապես Ակլիխենեում հաստատված են նրա (սրբավայրերը), որտեղ կարգված են ստրուկներ եւ ստրկուհիներ։ Զարմանալին այս չէ, այլ այն, որ ամենաերեւելիները դիցուհուն նվիրաբերում են կույս դատրերին, որոնք, ըստ սովորության, երկար ժամանակ դիցուհու մոտ (այսինքն՝ որպես թե Անահիտական մեհյանում-Ս.Մ.) պոռնկանալուց հետո, տրվում են ամուսնության. ոչ ոք անվայել չի համարում այսպիսիների հետ կենակցելը։ Նման մի բան պատմում է նաեւ Հերոդոտոսը լյուդուհիների մասին. քանզի նրանք բոլորն էլ պոռնկանում էին։ Նրանք այնքան բարեհաճ են վերաբերվում սիրեկաններին, որ թե՛ հյուրընկալության են շնորհում եւ թե՛ փոխադարձ նվերներ տալիս, բազմապատիկ առավել, քան ստանում են, (քանզի) նրանց ապահովում են բարեկեցիկ տները։ Նրանք օտարներից պատահածին չեն ընդունում, այլ առավելապես (իրենց) հավասար աստիճանի եղողներին”։

Ահա եւ Ստրաբոնի հիշատակած ադ “փաստն” էլ հիմք է եղել՝ հեթանոս Հայաստանում “սրբազան պոռնկություն” տեսնելու համար։

Նախ դեռ տեսնենք, թե ով է Ստրաբոնը, ինչ աշխարհագրագետ /պատմաբան/ է նա։

Նա հռոմեացի (հույն) աշխարհագրագետ (պատմիչ) է։ Ծնվել է այս թ.ա. 64/63թ.-ին եւ մահացել 23/24-ին, Փոքր Ասիայի Ամասիա քաղաքում (որն ասում է այն մասին, որ նա, ըստ երեւոյթին, մաքուր հռոմեացի, հույն չի եղել եւ նրա երակներում նաեւ սեմական արյուն է հոսել, ինչպես վկայում են նրա “Աշխարհագրության” մեջ առկա սեմականության տարրերը)։ Նրա գիտական ասպարեզ մտնելու ժամանակաշրջանին հատուկ էր մինչ այդ սկսված հայ-հռոմեական հակամարտությունների սրումը. Հայաստանը համարվում էր Հռոմի “գորեղ թշնամին” արեւելքում եւ Հռոմը՝ Հայաստանի։ Այսինքն՝ Հայստանը համաձայն Ստրաբոնի, ներկայանում է որպես թշնամական երկիր։ Իսկ թշնամական երկրին, պարզ է, թե ինչ աչքերով նա կներկայացնէր. պետք է մրոտեր նրան (հատկապես նրա սրբություն սրբոց մեհյաններն ու դրանց սպասավորներին), աղավաղեր նրա կյանքին վերաբերող իրական փաստերը, այլոց վարք ու բարքերին վերաբերող չը-ար, ո՛չ առաքինի փաստերը պետք է տարածեր (վերադրվագեր) նրա վարք ու բարքի վրա եւ այլն։ Հային ու Հայաստանին թշնամական անհատի աչքի՞ն հավատալ (թեկուզեւ, որ դա “գիտնականի” աչք է/, թե՛ հայ կյանքի՝ հայի աչքերով դիտվածին։

Ասվում է, որ Ստրաբոնը իր ճանապարհորդությունների ընթացքում, իբր, եղել է Հայաստանում: Սակայն նրա “Աշխարհագրության” Հայաստանին վերաբերող մասում հաճախ օգտագործվող “ասում են”, “պատմում են”, “գրույցներն ասում են” արտահայտությունները կասկած են գցում այդ ասվածի վրա, մանավանդ որ նա՝ հատկապես աշխարհագրագետ լինելով՝ Հայաստանի աշխարհագրության վերաբերյալ ասում է փաստեր, որոնք չեն համապատասխանում իրականությանը (օրինակ, որ Վանա լճի ջրերը ելք ունեն, եւ որ Տիգրիսը հոսում է այդ լճով): Փաստորեն, Ստրաբոնը Հայաստանը ներկայացնելիս առաջնորդվել է նաեւ ասեկոսներով, որոնց արդյունքներից է վերը բերված “փաստը”: Բսկ ասեկոսներով է առաջնորդվում նա, ով դրանում շահագրգռված է: Ստրաբոնը, ինչպես նկատվեց, շահագրգռված էր, քանզի իր երկրին թշնամի երկրի հետ գործ ուներ:

Սակայն, ինչպես ասում են, “անկրակ տեղը ծուխ չի ելնում”: Ինչի՞ հիման վրա Ստրաբոնը սարքեց իր՝ Անահիտի մեհյանի վերաբերյալ “փաստը”:

Գիտության մեջ ընդունված սկզբունքներից է անհայտի, չիմացվածի վրա հայտնին, իմացվածը տարածելու, երկրորդը առաջինի վրա վերադրվագելու սկզբունքը (գիտնականը դատում է իր իմացածի շրջանակներում միայն): Ստրաբոնին, այս առումով, հայտնի էին “սրբազան պոռնկությանը” վերաբերող շատ փաստեր, որոնք էլ նրան դրդեցին Անահիտի մեհյանում էլ այն “տեսներ”-ուն, ա՛յն “տեսներ”, ինչը նրանում չկար:

Նախ լեզվական փաստի մասին: “Պոռնկություն” բառը հունական ծագում ունի, որն առաջացել է porne--անառակ բառից եւ նշանակում է անառակ կյանքով ապրող: Վերջինս, իր հերթին, ենթադրվում է, աղերսվում է հունա-հռոմեական դիցաբանական Պերիապ աստվածության (որը սեմական ծագում ունի) անվան հետ, որի պաշտամունքին հատուկ է եղել ֆալոսապաշտությունը (ի դեպ, հունա-հռոմեական երկրներում այդ աստծո պաշտամունքի մասին տեղեկություններ հաղորդում է հենց ինքը՝ Ստրաբոնը): Պերիապ նախասկզբնապես հենց նշանակել է ֆալոս: Ավելորդ չէ ասել, որ հռոմեական կայսրությունում, որում ապրում էր Ստրաբոնը, այս Պերիապ աստծո պաշտամունքը լայն տարածում էր գտել եւ նրան նվիրված տոները ուղեկցվում էին սեռական զանազան սանձարձակություններով ու շվայտանքներով: Այնպես որ, պոռնիկ բառը, ինչպես եւ՝ դրան համապատասխանող հռոմեական իրականությունը, Ստրաբոնին շատ հարազատ էր, մնում էր միայն ըստ այդ բառաձևի (իրողության) դատել այն երեւոյթի մասին, որն իրեն տեսանելի ու մտահասու չէր (հելլենականությանը բնորոշ գիծ՝ դատել ըստ իր չափուձեւի):

Ստրաբոնին Հայաստանում “սրբազան պոռնկություն” “տեսներուն” դրդող այլ “հիմքեր” էլ կային: Նրան լավ հայտնի էր Հերոդոտոսի “Պատմությունը”, որտեղ կա սեմական ազգերի՝ յուդիացիների եւ ասորա-բաբելացիների հետ կապված պոռնկության սովորույթի մասին հիշատակություն: Լյուդիացիների սովորույթի մասին նրա գրքում կարդում ենք. “Լյուդիացիների բոլոր աղջիկները պոռնկանում են, իրենց համար օժիտ հավաքելով, մինչեւ ամուսնանալը. իսկ ամուսին իրենք են ընտրում իրենց համար... Լյուդիացիները պոռնկացնում են իրենց դուստրերին”: Ասորա-բաբելացիների մասին էլ թե՛ “Բաբելոնացիների ամենավատ սովորությունը հետեւյալն է: Տեղաբնիկ ամեն մի կին իր կյանքում մեկ անգամ պետք է նստի Ափրդդիտեի (այսինքն ասորա-բաբելական “սիրո”) աստվածուհու-Ս.Մ.) սրբավայրում եւ խառնվի օտարերկրացի (անտարակույս՝ հատկա-

պես արիացի-Ս.Մ.) այրի հետ: Շատ կանայք, ովքեր պարծենում էին իրենց հարստությամբ (այսինքն՝ ազնվական էին իրենց համարում-Ս.Մ.) եւ անարժան էին համարում խառնվել մյուսների (այսինքն՝ յուրայինների-Ս.Մ.) հետ, երկձի ծածկած սայլակներով գալիս եւ կանգնում են սրբավայրի մոտ: Նրանց հետեւում են մեծ թվով սպասավորներ: Կանանց մեծ մասը վարվում է հետեւյալ կերպ: Նըստում են Ափրողիտի սրբավայրում, գլուխներին պարանից հյուսած պսակ դրած: Նրանց մի մասը գալիս է, մյուսը՝ գնում: Բոլոր ուղղություններով ուղղագիծ անցումներ կան հավաքված կանանց միջեւ, որոնց միջով անցնելով, օտարերկրացիները ընտրություն են կատարում: Եթե կինն այստեղ նստեց, ապա նա չի կարող իր տուն վերադառնալ, մինչեւ որ օտարերկրացիներից մեկը նրա փեշի մեջ արծաթ նետելով, սրբավայրից դուրս չխառնվի նրա հետ: Արծաթը նետելիս նա պետք է այսքանն ասի. “Ես քեզ կանչում եմ հանուն Մյուլիտտա աստվածուհու (համապատասխանում է հին սեմական, շումերա-աքքադական Իշտար-Աստարտա-Անուանիտա՝ մարմնական սիրո ու բեղմնավորումի աստվածուհուն-Ս.Մ.)”:

Ասորեստանցիները Մյուլիտտա անվանում են Ափրողիտին: Արծաթի քանակը նշանակություն չունի: Կինն իրավունք չունի այն մերժելու, քանզի ընդունված է, որ այդ արծաթը սրբազան է դառնում: Կինը հետեւում է առաջին իսկ արծաթ նետողին, առանց որեւէ մեկին մերժելու: Խառնվելուց հետո, իր սրբազան պարտքը աստվածուհու առաջ կատարած լինելով, նա վերադառնում է տուն, որից հետո նրան չես կարող տիրանալ, ինչքան էլ մեծ գումար տաս: Արդ, գեղեցիկ եւ բարեկազմ եղողները շուտով տուն են վերադառնում, իսկ տգեղները երկար սպասում են՝ չկարողանալով ընդունված կարգը կատարել: Եվ իրոք, նրանցից ոմանք այնտեղ մնում են նույնիսկ երեք կամ չորս տարի: Նման սովորություն կա նաեւ Կիպրոսի (անշուշտ, դարձյալ սեմական-Ս.Մ.) մի քանի վայրերում”:

Ահա այսպիսի՝ հնուց “ընդունված կարգ” “սրբազան պոռնկությամբ” տեսակը բուծելու սովորույթ էին հաստատել սեմականներն ըստ Հերոդոտոսի (նա հայոց մեջ այդ “վատ սովորության” մասին ոչինչ չի ասում, թեեւ անդրադառնում է նաեւ հայ սովորույթներին, իսկ ոչինչ չի ասում, քանզի այդպիսիք հայերը բնավ չեն ունեցել), – տեղեկություն, որի մասին Ստրաբոնը լավ գիտեր:

(Ի դեպ, սեմական այդ հինավուրց սովորույթի մասին հիշատակություն կա նաեւ հայ էպոսում՝ “Մասնա ծոերում”, որտեղ պատմվում է, որ երբ Մսրա Մելիքը մահանալիս է լինում, իր կնոջը՝ Իսմիլին, պատվիրում է՝ “Թե Միեթից ու իր ձիուց ջինս չվերունք, Միեթի ցեղն մեր քոքն տի կտրի”...):

Բայց Ստրաբոնի՝ “սրբազան պոռնկության” մասին իմացածը ոչ միայն պատմագիտական էր, այլեւ իրական-տեսանելի. նրա ժամանակներում էլ սեմական հինավուրց “ընդունված կարգը” պահպանվել էր եւ նա իր իսկ աչքերով Հռոմեական կայսրության սեմական հատվածներում դա տեսնում էր:

Մտածողության հելլենական՝ հունա-հռոմեական տիպին ընդհանրապես հատուկ է կեղծ, տափակ վերադրվագումը. Այն, ինչը նա գիտի, ասենք, սեմական Իշտար-Աստարտա-Մյուլիտտա-Անուանիտա աստվածուհու, նրան նվիրված մեհյանում տեղի ունեցածի մասին, բավարար հիմք է համարում դատելու համար հայոց Անահիտ Աստվածամոր, նրա անվամբ մեհյանում տեղի ունեցածի մասին. նա միմյանց հետ շփոթում մ է գրեթե հակադիր խորհուրդներ պարունակող աստվածություններին: Նույն բանը մենք տեսնում ենք նաեւ մյուս հելլենական պատմիչի՝ Հերոդոտոսի պարագայում. նա եւս Անահիտին շփոթում է Իշտարի հետ, ա-

վելին՝ նրանում շփոթմունքը հասնում է այն աստիճանի, որ նա Աֆրոդիտային եւ Միթրային է անգամ նույնը համարում, դրսեւորելով իր իսկ աստվածուհուն անգամ ճանաչելու տարրական պահանջը. “Ասորեստանցիները Աֆրոդիտէին անվանում են Միուիտտա, արաբները՝ Ալիտատ, իսկ պարսիկները՝ Միթրա”, – գրում է նա:

Այսպիսով, Ստրաբոնի, որպէս հելլենական չափ ու կշռույթով դատողի, մեջ բոլոր հիմքերը՝ լեզվական, արժեքային, պատմա-ճանաչողական, անմիջական-տեսողական, կային շփոթելու համար հայոց Անահիտ Աստվածամորը (նրա անվամբ մեհյանում առկա առաքինի վարքութաբքը) սեմական աստվածուհու (նրա անվամբ տաճարներում տիրող “սրբազան պոռնկության” իրողության) հետ:

Հանուն ճշմարտության պետք է ասել, որ Ստրաբոնի ապրած ժամանակներին նախորդող, կամ նույնիսկ համընթաց ընթացող հայ կյանքի ժամանակը նույնպէս, թերեւս, նպաստող դեր է կատարել նրանում այդ կեղծ պատկերացումի ձեւավորման հարցում: Այդ ժամանակների Հայաստանն իրենում ընդգրկում էր, բացի իր բուն բնական տարածքներից, նաեւ սեմաբնակ զգալի տարածքներ. օրինակ՝ Ասորիքն ու Հրեաստանը, որոնք իրենք կամովին անցան “Բարեպաշտ թագավորի”, տարածաշրջանում արքայից արքա հռչակված Տիգրան Մեծի տիրապետության տակ: Դե, իսկ հելլենական մտածական շտամպներով դատող Ստրաբոնի համար բավական էր տեսնել կամ գրքերից իմանալ հայոց մեծ թագավորության սեմական հատվածներում գտնվող սեմական պտղաբերության ու սիրո աստվածուհու մեհյանում տիրող վարքութաբքը, եւ կեղծ աբստրակցիան պատրաստ էր բուն Հայաստանում հայոց Անահիտ Աստվածամոր մեհյաններում նույնպէս նույնն է տեղի ունենում: Բացի այդ, ինչպէս պատմագիրներն են վկայում, Տիգրան Մեծը Ասորիքից ու Հրեաստանից բավականաչափ թվով (մոտ 300 հազարի հասնող) սեմականներ է տեղափոխում բուն Հայաստանի տարածքներ: Եվ պարզ է, որ նրանք իրենց հետ Հայաստան բերեցին նաեւ իրենց “վատ սովորւթյոնները”: Եվ բացառված չէ, որ նրանք, իրենց “հնուց կարգի” համաձայն, իրենց նոր ապրելավայրում գտնվող Անահիտի եւ Աստղիկի մեհյաններին հարակից տարածքներում զբաղվում էին իրենց հինավուրց սովորւթյոթով՝ “սրբազան պոռնկութամբ” (այդ ժամանակների Հայաստանի պաշտոնական քաղաքականւթյունը հելլենականւթյունն էր, որը դեմոսական մղումների առջեւ խստիվ արգելանքներ չէր դնում. այսպէս ասած՝ հավատքի, խղճի, վարք ու բարքի “ազատւթյուն” էր թույլատրվում): Որը եւ Ստրաբոնը տեսնելով (կամ որի մասին ըստ “ասածների ու պատմածների” իմանալով)՝ կարծել է, որ դա բուն հայոց Անահտական մեհյանների կողմից խրախուսվող “սովորւթյոթ” է եղել: Այս դեպքում էլ է փաստորէն նրանում խոսել հելլենական՝ չիմացածի մասին դատել ըստ իմացածի պատմա”գիտական” բարդւթյոթը:

Բայց դե, նա ու իր հելլենական աշխարհընկալումը, ճանաչողական սահմանափակւթյուններն ու գիտական “խղճմտանքը”: Խնդիրն այստեղ հայն է, նա ու իր սրբւթյունները, բարոյականւթյունը, պատիվն ու արժանապատւթյունը. նա՝ էլ այդ ամենի մասին դատի օտարի խեղված հայացքով, նրա պղտոր ու չարացած հոգու աչքերով: Տարօրինակ է, ինչո՞ւ են այդպիսի հայերը հայի մասին նույն հելլեն պատմիչների կողմից բերված դրական բազմաթիվ փաստերը անտեսում, իսկ ահա բացասականները բերաններն առած հա կրկնում են՝ ձեն-ձենի

տված դրանք ասող բանասարկուներին: Ե՞րբ պետք է հայ մտավորականը դադարեցնի բանասարկու օտարներից սովորելու սովորույթը: Այնպես որ, բոլոր դեպքերում, հանգում ենք Անահիտի մեհյանում “սրբազան պոռնկություն” “տեսնողների” անբարոյության, վատասերումի մասին եզրակացությանը:

Сергей Манукян – *Про так называемую “священную проституцию”*. – Начиная с Себеоса есть точка зрения, согласно которой в языческой Армении в храмах богоматерии Анаита был обычай, так говоря, святой проституции. В статье разными (историческим, историко-философским, мифологическим и арменоведческим) ракурсами обосновывается противоположная точка зрения о том, что в храмах Анаита не был отмечённое порочное явление, и что Себеос увидённое в ассирийских храмах Армении обычай ошибочно или преднамеренно распространил на храмы Анаита.

Sergey Manukyan – *About so-called “Sacred prostitution”*. – According to Greek historian and geologist Sebeos there is viewpoint that in ancient Armenian temples devoted to Anahit was accepted so called sacred prostitution . The contrary viewpoint is stated in the article with regard to historical, historico-philosophical and mythological viewpoints that this vicious fact hadn't been in Armenia and that the geologist historian had mentioned those temples which were devoted to Assyrian Peoples' Love Goddess. This fact is intentionally or by mistake spread as if those temples were devoted to Armenian Goddess Anahit.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ. ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՀՈՒՄԱՆԻԶՄ

ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ

Որպես բարդ ու ինքնատիպ աշխարհայցքային ֆենոմեն՝ հումանիզմը մեր ժամանակներում հանդես է գալիս տարբեր տիպերով ու տարատեսակներով: 20-րդ դարի վերջին քառորդի հումանիզմի հայտնի տեսաբան, Հումանիզմի միջազգային ակադեմիայի նախագահ Պոլ Կուրտցը, օրինակ, նշում է, որ կան ոչ քիչ թվով ածականներ, որոնք գործածվում են “հումանիզմ” հասկացության հետ՝ նրան տալով տարբեր տոն ու երանգներ: Եվ նա թվարկում է հումանիզմի հետևյալ հիմնական տարատեսակները՝ 1. նատուրալիստական, գիտական և սեկուլյար, 2. աթեիստական և կրոնական, 3. քրիստոնեական, հրեական և ձեն, 4. մարքսիստական և դեմոկրատական, 5. էկզիստենցիալիստական և պրագմատիստական²⁰⁷:

Հումանիզմի տիպերի ու տարատեսակների այդ բազմազանությունը պայմանավորված է ինչպես ներկա աշխարհում հումանիզմի պրոբլեմի նկատմամբ տեսական-փիլիսոփայական տարբեր մոտեցումներով ու դիրքորոշումներով, այնպես էլ բազմաթիվ հումանիստական կազմակերպությունների, միությունների ու ասոցիացիաների գոյությամբ և հումանիզմի սկզբունքների իրականացման ուղղությամբ նրանց պրակտիկ գործունեության բնույթով: Այս վիճակը, անշուշտ, խիստ դժվարացնում է հումանիզմի տիպաբանության պրոբլեմի ճիշտ ու միանշանակ լուծումը:

Մեր կարծիքով հումանիզմի տիպերի դասակարգման հարցի ռացիոնալ լուծման համար անհրաժեշտ է ելնել երեք հիմնական սկզբունքներից, այն է՝ 1. տեսական-փիլիսոփայական, 2. կազմակերպական, 3. գործնական: **Առաջին դեպքում** մենք գործ ունենք հումանիզմի այս կամ այն տեսական-փիլիսոփայական դպրոցի կամ նշանավոր տեսաբանի հումանիստական ուսմունքի հետ: **Երկրորդ դեպքում** որպես հումանիզմի տարատեսակի սկզբնավորող ու “կրող” հանդես է գալիս հումանիստական (էթիկական) այս կամ այն միությունը, ասոցիացիան: **Երրորդ դեպքում** հումանիզմի տիպը որոշվում է հումանիստական կոնկրետ նպատակներ հետապնդող այս կամ այն կազմակերպության (սոցիալական ինստիտուտի) այդ ուղղությամբ իրականացվող պրակտիկ գործունեության բնույթով:

Արդի հումանիզմի առավել տարածված ու լայն ճանաչում գտած տեսակներից է **Էվոյուցիոն հումանիզմը**: Էվոյուցիոն հումանիզմի տեսաբանն ու ոգեշնչողը եղել է ազատախոհների կազմակերպություններից մեկի՝ Միջազգային հումանիստական և էթիկական միության հիմնադիր Ջուլիան Սորելլ շաքսլին (1887-1975)²⁰⁸՝ ականավոր կենսաբան, Զ.Դարվինի մերձավոր զինակից և նրա է-

²⁰⁷ Տե՛ս **II. Կյրտց** Начало начал: В поисках стержневого определения гуманизма. В кн.: **II. Կյրտց** Мужество стать, М., РГО, 2000, стр. 137:

²⁰⁸ Ջուլիան շաքսլի (1887-1975) - անգլիական նշանավոր կենսաբան, փիլիսոփա, հասարակական ու մշակութային գործիչ, ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի պրեզիդենտ: շաքսլիի հիմնական աշխատություններ-

վոյուցիոն տեսության ջերմեռանդ պրոպագանդիստ Թոմաս Հենրի Հաքսլիի թո-
ռը:

Ջուլիան Հաքսլիի պատկերացմամբ՝ էվոյուցիոն հումանիզմը պետք է հանգեցնի գոյություն ունեցող բոլոր համակարգերի ամենառադիկալ վերակա-
ռուցման կամ հումանիստական հեղափոխության: Թեև նա իր հիմնական հա-
յացքները շարադրել է անցած դարի 40-70-ական թվականներին, սակայն նրա
մտքերը չեն հնացել և պահպանում են իրենց թարմությունն ու արդիականութ-
յունը նաև մեր օրերում: Ջ.Հաքսլիի էվոյուցիոն հումանիզմի հետևորդներ ու նրա
գաղափարների պաշտպաններ դարձան մի շարք գիտնականներ ու բնախույզ-
ներ, այդ թվում Ջ.Դ.Միմպսոնը, Կ.Հ.Ուոդդինգտոնը, Է.Մայրըրը, Ջ.Հեմմինգը, Ռ.
Դոկինզը և շատ ուրիշներ:

Իր փիլիսոփայական հայացքներով Ջ.Հաքսլին բնագիտական մատերիա-
լիզմի կողմնակից էր: Նա, ինչպես նաև նրա համախոհները, հանդես էին գալիս
“դետերմինիզմի մեխանիստական ըմբռնման և կազմակերպությունների բարձ-
րագույն մակարդակները ցածրերին “հանգեցնելու” մետաֆիզիկական տեսութ-
յունների դեմ՝ պաշտպանելով ... զարգացման որոշակի փուլերում նոր որակի ա-
ռաջացման մասին դիալեկտիկական թեզը”²⁰⁹: Հումանիզմի իր տեսությունը նա
առաջադրում է՝ կապված սինթետիկ էվոյուցիոն տեսության հետ, որի ակունք-
ներում կանգնած է եղել Ջ.Միմպսոնը:

Էվոյուցիոն հումանիզմը աճում է մարդկային քաղաքակրթությանն սպառ-
նացող մոտալուտ վտանգների կանխման փորձերից: Այդ վտանգների ու սպառ-
նալիքների շարքում աչքի են ընկնում՝ 1. երկրագնդի բնակչության բուռն աճը,
արգելանքների և կուսական վայրերի, հանգստյան տեղերի կրճատումը, 2. զար-
գացած և հետամնաց երկրների կյանքի մակարդակների միջև ահավոր խզումը, 3.
մշակութային միակերպությունը և գաղափարական կոնֆորմիզմը, կյանքի միա-
պաղաղությունն ու ագրեսիվ տրամադրությունների ուժեղացումը, 4. սեփական
նշանակալիության զգացումի և տիեզերքի կյանքում իր դերի ըմբռնման կորուս-
տը, 5. ավանդական բարոյական արժեքների անկումը և մարդկային արատների
ուժգնացումը:

Ջ.Հաքսլին անհրաժեշտ էր համարում գտնել այդ հիմնախնդիրների ռա-
ցիոնալ ու կոմպլեքսային լուծում, որի համար “հարկ է յուրացնել Տիեզերքում մեր
տեղի և մեր դերի մասին նոր, ավելի հստակ հայացք, ինչպես նաև ստեղծել մտա-
ծողության ու հավատի նոր կազմակերպում, որը կկարողանա խթանել մեր որո-
նումները և մեզ մղել առաջ”²¹⁰: Նա առաջարկում է բնակչության աճի կրճատման,
երիտասարդության համակողմանի զարգացման և կրթության ու դաստիարա-
կության խելամիտ կազմակերպման միջոցով, ինչպես նաև մի շարք ուրիշ գիտա-
կանորեն հիմնավորված մեթոդների օգնությամբ ստեղծել նոր հոգևոր-հասարա-
կական համակարգ, որը և նա անվանում է “էվոյուցիոն հումանիզմ”: Պետք է
նկատել, որ վաղ շրջանի ստեղծագործություններում Ջ.Հաքսլին օգտագործում է

րը վերաբերում են էվոյուցիայի տեսության ընդհանուր հարցերին, փորձարարական սաղմնաբանու-
թյան, ինչպես նաև էթիկայի խնդիրներին: Նա էվոյուցիայի ժամանակակից սինթետիկ տեսության
ստեղծողներից մեկն է:

²⁰⁹ См. у **З.П. Трофимова** Гуманизм, религия, свободомыслие, М., Изд.-во МГУ, 1992, стр. 89:

²¹⁰ **Дж. Хаксли** Ключ к будущему - гуманизм. В кн.: Диалоги, М., Изд.-во полит. литературы, 1979, стр. 14.

“գիտական հումանիզմ” տերմինը, դրանով իսկ ընդգծելով, որ էվոլյուցիայի նրա տեսության մեջ մարդկային բանականությանը վերապահվում է առաջնակարգ դեր: “Իմացության աճը մեզ մոտեցնում է գաղափարների համակարգի արմատապես նոր տիպի, որը ես անվանում եմ էվոլյուցիոն հումանիզմ”²¹¹, - գրում է Ջ. Հաքսլին՝ ի նկատի ունենալով էվոլյուցիայի տեսության և մարդու՝ որպես էվոլյուցիոն գործընթացի բարձրագույն արժեքի մասին ուսմունքի սինթեզը:

Իր “էվոլյուցիոն հումանիզմ” մենագրության մեջ Ջ.Հաքսլին հայտնում է այն միտքը, որ հումանիստները նոր գաղափարներ ու մեթոդներ են առաջադրում ոչ թե այն պատճառով, որ դրանք ինքնին արժեքավոր են, այլ այն, որ իրենք տեսնում են իրական, օբյեկտիվ փոփոխություններ մշակույթի ու պատմության մեջ: Ընդ որում այն ամեն նորը, որ նրանք առաջարկում են, իրենց համար միայն միջոց է, որի նպատակն է պահպանել դրականը և կյանքը փոխել դեպի լավը օբյեկտիվորեն փոփոխվող այս աշխարհում:

Էվոլյուցիոն հումանիզմ անվանման հիմքում ընկած է Ջ.Հաքսլիի այն հիմնարար գաղափարը, որ “Ամբողջ իրականությունը - դա էվոլյուցիայի միասնական գործընթաց է”²¹²: Մատնացույց անելով մարդկության կյանքում տեղի ունեցող խոր փոփոխությունները, նա այն կարծիքն է հայտնում, որ “Պատրանքների խորտակման դժվարին դարը երկու համաշխարհային պատերազմներից հետո վկան է հանդիսանում ավանդական համոզմունքների վիթխարի խորտակման, սակայն նաև այն բանի հարաճուն ըմբռնման, որ լոկ մատերիալիստական աշխարհայացքը կարող է ապահովել մարդկային գոյության աղեկվատ հիմք: Նա վկան է նաև Տիեզերքի, կյանքի ու գիտակցության, մարդկային բնության և մարդկային հասարակությունների, արվեստի, պատմության ու կրոնի մասին գիտելիքի ֆանտաստիկ աճի. սակայն այդ նոր գիտելիքի մեծ մասը մնում է չօգտագործված, չի աշխատում, չի ինտեգրված արգասավոր կոնցեպցիաների և սկզբունքների մեջ, չի ներհյուսվել մարդկային կյանքի ու նրա հիմնախնդիրների մեջ”²¹³: Այդ ամենը չպետք է հանգեցնեն քաոսի, հուսաբեկության կամ էսկապիզմի²¹⁴: Այդ պատճառով առաջ է գալիս այնպիսի համակարգային գաղափարի որոնման հիմնախնդիրը, որը օգնեք մարդուն՝ համապատասխանելու իրերի իրական վիճակին: “Այդ նոր գաղափար-համակարգը, որի ծննդյան վկան ենք եղել 20-րդ դարի կեսերին, ես պարզապես անվանում եմ հումանիզմ, քանզի նա հիմնված է, ամենից առաջ, մարդու և իրեն շրջապատող միջավայրի հետ նրա հարաբերությունների միասնության ըմբռնման վրա”²¹⁵:

Էվոլյուցիոն հումանիզմը սերտորեն շաղկապված է կենդանի աշխարհի, մարդու, հասարակության ու մշակույթի միասնական ու համընդգրկող էվոլյուցիայի գաղափարի հետ: “Այդպիսի էվոլյուցիոն հումանիզմը, - գրում է Ջ.Հաքս-

²¹¹ Մեջբերումն ըստ **3.П. Трофимова** Концепция эволюционного гуманизма в современном английском свободомыслии. Вестник Московского университета, Сер. 7, Философия, 1995, N 2, стр. 56:

²¹² **J. Huxley** Evolutionary Humanism, Buffalo (N.Y.): Prometheus Books, 1992, p. 74.

²¹³ Նույն տեղում, էջ 72-73:

²¹⁴ Էսկապիզմ (էսկեյպիզմ) (անգլ.՝ escape - փախչել, փրկվել) - անհատի՝ իրականությունից փախչելու և պատրանքների ու երևակայությունների աշխարհը տեղափոխվելու ձգտումը. պաշտպանվում ու տարածվում է արևմտյան պրոպագանդայի ու “զանգվածային մշակույթի” միջոցով և նպատակ ունի ներդնելու սոցիալական պասսիվություն ու կոնֆորմիզմ գոյություն ունեցող սոցիալական իրականության նկատմամբ:

²¹⁵ **J. Huxley** Evolutionary Humanism, p. 73.

լին,- որը հաստատում է բանականության ու մարմնի միասնությունը, դուալիստական չէ, այլ ունիտար. ունիվերսալ է, այլ ոչ թե պարտիկուլյար՝ հաստատելով մարդու միասնությունը մնացած կյանքի հետ և կյանքի միասնությունը՝ մնացած ունիվերսումի հետ. նատուրալիստական է, այլ ոչ թե սուպրանատուրալիստական՝ հաստատելով հոգևորի և նյութականի միասնությունը. գլոբալ է, այլ ոչ թե մասնատված՝ հաստատելով համայն մարդկության միասնությունը”²¹⁶:

Ջ.Հաքսլին և՛ սոցիալական իրականության մեջ, և՛ առհասարակ ժխտում է բացարձակ արժեքների գոյությունը՝ որպես էվոլյուցիայի գոյաբանական սկզբունքին հակասող երևույթ. “Էվոլյուցիոն հումանիզմը,- պարզաբանում է նա,- ոչ մի ընդհանուր բան չունի արսոյությունների հետ, ներառյալ բացարձակ ճշմարտությունը, բացարձակ մորալը, բացարձակ կատարելությունն ու բացարձակ իշխանությունը, բայց և պնդում է, որ մենք կարող ենք գտնել չափորոշիչներ (ստանդարտներ), որոնց հետ պատշաճ ձևով կարող են կապված լինել մեր գործողություններն ու նպատակները: Նա (Էվոլյուցիոն հումանիզմը - Գ.Ա.) գտնում է, որ գիտելիքն ու ըմբռնումը կարող են ընդլայնվել, որ գործելակերպն ու սոցիալական կազմակերպումը կարող են բարելավվել և որ կարող են գտնվել անհատի ու հասարակության զարգացման ավելի նախապատվելի ուղղություններ”²¹⁷:

Ջ.Հաքսլիի կարծիքով՝ էվոլյուցիոն հումանիզմի հիմքում ընկած են մեծ ու հիմնարար գաղափարներ, այն է՝

1. գիտակցումը այն բանի, որ մարդը պատասխանատվություն է կրում իր ապագայի, ինչպես նաև իր մոլորակի ապագայի համար, և որ այդ պատասխանատվությունը նա չի կարող դնել ոչ Աստծո, ոչ ճակատագրի, ոչ էլ որևէ այլ բանի վրա, այլ պետք է կրի միայն ինքը.

2. ընդունումը այն փաստի, որ մարդը սոսկ մեկն է Երկրագնդի վրա գոյություն ունեցող կենդանի էակների բազմաթիվ տեսակներից և որ այդ պատճառով մարդկությունը չպետք է վերածվի իրար հետ մրցակցող “կեղծ տեսակների” հավաքածուի, որոնց մենք անվանում են ազգեր, կրոնական խմբեր.

3. մարդկային ձգտումների ու երազանքների իրականացման գաղափարը՝ զուտ նյութական բարեկեցության հասնելու գաղափարի փոխարեն.

4. ձգտումը՝ բարձրացնելու որակը, ամբողջ շրջական միջավայրի որակը, այլ ոչ թե ավելացնելու քանակը, մարդկային խմբերի, պահանջմունքների, փողի, ապրանքների ու ծառայությունների քանակը²¹⁸:

Եվ, այնուամենայնիվ, ամենակարևոր խնդիրը Ջ.Հաքսլին առաջվա պես համարում է մտածողության և համոզմունքների նոր համակարգի զարգացումը:

Ջ.Հաքսլիի հումանիզմի բնորոշ գիծը մատերիալիզմի ու ռացիոնալիզմի հետ մեկտեղ լավատեսական ոգին է, հավատը մարդկության լուսավոր ապագայի նկատմամբ:

Այս համատեքստում հետաքրքիր է, որ Հաքսլիի էվոլյուցիոն հումանիզմի հայտնի հետազոտող, հումանիզմի ռուս տեսաբան Ջ.Տրոֆիմովան իր “Հումանիզմը, կրոնը և ազատախոհությունը” գրքում, անդրադառնալով նրա հումանիստական ուսմունքին, վկայակոչում է ազատախոհության անգլիական նշանավոր

²¹⁶ Նույն տեղում:

²¹⁷ Նույն տեղում, էջ 73-74:

²¹⁸ *Дж. Хаксли* Ключ к будущему - гуманизм. - В кн.: Диалоги, М., Изд.-во полит. литературы, 1979, стр. 16.

գործիչ Գ.Վեբստերին, ով գտնում է, որ Ջ.Հաքսլիի տեսությունը ներթափանցված է “Էվոյուցիոն լավատեսությամբ”, որի էությունը հասարակության այնպիսի կոնցեպցիայի ստեղծումն է, “որը սահմանափակեր մարդկային բնագոյները և մարդուն ազատեք դաժանության ու չճանաչված աշխարհի նկատմամբ վախից”²¹⁹:

Ջ.Հաքսլին անդրադառնում է նաև էվոյուցիոն էթիկայի հարցին, որտեղ և թաքնված են նրա էթիկայի ամենաթույլ ու առավել խոցելի կողմերը: Նա ձգտում է կրոնը համատեղել էթիկայի և էվոյուցիայի տեսության հետ, գտնելով, որ “հումանիզմը կարող է դառնալ էթիկական կրոն՝ համատեղելի գիտական իմացության հետ”²²⁰: Ավելին, այս կապակցությամբ նա ներմուծում է այնպիսի տերմիններ, ինչպիսիք են “հումանիստական կրոնը”, “հումանիզմի էվոյուցիոն տեսությունը”, “էվոյուցիոն հումանիզմը”, “հավատը”, որոնք, նրա կարծիքով, նույնական են:

Սակայն դրանով հանդերձ՝ արդարությունը միաժամանակ պահանջում է ասել, որ այդ արտահայտություններն ու տերմինները Ջ.Հաքսլիի մոտ չեն համընկնում իրենց իմաստային սովորական, ավանդական նշանակության հետ, քանզի նրա ամբողջ փիլիսոփայական ու բնագիտական ուսմունքի միջով անցնում է այն հիմնարար գաղափարը, որ քաղաքակրթությունը, մշակույթը և բոլոր սոցիալական ինստիտուտները չի կարելի համարել գերբնական զարգացման արդյունք: Իր հոդվածներից մեկում (“Հումանիստական հավատ”) Ջ.Հաքսլին փորձում է ավելի հստակեցնել հումանիզմի իր ըմբռնումը. “Ես “հումանիզմ” բառն օգտագործում եմ ի նկատի ունենալով նրան, ով համոզված է նրանում, որ մարդը նույնպիսի բնական ֆենոմեն է, ինչպես կենդանին կամ բույսը: Որ նրա մարմինը, բանականությունը և հոգին ստեղծված չեն գերբնականորեն, այլ դրանք բոլորը էվոյուցիայի արդյունք են, և որ նա (մարդը - Գ.Ա.) չի գտնվում գերբնական էակի հսկողության կամ ղեկավարության ներքո, այլ պետք է հույսը դնի իր և իր սեփական ուժերի վրա”²²¹: Բացի դրանից՝ Ջ.Հաքսլին գտնում է, որ թեիստական կրոնն անհամատեղելի է մարդկային առաջընթացի հետ և խանգարում է նոր տեսակի կրոնների առաջացմանը, կրոններ, որոնք կարողանային աջակից լինել ապագա առաջընթացին: Այդ պատճառով նա գտնում է, որ էվոյուցիոն հումանիզմի կարևոր խնդիրներից մեկը պետք է լինի ավանդական կրոնական ուսմունքների ու պաշտամունքների ռեֆորմացիան:

Ելնելով Ջ.Հաքսլիի էվոյուցիոն հումանիզմի համամարդկային ուղղվածությունից՝ Ջ.Պ.Տրոֆիմովան այն կարծիքն է հայտնում, որ Հաքսլին “Մտադիր էր ստեղծել համընդգրկող, ունիվերսալ փիլիսոփայություն, որի գաղափարները կարողանային հաշտեցնել տարբեր դավանանքների, ազգությունների և սոցիալական համակարգերի մարդկանց”²²²: Նա փորձում էր ստեղծել ժողովուրդների միջև հարաբերությունների նոր էթիկական նորմեր՝ աշխարհում ընդհանուր տնտեսական ու կրթական համակարգի ձևավորման միջոցով:

Նշենք նաև, որ Ջ.Հաքսլիի էվոյուցիոն հումանիզմի ուսմունքն անցյալ դարի երկրորդ կեսերին բարձր է գնահատվել ոչ միայն Արևմուտքի որոշակի փիլի-

²¹⁹ **3.П. Трофимова** Гуманизм, религия, свободомыслие, стр. 88.

²²⁰ Մեջբերումն ըստ՝ **3.П. Трофимова** Гуманизм, религия, свободомыслие, стр. 90:

²²¹ **J. Huxley** A Humanist's Faith. - Humanist Anthology from Confucius to Annenbrough. Ed. by Knight M. - Amherst, N.Y., 1995, p. 166.

²²² **3.П. Трофимова** Гуманизм, религия, свободомыслие, стр. 93.

սովայական ու գիտական շրջաններում, այլև ուշադրության ու գնահատանքի է արժանացել նաև նախկին Խորհրդային Միությունում: Խորհրդային հայտնի փիլիսոփա, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Թ.Օյզերմանը, օրինակ, Ջ.Հաքսլիի էվոլյուցիոն հումանիզմը բնութագրում է որպես փիլիսոփայական ուսմունք, որը ելնում է բնության մատերիալիստական ըմբռնումից ու Չ. Դարվինի էվոլյուցիոն տեսությունից և փորձում է նատուրալիստորեն մենկաբանել մարդկության պատմությունը: “”Էվոլյուցիոն հումանիզմը”,- գրում է նա,- իրոք հանդիսանում է հումանիզմ, որը հարցասիրորեն որոնում է համայն մարդկության առաջադիմության ապահովման ուղիներ”²²³:

Մեր օրերում, երբ մարդկության առջև հատուկ սրությամբ է ծառացած նոր գլոբալ էթիկական գիտակցության ձևավորման հարցը՝ Ջ.Հաքսլիի գաղափարները չեն կորցրել իրենց հետաքրքրությունն ու արժեքը արդի մարդկության համար:

Григор Асатрян – *Разновидности современного гуманизма: эволюционный гуманизм.* – В статье автор обращается к вопросу классификации современного гуманизма, выделяет важнейшие его разновидности, анализирует одну из наиболее распространенных – эволюционный гуманизм. В этом контексте подвергается критическому анализу учение выдающегося теоретика эволюционного гуманизма Джулиана Сорелла Хаксли, указываются актуальность и злободневность этого учения в наши дни.

Grigor Asatryan – *Varieties of modern humanism: evolutionary humanism.* – In the article, the author addresses the issue of classification of modern humanism, specifies its main varieties, analyzes one of the most widespread of them – evolutionary humanism. In this context, the distinguished theorist of evolutionary humanism Julian So-rell Huxley’s teaching is subjected to critical analysis, its value and topicality in our days is pointed out.

²²³ **Т. Ойзерман** Гуманизм: реальность и утопия. - В кн.: Диалоги, М., Изт-во полит. литературы, 1979, стр. 18.

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀՈՎՍԵՓ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Արդի հասարակություններում տեղի ունեցող արժեքային փոփոխությունները արմատապես արդիականացրեցին քաղաքական լեգիտիմության ապահովման գիտելիքների համակարգը: Ռազմի ճանաչողական նպատակադրված արդյունքի կառավարման համար լեգիտիմության գիտելիքը ենթադրում է ավանդական և արդիական արժեքների այնպիսի փոխհարաբերություն, որը անցում-համախմբում գործընթացում նպաստում է երկրի միջազգային հեղինակության ամրապնդմանը, սահմանադրության հաստատմանը, ինչպես նաև ժողովրդավարության որակի բարձրացմանը: Պայմանավորված պետության ինստիտուտի քաղաքակրթական զարգացման առանձնահատկություններով, լեգիտիմությունը որպես սոցիալ-հոգեբանական երևույթ հիմնված է նախ՝ իշխանության աստվածային, ապա՝ աշխարհիկացման արժեքաբանության արդիականացման վրա: Ավանդական հասարակության մեջ առաջին տիրակալները, որպես օրենք, կամ «աստծո որդիներն» էին կամ էլ նրա «ավետաբերները» (օր.՝ Հին Եգիպտոսի փարավոնները, Հռոմի կայսրերը և այլ): Արքաները իրականացնում էին Աստծո երթը աշխարհում: Որպես Աստծո ստեղծած կարգի պաշտպաններ, նրանք առաջին հերթին ձևավորված քաղաքակրթության տիրույթներում պարտավոր էին պատասխանել մարտահրավերներին՝ ապահովելով հպատակների անվտանգությունը: Ի սկզբանե Միջագետքում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Չինաստանում և Միջերկրական ծովի ավազանի քաղաքակրթությունները մոնումենտալ կառույցների միջոցով իրենց իշխանության հզորությանը և նրա աստվածային էությանը նյութական կերպարանք տալով՝ հիմնավորեցին քաղաքական իշխանության լեգիտիմության երկրային ու երկնային արժեքների միավորման անհրաժեշտությունը: Այդ առումով իշխանության սուբյեկտի քաղաքականությունը աստվածային շնորհ է՝ պետականությամբ պայմանավորված հեղինակության լեգիտիմացման արդյունք: Փառք և ճանաչում բերելած անձնական հատկանիշները (օր.՝ ֆիզիկական ուժ, զինվորական և հռետորական տաղանդ, գիտելիքներ) նպաստեցին, որ հերոսների (Գիլգամեշ, Դավիթ, Հերակլ, Թեսեյ) իշխանության հեղինակությունը լեգիտիմացնի պետականաշինությունը: Հերոսների իշխանության հեղինակության լեգիտիմացման հիմքում ընկած է ոչ թե վախը հերոսների ուժի, այլ՝ վախը մեծ վտանգների առջև, որից հերոսը կոչված է պաշտպանել հասարակությանը: Մա էլ ձևավորում է հատուկ լեգիտիմ գիտելիքներ և՛ հերոսի, և՛ նրա տոհմի իշխանության պաշտամունքային ծիսականության վերաբերյալ: Կուտակված ծիսաարարողակարգային գիտելիքների հետագա կանոնակարգման օգնությամբ քաղաքական հեղինակությունը դառնում է միաժամանակ հոգևոր արժեքների ներկերրող՝ ամրապնդելով հասարակության կողմից հերոս տիրակալի իշխանության լեգիտիմության ճանաչման գործոնը: Լեգիտիմացման այդ ձևի դրսևորումները,

մաքուր տեսքով պահպանվեցին մինչ ուշ միջնադար և չեն կորցրել իրենց նշանակությունը մինչ այսօր:

Իշխանության լեգիտիմացման **սրբազան-հերոսային** փուլի արժեքային համակարգը բյուրեղանալով՝ դարձավ մշակութային տեքստի բաղադրիչ և՛ Արևելքի, և՛ Արևմուտքի քաղաքակրթություններում: Իշխանության լեգիտիմացման հաջորդ փուլը՝ **հեղինակության աստվածացումն է**. Տիրակալին (գորավարին) աստվածացնում են՝ նրա խարիզմային օժտելով նաև սրբության գործոնով (Հին Եգիպտոս, Հին Միջագետք, Հին Հնդկաստան և Հին Չինաստան): Տիրակալի անձի աստվածացմանը գուգահեռ ձևավորվում է լեգիտիմացման մյուս՝ **իշխանության աստվածացման** փուլը. հիմք է դրվում իշխանության, այլ ոչ թե միայն նրա կրող՝ Տիրակալի աստվածացման ավանդույթներին: Այստեղ լեգիտիմացման կարևոր գործոն է այն գաղափարն, որի համաձայն իշխանության լեգիտիմացման համար մեծ դեր են խաղում նախախնամության համակրանքը վայելող այն Տիրակալները, որոնք իրենց ամբարած գիտելիքների միջոցով պատրիմոնալ /հայրիշխանական/ գերիշխանություն են ապահովում երկնքի ու երկրի միջև: Մ.Վեբերի քաղաքական սոցիոլոգիայում մեծ ուշադրություն է դարձվում պատմության հովվություն պատրիմոնիալ գերիշխանության բազմաբնույթ տարբերակներին: «Պատրիմոնալ» հասկացությունը արմատավորվում է հռոմեական կայսրության դարաշրջանից: Օգոստոս (Ք.ծ.ա. 63 - մ.թ. 14) կայսեր տիրապետության ժամանակաշրջանից «patrimonium» տերմինով էին կոչում կայսեր գանձարանը, որը գտնվում էր միայն վերջինիս տնօրինման ներքո և նրա նկատմամբ որևէ իրավասություն չունեին սենատը: Արևմտյան քաղաքական տեսության շրջանակներում պատրիմոնալ միապետության հասկացությունը շրջանառության մեջ է դրվել XVII դարի կեսերին անգլիացի փիլիսոփա Թոմաս Հոբսի (1588-1679) կողմից:

Վեբերյան սոցիոլոգիայում պատրիմոնալությունը նախնական հայրիշխանական հովանավորչությանն ածանցված ավանդական գերիշխանության տիպերից մեկն է: Համաձայն Մ.Վեբերի՝ պատրիմոնիալության հիմնական տարբերակիչ հատկանիշը տիրակալի հպատակության ներքո գտնվող յուրահատուկ կառավարման համակարգի առկայությունն է, որը հնարավորություն է տալիս տիրակալին իրականացնել «Աստծո երթն աշխարհում»: Որպես աստվածային և աշխարհիկ իշխանության մարմնավորում՝ տիրակալը մի **դեսպոտ** հետևում էր ավանդույթներին, մի այլ **դեսպոտ**՝ ռազմական և վարչական բարեփոխումներին, որոնցով որոշ **դեսպոտներ** շրջանցվում էր ավանդական կանոնակարգը՝ անվրտանգության ապահովման նկատառումներով: Այդ առումով ուշագրավ է Մ.Վեբերի հետևյալ միտքը. «Արևմուտքի ժամանակակից մշակույթի առանձնահատկությունն այն է, որ պահանջում է մարդկային գործողությունների և դրանց արդյունքների հաշվառման կանխատեսելիություն.... հովանավորության և շնորհապարտության փոխարեն, որոնք բնութագրական են ավանդական և խարիզմատիկ տիրապետմանը»²²⁴:

Վերոշարադրյալ մեխանիզմներն էլ արդիականացնելով իշխանական հարաբերությունների լեգիտիմացման բազմաչափ գործընթացը, միշտ այն դիտար-

²²⁴ См. у **М. Вебера**, О некоторых категориях понимающей социологии. Избранные произведения.- М.: 1990, с. 495-496:

կեցին որպես երկրայինի և երկնայինի փոխհարաբերություն: Ժամանակակից քաղաքական գիտության մեջ այս գործընթացի ուսումնասիրմամբ հատկապես ուշագրավ են վարքաբանական, համակարգային, ինստիտուցիոնալ, կառուցվածքա-գործառնության ուղղությունները, որոնք իրենց հերթին առաջարկում են իշխանության լեգիտիմության մշակութային տեքստի արդիականացման էության բացահայտման միմյանց փոխլրացնող բազմաբնույթ տարբերակներ: Վերջիններս որպես համալիր ամբողջություն, ընկած են պետական իշխանության իրականացման հիմքում՝ հաստատելով պետության, որպես միակ ինստիտուտի գերիշխանության իրավունքը: Պետական իշխանությունը, որպես սոցիալական երևույթ, ունի հանրային բնույթ: Այդ տեսակետից պետական իշխանությունը տարբերվում է քաղաքականից՝ նախ, ոչ յուրաքանչյուր քաղաքական իշխանություն է պետական իշխանության դերում, երկրորդ, պետական իշխանությունը հասարակության մեջ կատարում է արբիտրաժային դեր, քաղաքական իշխանության մնացած ձևերը նման խնդիրներ չեն կարող իրականացնել, քանի որ չունեն անհրաժեշտ ռեսուրսներ: Երրորդ, պետական իշխանության իրականացման մեխանիզմները տարբեր են քաղաքականից: Պետական իշխանությունը ինստիտուցիոնալացված է, այն իրականացվում է հատուկ պետական ապարատի կողմից (պարլամենտ, կառավարություն, դատարաններ): Չորրորդ, միայն պետական իշխանությունն է իրավական առումով լիազորված ողջ հասարակության կողմից գործադրել լեգալացված ու լեգիտիմ հարկադրանք: Վերջապես, պետական իշխանությանն է պատկանում իրավական և փաստական գերակայությունը հասարակությունում, այն ինքնիշխան է²²⁵: Որպես սոցիալ-քաղաքական երևույթ, պետական իշխանությունը որոշակի սոցիալական միավորի (խումբ, ժողովուրդ, ազգ, կուսակցություն և այլն) քաղաքական իշխանության արտահայտման հիմնական ձև է, որը ռացիոնալացնում է հասարակական հարաբերությունների վարչական կառավարումը՝ բյուրոկրատական ապարատի միջոցով:

Ավանդական հասարակություններում պետական իշխանությունը անքակտելի միասնություն է կազմում գերիշխող կրոնի հետ, որը բացարձակ իշխանության սրբազան անհրաժեշտությամբ է պայմանավորված: Աստված Տեր է, իսկ աստվածատուր իշխանության կրողի լեգիտիմությունը մահկանացու մարդու համար անքննելի է: Ամբարելով գերագույն Իմաստություն ու Զորություն՝ Աստծու կողմից տրված սրբազան իշխանության կրողը բացարձակ և անառարկելի հեղինակության է: Երկրային Տիրակալ-կուսակալի իշխանությունը լեգիտիմ է այնքանով, ինչքանով արտացոլում է Աստծո կամքը: Այստեղից էլ ծագում է անհրաժեշտությունը Աստծո սրբազան իշխանությունը փոխադրել այն մարդկանց վրա, որոնք իբրև թե նրա ներկայացուցիչներն են հասարակությունում: Այսպիսով, ոչ վաղ անցյալում և այժմ էլ հասարակություններում սրբազան գերագույն իշխանությամբ օժտվածները հեղինակություն են: Աշխարհիկ իշխանությունը, ի դեմս միապետի, լեգիտիմ է դառնում միայն որպես սրբազան հեղինակություն ընկալվելուց հետո, որին նպաստում է հատուկ արարողակարգը՝ «օծումը»: Առաջնորդի իշխանության սրբայնացումը դրսևորվում էր նրանց մեջ փոխկապակցված երեք ձևերի կրումով՝

²²⁵ Տե՛ս **Մ. Մարգարյան**, Պետություն Ուսումնական ձեռնարկ, Եր., «Պետական ծառայություն», 2012, էջ 7-8:

1. **հեղինակության մոգական ուժով և աննկուն ոգով գերբնականացում:**
2. **մահացած նախնիների պաշտամունք, որոնց ոգիներն են իրենց հզոր ներուժի աղբյուրը, քանզի իշխում են իրենց մեջ:**
3. **Երկրային և երկնային ներուժի համադրմամբ առաջնորդի պաշտամունքի արարողակարգի իրականացում** ²²⁶:

Ըստ անգլիացի ազգագրագետ Ջ. Ֆրեզերի, թագավորական իշխանության սակոռալ բնույթը սկզբնավորվել է նրա քրմական գործառույթներով: Ջ. Ֆրեզերի կարծիքով իշխանության առաջին կրողներն էին կախարդները, մոգերը, քրմերը, որսորդները, ցեղի առաջնորդները՝ բոլոր նրանք ովքեր իշխանության լեգիտիմության հիմքում դնելով հավատը իրենց դյուխական ուժով հավատացնում էին Ժողովրդին որ կարող է ներագոյել բնության վրա՝ անձրև կանչել, հաջող որս կազմակերպել, պաշտպանել նրանց չարից և այլն²²⁷: Թագավորը որպես միջնորդ աստվածների և մարդկանց միջև՝ Աստծո տեսանելի խորհրդանիշն է՝ մահկանացուների պաշտպան: Սրբազնային հաղորդակցման խորհուրդների արդյունքում նա լեզալ և լեգիտիմ դիրքավորված վերաբերմունք ունի սովորական մարդկանց հանդեպ: Այդ **անձեռնամխելի ընտրյալի** (օգտագործում ենք այդ բառը և որպես հասարակության կողմից ընտրված և որպես ընտիր՝ գերազանց արժանիքներով օժտված անհատ իմաստներով – Հ.Մ.) վրա էր դրված Աստծո առջև պատասխանատվությունը հանրության բոլոր մեղքերի և գործերի համար: Այս առումով ուշագրավ է Կ.Յունգի մոտեցումը, համաձայն որի՝ աշխարհիկ կյանքում սրբազնայնությամբ օժտված իշխանությունը՝ իրականացնելով նպատակդրված լեգիտիմ իշխանություն՝ նախօրոք ստանում է հասարակության համաձայնությունը՝ նախակերպարները ծառայեցնելու որպես գործիքարան՝ առաջնորդի կողմից իրականացվող անվտանգության ապահովման համար²²⁸: Ուստի, առաջնորդը կառավարում է պետությունը ինչպես քաղաքական, այնպես էլ անվտանգային բնույթի որոշումներ ընդունելու իրավունքով՝ պահպանելով և սրբազանցնելով ավանդական կարգը իր ներկայությամբ: Հայաստանում ևս, նախքան քրիստոնեության ընդունումը, լայնորեն տարածված էր արքաների աստվածացումը և նույնացումը հեթանոսական պանթեոնի աստվածների հետ, իսկ մահից հետո նրանց՝ արդեն որպես առանձին աստվածությունների երկրպագելը: Դրանով թագավորական իշխանությանը վերագրվում էր երկակի լեգիտիմություն. այն լեգիտիմ էր և արքայի աստվածային անձնական որակների շնորհիվ և նրանով, որ արքան ուղղակի իր աստվածային նախնիների շառավիղն էր:

Այսպիսով կարելի է նշել, որ ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ հայերի մոտ թագավորական իշխանության լեգիտիմության առաջին նախապայմանը օրինական ժառանգ լինելն էր և, երկրորդը, ինչը հատուկ էր նաև հայերին, թագաժառանգի թագադրումը՝ հատկապես Բագրատունյաց նախարարական տոհմի թագադիր Ասպետի կողմից: Ինչպես գրում է պատմաբան Տ.Մալխասյանը, Բագրատունի իշխանից թագադրվելը լոկ ձևական թագադրություն չէր, այլ իրավաբանական կարևորագույն ակտ, ըստ որում ավագ նախարարը (Բագրա-

²²⁶ Տե՛ս **Բ. Դե Զյւենել**, Власть. Естественная история ее возрастания, Пер. с франц. В.П. Гайдамика, М., ИРИСЭН. Мысль, 2010, с. 105-106:

²²⁷ Տե՛ս **Ջ.Ֆ. Ֆրեզեր**, Ոսկե Ճյուղ, Եր., 1989, էջ 17:

²²⁸ **Վ. Օճայնիկ**, Психология политики. Политические и социальные идеи Карла Г. Юнга, Под ред. В. Зеленского, С-П., ЮВЕНТА, с. 267-268:

տունին) թագ դնելով թագավորի գլխին՝ իր կողմից և մյուս նախարարների կողմից պաշտոնապես ճանաչում էր նրան որպես օրինավոր թագավոր²²⁹։ Ավելացնենք, որ ժամանակի ընթացքում ավանդույթի ուժով այդ արարողությունը ձեռք բերեց խորհրդանշական բնույթ և ինքնին Բագրատունի Ասպետի կողմից թագադրվելու փաստը վճռորոշ էր հայոց արքաների իշխանության լեգիտիմ կամ ոչ լեգիտիմ ճանաչելու համար, անկախ այն հանգամանքից, թե նոր թագավորը ստանձնել է իշխանությունը նախարարների և ժողովրդի համաձայնությամբ, թե ոչ։ Այսինքն, ժամանակի ընթացքում Բագրատունի թագադիր Ասպետները ստանձնեցին հայոց թագի օրինական անցումը ապահովողի և երաշխավորողի դերը, հայոց թագին ապօրինի հավակնողներին չթագադրելու, իսկ փաստով ընդգծելով նրանց անօրինականությունը՝ գոյացնելով ժամանակակից քաղաքագիտության լեզվով՝ լեգիտիմության ճգնաժամ։

Որպեսզի համոզվենք, թե ինչպիսի մեծ դեր է խաղում իշխանության լեգիտիմության հարցը Հայոց պատմության մեջ, վերլուծենք Մովսես Խորենացու կողմից մեզ ավանդված Երվանդ արքայի թագավորության տարիներին ծավալված իրադարձությունները։ Հայոց Սանատրուկ թագավորի մահից հետո գահ է բարձրանում ոչ թե որդին՝ Արտաշեսը, այլ Արշակունյաց ցեղի մի ում «պառաված, տգեղ և վավաշոտ» կնոջից «ապօրինի խառնակությամբ» ծնված Երվանդը՝ առատաձեռնությամբ բոլորին իր կողմը գրավելով։ «Բոլորը» միաբանելով նրան թագավորեցրին (այսինքն պետք է հասկանալ, որ նա աջակցություն ստացավ նաև նախարարներից - Հ.Մ.),- գրում է պատմահայրը,- բայց առանց թագադիր Բագրատունիների ցեղից²³⁰։ Այստեղ, երբ Խորենացին հաղորդում է, թե նախարարները միաբանվելով Երվանդին թագավորեցրին, նա հարկ է համարում վերոհիշյալ խոսքերով ցույց տալ, թե Երվանդը, այնուամենայնիվ, օրինավոր թագավոր չէր։ Իսկ թե ինչու Բագրատունի իշխանը չհամաձայնեց թագադրել, երկու պատճառ կարելի է մատնանշել. առաջինը՝ որ Երվանդը գահի օրինական շառավիղը չէր և, երկրորդը՝ Բագրատունիները օրինական հաջորդ էին համարում Սանատրուկի որդուն՝ մանուկ Արտաշեսին, որին առժամանակ փախցնում են հայոց արքայատոհմին ազգական Պարթևների արքայի մոտ։ Թեև անաչառ պատմահայրը հիացմունքով է խոսում Երվանդի՝ պետության բարեկարգմանը ուղղված աշխատանքների մասին, սակայն Խորենացին նախապատվությունը տալիս է գահի լեգիտիմ ժառանգորդին՝ Արտաշեսին։ Երվանդը վիճարկում է Արտաշեսի լեգիտիմությունը, սակայն, ապարդյուն։ Երվանդի իշխանության լեգիտիմությունը չէին ընդունում նաև հռոմեացիները, որոնց բռնատիրոջ կարողանում է «Իրեն թիկունք դարձնել» միայն տարածքային զիջումների գնով՝ տալով Հայկական Միջագետքը։ Միայն զիջումների գնով պահպանվող Երվանդի իշխանությունը փխրուն էր՝ չունեցավ երկար կյանք և փլուզվեց գահի լեգիտիմ հավակնողի առաջին իսկ քայլերից հետո։ Թեև Երվանդին առատ նվերներով հաջողվել էր առժամանակ իր կողմը գրավել հայոց նախարարներին, սակայն, նրանք երբ համոզվեցին, որ հռոմեացիների զորքերը Երվանդին օգնության չեկան, անցան Արտաշեսի կողմը։ Ինչպես գրում է Պատմահայրը «Իսկ Երվանդն ավելի առատացնում էր պարգևները և ամեն մեկին բաժանում էր գանձերը, որոնք շատ էր տալիս, այն-

²²⁹ Տե՛ս *Մովսես Խորենացի*, Հայոց պատմություն, Եր., 1997, էջ 14

²³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 155

քան ավելի ասելի էր դառնում, որովհետև բոլորն էլ գիտեին, թե առատաձեռնությունից չէ, որ տալիս է, այլ երկյուղից վատնում է: Իսկ այնքան սիրելի չէր դառնում նրանց, որոնց շատ էր տալիս, որքան թշնամի էր դարձնում նրանց, որոնց այնքան առատ չէր տալիս»²³¹:

Վերոշարադրայից ակնհայտ է, որ և՛ պոլիթեխտական, և՛ մոնոթեխտական կրոններն ընդունում են իշխանության լեգիտիմության աստվածային բնույթը: Մակայն երկրային իշխանությունը հեթանոսական–պոլիթեխտական կրոններում համարվում է երկնային, աստվածային իշխանությանը համազոր, ինչը քրիստոնեության և իսլամի համար արդեն անընդունելի է: Քրիստոնեությունը ձևավորվեց որպես պետության կողմից հալածվող կրոն: Հռոմեական կայսրության վերաբերմունքը վաղ քրիստոնեության նկատմամբ խիստ հակասական էր, քանի որ Քրիստոսի խոսքերը, թե «Իմ թագավորությունը այս աշխարհից չէ» ստիպում էին հավատացյալներին՝ արհամարական վերաբերմունք ցուցաբերել գոյություն ունեցող պետական իշխանության հանդեպ: Մ.Վեբերը առանձնացնում է պետության հանդեպ վաղ քրիստոնեության վերաբերմունքի հետևյալ ուղորտները.

1. ասելություն հռոմեական կայսրության հանդեպ որպես Նեոի իշխանություն.

2. անտաբերություն, կամ պասիվ վերաբերմունք իշխանության սրբացման հանդեպ,

3. պետության հանդեպ բոլոր պարտականությունների կատարում, եթե դրանք չեն սպառնում հոգու փրկությանը («տվեք կեսարինը կեսարին»)

4. հնազանդություն պետական իշխանավորներին, քանի որ ցանկացած իշխանություն հաճո է Աստծուն՝ թեև մեղքի մեջ է, ինչպես և ողջ աշխարհը:

5. Իշխանությունների դրական գնահատականը որպես մարդկային մեղսավոր բնության սանձահարման գործիք Աստծուց է կախված: Այստեղից էլ՝ Պոդոս առաքյալի հայտնի խոսքերը. «Ամեն մարդ, որ իշխանության տակ է թող հպատակի նրան. քանզի չկա իշխանություն, որ Աստծուց չլինի. և եղած իշխանությունները Աստծուց են կարգված»²³²:

Հռոմի Կոստանդիանոս կայսեր Միլանի հրովարտակից հետո (313թ.) քրիստոնեությունը հետագայում դարձավ Բյուզանդական կայսրության պետական կրոն: Բյուզանդական կայսերական իշխանության ինստիտուտը, կայսերական աստիճանը ընկալվում էր հասարակության կողմից որպես տրանսցենդենտ՝ այսինքն իմացության տիրույթից այնկողմնային իրողություն: Բյուզանդական կայսերական իշխանության լեգիտիմության աղբյուրն ենթադրում էր հոգևոր և աշխարհիկ իշխանությունների գուգակցում և ներդաշնակություն: Վեցերորդ դարի բյուզանդական հեղինակ Ագափիթոսը գրում է. «Արքան իր բնությամբ նման է բոլոր մարդկանց, իսկ իշխանությամբ՝ երկնային աստծուն»²³³: Դրանով ոսոնձգությունը Արքայի դեմ հավասարեցվում էր Աստծո դեմ ոսոնձգությանը: Քրիստոնյա Արքայի իշխանությունը լեգիտիմ էր այնքանով, ինչքանով նա նը-

²³¹ Նույն տեղը, էջ 160

²³² Տե՛ս **Մ. Վեբեր**, Состояния и классы. Пер. с немецкого А.Б. Рахманова // Вестник Московского университета. 2003. №4, с. 22-23

²³³ Տե՛ս **Բ. Դե Զувенель**, Власть. Естественная история ее возрастания, Пер. с франц. В.П. Гайдамика, М., ИРИСЭН. Мысль, 2010, с.179:

պատահում էր իշխանավորների վրա դրված քրիստոնեական գերագույն պատմական միասնայի իրագործմանը, այն է՝ ստեղծել Աստծո Արքայությունը երկրի վրա: Իշխանության կրողի լեգիտիմացման նման ձևը արմատացել էր մանավանդ այն պատճառով, որ Հռոմի հանրապետական ավանդույթների մնացուկները պահպանած Բյուզանդական կայսրությունում չափազանց թույլ էր արտահայտված իշխանության լեգիտիմացման «Ժառանգական» գործոնը: Պետական իշխանության նման ընկալումները Բյուզանդական կայսրության անկումից հետո անցան և հետագա զարգացումը ունեցան Ռուսաստանում: Այստեղ արդեն արքայի «աստվածաբնություն» (богоизбранность) գործոնին զուգընթաց մեծ դեր է սկսում խաղալ «Ժառանգականությունը», իսկ 17-րդ դարի սկզբներին, երբ հայտնի Ռուսական խռովության արդյունքում ընդհատվեց Ռյուրիկովիչների արքայատոհմը, Միխայիլ Ռոմանովին գահին կարգելու ժամանակ, «Աստվածաբնություն» և «Ժառանգականություն» հիմնավորումներին զուգահեռ ավելացավ թագավորական իշխանության լեգիտիմացման «Ժողովրդաբնություն» գործոնը²³⁴:

Հեռավոր արևելքում կրոնական հարիզմի և պետական իշխանության նույնացումը վառ կերպով դրսևորվում է ճապոնական կայսրի պաշտամունքի մեջ: Թագավորական իշխանությունը իր գաղափարական հիմնավորումն է գտել սինթոիզմի ավանդույթներում, որի համաձայն միայն կայսրն ազգակցական կապի իրավունքով կարող է բոլոր ճապոնացիների անունից դիմել սինթոիստական պանթեոնի գերագույն աստվածներին, հաղորդակցվել նրանց, առանց որի չէր պատկերացվում պետության բարօրությունը և անվտանգությունը²³⁵:

Հին Չինաստանում կայսրերը կրում էին «Երկնքի Որդի» տիտղոսը: Ըստ կոնֆուցիականության՝ Երկինքը որդեգրում է մարդուն՝ տալով նրան իշխելու մանդատ: Որպես Երկնքի, Երկրի և մարդկանց միջև միջնորդ, կայսրը մեղավոր էր համարվում և պատասխանատվություն էր կրում, եթե չէր դիմակայում Չինաստանի վրա թափվող բնական կամ սոցիալական աղետներին: Զուգորդելով գերագույն իշխանի ու գերագույն քուրմի պարտականությունները, Չինաստանում ևս կայսրը օժտում էր հասարակական օրգանիզմը կենարար ուժով՝ պատրաստ նրա հետ պայքարել անվտանգության համար: Վերոշարադրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ ավանդական տիպի հասարակություններում պետական իշխանության կենտրոնացումը ուներ ոչ միայն քաղաքական, այլ նաև տիեզերական, սոցիալական, բարոյական, կրոնական և անվտանգության նշանակություն: Մինևուն ժամանակ կոնֆուցիականությունը իրավունք է տալիս հպատակին դիմել հեղափոխական միջոցների. եթե Աշխարհը լավն է, իսկ օրենքները՝ վատ, ապա մարդիկ քաղաքական գործունեության միջոցով պետք է վերականգնեն հասարակական ներդաշնակությունը: Համաձայն Կոնֆուցիոսի՝ ժողովրդի աջակցությունը չստացած կառավարողը կորցնում է երկնքի մանդատը և տապալվում. «Երբ հեղաշրջումը անհրաժեշտ է՝ արդարացված, ավստոսանքը անհետանում է: Երկնային և երկրային ուժերի կենարար գործունեությունը պատճառ է դառնում

²³⁴ См. у Расийская историческая политология. Курс лекций. Отв. Ред. **С.А. Кислицын**. Р-ха-Д., 1998, стр. 59

²³⁵ См. у **Б. де Жуверель** Власть. Естественная история ее возрастания, Пер. с франц. В.П. Гайдамика, М., ИРИСЭН. Мысль, 2010, с. 105-106:

տարվա չորս եղանակների փոփոխմանը: Չեն-տանը և ՌԻ-վանը ապստամբություն բարձրացրեցին երկնքի կամքին համապատասխան, և ժողովուրդը ընդունեց նրանց»²³⁶:

Իսլամ դավանող հասարակություններում իշխանության լեգիտիմության աղբյուրը Ալահն է. նրա թշնամիներն համայնքի թշնամիներն են: Այս պատճառով համայնքը (ուսմա) իսլամական իրավունքում համարվում է իշխանության լեգիտիմացման միակ աղբյուրը: Իսլամական քաղաքական մշակույթում բնորոշող գաղափարներն են էթաթիզմը և սուլթանիզմը: Մ. Վեբերը գրում է, որ իսլամը ի սկզբանե արաբների «դասայնորեն կողմնորոշող ռազմական կրոնն էր»՝ ուղղված ուժեղ կենտրոնացված պետության ստեղծմանը: Մուհամեդը որպես ուժեղ կամքի տեր մարդ՝ ստեղծելով իսլամի բարոյական ուսմունքը, հաշվի է նստում իր **հպատակների-հետևորդների-հավատակիցների** հետ՝ հանուն իշխանության լեգիտիմության: Իսլամական քաղաքակրթության քաղաքական մշակույթը էթաթիստական է, ուր գերիշխում է քաղաքական առաջնորդի ուժեղ կենտրոնացված էթաթիստական իշխանության լեգիտիմության գաղափարը²³⁷:

Հպատակների ու թագավորի բարձր բարոյական մակարդակն են արժեքավորում պետության կայունության հաստատման ու պահպանման համար հնդկացիները: Հնդկական քաղաքական ավանդույթը արքայական գլխավոր առաքինությունների թվին է դասում կառավարողի ունակությունը՝ ապրել իր հպատակների շահերով: Եթե թագավորը քաջատեղյակ է, թե ինչում է իր շահերի իսկական բնությունը և ուզում է կառավարել երկար՝ ցանկանալով բարօրություն իրեն և իր հպատակներին, ապա պետք է հետևի գլխավոր կանոնին. «Թագավորի երջանկությունը իր հպատակների երջանկության մեջ է, հպատակների օգուտի մեջ նրա օգուտն է: Թագավորի օգուտը նրանում չէ, ինչը նրան հաճելի է, այլ նրանում է՝ ինչը հաճելի է նրա հպատակներին: ...Պետք է իմանալ, որ թագավորը, որը չի պահպանում վարքի կանոնները..., անհավատ է..., ազահ և հոգ չտանելով հպատակների մասին գնում է ուղիղ դժողքը»²³⁸:

Վերոշարադրյալը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ ավանդական հասարակություններում կրոնական և աշխարհիկ իշխանությունները այս կամ այն կերպ սերտաձված էին՝ մինչև անգամ լիակատար նույնացված: Որպես սոցիալական երկու և ավելի սուբյեկտների միջև փոխներգործության բազմաչափ համակարգ, իշխանության լեգիտիմությունը նրանցից մեկին՝ կառավարողին, հնարավորություն է տալիս իր կամքի և հեղինակության միջոցով այնպիսի որոշումներ ընդունել, որ կառավարվողները լծվեն նրա կատարման գործընթացին: Այսպիսով ավանդական հասարակություններում լեգիտիմությունը բխում էր պետական իշխանության հետևյալ գործառույթներից՝

1. միջնորդի դեր կատարել հասարակության-ազգի և Աստծո միջև,
2. խորհրդանշել աստվածային օրենքները և երաշխավորել դրանց պահպանումը՝ օգտագործելով պետական հարկադրանքի լծակները,
3. վերարտադրել պետական իշխանությունը՝ համադրելով երկրային և երկնային արժեքները:

²³⁶ St' u **И.А. Василенко**, Политическая глобалистика, М., 2000, с. 97

²³⁷ St' u **М. Вебер**, Теории ступеней и направлений религиозного неприятия мира. / Избранные произведения. М., с. 307- 344

²³⁸ St' u **И.А. Василенко**, Политическая глобалистика, М., 2000, с. 133

Վերոշարադրյալն էլ հիմք է ծառայել որ քաղաքական լեզվափոփոխությունը ուսումնասիրվի ըստ պատմության հոլովությունում նախապես ընդունված (**աստվածային, սոցիալ-պատմական, քաղաքակրթական**) **արժեքների**՝ համաձայն որոնց մարդիկ արդար են համարում այն պետությունը, որտեղ Տիրակալները պահպանում են ղեկավարման աստվածային շնորհը՝ հետևելով հասարակությունում բարիքների աստիճանակարգային արդար բաժանմանը: Վերածննդով պայմանավորված պետական իշխանության լեզվափոփոխության հիմնախնդիրը ուսումնասիրվում է նախադրյալների հիմքի վրա՝ բոլոր մարդիկ Աստծո կողմից հավասար են և ազատ, ոչ ոք չունի ոչ աստվածային և ոչ բնական իրավունք իշխել մյուսի վրա: Ուստի յուրաքանչյուր անհատական իշխանություն բնական իրավունքի և ազատության գաղափարի տարածման հետ մեկտեղ պետական իշխանության լեզվափոփոխությունը գերական արժեք է, քանի որ եթե մարդկային բնույթը աստվածային չէ, ապա ոչ մի անհատ իրավունք չունի իշխել մյուսի վրա:

Բնական իրավունքի, ազատության և հավասարության գաղափարների զարգացմանը զուգահեռ արդիականացվեց պետական իշխանության լեզվափոփոխության արժեքային համակարգը, ըստ որի՝ միայն այն ընտրյալ անհատները կարող են իշխել եթե նրանց իշխանությունը համապատասխանում է հանրային երկյստության արդյունքում ընդունված **արդարության** կարգին: Փաստորեն պետական իշխանությունը սոցիալական այն իրականությունն է, որը ուղղակիորեն կամ միջնորդավորված կերպով ներգործում է մարդկանց վրա՝ ունենալով **անսահման կամ սահմանափակ** բնույթ: Անսահմանափակ պետական իշխանություն իրականացնող տոտալիտար համակարգը համաընդհանուր վերահսկողություն է հաստատում ընդհանրապես ողջ հասարակության և մասնավորապես յուրաքանչյուր անհատի վրա: Իր անսահմանափակ իշխանությունը վերաբարձրելու համար նա ծնում է բռնության ու վախի այնպիսի շրջան, որի «...ոչ սկիզբն է երևում, ոչ էլ վերջը... ավելի ճիշտ նրանք հաղորդակցվում են ոչ լեզվափոփոխ, և ոչ էլ լեզվա քննությունների լիազորություններով»²³⁹: Երկրորդ դեպքում հասարակությունը սահմանադրում և ինստիտուցիալացնում է պետական իշխանության կառավարումը: Այս պարագայում լեզվափոփոխությունը արտահայտվում է իշխանության հանդեպ մարդկանց վստահության որոշակի մակարդակով ու համոզվածությամբ, որ իշխանության գործողությունները օրինական են, արդարացի և չխախտելով օրենքի սահմանները երաշխավորում են քաղաքացու անվտանգությունը: Պետական իշխանությունը լեզվափոփոխ է, երբ այն համապատասխանում է քաղաքացիների արժեքային համակարգին, իսկ այդ համապատասխանությունը կոչված է հիմնավորելու անվտանգության քաղաքականությունը: Այդ նկատառումներով էլ քաղաքական ժամանակի հրամայականներով պայմանավորված՝ լեզվափոփոխության հիմքում դրվում են տարբեր արժեքներ: Սակայն բոլոր ժամանակներում լեզվափոփոխ պետական իշխանությունը որպես անվտանգության երաշխավորի, ունի ընդհանուր գծեր, որոնք դրված են կառավարողների ու կառավարվողների միջև փոխհարաբերությունների հիմքում: Լեզվափոփոխ իշխանությունը որոշակի առավելություններ ունի ոչ լեզվափոփոխ իշխանության հանդեպ: «Օրինական իշխանության կրողը, - գրում է 20-րդ դարի հայտնի փիլիսոփա Յ. Հաբերմասը, - կարող է կառավարել աներկյուղաբար՝ հիմնվելով ժողովրդի համաձայնության

²³⁹ *Режи Дебре*, Введение в медиалогию, М., Праксис, 2009, с. 16-17:

վրա: Տիրակալը, որը չի հենվում լեգիտիմության վրա, երկյուղ է տածում ժողովրդի հանդեպ, իր կողմից իրականացվող բռնությունը ծնում է պատասխան բռնություն, վախի զգացմունքից նա հարկադրված է լինում դիմել տեռորի, իսկ դա, իր հերթին, տանում է նրան, որ տվյալ հասարակությունում վախը դառնում է գերակայող զգացմունք: Լեգիտիմությունը նման է այն մոգին, որը անդադար անհրաժեշտ կարգուկանոն է հաստատում վստահության միջոցով, ոչ լեգիտիմությունը ամենուրեք ծնում է բռնություն՝ հիմնված անվստահության ու վախի վրա: Այստեղից էլ լեգիտիմության ճգնաժամ՝ ինչը քայքայում է մարդու հավատն ու վստահությունը իշխանության նկատմամբ»²⁴⁰: Այդ պատճառով պետական իշխանության լեգիտիմությունը գերակա արժեք է ոչ միայն կառավարվողների, այլ նաև կառավարողների անվտանգության համար: Այն պաշտպանում է իշխանական հարաբերությունները այլասերումից դեպի բռնություն և ահաբեկչություն: Թեև պետական իշխանության լեգիտիմությունը չի երաշխավորում, որ հասարակությունը գերծ կմնա կառավարման սխալներից ու թերություններից, սակայն այն թույլ է տալիս օրինական ճանապարհով խմբագրել սեփական սխալները: Ցանկացած պետական իշխանություն հեռու է կատարելությունից ու իդեալից, սակայն, ինչպես արդարացիորեն նշում է Հաբերմասը՝ «լեգիտիմության ճգնաժամի հաղթահարման գիտակցումը հարկադրում է ընտրություն կատարել բացարձակ և նվազագույն չարիքների միջև, այն է՝ հաղթահարելով բռնակալական ռեժիմի պայմաններում սերմանված ահաբեկչությունը ու վախը երաշխավորել անվտանգություն և ազատություն բոլորի համար»²⁴¹: Փաստորեն պետական իշխանության լեգիտիմությունը պատմական հոլովումում ձևավորված բարոյահոգեբանական, քաղաքակրթական, ավանդական և արդիական ինստիտուցիոնալացված արժեքների այնպիսի համակարգ է, որն երաշխավորում է անվտանգության ապահովումը: Ուստի պետական իշխանության լեգիտիմության արժեքային համակարգի արդիականացման գործընթացը ՀՀ-ում ուսումնասիրելիս անհրաժեշտ է նկատի ունենալ որ.

1. հատկապես քաղաքական ճգնաժամերի ընթացքում լեգիտիմությունից շեղումը աններդաշնակություն է առաջացնում պետական իշխանության արտաքին և ներքին քաղաքականությունների միջև՝ ստեղծելով սպառնալիք ՀՀ ազգային անվտանգության ապահովման համար,
2. լեգիտիմությունը որպես պետական ինքնիշխանության պահպանման և արդիականացման գերակա արժեք համակարգում է հասարակության-ազգի-անհատի շահերը՝ բնականոն արդիականացնելով ՀՀ անվտանգության քաղաքականությունը,
3. լեգիտիմությունը ենթադրում է ավանդական և արդիական արժեքների զուգամիտում՝ դառնալով ՀՀ անվտանգության նոր օրակարգի քաղաքականության իրականացման երաշխավոր:

Hovsep Movsisyan – *The Value System of Legitimacy of State Authority in Traditional Societies.* – In the article it has been studied the legitimacy of state authority in the range of past-present-future of social time. According to the author such an app-

²⁴⁰ J. Habermas *legitimation Crisis*, Boston: Boston Press, 1975, p.107 – 108

²⁴¹ Տե՛ս նույն տեղում, p. 119

roach gives an opportunity in the process of political modernization to overcome the appeared crisis of legitimacy through the democratization of state-construction culture. Legitimacy, conditioned by the civilizing development of peculiarities of the state institute, is established as social-psychological phenomenon of first modernizing the values of authorities divine, and then secular. In this initial thesis of framework has been exposed the stages of authority legitimacy of sacred-hero, divining of authorship, divining of authority. The author thinks that the above mentioned as the complex of integrity are found in the basis of realization of state power establishing the right of supreme power as the unique institute. Based on the approaches of M. Webber, G. Fraser and B. Juvenile it is introduced the preconditions of authority of legitimacy in traditional societies – first inheritance of the thrown, then crown coronation by the designed rite. In this context it is observed the diademed chivalry of Armenian Bagratunian family as an important institute of legitimacy of state power.

The author based also the approach that the legitimacy of state authority as security guarantor, conditioned by political time of authoritative, has general attributes, which are set in the basis of interrelation between governors and submitters.

Овсеп Мовсисян – Система ценностей легитимности государственной власти в традиционных обществах. – В статье легитимность государственной власти рассматривается в рамках прошедшего- настоящего-будущего социального времени. По мнению автора статьи, такой подход дает возможность возникший в процессе политической модернизации кризис легитимности государственной власти преодолевать путем демократизации культуры госстроительства.

Обусловленный особенностями цивилизованного развития государственно-го института, легитимность, как социально-психологическое явление, основана прежде всего на модернизации системы ценностей государственной власти.

В рамках этого положения выявлены фразы легитимизации власти: священо-героический, обожествление авторитета, обожествление власти. По мнению автора статьи, последние, как комплекс, лежат в основе осуществления власти, подтверждая право сверхвласти, как единственного института. Основываясь на подходах Т. Вебери, Дж. Фрезери, Б. Жувенели, представляются предварительные условия легитимности власти в традиционных обществах: прежде всего, унаследование короны, затем образ традиционного коронования принца. В этом контексте рассматривается коронованное рыцарство княжеского рода Багратуни, как важнейший институт легитимизации государственной власти.

Автор обосновал также тот подход, что, согласно указам политического времени, легитимность государственной власти, как гарант безопасности, имеет общие черты, которые лежат в основе взаимоотношений между управляющими и управляемыми.

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ Պ. ԶԵՅԹՈՒՆՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

ԱՌԴԱ ՍԱՐՀԱՏՅԱՆ

Շարադասությունը շարահյուսական կապակցությամբ նախադասություն ձևավորելու քերականական և ոճական կարևոր արժեք ներկայացնող միջոցներից մեկն է: Միտք արտահայտելու համար անհրաժեշտ է բառերը կապակցել իրար և դասավորել որոշակի կարգով: Իսկ նախադասության ձևավորմանը մասնակցում են ոչ միայն նախադասության անդամները (ինչպես շեշտում են որոշ լեզվաբաններ), այլև նախադասության անդամ չհանդիսացող բառերը՝ կապերը, շաղկապները, ձայնարկությունները, վերաբերականները, ինչպես նաև կոչականները, որոնց շարադասությունը նույնքան կարևոր է նախադասության կազմում: Այսինքն՝ «Շարադասությունը յուրաքանչյուր լեզվի ներքին օրինաչափություններից բխող՝ **բառական միավորների** դասավորության ընդունված կարգն է նախադասություններում և բառակապակցություններում. այն՝ որպես քերականական արտահայտման միջոց, իր դերով նպաստում է նախադասության մտքի և բառակապակցությունների իմաստի ձևավորմանը»²⁴²: Սա թերևս շարադասության ամենալիարժեք բանաձևումն է, որովհետև շարադասությունը դիտվել է ոչ միայն որպես *նախադասության անդամների*, այլև *բառական միավորների* դասավորության ընդունված կարգ՝ ի հակադրություն հայ և օտարազգի լեզվաբանների սահմանումների, ինչպես. «Նախադասության անդամների դասավորության ընդունված կարգը կոչվում է շարադասություն»²⁴³: «Շարադասությունը շարահյուսության այն բաժինն է, որն ուսումնասիրում է նախադասության անդամների՝ նախադասության մեջ իրար նկատմամբ ունեցած դիրքավորումը»²⁴⁴:

Աշխարհի տարբեր լեզուներում նախադասություն կազմող միավորների՝ բառերի ազատ և կայուն դասավորությունը քերականական գորեղ միջոց է, ազատը՝ մեծ մասամբ ոճական: Հայերենի շարադասությունը, ի տարբերություն կայուն շարադասություն ունեցող լեզուների, հիմնականում ազատ է, թեև առկա են որոշ պայմանականություններ:

Ըստ Աբեղյանի՝ հայերենի շարադասությունը երկու եղանակ ունի՝ կանոնավոր կամ սովորական և շրջուն: Առաջինի դեպքում լրացումը դրվում է իր լրացյալից առաջ, սակայն տրամաբանական շեշտի շնորհիվ և ճարտասանական նկատառումներով այն խախտվում է՝ առաջացնելով շրջուն շարադասություն: Իսկ «Շրջումը քերականական մի ձև է, որով բառերի շարադասությունը շուտ է

²⁴² **Խ. Բաղդկյան**, Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը, Եր., 1976, էջ 8:

²⁴³ **Գ. Մնակ**, Հայոց լեզվի շարահյուսություն, VII-VIII դաս. Համար, Եր., 1981, էջ 72:

²⁴⁴ **Վ. Առաքելյան**, Հայերենի շարահյուսություն, Խ. Ա, Եր., 1958, էջ 457:

գալիս և դրանով խոսքի ձևը բազմազան է դառնում, և արտահայտությունը՝ ավելի կենդանի ու երաժշտական...»²⁴⁵: Շրջումը հնարավորություն է տալիս մինչև նախադասությունը շարադասել բազմաթիվ տարբերակներով, որը պայմանավորված է մեր լեզվի ճկունությամբ ու հարստությամբ: «...Շարադասության բազմաթիվ տարբերակները իրենց նուրբ իմաստների յուրահատկություններով հարստացնում են մեր լեզվի նախադասության արտահայտչական հնարավորությունները: Յուրաքանչյուր ոճի մեջ այդ հնարավորությունները դրսևորվում են տարբեր չափով ու ձևով»²⁴⁶:

Շրջուն շարադասության հիմնական գործոնը տրամաբանական շեշտի տեղափոխությունն է: «Տրամաբանական շեշտի տեղափոխումից առաջանում են նախադասության բազմաթիվ տարբերակներ, որոնք ոճական արժեք են ներկայացնում: Շրջուն շարադասության դեպքում խոսքը նոր նրբերանգներ է ստանում, դառնում վառ ու պատկերավոր, ստանում քնարական շունչ, հուզարտահայտչական խորություն, երաժշտականություն, այս կամ այն անդամը նոր դիրքի շնորհիվ նոր կշիռ է ստանում»²⁴⁷:

Շարադասության բազմաթիվ դրսևորումներն իրենց ամենաբազմազան արտահայտություններն են գտնում գերազանցապես գեղարվեստական խոսքում:

Շարադասությունը՝ որպես շարահյուսական կապակցման միջոց, ոճական կարևոր արժեք ունի Պ. Զեյթունցյանի արձակում: Նրա գեղարվեստական խոսքի ոճը կլինի միօրինակ, չէր ունենա այն բնական, կենդանի թրթիռները, առանձին բառեր ու մտքեր շեշտելու լայն հնարավորությունը, եթե նա չկիրառեր շարադասության հարուստ ու բազմազան ձևերը: Սովորական և շրջուն շարադասության հնարավոր գրեթե բոլոր դրսևորումները կան Զեյթունցյանի թե՛ հրապարակախոսության մեջ, թե՛ դրամատիկական գործերում և թե՛ մեծ ու փոքր արձակի ժանրերում, որը պայմանավորված է նյութի թելադրանքով, գրական երկի սեռով, ժանրով, կերպարների անհատականությամբ և այլն:

Սովորական շարադասությունը Պ. Զեյթունցյանի արձակում խոհական-փիլիսոփայական մտորումների, տրամաբանական խորունկ դատողությունների ու էպիկական նկարագրությունների պահանջով է կիրառվում, սակայն սովորական շարադասությամբ ևս գրողը վարպետորեն իր խոսքին հաղորդում է հուզարտահայտչական լիցքեր, քնարականություն ու պատկերավորություն:

Նոդվածի շրջանակներում մենք կանդրադառնանք միայն նախադասության գլխավոր անդամների՝ ենթակայի ու ստորոգյալի և գոյականական անդամի լրացումների շարադասության առանձնահատկություններին և նրանց ոճական արժեքին:

Նախադասության գլխավոր անդամների շարադասության ոճական արժեքը

Ժամանակակից հայերենում «...ենթակայի և ստորոգյալի շարադասությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ քերականական պահանջ, ոճաիմաստային անհրաժեշտություն, ինչպես նաև չեզոք դրություն (սա այն սովորական երևույթն է, երբ ենթակայի կամ ստորոգյալի շարադասությունը

²⁴⁵ Մ. Մքեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 532:

²⁴⁶ Խ. Քաղիկյան, Նույն տեղում, էջ 76:

²⁴⁷ Վ. Առաքելյան, Նույն տեղում, էջ 458-459:

չի պայմանավորված ո՛չ քերականական անհրաժեշտ պահանջով, ո՛չ էլ շեշտադրությամբ)»²⁴⁸:

Էպիկական արձակի թեմատիկայով և հայերենի լեզվական նորմերի պահանջով պայմանավորված՝ գոյականով, գոյականաբար գործածված ածականով ու թվականով, դերանուններով, դերբայներով, դերբայական դարձվածներով արտահայտված ենթակաները Զեյթունցյանը շարադասում է նախադաս: Դրանք, սակայն, սուկ քերականական գործառույթ կատարող անդամներ չեն, դրանց մեջ հեղինակը խոր իմաստներ է դնում, ծառայեցնում իր ասելիքի գաղափարական բովանդակության ուղղակի ու ենթատեքստային իմաստների, հերոսների հանդեպ ունեցած դրական ու բացասական վերաբերմունքի բացահայտմանը:

«**Ես** գիտեմ, գիտեմ, թե **հայն** ով է,- լրջացավ Օդուզ բեյը: ...**Հայը** մեծ տաղանդով յուրացրել է եվրոպական քաղաքակրթությունը, դարերով պահպանել է իր եկեղեցին, կրոնն ու լեզուն» /ՎԱ - 337/: «**Արքան** ճիշտ է վարվում, որ քեզ է ընտրում թագուհի, Օլիմպիա,- հանկարծ լավեց Որմիզդուխտի հանդարտ ու պաղարյուն ձայնը:- Առածմ **Բյուզանդիան** է հաղթում պատերազմում» /ԱԵ-294/:

Գրողը տիրապետում է շարադասությամբ էպիկական խոսքին բանաստեղծական շունչ հաղորդելու բոլոր գաղտնիքներին: Դա անում է տրամաբանական շեշտով ենթական նախադասելով, նրա իմաստը հարստացնելով բազմակիությամբ, կրկնադիր շաղկապներով կապակցելով, ստորոգյալի շրջումով, օժանդակ բայի ու դերբայի միջև որևէ լրացում դնելով: Եվ այսպես, ոճական արժեք ունեցող շարահյուսական մի շարք արտահայտչամիջոցներ, իրար ներդաշն, խոսքը դարձնում են կուռ ու անթերի. «**Երկինքն է վկա, երկիրն է վկա, իր սիրտն ու արնն են վկա**, որ սիրում է նրան» /ԱԵ-303/: «Ի՞նչ հիմք ունեն այս մարդը ժպտալու գիշերվա ու աղամալույսի սահմանագծին, երբ այս պահից **ո՛չ հանգչող աստղերն են** նրան պատկանում, **ո՛չ ցուրտը, ո՛չ այս խորին լռությունը, ո՛չ գաղտնիքներով լեցուն այս անվա քաղաքը, ո՛չ էլ նույնիսկ հենց իր ծանր ու թշվառ կյանքը**՝ նրա խուլ անկյուններից մեկում: **Ո՛չ մի բան, բացարձակապես ոչինչ, ո՛չ լավ, ո՛չ վատ**, այլևս նրանը չեն: Էլ ինչո՞ւ է ժպտում» /ԱԵ-231/:

Նյութի թելադրանքով և ոճի բազմազանությամբ հետամուտ գրողը ենթակաները շեշտելու համար դրանք վերջադաս է շարադասում, **մասնատումով**. «ՈՒ խաբվեց: **Ո՛չ միայն ինքը, ո՛չ միայն բժիշկները, այլև ճակատագիրը**» /ՎԱ-197/: «Զոհրապին **հրաշքը** փրկեց: **Մեծ ու անսպասելի հրաշքը**» /ՎԱ-383/:

Այլ օրինակ.

«-Շահը կարգադրեց, որ ես դառնամ թագուհի:

Արքան գլխով արեց: Իհարկե, պիտի կարգադրեին: **Շահը՝** աշխարհի տիրակալը: **Գայսը՝** փոքրերի ահն ու սարսափը» /ԱԵ-294/:

Նախադասության գլխավոր անդամները էպիկական արձակի շարադասության պահանջով ունեն և՛ սովորական, և՛ շրջուն շարադասություն և խոսքի այս կամ այն հատվածում դրսևորում են ոճականորեն չեզոք կամ ակտիվ արժեք: Նախադասությունից նախադասություն իր խոսքը պատկերավորման արտահայտչաձևերով թարմացնելու միտում ունեցող գրողը գործածում է **ալլաբանություն** արտահայտող ենթականեր. «Զոհրապի ձեռքին մի փաթեթ կար: Փաթեթի մեջ... **վախ ու խուճապ**» /ՎԱ-381/: **Վախ ու խուճապ** ենթակաները խորհրդանշում

²⁴⁸ Խ. Բաղիկյան, Նույն տեղում, էջ 127:

են արևմտահայության տենդագին լարվածությունը, վախը, խուճապը, մահվան սառը շունչը, այսինքն՝ դարակազմիկ մի ողջ հոգեբանություն...

Կամ «-Ափսոս ս, որ Ներսեսի դեմքը ոչինչ չէր արտահայտում՝ ո՛չ տագնապ, ո՛չ լարում. երևի չէր ուզում, որ **ծեք աղվեսը** նկատեր նրա հոգու խռովքը» /ԱԵ-385/: Գրողը Հայր մարդպետին տարբեր առիթներով բնութագրում է բոլոր կողմերով, տարբեր ածականներով, բայց այս շրջաստվածը չափազանց տեղին է ու դիպուկ: Կամ՝ «Պատկերացնու՛մ եք, ի՛նչ անակնկալի է գալու այդ **անճոռնի արջը**, դարձյալ հրճվանքի մեջ էր Բիգա բեյը» /խոսքը Թալեաթի մասին էր/ՎԱ-392/:

Շարադասությունը ոճական բազմազանությունն ստեղծելու մեծ հնարավորություն է տալիս գրողին: Այսպես՝ երբ նա նպատակադրում է ընդգծել, շեշտել գործողությունը, վիճակը, եղելությունը, տրամաբանական շեշտը դնում է ստորոգյալի վրա՝ այն շարադասելով նախադասության սկզբում՝ ենթակայից առաջ: Որպես օրինակ՝ հիշենք Արշակ Երկրորդի խոսքը՝ ուղղված պարսից շահի պատգամախոսներին, որոնք մեղադրում էին հայոց արքային՝ Արշակավանի կառուցումով հարևան երկրների ժողովուրդներին վատ օրինակ ծառայելու համար. «...Հաղորդեցե՛ք արքայից արքային, որ աշխարհում **չի՛ եղել ու չի՛ լինի** մի թագավոր, որ երբևիցե դաշնակցի իր ժողովրդի հետ, - սասաց արքան խրատական տոնով, որպեսզի դրանով շեշտի իր անկեղծությունը: - Ես որոշ արտոնություններ եմ տվել շինականներին, որպեսզի արագ **կառուցվի** քաղաքը» /ԱԵ-259/: Կամ՝ «Պատմի՛չ - Կամ ուժ, կամ բարոյականություն, արքայի՛ց արքա: Երրորդ ճանապարհ չկա: Որտեղ **հաղթում** է ուժը, **տուժում** է բարոյականությունը» /ԱՏՕ-376/:

Ստորոգյալը ընդգծելու և ոճական նպատակներով Պ. Զեյթունցյանը բազմազան արտահայտչամիջոցներ է կիրառում՝ ասենք՝ նույն բայի եղանակային տարբեր ձևերը. «-ՈՒրի՛շ, ուրի՛շ,- Երկաթուղու հարցը **հիշի՛ր**: Ինչպե՛ս **չհիշեր**: Իհա՛րկե, **պիտի հիշեր**» /ՎԱ-432/: Այստեղ ստորոգյալի ոճավորումը կատարվել է նույն բայի եղանակային տարբեր ձևերի կիրառությամբ՝ հրամայական եղանակով՝ **հիշի՛ր**, ըղձական անցյալի ժխտականով՝ **չհիշեր**, հարկադրականով՝ **պիտի հիշեր**:

Ստորոգյալը ընդգծելու համար գրողը **կրկնում է դրանք**, դնում հեղինակային տրամաբանական շեշտներ և գործածում սաստկական վերաբերականներ.

«Ծաղր էին թվում նույնիսկ իր իրավացի և՛ անօգուտ մեղադրանքները, և՛ մանավանդ իր գոյությունը: Եվ մանավանդ այն, որ նա **ուզու՛մ էր, ուզու՛մ էր, ուզու՛մ էր** իր անխմստ գոյությունը պահպանել» /ՎԱ-384/: «Լրան **միայն սիրել են ու ատել**: **Շատ են սիրել ու շատ են ատել**» /ԱԵ-397/: «Այս դահլիճում **չկային** պոներ, **չկային** գորգեր, **չկար** լույս» /ԱՄ-302/: «Լրան թվաց, թե **ծուղակ էր** բազկաթոռը, **ծուղակ էին** դեսպանի ճիշտ խոսքերը, **ծուղակ էին** իր սեփական գայլոյթը» /ՎԱ-384/: Կրկնվող նախադաս գործածված ստորոգյալները չեն ծանրաբեռնում, չեն երկարացնում խոսքը, ընդհակառակը, դարձնում են շարժուն, արագասահ:

Ժամանակակից հայերենում նախադասության մտքի առանցքն ընդգծելու ժամանակ կարևոր դեր է խաղում օժանդակ բայը: Այն դրվում է տրամաբանական շեշտ կրող բառից անմիջապես հետո և նախադասությանը հաղորդում իմաստային նոր երանգ:

Նման կառուցվածքով նախադասություններում ենթական նախադաս է գործածվում՝ նախորդելով օժանդակ բային: «Ինձնից ու քեզնից մեծ **հաշիվներ** են այստեղ խառնված: ...Մի՛ թե պարզ չի, որ ինձ հայ **թագուհի** է պետք: **Դու**՝ ես ինձ

պետք...»: «-Դու ճիշտ ես, արքա՛: Ես քեզ լրիվ հավատում եմ ու հասկանում: Ինձ-
նից ու քեզանից մեծ **ուժեք** են մեր դիմաց կանգնած: ...Բայց մեկ է, **ե՛ս** եմ մնալու
քո երկրի թագուհին: **Ե՛ս** և ուրիշ ոչ ոք» /ԱԵ -299-300/:

Պ. Ձեյթունցյանը նաև խոսքի շարադասության միջոցով է կերտել հզոր ու
հպարտ, փառատենչ ու հայրենասեր հայտուհու՝ Փառանձեմի կերպարը. որի
խոսքն այնքան տիրական է ու կենդանի, որ, թվում է, լսում ես նրա ազդեցիկ ու
կամային, հայոց արքունիքում օտար կին չհանդուրժող անհողորդող ձայնը:

Պ. Ձեյթունցյանի արձակի ոճի արժանիքներից է և այն, որ նա հաճախ է դի-
մում դարձվածային միավորների՝ դրանք դարձնելով նախադասության տարբեր
անդամներ, այդ թվում նաև ստորոգյալներ ու ստորոգելիներ՝ գրողի խոսքը
դարձնելով հետաքրքիր ու խորիմաստ: «Ռազմի դաշտը **խաղ ու պար էր** նրա հա-
մար, տարերք ու մոլուցք» /ԱԵ-397/, «-Էլ ի՞նչ **ես սար ու ձոր ընկել**: Ի՞նչ **ես մուկ ու**
կատու խաղում» /ՎԱ-457/:

Մասնատման ոճական միջոցը /այս կամ այն անդամը վերջակետով տրո-
հելը և առանձին գործածելը/ գրողը կիրառում է նաև ստորոգյալների շարադա-
սության ժամանակ՝ դրանք ավելի ընդգծելու և ընթերցողների ուշադրությունը
հենց դրանց վրա բևեռելու համար. «Մինչդեռ Թալեաթը գուրկ չէր արժանիքնե-
րից: **Նենգ էր, խելացի ու խարդախ**: Թերևս **ամենանենգը, ամենախելացին, ու ա-
մենախարդախը** թուրք ղեկավարների մեջ» /ՎԱ-457/:

Բայական բաղադրյալ ստորոգյալների դրական խոնարհման ձևերի մեջ ե-
թե օժանդակ բայը կարող է և՛ նախադաս գործածվել, և՛ վերջադաս, ապա ժխտա-
կան նախադասություններում **եմ** բայը, որպես օրենք, գործածվում է դերբայից ա-
ռաջ, որը ոճականորեն չեզոք գործառույթ է: Ահա չեզոք ոճի կարճ մի երկխոսույթ-
յուն.

«-Դաժանության վրա երկիր **չես կառուցի**, Գնե՛լ: Վաղ թե ուշ՝ փուլ կգա:

-Իսկ մարդասիրությամբ ոչինչ **չես կառուցի**, արքա՛» /ԱԵ-322/:

Սովորական շարադասությամբ հարկադրական եղանակի բայաձևերում
պիտի եղանակիչը նախադաս է գործածվում: Սակայն գրողի խոսքում երբեմն
այն գործածվում է նաև վերջադաս, որը ոճական աշխույժ լիցքեր է հաղորդում
նրա խոսքին: **Պիտի** բառի վերջադաս գործածությամբ է Պ. Ձեյթունցյանը ոճավո-
րել Ներսես կաթողիկոսի ողջ էությունը ալեկոծող մտքերը խելառ մի պոռթկումի
պահի, երբ ներքին մի անհանգիստ ուժ նրան մղում էր դեմ նետելու սև ու երկար
սքեմը, վերցնելու սուրը և նետվելու կռվի նրանց դեմ՝ այն փալնքոտների, որոնք
այլևս չունեն իր պես ուժեղ հակառակորդ ու դրա համար. «Թեև **տխրեն պիտի**:
Թեև **կարոտեն պիտի**: Կատուն չքացել է, և մկներն են հրապարակ ելել» /ԱԵ-81/
Կամ՝ «Թեև հակառակը պիտի լիներ: **Ջարդվեր պիտի, փշրվեր պիտի**» /ն.տ.-189/:

Ոճականորեն արժևորվում է նաև **պետք է** ստորոգյալի հանգույցի շրջուն
շարադասությունը. «Իսկ այդպիսի վրեժից վախենալ է **պետք**: Եվ, ընդհանրապես,
ամեն հաղթանակից հետո վախենալ է **պետք**» / ԱԵ-94 /: «Ի՞նչ է, ե՛ս պիտի բա-
ցատրեմ քեզ՝ նախկին զինվորիդ, որ հիմա մեզ **գորք է պետք, դրամ է պետք**, հենց
քո **հարստությունն է պետք**» /ԱԵ-287/:

Տարտամ կլիներ գրողի խոսքը, եթե այս նույն մտքերը արտահայտեր սովո-
րական շարադասությամբ. խոսքի խորհուրդը կթուլանար, նկատելիորեն կտու-
ժեր նպատակը:

Շարադասության՝ տրամաբանական շեշտի հետ կապված շրջունությունը ոճական թարմ երանգ է հաղորդում խոսքին, երբ գրողը օժանդակ բայն ու դերբայը հեռացնում է միմյանցից՝ բայական լրացումը դնելով նրանց միջև:

«Երկրի բոլոր անկյուններում Արշակավանի անունն **էր** ալիքի պես **տաքածվում**, մտնում տները, ծվարում շինականների՝ քթների տակ մոմռացող երգերի, լուռ հայացքների ու անսպասելի հոգոցների մեջ» /ԱԵ-132/: «Ձեղծումով, սպառնալիքներով ու ծեծո՞վ **են** իշխանությունը **նվաճում**» /ՎԱ-430/:

Շրջունությունը չափածո խոսքին հատուկ ռիթմ ու քնարական շեշտեր է հաղորդում նախադասությանը: Սակայն գրողի ոճը ընդհանուր առմամբ անհավակնոտ է, պարզ ու հստակ: Նրա էպիկական արձակը աչքի է ընկնում շարադասության ամենաբազմազան դրսևորումներով, նրանց օրինաչափությունների նպատակային կիրառություններով:

Գոյականական անդամի լրացումների շարադասությունը և նրանց ոճական արժեքը

Գեղարվեստական խոսքում շարադասության շրջունությունը առավելապես բնորոշ է գոյականական անդամի լրացումներին, հատկապես որոշիչներին, որոնք թե՛ նախադաս, թե՛ ետադաս գործածվելիս խոսքը դարձնում են պատկերավոր, գունագեղ, հատկապես երբ ընտրվում են ճաշակով ու գործածվում տեղին: Պ. Ջեյթունցյանը հավասարապես օգտվել է որոշիչների և՛ նախադաս, և՛ ետադաս գործածությունից, որովհետև միայն մեկի կամ մյուսի դեպքում խոսքը կլիներ միօրինակ, անհետաքրքիր: Գրողի խոսքը անհրաժեշտաբար հագեցած է որոշիչներով, որոնք, սակայն, երբեք չեն ծանրաբեռնում նախադասությունը, ընդհակառակը, դրանք չգործածելու դեպքում խոսքը կարող էր նույնիսկ թերարժեք դառնալ:

Բերենք ծավալուն խոսքի մի օրինակ, որտեղ որոշիչները անգամ իրենց պարզությամբ և նախադաս կիրառությամբ հուզականություն են տվել խոսքին: Ահա տասներեք ամիս Արտագերս ամրոցում պաշարված Փառանձեմ թագուհու դիմումը իր՝ ամրոցի պարսպի մոտ կուտակված զինվորների... դիակներին.

«-Իմ **քաջ** զինվորներ, **ուրախ** լուր եմ բերել ձեզ ... Մեր **նոր** արքան մի քանի օրից ժամանում է կայսերական գնդի հետ... Մեր տառապանքը կհատուցվի **արժանի** հաղթանակով... Երկիրը կմաքրվի **անօրեն** պարսիկներից... Դավաճանները կստանան իրենց **անխուսափելի** պատիժը... Մենք կլուծենք **Անհուշ բերդում մեռնող մեր սիրելի** արքայի վրեժը... **Մորթազերծ արված** Վասակ սպարապետի հիշատակը կհավերժացնենք **մեր զենքի գործած** հրաշքներով...» / ԱԵ-505/:

Փորձենք հանել ընդգծված նախադաս որոշիչները, և խոսքը կդառնա պակաս հայրենաշունչ, կդառնա անտարբեր մարդու խոսք, որի մեջ չի զգացվի խոսողի վերաբերմունքը ո՛չ զինվորների, ո՛չ արքայի, ո՛չ սպարապետի և ո՛չ էլ պարսիկների նկատմամբ: Մինչդեռ դրանք համեմունք են թագուհու խոսքը, շեշտում նրա սերն ու ատելությունը...

Ջեյթունցյանի կիրառած նախադաս որոշիչներն առավել արժևորվում են, երբ արտահայտվում են պատկերավորման լավագույն միջոցներից մեկով՝ **մակ-դիրներով**. «Նրա **կատաղի** հայացքը տեսնելով, նրա **կրակուրոց** աչքերին հանդիպելով՝ պարսիկն ու բյուզանդացին հասկանում էին, որ իրենց բախտը չբերեց այս անգամ, որ ուրիշ ոչ մի ճար չունեն, բացի մեռնելուց» /ԱԵ-397/: Իր սիրելի կերպարին գրողը օժտել է նաև արտաքին բարեմասնություններով, կարևորել

հատկապես նրա աչքերը՝ որակելով դրանք *կրակուրոց* մակդիրով, և ընթերցողը գրողի հետ սիրում է իր Վահագնակերպ հերոսին: Բանաստեղծական մակդիր են *երազկոտ*-ն ու *տխուր*-ը՝ *ժպիտ* գոյականի համար. «Տղան, որի ուսերին բարձրացել էր ընկերը, հազիվ էր դիմանում նրա ծանրությանը, բայց դեմքին *երազկոտ ու տխուր* մի ժպիտ կար» /ՎԱ-397/: «*Բռունցքի պես ծանր* մի լռություն իջավ մարդկանց վրա և մի *բուր* ցավ պատճառեց ամենքին» /ԱԵ-157/: «Ներսեսը շրջվեց և ջահը ձեռքին բարձր բռնած՝ սկսեց դանդաղ հեռանալ *մեռած* տերևների արահետով» /ԱԵ-395/: *Մեռած* մակդիրը դառնում է Ներսեսի ծանր խոհերի խոսուն արտահայտությունը: Մի այլ օրինակում *կանաչ* մակդիրը արդեն ավելի ցնծուն ու պայծառ տրամադրություն է արտահայտում պատկերավոր կերպով: Ժողովրդական խոսքից քաղված այս մակդիրը գրողը գործածում է ամուսնական, հարսանեկան արարողությունը ընդգծելու համար. «*Կանաչ* կիրակի: Հարսանեկան թափորը հարս ու փեսային՝ Վարուժանին և Արաքսիին, առաջնորդում է տուն՝ Բրգընիկ» /ՎԱ-189/:

Պ. Զեյթունցյանի արձակում որոշիչները խոսքին ոճական արժեք են հաղորդում իրենց դիպուկությամբ, հոմանիշ բառերից ամենաբնորոշը ընտրելու գրողի վարպետությամբ, գեղարվեստական բարձր ճաշակով: Զեյթունցյանի նախադաս որոշիչները մի դեպքում նվազաբանություն են՝ «*Մի ափ հող* անգամ անհնար է գտնել մի քանի մղոնի վրա...» /ԱԵ-508/, մի այլ դեպքում՝ այլաբանություն. «*Մահվան* հոտ էր գալիս բերդից ու նրա ամայի շրջակայքից» /ԱԵ-507/: Նախադաս որոշիչների *կրկնությունը* ևս ոճական հնարանք է. «Լիակատար հավասարություն էր տիրում զննդաններում. *նույն* շղթաները, *նույն* ցնցոտիները, *նույն* ջրիկ ճաշերը և *նույն* ճակատագրերը» /ԱԵ-509/:

Որոշիչների սովորական շարադասությամբ ևս, գրողն իր խոսքը դարձնում է բազմազան ու զգայական: Անգերագանցելի, գեղարվեստական չքնաղ պատկերներ է ստեղծում հեղինակը մակդիր-որոշիչներով. «Արքա-- Հիշեցի... Հիշեցի... Երդվում եմ, հիշեցի... Տեսա *հարս հագած* ծիրանենիները... Զգացի նոր հնձած խոտի խելքահան անող հոտը... Տեսա *հայոց երկինքն անսխալ գտնող* թռչունների երամը...» /ՍՍՈ-հ1, 379/: Գարնանային ծաղկունքի մի հոգեզմայլ բնականար ու բույր կա *հարս հագած* պատկերի մեջ...

Որոշիչների սովորական շարադասության հաճախադեպ կիրառություններին զուգահեռ՝ Զեյթունցյանը օգտագործում է նաև *եսադաս* որոշիչներ: Գրողը որոշիչների շրջունությանը դիմում է միատարր հնչերանգությունը փոխելու, խոսքին բանաստեղծական շունչ հաղորդելու, վայելչություն ու բարձր ոճ տալու համար: Ահա Փառանձեմը, որին ծնկի բերելու համար մի հզոր բանակ էր ոտքի ելել. «Մի ամբողջ հզոր բանակ՝ *հազարավոր զինվորներով ու հազարապետներով, անթիվ ու անհամար զենքերով ու դրոշակներով*, տասներեք ամիս անց գերի վերցրեց ընդամենը մի կնոջ: Ինչպես ինքն էր ասում՝ մի *փոքր գիրացած ու մի քիչ էլ տարիքն առած*...» /ԱԵ -507/:

Որոշիչների շրջուն շարադասությունը «...ասացվածքը բանաստեղծական է դարձնում, խոսքին եռանդ և հաստատուն, ազնիվ ընթացք է տալիս այն ժամանակ, երբ գործ է ածվում հարմար, տեղին և բնականորեն, լեզվի ոգու համեմատ, թե չէ՝ անբնական շեղումները լեզուն միայն երկդիմի, մութն են դարձնում և զրկում սովորական խոսքի կենդանությունից ու կորովից»²⁴⁹:

²⁴⁹ Մ. Աբեղյան, Նույն տեղում, էջ 543:

Գրողի արձակ խոսքին ընդգծված բանաստեղծականություն են հաղորդում բազմակի վերջադաս որոշիչները. «Վիզբագենը պարտեզ էր՝ շքեղ պարտեզ՝ **ծաղիկներով բուրյան, նվազներով, թաթախուն, ավլած, ջրված արահետներով**» /ՎԱ-246/:

«Եվ կարելի՞ է երագել **սեր մը՝ ավելի սիրատուչոր**, քան մերը, **վեպ մը՝ ավելի վիպային**, քան մերը, **խորհուրդ մը՝ ավելի խորհրդավոր**, քան մերը, **նվիրում մը՝ ավելի նվիրական**, քան մերը, **զգայություն մը՝ ավելի զգայական**, քան մերը, **իդեալ մը՝ ավելի իդեալական**, քան մերը...» /ՎԱ-211/:

«Հորից հետո կողքին կանգնեց ամուսինը՝ **գեղեցիկ, խիզախ, լայնաթիկունք**» /ԱԵ-107/:

«...Սևակի սպանությունից հետո էլ, զարհուրելիորեն իրական, ցավ պատճառելու չափ շոշափելի կապրի փոքրիկ Յաննիի ասպետը՝ Ռյուբինսը՝ **թուխ, արևակեզ դեմքով, սև մազերով ու սևեռուն աչքերով**» /ՎԱ-213/:

Զեյթունցյանի արձակում առանձնահատուկ ոճական արժեք ունեն **մասնատումով** վերջադաս որոշիչները. «Այդ պահին նա պարզորոշ գիտակցում էր, թե ինքը ինչ է տվել ամբոխին՝ փշրանքներ, ողորմելի փշրանքներ, իսկ ամբոխը, թշվառ ամբոխը, իր տված փշրանքներից սիրո աշտարակներ է կառուցել: **Վախից ծնված սիրո**» /ՎԱ-354/:

Եթե ընդգծված դերբայական դարձվածով վերջադաս մասնատումով որոշիչը նախադաս գործածվեր, ապա նույն սպավորությունը չէր գործի: Կամ յաթաղանի գոհերի թիվը ավելի ցայտուն է երևում, երբ արտահայտվում է մասնատումով. «Բայց դուք գիտե՞ք՝ քանի մարդ գոհ գնաց այդ մոլեռանդությամբ: **Վաթսուն հազար**» /ՎԱ-283/:

Նշանավոր արձակագրի վերջադաս որոշիչները երբեմն էլ հակադրական համեմատություններ են: Այս դեպքում համեմատվող անձը նշող բառը գործածվում է բացառական հոլովով. «Եթե մեջլիսի նույնիսկ երեք հարյուր անդամների մեջ դու երևելի դեմք ես, ապա քո խելքով ու գիտելիքներով կառավարության ամենահզոր մարդկանցից մեկը կլինեիր: **Թալեաթից, Հնվերից ու Ջեմալից ոչ պակաս...**» /ՎԱ-425/:

Զեյթունցյանի արձակում որոշիչների շրջուն շարադասությամբ կազմությունները հաճախադեպ են ու բազմաբնույթ: Խոսքին ոիրթ, պատկերավորություն, զգացմունքների բևեռացում ու վայելչություն տվող ետադասումները վկայում են գրողի խառնվածքի, նրա հարուստ ու հուզառատ ներաշխարհի մասին...

Հատկացուցիչը սեռական-տրականով արտահայտված լրացում է, որ ցույց է տալիս պատկանելություն, սերում, վերաբերում և այլն: Սովորական շարադասությամբ հատկացուցիչը դրվում է գոյականով արտահայտված անդամից առաջ:

Պ. Զեյթունցյանի արձակում, դրամատուրգիայում ու հրապարակախոսության մեջ գերազանցապես գործածվում են սովորական՝ այսինքն՝ նախադաս գործածությամբ հատկացուցիչներ, որոնք բնորոշ լինելով էպիկական խոսքին՝ առանձնապես ոճական մեծ արժեք չունեն: Մենք կդիտարկենք ոճախմաստային արժեք ունեցող հատկացուցիչների կիրառությունները:

Պ. Զեյթունցյանը, թեև ոչ հաճախադեպ, դիմում է վերջադաս հատկացուցի կիրառությանը: Այն խոսքին վայելչագեղություն է հաղորդում, զգացմունքների նուրբ ելևէջումներ և կրում է տրամաբանական շեշտ: «Արշակ Երկրորդ» պատմավեպում արշակավանցի կնոջ հոգեբանությունը զարմանալի խորությամբ ու նրբությամբ է արտացոլել գրողը. ծով չտեսած համեստ ու ամոթխած հայ կնոջ

մեջ ծովեր են փոթորկվում, մշուշոտ ու երկյուղալի կարոտներ ծնվում... Բայց նա վախենում է հեռավոր տենչերից, խորհրդավոր ու անիմանալի կանչերից, քանի որ «...նա գերին է իր ծանր **անցյալի**, օրերի անուրախ ու անվերջանալի **շղթա-յի**...» /ԱԵ-140/:

Նախադասության մեջ հատկացուցիչները՝ **անցյալի, շղթայի**, վերջադաս են: Տրամաբանական շեշտը ընկնում է նրանց վրա, և նրանք արտաբերվում են բարձրացող հնչերանգով: Հատկացուցչի ետադասումը, որը գրողը կատարում է քերականական և ոճական նպատակներով, դառնում է անանուն հերոսուհու հոգեկան խռովահույզ ապրումների արտահայտչամիջոցներից մեկը: Նույնքան խռովք ու տխրություն կա հետևյալ նախադասության մեջ.

Կամ՝ «Սողոմոն-Ուրեմն ի՞նչ է դուրս գալիս... Ինձ արդարացրին, և այն մեծ ոճիրը մեղմացա՞վ... Իսկ կմա՞խքը այն անթաղ **կնոջ**, որն իր ոսկրե ձեռքերով չորս ամսական մանկիկին սեղմել էր կրծքին...» /ՈՂԳ-129/:

Զոհրապի՝ որպես մեծ փաստաբանի մասին «խոսում են» նաև այն վերջադաս հատկացուցիչները, որոնք կան ներքոհիշյալ նախադասության մեջ. «Ես փաստաբան եմ **Union ապահովագրական ընկերության, Օսմանյան բանկի Թոքատյան հաստատության, «Իսրդիվիյե» շոգենավային ընկերության...** Շարունակե՞մ...» /ՎԱ-419/:

Հատկացուցիչը ետադաս է գործածվում նաև գրաբարից եկած որոշ հնաբանություններում, որոնք գործածում են նրա հերոսները: «Ի սեր **Քրիստոսի**, տազնապով ծնկի չոքեց Դրաստամատր,- մոռացի՛ր հեթանոսությունը...» /ԱԵ-56/: «Օրհնյալ է հարություն **Քրիստոսի**» /ՎԱ-219/: «-Հայր **մեր**, որ յերկինս ես,- մի տեղ ծնկի չոքած՝ աղոթում էր մի քահանա,- սուրբ եղիցի անուն **քն**, եկեսցե արքայություն **քն**, եղիցի կամք **քն**՝ որպես յերկինս եւ յերկրի...» /ՎԱ-396/:

Պատմական նյութի պահանջով՝ վաղնջական ժամանակներին բնորոշ խոսքային միջավայրը ներկայացնելու համար գրողը գործածում է նաև վերջադաս հատկացուցիչ ունեցող կոչականներ, որոնք նույնպես ոճավորում են խոսքը.

«**Տե՛ք իմ**, իմ վեմ, իմ բերդ, իմ ազատիչ, ո՛վ իմ ամրություն, ո՛վ իմ ասպար և փրկության աղբյուր, ո՛վ իմ բարձր աշտարակ...» /ԱՆ-61/: Ամբողջ նախադասությունը աչքի է ընկնում հանդիսավոր ոճով՝ պայմանավորված վերջադաս հատկացուցչի և նախադաս բազմակի հատկացուցիչների առատությամբ, որը ուժեղացնում է խոսքի թափը, դարձնում ավելի արտահայտիչ:

Հատկացուցչի շարադասության յուրատեսակ ոճական դրսևորում է նրա տրոհումը: Սա կատարվում է այն ժամանակ, երբ հատկացյալը հեռանում է հատկացուցչից՝ նախադաս որոշիչներ ունենալու պատճառով: «Կարո՞ղ էր արժանապատվությամբ փոխ առնել նրա աղքատությունը, դժբախտությունը, ճախրողությունը, նվաստացումը: Թեկուզև **ներքնազգեստի**՝ խնամքով ու բժախնդրությամբ կարված այս **կարկատանը**» /ՎԱ-124/:

Հատկացուցչի ոճական արժեքը ընդգծվում է հատկապես **մասնատումով** գործածելիս, որը թարմացնում է խոսքի շարահյուսական կառուցվածքը: «Բայց իսկական փոխհատուցումը սա էր: Իր **սիրո**, իր սպառված **երջանկության**, իր բախտավոր ու ծախսված **անցյալի**» /ԱԵ-195/:

Ժամանակակից հայերենում **բացահայտիչն** ունի կայուն շարադասություն, որը, բնականաբար, ոճային չի դառնում: Զեյթունցյանի արձակում բացահայտչի շարադասությունը կանոնական է: Բացահայտիչի երեք տեսակներից երկուսը՝

բուն և պարագայական բացահայտիչները, ունեն կայուն վերջադաս շարադասություն, իսկ **մասնականի** շարադասությունը ազատ է. կարող է և՛ նախադաս կիրառվել, և՛ վերջադաս: Մրանց կիրառությունը ոճականորեն արժևորվում է, երբ նրանք զուգակցվում են շարահյուսական կառույցների թարմ ձևավորումներով ու բազմազան արտահայտչամիջոցներով, բառապաշարի տարբեր շերտերից ընտրված բառերի՝ ասելիքը լավագույնս ներկայացնող ազուգական ընտրությամբ և այլն: Խոսքի սեղմությանը հետամուտ գրողը նաև բացահայտիչներն է կիրառում **մասնատումով**:

Ահա այդպիսի մի օրինակ, որը երկխոսությունն է Փառանձեմի երկու ամուսինների.

«Կարող ես ինձ շնորհավորել, Գնե՛լ: Ես ամուսնացա: Հիմա մեր երկիրը թագուհի ունի:

– Ու՛մ հետ, արքա՛: Ո՞վ է այն երջանիկ կինը, որ պատիվ ունի թագաժառանգ ծնելու:

– **Փառանձեմը**: Գնե՛լ: **Մյունյաց Ադովկ իշխանի դուստրը**:

– **Փառանձե՛մ... Իմ կի՞նը...**» /ԱԵ-232/: Բացահայտյի մասնատումը բացահայտյալից կախման կետերով արտահայտված երկար **դադարով**, ցույց է տալիս պատմավեպի հերոսի դրամատիկ խորունկ հույզերն ու ապրումները:

Ահա և Հայր Մարդպետի փիլիսոփայությունը... «Մարդ պետք է ամեն ինչի արանքում ապրի: **Հավատարմության և դավաճանության: Ստորության ու առաքինության: Բարու և չարի**» /ԱԵ-366/:

«Դա արդեն մեր ընտանեկան գործն է, արքա՛,– կատակի տվեց Որմիգդուխտը: – Եվ միայն մեր **չորսին** է վերաբերում: **Ինձ, քեզ, բյունզանդուհուն ու թագուհուն**» /ԱԵ-263/: Ստորոգյալով կամ այլ անդամով իրարից հեռացած և մասնատումով տրոհված բացահայտիչ-բացահայտյալների կիրառությունը թարմություն է հաղորդում Պ. Զեյթունցյանի ոճին, բազմազանություն մտցնում անգամ նրանց ավանդական տրոհման ձևի մեջ:

«Պետք է զգուշանալ **նրանից**, եզրակացրեց արքան: Այս, այս համեստ, գլուխը կախ, միապաղաղ ձայնով խոսող, հլու-հնազանդ **կնոջից**» /ԱԵ-255/:

Ոճական բազմազանության լավագույն դրսևորում են բացահայտյալից երկրորդական նախադասությամբ հեռացած բազմակի բացահայտիչները, որոնք արտաբերվում են հապաղումով և տրոհվում կախման կետերով: Ինքնատիպ այս կառույցով գրողը բացահայտում է եղենի զոհ բանաստեղծներից մեկին՝ Սիամանթոյին. «Գնաց կարապանման էակը... **Նա**, ով հայ քերթության մեջ բերել էր վերջնական նորություն... **Հայ մտքի հզոր տեսիլքներով մեկը... Դյուցազանց երգիչը... Հրաբորբոք, բոցավառ տաղանդը...**» /ՎԱ - 202/:

Զեյթունցյանի խոսքին ոճական հարստությունն են հաղորդում բազմակի բացահայտիչների գործածությունը. «Ու նա դիմեց իր վերջին **զենքին**՝ իր վերջին **պաշարին**, իր **ատելությանը**, իր **արհամարհանքին**» /ԱԵ -116/:

Ինչպես ընդունված է հայերենում, Զեյթունցյանի արձակում կայուն վերջադաս շարադասություն ունեն նաև մասնավորեցնող բացահայտիչները, որոնք կոնկրետ ու որոշակի են դարձնում բացահայտյալի ցույց տված տեղն ու ժամանակը և ոճաիմաստային կշիռ ձեռք բերում. «Բայց Զոհրապը շարունակեց համառորեն: Ասաց, որ թուրքերն ու հայերը դարեր շարունակ ապրել են որպես եղբայրներ, կիսել իրենց ընդհանուր հայրենիքի հոգսերն ու ցավերը և **հիմա էլ՝ պա-**

տերազմի այս ահեղ օրերին, պատրաստ են կրկին ու կրկին ապացուցել իրենց նվիրվածությունն ու հավատարմությունը» /ՎԱ-57/, «Բայց **այսօր՝ ապրիլի 24-ին**, աստղագարը պարզ երկնքի լայն երազն իր գլխավերևում, ոչ ոք չի կարող խանգարել իրեն՝ ...հեգնելու վաղվա հոգնություններն ու հուսախաբությունները և իր քնարական նծույզի վրա թռչելու հեռուները, շատ հեռուները, կապույտ հեռուները...» /ՎԱ-209/:

Ի տարբերություն բուն և մասնավորեցնող բացահայտիչների՝ մասնական բացահայտիչը, ինչպես արդեն նշել ենք, կայուն շարադասություն չունի: Այն կարող է դրվել և՛ բացահայտյալից առաջ, և՛ հետո: Մասնական բացահայտիչը բուն բացահայտիչից տարբերվում է ոչ միայն իր անկայուն շարադասությամբ, այլև ձևային հատկանիշներով. նա բացահայտյալի հետ կապակցվում է բառային միջոցներով **որպես, իբրև, ինչպես**:

«Իմաստային տեսակետից մասնական բացահայտիչի յուրահատկությունն այն է, որ նա բացահայտյալի իմաստը բացահայտում, պարզաբանում է ոչ լրիվ ընդգրկումով, այլ մասնակիորեն, այս կամ այն տեսակետից»²⁵⁰, - նշում է Ս. Գ. Արքահամյանը:

Պ. Զեյթունցյանը իր խոսքում գործածում է մասնական բացահայտիչներ, երբ հարկ է լինում մասնակիորեն բացահայտել կերպարներից որևէ մեկին. «Հստորում, **նա՝ որպես իսկական հայրենասեր ու իսկական դիվանագետ**, նկատի չունեի իր անձը, այլ այն երկիրը, որ ներկայացնում էր ինքը» /ՎԱ-215/:

«Հասկանալի է, պարոն դեսպան, քանի որ գրեթե բոլոր հայերն արդեն մեռած են և այլևս ժառանգորդներ չունեն, հետևաբար, նրանց փողերը պետք է ստանա թուրքական **կառավարությունը՝ որպես միակ օրինական ժառանգորդ**»: /ՎԱ-285/

Մասնական բացահայտիչի վերջադաս լինելու դեպքում տրամաբանական շեշտը բացահայտյալի վրա է ընկնում, նախադաս գործածվելու դեպքում՝ մասնական բացահայտիչի:

Մասնական բացահայտիչը, սակայն, գրողի խոսքում միօրինակ չէ, այլ գործածվում է հետաքրքիր ու թարմ կիրառությամբ: Ոճական բազմազանության համար նա մասնական բացահայտիչը հեռացնում է բացահայտյալից՝ դնելով բաղադրյալ ստորոցյալի բաղադրիչների արանքում: «Երկու առյուծ, որոնք դեռ մի քանի տարի առաջ կարող էին բոբիկ քայլել սառույցի վրա, որոնք **որպես շապիկ ցուրտը** կարող էին հագնել մերկ մարմիններին» /ԱԵ-392/:

Մասնական բացահայտիչները շեշտելու ոճական հնար է նաև դրանց բազմակի գործածությունը. «Վայելչակազմ, թիկնավետ, հաստ բազուկներով ու երկնադեզ հասակով Հայկ Նահապետը, հյուսիս և հարավ, արևելք ու արևմուտք ունեցող այս լայնածավալ աշխարհը թողած, երկիրը՝ **որպես հավիտենական կռվախնձոր, որպես անեծքի խաբան նրա դրոշի վրա**, գցեց ուժեղների ոտքերի տակ, տարանցիկ ճանապարհների խաչմերուկում»: /ԱԵ-76/

Այսպիսով՝ հայերենն իր հարուստ քերականության շնորհիվ ունի նախադասության անդամների /նաև հարակից միավորների/ ձկուն շարադասություն, որը նպաստում է հաղորդման բազմազանությանն ու արտահայտչականությանը:

Պ. Զեյթունցյանի ընտրած թեմատիկան իր պահանջներն է թելադրել գրողին նաև շարադասության մեջ, որը նրա խոսքի պատկերավորությունն ու ներ-

²⁵⁰ Ս. Գ. Արքահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975, էջ 290:

գործուն ուժը ապահովում է շրջուն շարադասությամբ, էպիկական շունչը՝ սովորական, կանոնիկ, բայց ոչ միօրինակ շարադասությամբ:

Аида Саргатыан – Порядок слов и его стилистическая особенность в прозе П. Зейтунцяна. – Порядок слов, как синтаксическое средство связи, имеет стилистическое важное значение в прозе Зейтунцяна. Его стиль был бы однообразным, не имел бы естественного, живого волнения, широкой возможности для подчеркивания идеологического акцента высказываемого, если бы он не использовал богатые и разнообразные формы расстановки слов. Обычный и обходящий порядок слов имеется почти во всех возможных выявлениях прозы Зейтунцяна, который обусловлен тематическим диктантом, родом литературного произведения, индивидуальностью персонажа. Представление слов автора и непревзойденная сила обусловлены также расстановкой слов, эпическим духом обычного, стандартного, но неоднобразного порядка слов.

Aida Sarhatyan – Word order and its stylistic value in P. Zeytunyanc's prose. – Word Order, as a syntactic connection, has great stylistic value in P. Zeytuntsyan prose. His style will be standard, will not have natural and live trepidations, wide possibility of emphasizing ideological accents of saying, if he does not use diverse and rich forms of word order.

There are almost all possible forms of common and inverted word order in Zeytuntsyan prose, which is conditioned by thematic dictation, literary work gender, genre and characters individuality.

The author's speech verve and effective power are also conditioned by inverted word order; epic breath is conditioned by common, but not monotonous word order.

ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ՝ ԱՂԱՅԱՆԻ ԵՎ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՍՄԻԿ ՎԱՆՅԱՆ

Հեքիաթը ժողովրդական բանահյուսության ամենահին, ամենատարածված և ամենահարուստ ժանրերից մեկն է: Այն բանավոր, էպիկական-գեղարվեստական հրաշապատում ստեղծագործություն է՝ հիմնված երևակայության հնարանքի վրա: Հեքիաթներն արտահայտում են ժողովրդի իմաստուն կենսահայեցողությունը, նրա իդեալներն ու գաղափարները, լավագույն ձգտումները: Հովհ. Թումանյանի հանճարեղ խոսքով ասած՝ «հեքիաթները անդունդներ են, խորը, անծայր, անվերջ, հարուստ ու շքեղ աշխարհ», «գրականության մեջ ամենաբարձր արտահայտությունը, ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են»:

Ժողովրդական բանահյուսության մեջ առանձնացվում է հեքիաթի երեք հիմնական տեսակ՝ կենդանական, հրաշապատում և իրապատում հեքիաթներ: Կենդանական հեքիաթները ժողովրդի «մանկության շրջանի» ստեղծագործություններ են, որոնց բնորոշ է առարկայականի և բնության երևույթների ու կենդանիների անձնավորումը: Հրաշապատում հեքիաթներն իրականությունն արտացոլում են երևակայական, հնարովի աշխարհների ու հարաբերությունների միջոցով: Իսկ իրապատում հեքիաթներում հասարակական կյանքը, մարդկային փոխհարաբերություններն արտահայտվում են առավել իրական երանգներով: Իրապատում հեքիաթների գլխավոր հատկանիշներն են պարզությունը, գործողությունների արագ զարգացումն ու տրամաբանական ավարտը, լեզվի ու ոճի հստակությունը:

Բանահավաքության շնորհիվ ժողովրդական բանավոր ստեղծագործությունից հեքիաթն աստիճանաբար վերածվել է գրավորի: Այդ ոլորտում առաջին ծանրակշիռ ավանդը ներդրել են գերմանացի գիտնականներ Հակոբ և Վիլհելմ Գրիմն եղբայրները, ովքեր իրենց հավաքած և գրական մշակման ենթարկած բանահյուսական նյութերը 1810-ական թթ. հանրությանը ներկայացրին «Մանկական և ընտանեկան հեքիաթներ» և «Գերմանական ավանդազրույցներ» ժողովածուներով:

Ռուսաստանում նույն ժամանակ բանահյուսական նյութերը ոչ միայն հավաքագրվում էին բանահավաքների կողմից, այլև դրանք մշակում էին գրողները (Կարամզին, Կոլիով, Ժուկովսկի): Բանահյուսական նյութի մշակումը ռուս գրականության մեջ զարգացման բարձրակետին հասցրեց Ա.Ս. Պուշկինը:

19-րդ դարի կեսերից, կապված նաև գրականության ժողովրդայնության երևույթի հետ, մեզանում ևս առանձնակի ուշադրություն դրսևորվեց ժողովրդական բանահյուսության նկատմամբ: 1852 թ. հրատարակվեց Ղ. Ալիշանի «Հայոց երգք ռամկականք» ժողովածուն, ապա լույս տեսան Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոց», «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» (1874) և «Մանանա» (1876), Ա. Սեդրակյանի «Քնար մշեցվոց և վանեցվոց» (1874) ժողովածուները: Երկար տարիների ընթացքում հավաքելով տարբեր գավառների հեքիաթներ՝ հայտնի բանահա-

վաք Տ. Նավասարդյանը 1882-1903 թթ. լույս ընծայեց «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուն:

Բանահավաքությունից հեքիաթի գրական մշակման անցնելու գործում հայ գրականության մեջ առաջնորդը Ղազարոս Աղայանն է, իսկ այն որակական մի այլ աստիճանի հասցնողը՝ Հովհաննես Թումանյանը:

Հայտնի է, որ բանահավաքությունն այլ բան է, ժողովրդական նյութի գրական մշակումը՝ այլ: Դեռևս 1909 թ., երբ մեծ թվով տիրացու-վարժապետների կողմից Թումանյանի դեմ սկսվել էր անհիմն մեղադրանքների արշավ, Թումանյանը, պատասխանելով մասնավորապես Ռ. Դրամբյանի «Գրական մեծությունները բանագող» հոդվածին, հիանալիորեն պարզում է ժողովրդական բանահյուսության և գեղարվեստական գրականության հարաբերության հարցը. «Մշակածի, գրական լեզվի վերածածի, ուսանավոր դարձածի ծանրության կենտրոնը իր **գեղարվեստական արժանիքն է** (ընդգծ.՝ Հ. Վ.): Մի տեղ խնդիրն էն է, թե ինչ են ասում, իսկ մյուս տեղ, թե ինչպես են ասում»²⁵¹: Այլ խոսքով՝ «Բանահավաքն ուրիշ է, բանաստեղծը՝ ուրիշ. մեկի գրածի պատասխանատուն ժողովուրդն է, մյուսինը՝ ինքը»²⁵²:

Ժողովրդական նյութի գրական մշակման մեջ կարևոր է գրողի հանդես բերած ստեղծագործական մոտեցումը, որը կապված է նրա առաջադրած գեղարվեստական խնդիրների ու նպատակների, գեղագիտական սկզբունքների հետ: «Ժողովրդական բանահյուսության ամեն մի արգասիք,- հասկանալով է՝ Ն. Աղբալյանը,- ենթակա է բազմադիմի մեկնության: Եվ երբ այդ նյութին ձեռք է զարկում մի բանաստեղծ մշակելու դիտումով, ապա նրա տված մեկնությունը կախված է իր ըմբռնումից, ճաշակից և ազգային ոգու խորքը թափանցելու կարողությունից»²⁵³:

Համաշխարհային գրականության մեջ տարբերակվում են հեքիաթների մշակման երկու հիմնական սկզբունքներ՝ գերմանական (ի դեմս Գյոթեի) և ռուսական (ի դեմս Պուշկինի), որոնք իրենց կրողներն ունեն ուրիշ ազգերի գրականության մեջ: Այս սկզբունքների դասակարգումը կատարվել է այն հիմունքով, թե գրողը նյութը մշակելիս արտացոլման ինչ եղանակով է առաջնորդվում. խոսքը հրաշապատում և իրապատում հեքիաթների մասին է: Հրաշապատում հեքիաթներին համապատասխանում է գերմանական սկզբունքը, որի կրողը մեր գրականության մեջ Ղազարոս Աղայանն է, իսկ իրապատում հեքիաթներին՝ ռուսական սկզբունքը, և դրա կրողը մեզանում՝ Հովհաննես Թումանյանը:

Հայ գրականության մեջ առաջինը, ով հուն բացեց մեր հեքիաթագրության համար, Ղ. Աղայանն է: Անվիճելի է Աս. Ասատրյանի այն գնահատականը, որ «Աղայանից հետո և նրա ազդեցությամբ միայն հետագայում սկսվեց ժողովրդական հեքիաթների գրական-գեղարվեստական մշակումը (Թումանյան, Իսահակյան)»²⁵⁴:

Ղ. Աղայանը նաև հեքիաթի ժանրի առաջին տեսաբանն է մեզանում: «...Հեքիաթը,- բնութագրում է Աղայանը,- բարոյական և մտավոր զարգացման համար

²⁵¹ Հ. Թումանյան, ԵԼԺ, հ. VI, էջ 454:

²⁵² Հ. Թումանյան, ԵԼԺ, հ. VII, էջ 72:

²⁵³ Մեծերը ամենամեծի մասին, Եր., 1999, էջ 57:

²⁵⁴ Աս. Ասատրյան, Ղազարոս Աղայան, Եր., 1940, էջ 97:

շատ և շատ նման է մայրական կաթին, որով սնվում է մանուկը, և որի ֆիզիկական կազմվածքը մայրական կաթի բաղկացությունն է. կաթը կորչում է, երեխան մեծանալով կտրվում է մոր կաթից, բայց նրա արդյունքը չի կորչում: Հեքիաթը մեր երևակայության, մեր տաղանդի ու հանճարի կաթն է»²⁵⁵:

Հեքիաթի գրական մշակման գործում առաջնային է այն հարցը, թե ժողովրդական նյութը մշակելիս ինչպիսի մոտեցում է ցուցաբերում գրողը. հավատարի՞մ է մնում ժողովրդական մտածողությանը, թե՞ մշակման մեջ մտցնում է անհատական գաղափարական տարրեր:

Աղայանի մոտեցումը փորձենք պարզել իր իսկ խոսքի միջոցով. «Իմ հեքիաթների մեջ մեծ մասամբ աստատն է միայն ժողովրդական, իսկ նախշերը իմ սեփականս են»²⁵⁶:

Այդ «նախշերը», ըստ էության, Աղայանի դավանած մանկավարժական ու հասարակական հայացքներն էին, որոնք դրսևորվում էին նաև հեքիաթներում: Այսպես՝ Աղայանի հենց առաջին՝ 1881թ. լույս տեսած «Անահիտ» հեքիաթն արտահայտում է իր այն գաղափարական համոզմունքը, որ մարդու կյանքի և գոյության միակ հաստատուն հիմքը, նրա հաջողության և երջանկության գրավականը ուսման և արհեստների իմացության մեջ է. «Թագավորի կյանքը արհեստն է փրկել: Ուսումն ու արհեստը պետք է այնպես հյուսված լինեն միասին, ինչպես Վաչագան թագավորի դիպակը՝ իր խորհրդավոր թալիսմաններով»: Իսկ սոցիալական երանգը տեսանելի է Անահիտի ու Վաչագանի ամուսնության դրվագում. նրանց ամուսնությամբ ժողովուրդը ուրախանում է, քանի որ թեթևանում են հարկերը.

Անահիտի հարսանիքին ոսկի արև փայլեցավ,

Անահիտի հարսանիքին ոսկի անձրև թափվեցավ,

Մեր արտերը ոսկի դառան, մեր հորերը լցվեցան,

Մեր հարկերն անհետացան, մեր ցավերը վերացան:

Իր մշակած հեքիաթներում Աղայանն առավել հակված էր ռոմանտիկական սկզբունքին, իսկ ինչպե՞ս էր Թումանյանը մոտենում ժողովրդական նյութին: «Ռեալիզմը արտահայտվում է ամենից առաջ այն մոտեցման մեջ, որ Թումանյանը հանդես է բերում դեպի ժողովրդական բանահյուսության սկզբնաղբյուրները: Նա ձգտում է հարազատորեն վերարտադրել այդ նյութերի իսկական ժողովրդական բովանդակությունը, նրանց մեջ խտացված դարավոր կենսափորձը, իմաստությունը, լուսավոր բանականությունը: Թումանյանին խորթ էր բանահյուսության արհեստական որևէ մոդեռնացում...»²⁵⁷, - դիպուկ բնութագրում է էդ. Ջրբաշյանը:

Բանահյուսական նյութի և հատկապես հեքիաթի գեղարվեստական մշակումը Թումանյանի համար ստեղծագործական մեծ ջանք ու հետևողականություն պահանջող աշխատանք էր: «Ամենամեծ ստեղծագործողը, Թումանյանի խոսքով, ժողովուրդն է, ու նրա ամենամեծ ստեղծագործությունը՝ հեքիաթը»: Հովհ. Թումանյանի համար իսկական հավատամք էր դարձել «ամենամեծ ստեղ-

²⁵⁵ **Ղ. Աղայան**, Երկեր, հ. I, Եր., 1947, էջ 33:

²⁵⁶ **Ղ. Աղայան**, Մի կիսապատասխան «Մուրճ» ամսագրին, Թիֆլիս, 1890, N 4, էջ 193:

²⁵⁷ **Էդ. Ջրբաշյան**, Թումանյանի պոեմները, Եր., 1986, էջ 341:

ծագործողի»՝ ժողովրդի ոգուց չհեռանալը: Նա, ուսումնասիրելով ժողովրդական հեքիաթների գանազան տարբերակներ և դրանց ընդերքից հանելով ոսկե միջուկը, խորացրել է նրանում եղած համամարդկայինը և բյուրեղացրել այն: Այդ դեպքում մի թե Թումանյանի մշակած հեքիաթներում անհատականը ոչ մի կերպ տեղ չի գտնում. գտնում է, բայց թումանյանական ձևով: Այսինքն՝ Թումանյանի անհատականը այնքան է ժողովրդական, ու նրա արտահայտած ազգայինը այնքան է համամարդկային, որ նրա առկայությունը հեքիաթում նմանվում է ջրի կաթիլին ծովում: Այդ ամենը դրսևորվում է նրա կերտած խոսքի միջոցով, որը, թվում է, անձեռակերտ է, հոսում է, ինչպես գետը իր բնական հունով: Հենց այստեղ է հանձարի հանձարեղությունը. գրել այնպես պարզ ու բնական, որ չզգացվի էլ, թե այդ գրածը ստեղծագործական բարդ տքնանքի արդյունք է: Սա արվեստի թումանյանական ըմբռնումն է, որ ինքը բանաձևել է այսպես. «Արվեստը պետք է լինի աչքի նման թափանցիկ, պարզ և աչքի նման բարդ»²⁵⁸:

Թումանյանի մշակած հեքիաթները (մանավանդ ինքնուրույն) գերծ են սարսափ ազդող տեսարաններից, ունեն հստակ դիպաշար, կոտ հանգուցալուծում, և նրանցում բարոյական իմաստը մատուցվում է աշխույժ ընթացքով:

Այսպես՝ «Տերն ու ծառան» հեքիաթը մշակելիս Թումանյանի ձեռքի տակ եղել են կաբարդինական «Наскочила коса на камень», «Священник и причётник», մենգրելական «Рабочий и нажиматель» և ռուսական «Как аукнется, так и откликнется» հեքիաթների տարբերակները: Ընդ որում՝ մենգրելական տարբերակում կան անմարդկային ու դաժան տեսարաններ (տիրոջ երեխաներին կենդանի-կենդանի եռման ջրի մեջ գցելու, եփելու և հորն ու նրա հյուրերին հրամցնելու, եզնեքին ծեծելով ողջ գիշերը չարչարելու, տիրուհուն սպանելու և այլ դրվագներ): Իսկ ահա Թումանյանի մշակման մեջ այդ սարսափազդու տեսարանների հետքն անգամ չկա: Փոխարենը մեր առջև գծագրվում է Թումանյանի ստեղծած խելացի ու հնարագետ, համակրանքի արժանի ճարպիկ ծառայի կերպարը: Հեքիաթը հագեցած է վարակիչ ու պայծառ հումորի զգացումով, որը սարսափելի տեսարանի պատճառող վախի փոխարեն համակում է մեզ աշխույժ ու դրական լիցքերով:

Ի տարբերություն հեքիաթի մշակման Թումանյանի սկզբունքի՝ ռոմանտիկական եղանակով առաջնորդվող Աղայանը ոչ միայն չի խուսափում իր հեքիաթներում ներկայացնել սարսափազդու տեսարաններ, այլև փորձում է տեսականորեն հիմնավորել դրանց նշանակությունը. «Հեքիաթները ոչ միայն վնասակար չեն, այլ՝ շատ օգտակար, երբ նրանք կրում են հեքիաթի առասպելական և հնության դրոշմը, երբ նրանք իսկ և իսկ հեքիաթ են: ...Հեքիաթական աշխարհը իրական աշխարհի ամենաճշգրիտ պատկերն է: Իրական աշխարհի դները, վիշապները, սատանաներն ու քաջքերն ավելի ևս սարսափելի են, որովհետև դրանք մեծ մասամբ մնում են անընկճելի...»²⁵⁹:

Ժամանակին Աղայանի հեքիաթների դեմ ուղղված քննադատությունը թեև անհիմն չէր, սակայն հասնում էր չափազանցության: Մանկավարժական դիտանկյունից քննադատում էին Աղայանի հեքիաթները, որ դրանցում առկա են նյարդայնացնող, մղձավանջային տեսարաններ, մարդակեր աղջիկների ու պառավների կերպարներ: Այսպես՝ 1890 թ. երկու ընդարձակ հոդվածով հանդես գալով

²⁵⁸ Թումանյան, Արվեստի մասին, Եր., 1969, էջ 86:

²⁵⁹ Ղ. Աղայան, նշվ. հոդված, էջ 192:

«Մուրճ» ամսագրում՝ Երվանդ Ղազարյանը «Զանգի-Զրանգի» հեքիաթն անընդունելի է համարում այն պատճառով, որ «անհամեմատ ավելի սարսափեցնող ու վախեցնող տպավորություն է անում»: Անդրադառնալով «Եղեգնուհի» հեքիաթին՝ քննադատը միանգամայն չափազանցում է՝ գրելով. «Եղեգնուհու» նման հրաշապատում հեքիաթները տգիտության արդյունք են և միայն սնահավատություն կարող են տարածել ընթերցողի մեջ»²⁶⁰:

«Եղեգնուհի» հեքիաթը, որքան էլ հրաշապատում է և հագեցած անիրական, երևակայական դրվագներով (եղեգնի՝ աղջկա փոխակերպվելը, խեղդված աղջիկը՝ ձկան, ձուկը՝ հրաշալի ծառի, ծառը՝ կափարիչի, կափարիչը՝ աղջկա, ապա մորթած կաքավի խոսելն ու անկրակ խորովվելը և այլն), այնուամենայնիվ ծայրահեղություն է այն տգիտության արդյունք համարելը: Այլ խնդիր է, թե որքանով է արդյունավետ Աղայանի առաջադրած մանկավարժական մեթոդը, այն, որ «...Զսարսափելու համար պետք է լսած լինել ամենասարսափելի օրինակները: Ցանկալի է, որ մեր սերունդն ամուր նյարդեր ունենար և ոչ թույլ, դյուրագրգիռ, խստերիական և ախտավոր»²⁶¹:

Իրենց խոսքարվեստով Աղայանն ու Թումանյանն իրար ավելի նման են, քան տարբեր: Երկուսի համար էլ ընդհանուր աղբյուր է ժողովրդական լեգուն՝ իրեն բնորոշ գեղարվեստական բոլոր միջոցներով՝ արտահայտչականությամբ պատկերավորությամբ, որի տարրերն են փոխաբերությունը, համեմատությունը, մակդիրը, չափազանցությունը, հեգնանքը, երկխոսությունը, ժողովրդական առածներն ու ասացվածքները, թևավոր արտահայտությունները:

Ղ. Աղայանի մշակումներում լայն կիրառություն ունի հատկապես չափազանցությունը, որը նրա հեքիաթներում երբեմն սահման չի ճանաչում: Հիշենք «Զանգի-Զրանգի» հեքիաթում Թաթուխի քրոջ՝ հնգամյա երեխայի անհագ որկրամոլությունը. «Բադիով կաթն է լինում դրած, տեսնում են դատարկված. մածուն է լինում,- նույնպես. տաշտումն էլ հաց չի մնում, բոլորներումը՝ յուղ...»²⁶²: Առավել ահեղ է նրա մարդակերության մոլուցքը: Չարի և բարու պայքարում Աղայանը չարին ներկայացնում է հիպերբոլիկ գծերով, որպեսզի բարու տարած հաղթանակն ավելի ազդեցիկ լինի: «Էլ ի՞նչ Հերքուլես,- ասում է Աղայանը,- եթե նրա սպանած վիշապը պետք է մի հասարակ օձ լինի և ոչ մի հիդրա բազմազույս, որ երբ մի գլուխը կտրեն, մյուսը տեղը բսնի: Եթե այդ վիշապը զարհուրելի է, որքան առավել հիանալի է Հերքուլեսի սիրտը, նրա անվեհերությունը, նրա քաջությունը, նրա հնարագիտությունը»²⁶³:

Չափազանցության հյուբեղ օրինակներով հարուստ են և Թումանյանի մշակած հեքիաթները: Ուշագրավ է «Մուտասան»-ի հետևյալ դրվագը.

«- Թագավորն ապրած կենա, իմ հերը մի դագանակ ուներ, որ էստեղից մեկնում էր, երկնքում աստղերը խառնում:

- Կպատահի,- պատասխանում է թագավորը:

- Իմ պապն էլ մի չիբուխ ուներ. մի ծերը բերանին էր դնում. մյուս ծերը մեկնում, արեգակիցը վառում» (հ.III, էջ 142):

²⁶⁰ Աս. Ասատրյան, Ղ. Աղայան, Եր., 1940, էջ 82:

²⁶¹ Ղ. Աղայան, նշվ. հոդված, էջ 193:

²⁶² Ղ. Աղայան, ԵԺ, հ. II, Եր., 1973, էջ 268:

²⁶³ Ղ. Աղայան, նշվ. հոդված, էջ 193-194:

Իրավացի է Ս. Խանգադյանը, երբ գրում է. «Թումանյանի մի ուրիշ հայտնագործած աշխարհը... մեր ժողովրդական լեզվի ու ոճի գանձն է, որին մոտեցել էին իրենից առաջ եղածները, սակայն չէին բացել ոսկե միջուկն այնպիսի շռայլությամբ ու հմտությամբ, ինչպես արեց Թումանյանը»²⁶⁴:

Թումանյանի վրա մեծ ազդեցություն է ունեցել իր հայրենի բնաշխարհը՝ Լոռին, ընդ որում՝ այդ ազդեցությունը պիտի փնտրել ոչ այնքան նրա լեզվի արտաքին կեղևի մեջ, որքան ստեղծագործության ներքին շերտերում: Թերևս ոչ ոք այդ մասին այնպես խորունկ չի արտահայտվել, ինչպես Ավ. Իսահակյանը. «Վիպերգական աշխարհում մեծացավ Հովհաննեսը և հանդես ելավ՝ բռնկված հայրենի երկրի տեսիլներով ու առասպելներով, և երևեցավ ինքը՝ որպես մարմնացած վիպերգություն՝ իր կյանքով ու էությամբ, իր խորքով ու ձևով...

Լոռին՝ հեքիաթի աշխարհ, ուր անտառը ունի իր շահապետը, որ հսկում է եղնիկներին, այրերը լիքն են դներով ու չարքերով, գետերը՝ կախարդիչ ջրի-հարսներով,- և այս ամենը բաց աչքով «տեսել է» լոռեցին, իբրև ականատես պատմել է մանուկ Հովհաննեսին»²⁶⁵:

Այսպիսով՝ իր հասարակական ու մանկավարժական հայացքների ազդեցությունը կրող հրաշապատում հեքիաթներով Ղ. Աղայանը սկզբնավորեց մեր հեքիաթագրությունը, իսկ այն բարձր զարգացման հասցրեց Հովհ. Թումանյանը, որի հեքիաթները ժողովրդական նյութի գեղարվեստական մշակման բացառիկ արժեքներ են:

Асмик Ванян – Принципы разработки сказок Агаяна и Туманяна. – В статье рассматриваются жанровые качества сказок, отношение между народным фольклором и художественной литературой, соответственное применение немецких и русских принципов в сказках Агаяна и Туманяна.

Hasmik Vanyan – The Fairy Tales Adaptation Principles of Aghayan and Tumanyan. – The application goes through the lines of the relations between the genre characteristics, folklore and fiction as well as the appropriate use of German and Russian principles in the adapted versions of the fairy tales worked out by Aghayan and Tumanyan.

²⁶⁴ Թումանյան 100, Եր., 1972, էջ 540:

²⁶⁵ Մեծերը ամենամեծի մասին, Եր., 1999, էջ 87-92:

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ

ՆԵՐԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԱՐՄԻՆԵ ԱՇԽԱՏԱՆ

Մարդու գերակա իրավունքների շարքում կարևորներից է կրթության իրավունքը: Այն անձին թույլ է տալիս իրապես ճանաչել աշխարհն ու մարդկանց, բացահայտել իր ներքին հնարավորությունները և զարգանալ, առնչվել տարբեր ժողովուրդների հոգևոր արժեքների հետ, օգտագործել քաղաքակրթության՝ մշակույթի, գիտության, տեխնիկայի ասպարեզներում կուտակված անսպառ աղբյուրները, հոգևոր և մտավոր ժառանգությունը անձնական կարիքների համար: Կրթության հիմնահարցերը մշտապես եղել և մնում են բոլոր քաղաքակիրթ երկրների ու ժողովուրդների ուշադրության կենտրոնում:

Այսօր անհնար է ունենալ կրթության բարձր որակ և լինել մրցունակ, եթե երկրի կրթության համակարգը չի ինտեգրվում միջազգային կրթական գործընթացներին և չի ապահովում միջազգային չափանիշներ: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ համակարգը զարգանա բարեփոխումների ճանապարհով, որն այսօր որդեգրել է ՀՀ կրթության համակարգը: Դա է վկայում Հայաստանի Հանրապետության միջնակարգ հանրակրթական դպրոցներում իրականացվող բարեփոխումների համալիր ծրագիրը, որի մեջ իրենց առանձնահատուկ տեղն են գրավում հատուկ կրթության հիմնահարցերը, մասնավորապես՝ ներառական կրթության խնդիրները:

Հայաստանի Հանրապետությունում հատուկ կրթության համակարգը ձևավորվել է դեռևս խորհրդային ժամանակաշրջանում: Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգված գործընթացը սկսվել է «ՄԱԿ-ի երեխայի իրավունքների մասին հռչակագրին» միանալուց հետո, ուր նշվում էր, որ հաշմանդամներն ունեն մյուս քաղաքացիներին հավասար սոցիալ-տնտեսական, քաղաքական ու անձնական իրավունքներ: Հայաստանի Հանրապետությունը միացել է հռչակագրին 1990թ.-ին: 1996թ. ընդունվել է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը²⁶⁶, 1999թ.-ին՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը²⁶⁷, 2001թ.-ին՝ «Կրթության զարգացման 2001-2005թթ. պետական ծրագիր» ՀՀ օրենքը²⁶⁸, 2005թ.-ի սեպտեմբերի 1-ին «Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպության անմիջական մասնակցությամբ մշակվել և ընդունվել է «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը²⁶⁹:

«Կրթության մասին» ՀՀ օրենքը սկիզբ դրեց հատուկ կրթական համակարգի բարեփոխումների, ուր ամրագրված է, որ «Կրթության առանձնահատուկ

²⁶⁶ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, 1996թ. 29.05:

²⁶⁷ «Կրթության մասին» ՀՀ օրենք, 1999թ., 14.04:

²⁶⁸ «Կրթության զարգացման 2001-2005թթ. պետական ծրագիր» ՀՀ օրենք, 26.06.2001թ.:

²⁶⁹ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենք, 25.05.2005թ.:

պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը, ծնողների ընտրությամբ, կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ դպրոցներում՝ հատուկ ծրագրերով»²⁷⁰: Դրանով պետականորեն ճանաչվեց և ամրագրվեց ներառական կրթությունը Հայաստանում: Մկսեց գործել Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնը, որի գործունեության հիմնական նպատակը երեխաների մտավոր, ֆիզիկական և հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտումն ու գնահատումն է, նրանց ընդունակություններին ու կարողություններին համապատասխան՝ կրթության իրականացման ձևերի ընտրությունը:

Այսօր Հայաստանը ներառական կրթության փորձ ունեցող միակ երկիրն է տարածաշրջանում, որի պետական քաղաքականության բաղկացուցիչ մասերից մեկն է կյանքի կոչել օրենքի ուժ ունեցող պահանջը, այն է՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության իրավունքի կազմակերպման պահանջով իրականացնել ուսուցման և դաստիարակության համալիր ծրագիր՝ ըստ ՀՀ հանրակրթության չափորոշիչ:

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքում /25.05.2005/ ամրագրված է **«Ներառական կրթություն»** հասկացությունը²⁷¹, որը կրթության առանձնահատուկ պայմանների կարիքն ունեցող երեխայի կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրա համատեղ ուսուցումն է իր հասակակիցների հետ՝ հանրակրթական դպրոցում²⁷²: Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր երեխաների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և սոցիալապես սահմանափակ կարողություններ ունեցող անձանց կրթություն ստանալու իրավունքի վրա: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին²⁷³: Ներառական կրթության քաղաքականության հիմքում երեխայակենտրոն ուսուցումն է, որի էությունը յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքների գնահատումն ու կրթության գործընթացին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսումն է: Վերոհիշյալ մեթոդի բաղկացուցիչ մաս է կազմում բազմամասնագիտական խմբի ստեղծումը, որի մեջ ներգրավված են այնպիսի մասնագետներ, ինչպես՝ ընդհանուր կրթության մանկավարժ, հատուկ կրթության մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ, որոնց համատեղ գործունեության արդյունքում մշակվում է երեխայի ուսուցման անհատական պլան՝ ուղղված երեխայի կարիքի բավարարմանը: Այսինքն՝ բազմամասնագիտական թիմը

- ✓ գնահատում է յուրաքանչյուր երեխայի կրթական կարիքները ուսուցման համակարգում,
- ✓ հայտնաբերում է նրա առողջապահական և սոցիալական կարիքները, որոնք ուղղակի ազդեցություն ունեն երեխայի ուսուցման վրա,

²⁷⁰ «Կրթության մասին» ՀՀ օրենք, 14.04.1999թ., հոդված 19, կետ 5:

²⁷¹ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենք, 25.05.2005թ., հոդված 1:

²⁷² Նույն տեղում, հոդված 12:

²⁷³ Ն. Մանուկյան, Վ.Ոսկանյան և ուրիշներ, «Ներառական կրթության իրականացման ուղեցույց», /խմբ./, Եր., 2008:

✓ մշակվում է երեխայի անհատական ուսումնական պլան /ԱՌԻՊ/՝ ուղղված կարիքի բավարարմանը²⁷⁴:

Վերջինս յուրօրինակ ուղեցույց է ուսուցիչների, երեխաների հետ աշխատող մասնագետների, ծնողների համար, որն օգնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անհատական ուսուցումը հանրակրթական դպրոցում արդյունավետ կազմակերպելուն:

2012 թվականի դրությամբ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի՝ Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում է ներառական կրթություն իրականացնող հանրակրթական 81 դպրոց /որից 42-ը՝ Երևանում/, ուր սովորում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող շուրջ 1455 երեխա: Հայաստանում գործում են նաև մի շարք կենտրոններ ու կազմակերպություններ, որոնք զբաղվում են սահմանափակ և հատուկ կարիքներով երեխաների խնդիրներով ու հասարակությունում ինտեգրելու աշխատանքներով, կատարում կարևոր գործառույթ լուծելով սոցիալականացման հիմնախնդիրը /«Հույսի կամուրջ» ՀԿ, «Հավատ» ՀԿ, «Փարոս» ՀԿ, «Փյունիկ» ՀԿ, «Փրկություն» ՀԿ, «Սկարպ» ՀԿ, «Ձեյթուն» ՀԿ և այլն/:

Ո՞րն է ներառական կրթության ներդրման նպատակը: Վերջինս կրթության կազմակերպման մի այնպիսի ձև է, որը ենթադրում է, որ ոչ մի երեխա իր ֆիզիկական, մտավոր, սոցիալական տարբեր խնդիրների պատճառներով չի կարող դուրս մնալ հանրակրթությունից: Հայ պատմիչներից Փ. Բյուզանդն իր «Պատմություն հայոց» աշխատության մեջ վկայում է, որ դեռևս 354 թվականին Ներսես կաթողիկոսի գլխավորությամբ Աշտիշատում տեղի ունեցած եկեղեցական օրենսդիր ժողովի ժամանակ բացի կրոնական-եկեղեցական հարցերից, ընդունվել էին նաև աշխարհիկ և հասարակական կյանքին վերաբերող որոշումներ: Ըստ որի էլ որոշվել էր բացել դպրոցներ, վանքեր, ուր ապաստան պիտի գտնեին «կաղք ու կույրք և մարմնահարք, խուլ և հաշմեալք», որոնք, ըստ Ներսես կաթողիկոսի, «անխնամ մնալով, ումանք ի գողություն, և ումանք յայլ անկարգություն մտաբերեին»²⁷⁵: Ավելին, մեր օրերում կրթության կազմակերպման այս ձևի միջոցով փորձ է արվում ավելի ճկուն դարձնել ծրագրերը, չափորոշիչները և վերջապես հնարավորինս փոխել ավանադական դարձած մոտեցումները, վերաբերմունքը կրթության նկատմամբ, և կրթությունը դարձնել կրթություն բոլորի համար: Սակայն եղել են և դեռևս պահպանվել են մի շարք խոչընդոտներ, որոնք վկայում են, որ կրթության կազմակերպման այս ձևը դեռ լիակատար չէ և ոլորտում կան շատ անելիքներ:

Ամենաառաջին խնդիրը մանկավարժների վերաբերմունքն է: Ներառական ուսուցման գաղափարը միանշանակ չի գնահատվում դպրոցներում: Բնականաբար, յուրաքանչյուր ուսուցիչ կցանկանար, որ դասարանում իրեն կես բաղից հասկանալի և ընկալելի, բայց երեխաները տարբեր են: Թեպետ որոշ ուսուցիչներ, մասնագետ չլինելով, շատ արդյունավետ աշխատանք են տանում այս երեխաների հետ: Սակայն լինում են նաև դեպքեր էլ, երբ չիմացությունն առավել է խորացնում իրավիճակը՝ խեղելով երեխային և՛ հոգեպես, և՛ ֆիզիկապես: Սա են

²⁷⁴ Տե՛ս, «Մտավոր խնդիրներ ունեցող սովորողների հետ աշխատող հատուկ մանկավարժի ուղեցույց», Եր., 2008, թջ 58-73:

²⁷⁵ Փ. Բյուզանդ, «Պատմություն հայոց», Երևան, 1968թ., էջ 129:

վկայում սոցիոլոգիական այն հարցումները, որոնք իրականացվել են թե՛ ուսուցիչների և թե՛ տնօրենների շրջանում, ուր վերջիններս բազմակողմանիորեն դիտարկել և ներկայացրել են ուսուցման այս ձևի ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցությունները հատուկ կարիքներ ունեցող երեխաների վրա: Այսպես, դրականների թվին են դասվում օրինակ այն, որ այս երեխաները նախ և առաջ ինտեգրվում են հասարակության մեջ, ավելի արագ են զարգանում, ազատվում են որոշ բարդություններից, զգում են իրենց որպես հասարակության լիարժեք անդամ, ոչ հաշմանդամ երեխաների հետ շփման միջոցով հաղթահարվում են հաշմանդամությամբ պայմանավորված մի շարք դժվարություններ և այլն: Բսկ բացասականների շարքում քիչ չեն ծաղրանքն ու ճնշումները հասակակիցների կողմից, լարվածությունը, բարդությունները, հասարակության ճնշումը և այլն:

Մեր կարծիքով այս երեխաների հետ ուսուցման գործընթացը ճիշտ կազմակերպելու համար դասավանդման բոլոր տեխնոլոգիաներում պետք է հաշվի առնվեն ինչպես երեխայի արատի, նաև տարիքային և անհատական առանձնահատկությունները, այնպես էլ դպրոցում դասավանդող ուսուցիչների հոգեբանական և մասնագիտական պատրաստվածության և իրազեկության հարցը:

Մյուս խնդիրը հասարակության թեական վերաբերմունքն է: Գաղտնիք չէ, որ դեռևս շատ շատերի մոտ կա մտավախություն այս երեխաների հանրակրթական դպրոցներում սովորելու հնարավորությունների հետ կապված /դժվար չի՞ լինի, չե՞ն ծաղրի, կամ հակառակը՝ վատ չե՞ն անդրադառնա իրենց ներկայությամբ առողջ երեխաների վրա և այլն:/: Ուստի նախ պետք է աշխատանք տանել հասարակական կարծիքի ձևավորման ոլորտում՝ հասարակության մեջ ընդհանուր առմամբ հանդուրժողական մթնոլորտի ստեղծման համար: Մեր հասարակությունը դեռևս մեծ խնդիր ունի հաշմանդամին որպես հասարակության լիարժեք անդամ ճանաչելու և իր շարքերը ինտեգրելու: Շատ անգամ ոչ միայն երեխային իր հասակակիցն է ծաղրում, խուսափում նրա հետ շփվել, այլև ըմբոստանում է ծնողը՝ չցանկանալով, որ իր երեխայի հետ սովորի հաշմանդամ երեխան: Այս առումով անհրաժեշտ է նախ և առաջ ձևավորել համապատասխան բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ՝ հետևողական աշխատանք տանելով ինչպես աշակերտների, այնպես էլ ծնողների և ուսուցիչների շրջանում: Կրթությունն ինքնին զարգացող գործընթաց է և հուսանք, որ տարիների փորձը կփոխի վերաբերմունքն ու համոզմունքը հասարակության շրջանում ներառական կրթության նկատմամբ:

Հաջորդ լուրջ խնդիրը դպրոցների մեծ մասի տեխնիկական անհամապատասխանությունն ու անպատրաստվածությունն է: Ներառական ուսուցման ներդրման կարևորագույն պայմաններից է դպրոցներում հատուկ մասնագետների առկայությունը: Գործող ուսուցիչների մեծ մասը թե՛ հոգեբանորեն և թե՛ մասնագիտորեն դեռևս պատրաստ չի աշխատել այդպիսի երեխաների հետ /թեպետ ԵՊՄՀ-ում արդեն կա «Ներառական կրթություն» հատուկ դասընթաց, որի նպատակն է ապագա ուսուցիչներին պատրաստել հանրակրթական դպրոցներում ներառական ուսուցումը ճիշտ կազմակերպել/: Բնականաբար այս երեխաների հետ ուսուցումը պետք է անցկացվի հատուկ հեշտացված ծրագրերով: Այդ ծրագիրը պետք է մշակի երեխայի ուսուցիչն անհատական ախտորոշման, երեխայի ընդունակությունների, զարգացման տեմպերի հիման վրա: Սակայն չունենալով բավարար պատրաստվածություն՝ խնդիրն հաճախ կա՛մ համապատասխան լու-

ծում չի ստանում, կա՛մ էլ՝ ձևական բնույթ է կրում: Հետևաբար, ներառական կրթություն իրականացնող դպրոցների՝ մասնագետներով հագեցվածության հարցը դառնում է անխուսափելի: Միայն մասնագետն է ունակ մասնագիտորեն մոտենալ խնդրին և ճիշտ կազմակերպել ներառական կրթությամբ սովորողների ուսումնադաստիարակչական ողջ գործընթացը: Ուսուցման ճիշտ կազմակերպման դեպքում միայն ինտեգրված ուսուցումը դրականորեն կազդի սահմանափակ կարողություններով երեխաների վրա: Հատկապես, երբ խոսքը թույլ մտավոր հետամնացություն և ֆիզիկական արատ ունեցող երեխաների մասին է:

Ներառական կրթության արդյունավետ իրականացման գործում կարևորում ենք նաև ուսուցիչ-մասնագիտական թիմ-ծնող եռակողմ ներդաշնակ համագործակցային աշխատանքը: Միայն վերը նշված երեք օղակների միասնական ջանքերի և ներգործության արդյունքում է հնարավոր հասնել դրական ելքի: Ընդ որում, գրագետ, ճիշտ աշխատանքի դեպքում անգամ լուրջ խնդիրներ ունեցող /Օր.՝ աուտիզմով/ երեխաների մոտ կարող են նկատվել զգալի առաջընթացներ:

Կրթության իրավունքի տեսակետից անհրաժեշտ են ոչ միայն համապատասխան կրթական ծրագրեր, մանկավարժական կադրեր, այլ պետք է ապահովվեն նաև անհրաժեշտ տեխնիկական պայմաններ: Այսպես՝ ֆիզիկական արատ ունեցող երեխայի կրթությունը հանրակրթական դպրոցներում ապահովվելու համար ո՛չ հատուկ ծրագրեր, ո՛չ էլ հատուկ մասնագետներ են անհրաժեշտ. երեխան ի գործ է սովորել և ընկալել ծրագիրը: Խնդիրը գուտ տեղաշարժման ապահովության բացակայության մեջ է /մեր դպրոցների զգալի մասում այսօր բացակայում են հատուկ թեքահարթակները, վերելակները/, որը շատ հաճախ լուրջ դժվարություններ է ստեղծում հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների համար: Հետևապես անհրաժեշտ է, որ դպրոցներում, ինչու չէ, նաև այլ հասարակական վայրերում, կառուցվեն թեքահարթակներ և վերելակներ՝ հաշմանդամների տեղաշարժը ապահովելու համար: Ուստի ներառական կրթության իրագործման համար դպրոցները նախևառաջ պետք է ունենան անհրաժեշտ նյութատեխնիկական բազա՝ համապատասխան սարքավորումներով, գույքով և գրականությամբ:

Այսպիսով, կրթությունը չի համարվի որակյալ, և բոլորի համար, երբ նրա մեխանիզմները, կազմակերպման ձևերը դեռևս ունեն բացթողումներ ու բացառումներ երեխաների համար: Իսկ ներառական կրթությունը բացառիկ հնարավորություն է ստեղծում ոչ միայն բարելավելու կրթության որակը, այլև փոխելու հասարակության վերաբերմունքն ու մտածելակերպը վաղվա օրվա նկատմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Բարության դասեր» դպրոցականների հետ հաշմանդամության խնդրի մասին քննարկումներ վարելու ուղեցույց, Եր., 2010:
2. Ն. Մանուկյան, Վ. Ոսկանյան և ուրիշներ, «Ներառական կրթության իրականացման ուղեցույց» /խմբ./, Եր., 2008:
3. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, 1996թ., 29.05:
4. «Կրթության մասին» ՀՀ օրենք, 1999թ., 14.04:
5. «Կրթության զարգացման 2001-2005թթ. պետական ծրագիր» ՀՀ օրենք, 26.06.2001թ.:

6. «Գրթորթյան տնանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթորթյան մասին» ՀՀ օրէնք, 25.05.2005թ.:

Армине Ашикян – Организация основоположений интегрированного обучения в общеобразовательной сфере. – Сегодня не возможно достигнуть высокого качества системы образования и быть конкурентоспособным, если эта система не интегрируется в международные образовательные процессы. Для этого необходимо осуществление развития системы путем ее всестороннего реформирования. При этом особое место занимают вопросы, касающиеся специального образования, в частности – задачи интегрированного обучения.

В данной работе представлен и проведен подробный анализ уровня интегрированного обучения в современной общеобразовательной сфере, отмечая его преимущества и недостатки.

Armine Ashikyan – The organization of the integrated Training of basic questions In the General educational sphere. – Today it is impossible to have a high quality education and to be competitive, if the country's education system is not integrating the educational processes. For this requires the implementation of a system by its comprehensive reform. In this case, a questions of special education have a special place in particular the problem of integrated education. This paper aims to present the current situation in the field of inclusive education, the advantages and disadvantages of it.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Օրերս, երբ մի աշխատություն էինք քննարկում տպագրության երաշխավորելու համար, բանավեճ ծավալվեց առաջին հայացքից պարզ ու հասարակ թվացող հասկացությունների բովանդակության և դրանց տարողունակության հարցերի շուրջ: Երկարամյա դասախոսական գործունեության ընթացքում էլ հաճախ է պատահել, որ լավ սովորող, պատրաստակամ ու աշխատասեր ուսանողները տապալվել և զրկվել են բարձր գնահատական ստանալուց դարձյալ այդ չաբաբաստիկ «պարզ ու հասարակ» տերմինների չիմացության պատճառով: Առավել ևս, որ այդ հասկացությունների թվում են այնպիսի «պարզունակները», ինչպիսիք են պատմությունը, պատմագիտությունը, պատմագրությունը և այլն: Հենց այս դրդապատճառները խթանեցին, որ լույս աշխարհ գա սույն հոդվածը:

Պատմությունն աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների համահավաք, միասնական պատկերն է, դեպքերի ու անձանց յուրակերպ կենսագրությունը, բնության ու կենդանական աշխարհի, մասնավորապես՝ մարդկության, ամեն մի զարգացման ընթացքը: Անպատճառ, բնությունն ու մարդկային հասարակությունը դիտարկելով մեկ միասնության մեջ, որովհետև դրանցից յուրաքանչյուրը պայմանավորում է մյուսին, նրանք անխզելիորեն կապված են միմյանց: Մարդկության պատմությունն սկսվեց այն պահից, երբ մարդն առանձնացավ կենդանական աշխարհից, դարձավ մտածող, բանական էակ կամ, ինչպես ընդունված է ասել՝ homo sapiens և սկսեց ապրել մարդկային հասարակության տարբեր աստիճաններին բնորոշ կոլեկտիվներով՝ տոհմ, համայնք, ցեղ, ժողովուրդ, ազգ և այլն, միևնույն ժամանակ, անցնելով մարդկային հասարակության զարգացման տարբեր փուլերով՝ սկսած Քարի դարից մինչև ժամանակակից մարդկային քաղաքակրթության բարձրակարգ կացութաձև: Գաղտնիք չէ, որ մարդկության պատմությունը ներկայացվել է երբեմն ակամա, բայց ավելի հաճախ միտումնավոր խեղաթյուրված ու աղճատված վիճակում: Արվել է ամեն ինչ, որ այն ծառայի իշխող խավերի շահերին: Սակայն մարդկության պատմության զարգացման ընթացքն ունի օբյեկտիվ, օրինաչափ բնույթ և այդ աղճատումները ժամանակի ընթացքում հարթվում, կարգավորվում են:

Պատմագիտությունը գիտություն է պատմության մասին, ինչպես նաև այն որոշակի թեմայի կամ պատմական դարաշրջանի վերաբերող պատմագիտական հետազոտությունների ամբողջություն է: Այսինքն՝ այն մարդկային հասարակության պատմությունն ուսումնասիրող գիտություն է և մյուս գիտությունների նման ունեցել է զարգացման երկարատև ընթացք, կուտակել սերունդների պատմական փորձը, ընդլայնվել ու հարստացել բովանդակությամբ: Սկզբում կրել է նկարագրական բնույթ, ուսումնասիրության անմիջական առարկա են եղել մարդկության անցյալում տեղի ունեցած իրադարձությունների արտաքին երևույթները, գլխավոր ուշադրությունը դարձվել է պատմական քաղաքական շարադրանքին:

Համաշխարհային ասպարեզում միայն 19-րդ դարում պատմագիտությունը դարձավ կյանքը՝ (իր որոշակի և բազմազան դրսևորումներով) մարդու ծագումից մինչև ժամանակակից վիճակը, ուսումնասիրող գիտություն²⁷⁶։ Փաստերի հավաքումը և դրանց համակարգումն ու անաչառ գնահատումը պատմագիտության հիմքն են։ Ինչպես նշեցինք, պատմագիտությունը կուտակել է սերունդների փորձը, ունեցել զարգացման երկարատև ընթացք, շարունակաբար ծավալվել ու հարստացել բովանդակությամբ՝ նկարագրողական մակարդակից հասնելով մարդկային ցեղի, քաղաքակիրթ հասարակության բազմազան դրսևորումներով կյանքն ուսումնասիրող գիտության։ Պատմագիտության կարևորագույն գործոններից մեկը պատմականության սկզբունքն է, որը հասարակության կյանքի փաստերի և երևույթների ուսումնասիրության անհրաժեշտ ու կարևոր պայման է։

Հաճախ կարելի է լսել, թե պատմագիտությունը հեղինեղուկ, կամայական դրսևորումներով և ոչ օբյեկտիվ գիտություն է։ Ավելին, երբեմն այն ներկայացվում է մարդու ցանկություններից կախված՝ ով ինչպես ուզում, այնպես էլ ներկայացնում է փաստերը։ Սակայն դա իրականությունը չի համապատասխանում, որովհետև պատմագիտությունը լոկ փաստերի, մարդկանց ու թվականների հանրագումար չէ, այլ հասարակության ու բնության մեջ տեղի ունեցող պատճառահետևանքային կապերի և օբյեկտիվ օրինաչափությունների բացահայտումն է և նույնքան ճշգրիտ գիտություն է, որքան մաթեմատիկան կամ ֆիզիկան։ Իհարկե, պատմագիտությունը քաղաքական, ինչու չէ, նաև կուսակցական բնույթ ունեցող գիտություն է և կարող է պատմական այս կամ այն իրավիճակներում գերի դառնալ, ծառայել մարդկային որոշակի խմբի շահերին։ Սակայն դրանք ժամանակավոր դրսևորումներ կարող են լինել և ժամանակի ընթացքում հաղթահարվում են, ինչպես եղավ, ասենք, ֆաշիզմի կամ կոմունիստական իշխանածների ժամանակ։

Պատմագիտությունը կարևոր դերակատարություն ունի հասարակական կյանքում։ Նրա գլխավոր արժեքը համաշխարհային փորձի ընդհանրացումն է։ Մարդկության զարգացման օրինաչափությունների բացահայտումով այն մարդկությանը ճանաչելի է դարձնում կյանքի օբյեկտիվ օրենքները և նրանցով ղեկավարվելու անխուսափելիությունը, անկախ նրանից, թե տվյալ պահին զարգացման ինչ մակարդակի վրա է գտնվում տվյալ մարդկային խումբը կամ պետությունը։ Պատմագիտությունը կյանքի փաստերի հավաքման ու օբյեկտիվ շարադրանքի գիտություն է, իսկ հավաք, համադրված ու համակարգված փաստերը՝ պատմագիտության հիմքը։ Մարդկային հասարակության զարգացմանը զուգընթաց, պատմագիտությունը տարափեղկվեց և ծնվեցին պատմագիտության տարբեր ճյուղերը, որոնց մեջ, անկասկած, ամենակարևորներն են հնագիտությունն ու ազգագրությունը։

Պատմագրությունը գիտություն է պատմագիտության մասին։ Այլ կերպ ասած՝ պատմագրությունը պատմագիտության պատմությունն ուսումնասիրող օժանդակ գիտություն է։ Պատմագրության զարգացման համար կարևոր դերակատարություն են ունեցել անտիկ (Հերոդոտոս, Տակիտոս, Պլուտարքոս և ուրիշներ) և մեր ոսկեդարյա (Խորենացի, Բյուզանդ և ուրիշներ) պատմիչների երկերը, ո-

²⁷⁶ Հայ իրականության մեջ այդ գործընթացը որոշ վերապահումներով սկսվեց ավելի վաղ՝ 5-րդ դարում՝ ի դեմս պատմահայր Մովսես Խորենացու, ով գրեց քննական, փաստերի համդրմամբ ու վերլուծական տարրեր պարունակող աշխատություն, որն իր մեջ ամփոփում էր «Սկզբից» մինչև իր ապրած օրերի կարևոր իրադարձությունների մասին նկարագրություններ։

րոնք պատմական իրադարձությունների ու փաստերի նկատմամբ ցուցաբերել են քննական վերաբերմունք և փորձել են ստեղծել պատմագիտական առաջին հասկացությունները:

Միջին դարերում, երբ պատմագիտական մտածողությանը հատուկ էին իշխող աշխարհիկ և հոգևոր դասի ներկայացուցիչներին մեծարելու, աստվածացնելու միտումները, պատմության ընթացքը և կարևոր իրադարձությունները համարվել են երկնային ուժերի միջամտության ու աստվածային նախախնամության արդյունք: Տարածված էին տարեգրությունները, ժամանակագրություններն ու վարքագրությունները:

Միջնադարյան խավարից հետո, մարդկային ցեղի վերածնության՝ Վերածննդի դարաշրջանում մարդիկ փորձել են բացահայտել պատմության զարգացման օրինաչափությունները և դրանք շաղկապել բնության զարգացման ընդհանուր օրենքներին (Ժ. Բոդեն), դրել պատմության նոր պարբերացման (Լ. Բրունի) հիմքը, փորձել են ստեղծել բնական իրավունքի սկզբունքների հիման վրա հասարակության զարգացման տեսություն, առաջ են քաշել համաշխարհային պատմություն ստեղծելու գաղափարը (Վոլտեր), պատմության զարգացման սկզբում մարդու՝ բնության մասնիկը լինելու «բնական վիճակի տեսությունը» (Ժ. Ռուսո), պատմության մեջ անընդհատ առաջընթացի գաղափարը (Ժ. Կոնդորսե), մշակել հասարակական զարգացման վրա բնաաշխարհագրական միջավայրի ազդեցության ուսմունքը (Շ. Մոնտեսքյո) և այլն: Ընդ որում, այդ գիտական տեսություններից յուրաքանչյուրը նախ փորձում էր իր պատկերացմամբ բացահայտել աշխարհը, նրա մի, անբաժան ներկայացուցիչ՝ մարդու ով լինելը, որտեղից և դեպի ուր գնալու անընդհատական պատմությունը:

Այսպիսով՝ պատմագրությունն ուսումնասիրում է պատմագիտական պատկերացումների ամբողջությունը՝ բնության և մարդկային ցեղի օրինաչափ փոփոխման, զարգացման և հաջորդականության մեջ: Հայտնաբերում է աշխարհի զարգացման օբյեկտիվ օրինաչափությունները, բացահայտում հետագա զարգացման միտումները, նպաստում գիտականության և քննադատական մտքի զարգացմանը: Ի վերջո, վերլուծելով պատմագիտական հետազոտությունները, պատմագրությունը պատմաբանների ուշադրությունն ուղղորդում է որոշակի խնդիրներ վեր հանելու, վերլուծելու ու համապատասխան լուծումներ գտնելու վրա:

Ամփոփենք՝ պատմությունը բնության և մարդկային հասարակության անցած ճանապարհի, պատմագիտությունը՝ պատմության, իսկ պատմագրությունը՝ պատմագիտության մասի գիտություններ են:

Сурен Саргсян – Концепции истории, историологии, историографии. – Часто незнание простых и ясных понятий приводит к нежелательным последствиям. В частности, речь идет о таких терминах как история, историческая наука и историография.

История – это комплекс событий, происходящих в мире, биография природы и человечества. Историческая наука – это наука об истории мира и цивилизации, совокупность исследований определенных тем или эпохи в целом. Историография – наука, изучающая историю формирования и развития исторической науки.

Обобщая можно сказать, что история – это пройденный путь природы и человеческого общества. Историческая наука – это изучение истории. Историография – это изучение исторической науки.

Suren Sargsyan – *Concepts of history, historical science, historiography*. – Often the misunderstanding of some definitions brings to unpleasant consequences. In particular, when we try to discuss such notions as history, Historical science and Historiography.

History is a complex of events taking place in the world. Its a biography of nature and human society. History as a science deals with the history of the world and civilization, research of the particular topic or a whole era. As for Historiography, it refers either to the study of the methodology and development of History as a sphere of science. The term Historiography tended to be used in a more basic sense, than to mean simply “the writing of history”.

As a conclusion it can be said that: history means all the events that happened in the past, History as a science is the study of the historical development, Historiography is the investigation of the Historical science.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ ՆԵՐՄԻՍՅԱՆ, ԶԱՎԱՀԻՐ ԹՈՐՈՍՅԱՆ

Բաթումի կոնֆերանսը: Հայաստանի Հանրապետության սահմանների հարցը Բաթումի պայմանագրում 3

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Անվտանգության ապահովումը և վերաշինության գործի ընթացքը Վան-Վասպուրականում 1916 թ. վերջերին և 1917 թ. սկզբներին..... 19

ԷԴՈՒԱՐԴ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ սահմանադրության ընդունումը որպես անկախ պետականության հիմնավորման կարևորագույն գործոն..... 25

ВАЛЕРИ ТУНЯН

Армянский радикализм в видах П.А. Столыпина 1906 - нач. 1908 гг. 31

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Վաղ միջնադարյան հայոց ընտանեկան և հասարակական կենցաղը ըստ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկի 46

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գյուղացիության տեղը Կիլիկիայի հայկական թագավորության ավատատիրական հիերարխիայում..... 59

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ

Արդի համաշխարհային հումանիստական շարժումը. ձևավորման շրջան..... 66

ՍԵՐԳԵՅ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Այսպես ասած «սրբազան պոռնկության» մասին..... 73

ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ

Ժամանակակից հումանիզմի տարատեսակները. Էվոյուցիոն հումանիզմ..... 79

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՍԵՓ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Պետական իշխանության լեգիտիմության արժեքային համակարգը ավանդական հասարակություններում 85

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԻԴԱ ՍԱՀԱՏՅԱՆ

Շարադասությունը և նրա ոճական արժեքը Պ. Զեյթունցյանի արձակում 96

ՀԱՍՄԻԿ ՎԱՆՅԱՆ

Հեքիաթների մշակման՝ Աղայանի և Թումանյանի սկզբունքները 108

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ

ԱՐՄԻՆԵ ԱՇԻԿՅԱՆ

Ներառական ուսուցման կազմակերպման հիմնախնդիրները
հանրակրթության ոլորտում 114

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Պատմություն, պատմագիտություն, պատմագրություն հասկացությունները... 120

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԱԿՈՒՆՔ» ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Ակունք» հոդվածների ժողովածուում տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով:
- Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4:
- Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:
- Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը:
- Հոդվածի վերջում գրականության ցանկի առկայության դեպքում հղումների համարների հերթականությունը պետք է համընկնի տեքստում դրանց հանդիպման հերթականության հետ: Գրականության ցանկում նշել գրքի/հոդվածի հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը), հոդվածների դեպքում՝ հոդվածի առաջին և վերջին էջերի համարները: Օրինակ՝

1. Harary F., *Graph Theory*. Addison-Wesley, Reading, MA, 1969.
2. Давтян Н.Н., *О наименьшем и наибольшем возможных числах вершин с интервальным спектром на множестве правильных реберных раскрасок дерева*. Математические вопросы кибернетики и вычислительной техники, т. 32, Ереван, 2009, с. 107–111.

- Հոդվածի վերջում գրել համառոտ ամփոփումներ. հայերենով գրված հոդվածների համար՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով, ռուսերենով գրված հոդվածների համար՝ հայերեն և անգլերեն լեզուներով, անգլերենով գրված հոդվածների համար՝ հայերեն և ռուսերեն լեզուներով:
- Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):
- Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով
 - Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, բնագիտական ֆակուլտետի մասնաշենք՝ Նարինե Դավթյանին, կամ ուղարկել akunq@ysuib.am և banber_ib@ysu.am էլեկտրոնային հասցեներով:

Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 2(5)

Համարի պատասխանատու՝ Ա.Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ Ն.Ն. ԴԱՎԹՅԱՆԻ

Ստորագրված է տպագրության 07.11.2012 թ.:

Չափսը՝ $70 \times 100^{1/16}$:

Տպաքանակ՝ 100: Պատվեր՝ 154:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1:

Երևանի պետական համալսարանի
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում
Երևան, Ալ. Մանուկյան 1: